

ԷԶՄԻԱԾԻՆ



2.
2024



ՉԼ. ՏԼԻԻ


ԲԱՆԴՈՒՄ

ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՆԻՐ
ԼԻՔՆԵՆ ՀԼՅՈՑ ԿԼԹՈՂԻԿՈՍԻԹԵԼՆ
ԸՆՅԻ ԼԹՈՒՄՅՈՒՆ ՄԻՔՈՅ ԷԶՐԻԼԵՏԻ

ՅՈՒՆԻ

2024

Լ. ԷԶՐԻԼԵՏԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ **Գեորգ Մադոյեան**

Լեզուատնական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Գեորգ եպս. Մարոյեան,
Տ. Շահէ ծ. վրդ. Անանեան,
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան,
Ազատ Բոզոեան,
Խաչիկ Բաֆֆի Գազէր
Վահէ Թորոսեան**





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Bishop Gevorg Saroyan,
Proto-Archimandrite Shahe Ananyan,
Fr. Ararat Poghosyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer
Vahe Torosyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал


Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Епископ Геворг Сароян,
Протоархимандрит Шагэ Ананян
Иерей Арарат Погосян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер
Ваге Торосян**



Տ. ՀՈՒՍԻԿ ԱՐԵՂԱ ՍՄԲԱՏՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅՆՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(9 հունիսի, 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Զողորմութիւն կամիմ, և ո՛չ զգոն»
(Մատթ. ԺԲ. 7):

Սիրելի՛ հավատացյալ քույրեր և եղբայրներ, այսօրվա խորհրդածու-
թյան նյութը ավետարանական հայտնի մի դրվագ է, որը Մատթեոսի
ավետարանի ԺԲ. գլխից է (1–7): Ավետարանիչը պատմում է, որ Հիսուս
շաբաթ օրն իր աշակերտների հետ անցնում էր ցորենի արտերի միջով:
Աշակերտները քաղցած էին, ուստի ցորենի մի քանի հասկ պոկելով՝
տրորեցին ափերի մեջ և կերան: Հավանաբար մոտակայքում փարիսեցի-
ներ կային, որոնց աչքից չվրիպեց այս եղելութիւնը: Եւ քանի որ նրանք
մշտապես առիթ էին փնտրում Փրկչի որևէ զանցառութիւն հայտնաբե-
րելու և հանդիմանելու համար, անմիջապէս արձագանքեցին՝ ասելով, թե
քո աշակերտները անում են մի բան, որ շաբաթ օրն անել օրինավոր չէ:

Փարիսեցիները չմեղադրեցին աշակերտներին այն բանի համար, որ
նրանք ուտում էին իրենց չպատկանող հացահատիկներից, այլ շաբաթ
օրը հասկեր պոկելու և ձեռքի մեջ մանրացնելու համար, ինչը, նրանց
կարծիքով, շաբաթի օրենքի խախտում էր: Շաբաթի օրենքն Աստված
տվել էր հրեաներին Եգիպտոսի ստրկութիւնից դուրս գալու ժամանակ:
Բացի այդ, շաբաթ օրը պահելը տասը պատվիրաններից չորրորդն էր.
«Հիշի՛ր շաբաթ օրը, որպէսզի սուրբ պահես այն» (Ելք Ի. 8): Աստված կա-
մենում էր, որ մարդը շաբաթ օրը հրաժարվի իր առօրյա գործերից և այդ
օրը նվիրի Տիրոջն անձնապէս հարաբերվելու և Աստծուն ծառայելու հա-

մար: Այդ օրը ոչ միայն հարուստների, այլև աղքատների ու ծառաների համար էր, որպեսզի նրանք նույնպես հանգստանային և կարողանային երկրպագել Աստծուն: Բայց փարիսեցիները, մոռանալով շաբաթ օրվա հիմնական նպատակը, բազմաթիվ կանոններ ու ցուցումներ էին սահմանել, թե ինչն է համարվում աշխատանք, և ինչը՝ ոչ: Համաձայն այդ կանոնների՝ այն, որ աշակերտները ձեռքերի մեջ մանրացնում էին հասկերը, համարվում էր աշխատանք և ըստ այդմ՝ շաբաթ օրվա խախտում:

Ի պատասխան փարիսեցիական մեղադրանքների՝ Հիսուս երկու օրինակ բերեց. Նախ՝ Տերը նրանց հիշեցրեց աստվածաշնչյան մի հայտնի դրվագ, թե ինչպես Դավիթը, երբ փախչում էր Սավուղ արքայից, քաղցած լինելով, իր յուրայինների հետ մտավ տաճար և կերավ այն հացը, որն իրավունք չունեին ուտելու. այն օրենքով նախատեսված էր միայն քահանաների համար (Ա. Թագ. ԻԱ. 1—6): Երկրորդ, Հիսուս հիշեցրեց, որ տաճարում քահանաները շաբաթ օրն ավելի շատ են աշխատում, քան սովորական օրերին: Եւ իսկապես, այդ օրը տաճարում շատ աշխատանք կար անելու՝ պետք է կրկնակի զոհաբերություն մատուցեին, պատրաստեին առաջավորության հացերը, զոհեր ընդունեին ժողովրդից, հոգ տանեին տաճարի մաքրության մասին և բազմաթիվ ծիսական հարցեր կարգավորեին: Բայց այդ ամենի համար նրանց ոչ ոք չէր դատապարտում:

Այս երկու հիշեցումներից հետո Հիսուս վկայակոչում է Օսէե մարգարեի խոսքերը՝ ասելով. «Ողորմություն եմ ցանկանում և ոչ թե զոհ» (Ովսէե Ե. 4)՝ այդպիսով հասկացնելով փարիսեցիներին, որ Աստված ցանկանում է անկեղծ ու մաքուր սիրտ, այլ ոչ թե հրահանգների ձևական կատարում: Փարիսեցիները կարծում էին, որ Աստված իրենցից զոհ է պահանջում, այսինքն՝ օրենքի բոլոր կետերի բառացի կատարում: Արդյունքում, նրանք արդարությունն ու բարեպաշտությունը գնահատում էին այն չափանիշներով, թե մարդն ինչքան երկար ու մանրամասն աղոթեց, ինչ հարուստ նվերներ մատուցեց և այլն: Սակայն Հիսուսի կողմից մարգարեական հատվածի վկայակոչումը ցույց է տալիս, որ Աստծու համար այդ հանգամանքները կարևորություն չունեն: Աստծուն ընդունել չէ այն, երբ ինչ-որ մեկը հարուստ ընծաներ է տալիս, բայց սրտում դժգոհում է դրա համար, կամ դատում է ուրիշներին, ովքեր քիչ են նվիրաբերում: Տիրոջ համար ընդունելի չէ, երբ մեկը ժպտում է իր մերձավորին, բայց դատապարտում և դավեր է նյութում նրա թիկունքում: Հակառակ դրան՝ Աստված ցանկանում է, որ մենք ցույց տանք մեր անկեղծ սիրտը՝

սիրո և ողորմության գործերի միջոցով, նույնիսկ անարժանների հանդեպ: Սա այն է, ինչն Աստծուն ավելի շատ է ուրախացնում, քան բոլոր ողջակեզներն ու ընծաները: Տերը կամենում է, որ իրական կյանքում մենք էլ ողորմած լինենք, ներենք ուրիշների թուլություններն ու թերությունները: Սակայն ողորմած լինել, բնավ չի նշանակում կեղծ մարդասիրությունից ելնելով՝ անտեսել ուրիշների մեղքերը: Ողորմած լինել նշանակում է չվնասել դիմացինին կործանարար դատապարտությանը, այլ օգնել հաղթահարել մեղքը, ուղղորդել ապաշխարության, որպեսզի հոգևորապես վերանորոգվի ու վերադառնա դեպի Աստված:


Այսպիսով՝ ի՞նչ է ակնարկում Հիսուս, երբ ասում է «Ողորմություն եմ ցանկանում և ոչ թե զոհ»: Քրիստոս ուզում է սովորեցնել, որ մենք երբեմն չենք կարողանում կարևորը երկրորդականից զատել, հասկանալ, թե ո՞րն է իրականում հոգու փրկության առաջնորդող իրողությունը և խորհուրդը, ինչպե՞ս կարող ենք հասնել դրան, և, առհասարակ, մեր կյանքում ի՞նչն է մեզ համար ամենակարևորը՝ պարզապես օրենքներ՝ պահել և ձևապաշտությանը տառապել, թե՞ հետևել հոգու փրկության նվիրական առաքինությանը: Քրիստոս սովորեցնում է մեզ և մատնացույց անում, որ ողորմություն անել՝ չի նշանակում միայն աղքատին դրամ տալ: Մեզ հաճախ թվում է, որ ողորմության գործերը նախևառաջ դրամական հարց են՝ գումար տալ կամ չտալ փողոցում խնդրող կարիքավորին, նորից պարտք տալ մեր հարևանին, թե ոչ: Մինչդեռ ողորմած սիրո հիմնական դրսևորումը՝ կարեկցող սերը մշտական զոհաբերությունն է սեփական ժամանակի, խաղաղության, հանգստի և հոգևոր ուժերի: Երբեմն շատ ավելի հեշտ է կողքի կարիքավորին գումար տալը: Այնուամենայնիվ, սիրո և իսկական ողորմության սխրանքը կլինի մարդու հետ պարզ զրույցը, պարզապես լսելով նրա երկար բողոքները, այսինքն՝ քո կյանքի մի հատվածը, քո ազատ ժամանակից նրան տրամադրելը, ով դժբախտ է ոչ այնքան այն պատճառով, որ գումար չունի կամ քիչ ունի, այլ հատկապես նրա համար, որ այս աշխարհում ոչ մեկին չունի, որ իրեն ուշադրություն դարձնի կամ հոգ տանի:

Ողորմություն անել՝ նշանակում է նաև ներել, հանդուրժել, խաղաղություն հաստատել և ապրել ներդաշնակ կյանքով, պատրաստ լինել հնարավորության սահմաններում օգնել դիմացինին: Հրեաները զոհեր էին մատուցում առանց հոգևոր ամբողջ խորհուրդը հասկանալու և դրա իմաստը տեսնելու, ընդամենը ծես կատարելով: Քրիստոս սովո-

րեցրեց, որ պետք է զոհը մատուցել ողորմությանը, որովհետև ողորմությունն է այն միջոցը, որ մեր կյանքում բացահայտում է Աստծու ներկայությունը, փաստում մեր հավատքն Աստծու նկատմամբ: Չէ՞ որ իրական սերը և հավատարմությունը ապացուցվում և փաստվում են զոհողության պատրաստակամությամբ և այն սիրով, որով կատարվում է այդ զոհողությունը:

«Ողորմություն եմ կամենում և ոչ թե զոհ» ասելով՝ Քրիստոս ցանկանում է, որ մեր զոհաբերությունը վերաճի գթասրտության, մեր կյանքը ձևականից ու ձևապաշտությունից վերափոխվի և կենդանի ու կենսունակ հարաբերություններ ունենանք Աստծու և միմյանց հետ: Եթե մեկ նախադասությամբ բնորոշելու լինենք, աստվածաշնչյան այս մեջբերման խորհուրդը, ապա կարող ենք ասել, որ ողորմած լինելը մեր կենդանի զոհաբերությունն է Աստծու առաջ:

Հետևաբար, սիրելի՛ հավատացյալներ, Աստված մեզանից ակնկալում է բարի սիրտ, ուրիշի ցավով և ուրախությամբ ապրող սիրտ և, որ ամենակարևորն է՝ իրական սեր մեր նմանի հանդեպ: Այս ճշմարտությունը սովորեցնելով՝ Քրիստոս մեզ տվեց ողորմության և բարի գործեր կատարելու բացառիկ հնարավորություն: Ուստի եկեք այս գիտակցությամբ լիարժեքորեն օգտագործենք աստվածային այդ շնորհը և հնարավորությունը, որը տրված է մեզ, սիրո և ողորմության գործերի մեջ հարատև ու հաստատուն լինենք՝ այդպիսով փաստելով մեր հավատն ու հավատարմությունը Տիրոջ հանդեպ և մշտապես Աստծու փառքը հռչակենք երկրի վրա՝ այժմ և միշտ, և հավիտյանս հավիտենից ամեն:



Տ. ԿՈՄԻՏԱՍ ՔԱՂԱՍԱ ՂԵԻՈՆՂՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(30 հունիսի, 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ, արժանապատիւ, բարեշնորհ հայրեր, սիրելի հավատացյալներ:

Մատթեոս ավետարանիչն այսօր մի պատումով մեզ պատգամ է տալիս այս կիրակիի համար: Ըստ ավետարանական դրվագի՝ այն հացի բազմացման հրաշքն է:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծննդից մինչեւ այս հրաշագործութիւնը, բոլոր չորս ավետարանիչները միեւնոյն որեւէ դրվագի մասին չեն խոսում: Սա առաջին դեպքն է, որ բոլոր ավետարանիչները խոսում են հացի առաջին բազմացման մասին՝ փոքրիկ տարբերութիւններով, փոքրիկ լրացումներով, ավելացումներով ու պակասեցումներով: Մեր՝ քրիստոնյաներիս համար սա նշան է այն բանի, որ բոլոր ավետարանիչները հաղորդակից են եղել այս պատումին եւ բոլորը ներկայացրել են գրեթե նույնությամբ այն կարեւոր կետերը, որոնք առանցքային են այս պատումի մեջ:

Պատումը հետեւյալն է. մեր Տեր Հիսուս Քրիստոս իր 12 աշակերտների հետ բավական երկար քարոզչութիւնից հետո, շատ բժշկումներ կատարելուց հետո, անցնում է Բեթսաիդա՝ Պետրոս, Անդրեաս եւ Փիլիպոս առաքյալների ծննդավայրը՝ ասելով իր աշակերտներին, որ գնանք մի փոքր հանգիստ առնենք, որովհետեւ շատ հոգնեցինք: Եվ երբ գալիս եւ նավից իջնում են, տեսնում են ժողովրդի բազմութիւն, որ, իրենց հետապնդելով, եկել են իրենց հետեւից՝ ականատես եւ ականջալուր լինելով բոլոր բժշկութիւններին, քարոզչութիւններին, հրաշքներին: Տերն իր առաքյալների հետ միասին սկսում է այդ բազմութեանը նորից քարոզել, բժշկութիւններ կատարել:

«Երբ երեկո եղավ, օրը տարաժամեց, — ասում է ավետարանիչը, — աշակերտները մոտեցան Տեր Հիսուս Քրիստոսին՝ ասելով, որ Վարդա-

պե՛տ, արձակիր այս բազմությունը, թող գնա հարեւան գյուղերը, իր համար կերակուր գտնի, որովհետեւ օրը տարածամեկ է, այստեղ էլ ամայի է, որեւէ բան չունենք մենք էլ նրանց կերակրելու համար»:

Տեր Հիսուս Քրիստոս առաքյալներին պատասխանում է՝ ասելով, որ կարիք չկա, որպեսզի բազմությունը գնան, այլ նրանք նրանց կերակրեք:

Առաքյալները զարմացան, որովհետեւ նրանք իրենց հետ ոչինչ չէին վերցրել: Եվ ուսուցչին պատասխանելով՝ ասում են, թե իրենք որեւէ բան չունեն այդ բազմությանը կերակրելու. ընդամենը հինգ նկանակ, այսինքն՝ զարեհաց, եւ երկու ձուկ: Տեր Հիսուս Քրիստոս պատվիրում է, որ նկանակները եւ ձկները բերեն: Վերցնելով դրանք՝ աչքերը հառում է դեպի երկինք, օրհնում, տալիս առաքյալներին, իսկ առաքյալները հրաշագործության հետեւանքով բազմացած հինգ նկանակը եւ երկու ձուկը տասներկու սակառներով բաժանում են խումբ-խումբ նստած բազմությանը: Լստ ավետարանիչների՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշագործության հետեւանքով կերակրվողները մոտ հինգ հազար էին՝ չհաշված կանանց եւ երեխաներին:

Տեր Հիսուս Քրիստոս իր երկրավոր կյանքի ընթացքում բազմաթիվ հրաշքներ գործեց. ջուրը գինու վերածեց, փոթորիկ սանձեց, ջրերի վրայով քայլեց, գոսացած ձեռք բժշկեց, կույրերին, կաղերին, համրերին բժշկեց, մեռածին հարույթյուն տվեց եւ, ի վերջո, այս ամենի գագաթնակետը՝ Ինքը հարույթյուն առավ: Առավել իրապաշտների համար այսպիսի երեւույթները լոկ ակնախաբկանքներ են: Բայց Նա, ով բնության օրենքներն է սահմանել, որով որ մենք փորձում ենք բացատրել բոլոր տեսակի երեւույթները, այդ թվում նաեւ հրաշքները, ի զորու է այդ օրենքները սանձել, կասեցնել եւ գործել աստվածային տնօրինությամբ:

Շատ ենք փորձել, շատ ենք փորձում գտնել յուրաքանչյուր հրաշքի պատասխանը: Բայց հրաշքները չեն բացատրվում: Այն երեւույթները, որոնց պատասխանները մենք փորձում ենք գտնել «ինչպե՛ս կատարվեց» հարցադրման միջոցով, այդ երեւույթները հիշյալ հարցադրմանը չեն ենթարկվում: Սրանք երեւույթներ են, որ անցնում են մարդկային բնական հասկացողության ընկալման սահմաններից եւ վերադառնում են գերբնականության ուժով: Հրաշքները չեն բացատրվում, հրաշքներին հավատում են, սրանք երեւույթներ են, որ հավատացողի համար իրականություն են, սրանք հոգեւոր իրականություն են, որի համար մեզանից Տերը պահանջում է իրականում հոգեւորվել, հավատալ, որովհետեւ այն ինչ

արվեց, չարվեց առերեւոյթ, չարվեց խաբկանքով, չարվեց մեզ խաբելով, այլ իրապես հինգ հազարը կերակրվեցին՝ եւ դեռ չհաշված կանանց ու երեխաներին:

Հացի բազմացման այս պատումը շատ հետաքրքրական է: Այս հրաշքով Տերը ոչ միայն հացն է բազմացնում, այլ նաեւ երկու ձուկը: Բայց ավետարանիչներն այս բնորոշում են կա՛մ հինգ հազարի կերակրում, կա՛մ հացի բազմացում: Հացի գաղափարը, թերեւս յուրաքանչյուր մեկիս է հայտնի, ամեն մեկս ամեն օր տքնում ենք հացի համար՝ հանապազօրյա հացի համար, եւ դրա գաղափարը մեզ որեւէ մեկիս խորթ չէ: Հացի գաղափարը, դեռեւս գալիս է մարդկության արարման ակունքներից: Առաջին անգամ Տերը Ադամի եւ Եվայի մեղանշումից հետո նրանց ասում է. «Ձեր երեսի քրտինքով պիտի վաստակեք ձեր հանապազօրյա հացը»:

Առանձնացրել եմ չորս հանգրվանային դրվագներ Սուրբ Գրքից, որոնցում հացի մասին անդրադարձում կա:

Առաջինը հիշյալ է, որ մեր երեսի քրտինքով պիտի վաստակենք մեր հանապազօրյա հացը:

Երկրորդն այն դրվագն է, որում հիշատակվում է, թե Եգիպտոսում գերության ժամանակ հրեաներին անապատում Տիրոջ կողմից երկնքից մանանա իջեցվեց, որին Դավիթ սաղմոսերգուն ասում է «հրեշտակների հաց, երկնային հաց»:

Երրորդը հացի բազմացումների պատումներն են:

Եվ չորրորդը, որին կհանդիպենք, մեր Տեր Հիսուս Քրիստոս է ասում. «Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջած» (Հովհ. Զ. 51):

Սկզբից՝ անեծքից մինչեւ մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ Կենդանի Հացը լինելու հայտարարությունը, բավական երկար ժամանակ է անցել: Բայց այս երկու դրվագները մեզ խորքում մի բան են ցույց տալիս, ուսուցանում: Հացը վաստակվում է տանջանքով, քրտինքով, բայց այդ տանջանքը, այդ քրտինքը, որ վատնվում է հաց վաստակելու համար, Տերը երբեք աննկատ ու անտես չի թողնում: Մեր հանապազօրյա, մարմնավոր կերակրի համար Տերը մեզ շնորհում է կերակուր՝ հաց: Մեր հոգեւոր տքնանքին՝ որպէս հատուցում, Տեր Հիսուս ինքն իրեն է տվել, որի համար իր երկրավոր կյանքի վերջին օրերին ինքն էլ տքնեց, տանջվեց, հալածվեց, ձաղկվեց, ի վերջո խաչվեց ու մեռավ, որ մենք Կենդանի Հաց ունենանք:

Մի առակ կա. մի մարդ ամեն երեկո տուն վերադառնալիս հինգ հաց է գնում՝ տուն տանելու: Ընկերը մի օր նրան հարցնում է, թե նա ինչո՞ւ է ամեն օր հինգ հաց գնում: Մարդն ասում է, որ մեկն իր ուտելու համար է, երկուսը՝ իր պարտքը վերադարձնելու, իսկ մյուս երկուսը՝ պարտքով տալու համար:

Այդ հարց տվողը մենք ենք, հաց գնողը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է, որի մարմինը ամեն կիրակի այս Սուրբ Սեղանին պատարագվում է անարժաններիս ձեռքով: Հացերից մեկն իր՝ Աստվածության համար է, երկուսը այն բոլորի պարտք մարելու համար են, որոնք ապաշխարության մեջ են գտնվում եւ թողություն են խնդրում Տիրոջից՝ հաղորդության ճաշակմամբ, իսկ մյուս երկուսը՝ որպեսզի նրանք, որոնք մեղանչել են, իրենց համար պարտք լինի՝ դառնալու եւ ընդունելու այն Հացը, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Մարմինն է եւ որն Նրա Արյան հետ ամեն կիրակի պատարագվում է այս Սուրբ Սեղանին:

Ավետարանական այս պատումը, որ հացի բազմացման պատումն է, գեղարվեստական որեւէ պաճուճանք չունի, պարզ շարադրանք է, բայց մեզ ուղղված խորքի հաղորդագրությունը շատ խոստուն է, ինչը երեւում է արդեն Հովհաննես ավետարանչի՝ հացի առաջին բազմացման մասին պատումի հաջորդ մի քանի նախադասությունից. «Գնացեք աշխատեցէ՛ք ոչ թե կորստյան ենթակա կերակրի համար, այլ այն կերակրի, որը մնում է հավիտենական կյանքի համար» (Հովհ. Զ. 27), «Աստուծոց է այն հացը, որ իջնում է երկնքից եւ կյանք է տալիս աշխարհին» (Հովհ. Զ. 32—33): Ամբողջ այս առակի հաղորդագրությունը հաջորդող հիշյալ նախադասությունների մեջ է. չարվարվե՛ք, տանջվե՛ք, քրտնե՛ք, տքնե՛ք մեղքերի քավության համար, որպեսզի արժանի դառնաք հավիտենական հացի ճաշակմանը, այն հացի, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Մարմինն է, եւ որը Աստուծոց է, իջնում է երկնքից եւ կյանք է տալիս աշխարհին (հմմտ. Հովհ. Զ. 32—33):


Բոլոր տեսակի հացերը ճաշակողները մեռան. մեռան անապատի մանանա ուտողներն էլ, մեռան նաեւ այս հացի բազմացմանը ներկա եւ կերակրված բազմության բոլոր անդամներն էլ: Մարմնավոր կերակուր հացը մարդու մարմին է զորացնում, կարեւորը հոգու զորացումն է՝ հավիտենական հացի ճաշակումով, որի համար Տերն ասում է. «Գնացե՛ք աշխատեցէ՛ք ոչ թե կորստյան ենթակա կերակրի համար, այլ այն կերակրի, որը մնում է հավիտենական կյանքի համար» (Հովհ. Զ. 27):


Մեր Տեր Հիսուս Քրիստոսի ավետարանական պատգամն այն է մեզ, որ շարձարվենք, տքենք հավիտենական հացի համար, որ Իր Մարմինն է, որ Աստծուց է, որ Ինքն է տալիս մեր մեղքերի քավության եւ թողության համար:

Ուստի, դժուար եկեք ավետարանական ճամփորդության, գնացե՛ք սուրբ ավետարանիչներ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Հովհաննեսի շարադրանքների հետքերով: Նրանք ձեզ կտանեն մինչեւ Բեթղեհեմ՝ մինչեւ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծննդավայրը, որ կոչվում է «Հացի տուն», «Հացատուն», որտեղ ծնվեց Կենդանի Հացը: Այնտեղից նրանք ձեզ կբերեն մինչեւ Վերնատուն, ուր Տերը, հացը վերցնելով, բեկեց եւ ասաց. «Առե՛ք, կերե՛ք, այս է Իմ մարմինը (Մատթ. ԻԶ. 26):

Գնանք ավետարանիչների շարադրանքի ետեւից, գտնենք իրական Հացը, տքենք այդ Հացի համար, որպեսզի մեր հոգին սովից չմեռնի, որովհետեւ մեր եկեղեցիների խորաններում Քրիստոսի Մարմնի՝ Կենդանի Հացի ճաշակման խորհրդի հաստատումից մինչեւ մեր օրերը տասներկու հազար անգամ հինգ հազար եւ բյուր այս կենդանի հացի ետեւից եկողներ են եղել, ճաշակել եւ գնացել՝ եւ դեռ չհաշված կանանց եւ երեխաներին: Գնանք մեր Տեր Հիսուս Քրիստոսի կենդանի մարմնի եւ արյան ետեւից, Տերը մեզ սոված եւ ծարավ չի թողնի:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, շնորհը եւ խաղաղությունը ամենքիս հետ լինի, այժմ եւ միշտ եւ հավիտյանս, ամեն:





ՄԱՏԹԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՔԱՐՈՉԸ՝ «ՄԱՐԴԸ ՊԱՏԻՒ ՈՒՆԵՐ
ԵՒ ԶՅԱՍՎԱԼԻ, ԱՆԲԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒՆ ԶԱԽԱՍԱՐԵՑԱԼ ՈՒ ԱՆՈՆՑ
ՆՍԱՆԵՑԱԼ»¹ ԽՕՍՔԻՆ ՄԱՍԻՆ

Աստուածային զորութիւնը, որ մեզ արարեց, նոյնը նաեւ կը նախախնամէ մեզ, որովհետեւ այս է Իր գործը: Նախ՝ ոչինչէն ստեղծելը, ապա գոյացնելն ու նոյնութեան մէջ պահելը, որպէսզի Իր արարչագործութիւնը չապականի: Սակայն որովհետեւ մենք Իր պատուիրանը կորսնցուցինք՝ Իր ներկայութենէն զրկուեցանք: Թէեւ մահուամբ պատուհասեց մեզ, սակայն Իր ձեռքէն չհանեց մեզ, այլ իւրաքանչիւրին կը խնամէ: Ասիկա ո՛չ թէ Իր գաղտնի եւ անյայտ զորութեամբ, այլ կը կամենայ, որպէսզի մեղքերէն յե՛տ դարձնէ, երբ մարգարէին միջոցով կը խրատէ. «Հեռացէ՛ք ձեր մեղքերէն, եւ ես ձեզ մօտ վերադառնամ»²: Տակաւին, առաջին փառքը կը յիշեցնէ, որ մեզի տուաւ. [միաժամանակ] մեր անկարողութիւնը կը յայտնէ՝ ըսելով. «Մարդը պատիւ ունէր»³:

Նախ տեսնենք, թէ ինչ կը նշանակէ «մարդ» ըսելը, քանի որ չըսաւ, թէ Ադամ պատիւ ունէր:

Գիտելի է, թէ «մարդ» ըսելը յատուկ անուն մը չէ, որ մէկ հոգի ցոյց կու տայ, ինչպէս Պետրոս կամ Պօղոս ըսելը, որ մէկ անհատ ցոյց կու տայ. այլ հասարակ անուն է, ինչպէս երբ կ'ըսենք՝ քաղաք, աշխարհ, հրեշտակ, Աստուած, քանի որ ամբողջին կը վերաբերի եւ ոչ թէ յատուկ կերպով առանձինն մէկու մը կը դիմէ. նոյնպէս «մարդ» անունը ամբողջ մարդկային բնութիւնը կը ցուցնէ:

Դարձեալ՝ «մարդ» կ'ըսէ, որպէսզի ցուցնէ, թէ բոլորն ալ մեղանչելու կարելիութիւն ունին: Որովհետեւ ըսուած էր Ադամ, ոմանք կարծեցին, թէ ան միայն մեղանչեց, եւ այլեւս ո՛չ ոք կը մեղանչէ:

¹ Սաղմ. ԽԸ. 13, 21:

² Հմմտ. Մաղաք. Գ. 7: Երեմ. ԻԵ. 5:

³ Սաղմ. ԽԸ. 13, 21:

Դարձեալ՝ միայն Ադամին «մարդ» ըսաւ, քանի որ ամբողջ բնութիւնը Ադամի մէջ էր, իսկ ուրիշ մը, որ անհատ է, բնութեան մէջ է, եւ ո՛չ թէ ամբողջ բնութիւնը Պետրոսի մէջ է: Այս այն պատճառով, որովհետեւ Ադամն է մեր բնութեան արմատը:

Դարձեալ՝ «մարդ»ը անունի անդրադարձութեամբ «դրամ» կը կոչուի, որ պատկեր ունի, եւ մարդը Աստուծոյ պատկերն է՝ ըստ Սուրբ Գրոց խօսքին, թէ՛ «Աստուծոյ պատկերն էր»⁴, որն այդ վայելչութեան արժէքը չհասկցաւ:

Դարձեալ՝ «մարդ» ըսելով՝ ըսել կ'ուզէ, թէ իւրաքանչիւր մարդ, երբ իր մօրմէն կը ծնի, ինչպէս Ադամը, որ հողէն ստեղծուեցաւ, անմեղ, արդար ու սուրբ է, իսկ յետոյ չիմանալով, չգիտակցելով իր անմեղութիւնը՝ մեղքերու պատճառով կը կորսուի:

Հիմա տեսնենք, թէ ինչ պատիւ ունէր մարդը, որովհետեւ կ'ըսէ. «Մարդը պատիւ ունէր»⁵:

Արդ, թէեւ Ադամի ստեղծումի ժամանակ բազմաթիւ պատիւներ ունէր մարդը, այսինքն՝ քանի որ Աստուծոյ ձեռքի գործն էր, խորհուրդով արարուեցաւ, Աստուծոյ պատկերին նման կազմուեցաւ, բանական եղաւ, անձնիշխան, կրկին սեռերու միջնորդն էր, բոլոր ստեղծուածներուն զլուխը եղաւ, իրմէ ետք ստեղծագործութիւնը չաւելցաւ, եւ այլ նման բաներ, տակաւին, անոր կազմութենէն ետք Աստուած պատուեց զինք բազմապատիկ գեղեցիկ զարդերով:

Նախ՝ որովհետեւ անասուններու տեղը չգրաւ, այլ դրախտին մէջ, որ անապականութեան տեղ էր, ըստ այսմ. «Զիմֆ փափկութեան դրախտին մէջ դրաւ»⁶:

Երկրորդ՝ որովհետեւ անոր ուրախակից ու ընկերակից հրեշտակները պատրաստեց, որոնք անմարմին բնութիւն էին, ինչպէս Տէրը կը պատմէ Աւետարանին մէջ. «Մարդ մը երկու որդիներ ունէր»⁷:

Երրորդ՝ քանի որ մարդուն որպէս կերակուր անթառամելի ու անծորելի պտուղը տուաւ, երբ դրախտի մէջն էր՝ ըստ այսմ. «Դրախտի բոլոր ծառերէն կրնաք ուտել»⁸:

⁴ Տէս Ծննդ. Ա. 27:

⁵ Սաղմ. ԽԸ. 13, 21:

⁶ Հմմտ. Ծննդ. Բ. 8:

⁷ Դուկ. ԺԵ. 11:

⁸ Ծննդ. Բ. 16:

Չորրորդ՝ որովհետեւ մարդուն հագուստը լուսեղէն ըրաւ եւ ոչ թէ ինչ-որ նիւթէ, որ կորստական է՝ ըստ այնմ. «Փառով ու պատիւով պսակեցիր զայն»⁹, որ է լոյսով, որ Երկրորդ Ադամը եւս՝ մեր Տէրը, Իր հագուստին պայծառութիւնը ցոյց տուաւ Թաբոր լեռան վրայ¹⁰:

Հինգերորդ՝ անոր [մարդուն] թագաւորութեան շնորհ տուաւ՝ աստուածաբար տիրելու բոլոր ստեղծուածներուն վրայ՝ ըստ այնմ. «Ամէն ինչ անոր հնազանդեցուց, խաշնը...»¹¹:

Վեցերորդ՝ քանի որ անոր մարգարէութեան շնորհ տուաւ՝ գիտնալու համար ապագային կատարուելիքները՝ ըստ այնմ, որ կնոջ մասին մարգարէացաւ. «Ասիկա հիմա իմ ոսկորներէս ոսկոր է, այդ պատճառով պիտի ձգէ...»¹²:

Եօթներորդ՝ որովհետեւ զինք քահանայական պատիւով զարդարեց՝ հայր ըլլալու բոլորին՝ ըստ այնմ. «Որ բոլոր անասուններուն եւ զազաններուն անուններ դրաւ»¹³, ինչպէս աստուածային Գիրքը կը վկայէ:

Ութերորդ՝ քանի որ սրբնթաց էր, ինչպէս միտքը մարմինին մէջ, որովհետեւ ուր որ ուզէր, ակնթարթի մը մէջ կը հասնէր: Եւ յայտնի է, օձին խօսած ժամանակ անասուններն ու զազանները¹⁴ մօտիկ էին, քանի որ Ադամ դրախտին մէջ դրուեցաւ, ինչպէս կ'ըսէ Գիրքը¹⁵: Իսկ օձն ու անասունները դրախտէն դուրս էին: Իսկ դրախտը, կ'ըսեն, մօտիկ էր, քան ցամաք երկիրը, եւ նոյն ժամուն երկրի մէջէն աշխարհի եզերքը հասնիլը հնարաւոր չէր դանդաղ մարդու մը համար, հետեւաբար յայտնի է, թէ մարմինով սրբնթաց էր:

Իններորդ՝ որովհետեւ այնպիսի կարողութիւն ունէր, որ բոլոր անասուններուն, զազաններուն եւ ուրիշներուն կամքը կը ճանչնար ու ձայնը կ'իմանար, ինչպէս կարծէք մէկը իր ընկերոջ հետ խօսի: Եւ յայտնի է, քանի որ երբ օձը խօսեցաւ, կիներ իմացաւ:

Տասներորդ՝ որովհետեւ ցաւ, տրտմութիւն եւ հեծութիւն չունէր, ո՛չ ալ ապականութիւն եւ մահ, այլ անմահութեան մէջ էր:

⁹ Սաղմ. Լ. 6: Եբր. Բ 7:

¹⁰ Տէս Մատթ. Ժէ. 1–2: Մարկ. Թ. 1–2: Դուկ. Թ. 28–29:

¹¹ Սաղմ. Լ. 7: Ա. Կորնթ. ԺԵ. 26:

¹² Ծննդ. Բ. 23–24:

¹³ Ծննդ. Բ. 20:

¹⁴ Ծննդ. Բ. 8:

¹⁵ Տէս Ծննդ. Բ. 7:

Տասնմեկերորդ՝ քանի որ ո՛չ մէկ բանի կարօտութիւն ունէր, որովհետեւ [Աստուած] բոլոր արարածները մարդուն վայելքին համար տուաւ:

Տասներկերորդ՝ քանի որ մարդը Աստուծոյ խօսակից էր, բերնէ բերան կը խօսէր եւ ո՛չ թէ պատգամներով, ինչպէս յայտնի է Սուրբ Գիրքին մէջ¹⁶:

Տասներեքերորդ՝ որովհետեւ Աստուծոյ սիրուած էր, որպէս նոր բան մը, եւ յայտնի է պատուիրելէն, քանի որ պատուէրը սիրելիներուն է եւ ո՛չ թէ ծառաներուն՝ ըստ այնմ. «Տէր Աստուած Ադամին պատուիրեց»¹⁷:

Տասնչորսերորդ՝ որովհետեւ Աստուած Իր ստեղծածներէն ո՛չ ոք անոր [Ադամի] նման ըրաւ, ինչպէս կ'ըսէ Գիրքը, թէ՝ «Ադամի համար օգնական մը չգտնուեցաւ»¹⁸:

Տասնհինգերորդ՝ կատարումը այս էր, որ անոր Երկինքի Արքայութիւնը խոստացաւ, եւ եթէ պահէր պատուիրանը, պիտի վերափոխէր զինք յաւիտենական կեանքին:

Այս բոլորը մարդը չհասկեցաւ, այլ մէկ պտուղի ճաշակումով այս բոլորը կորսնցուց. աւելին, այս բոլորին փոխարէն կրկնապատիկ պատիժ ստացաւ: Այդ պատճառով կ'ըսէ. «Մարդը պատիւ ունէր եւ չհասկեցաւ, անբան անասուններուն հաւասարեցաւ»¹⁹:

Սակայն եթէ մէկը ըսէ, թէ Աստուած մեզ ինչո՞ւ անձնիշխան ըրաւ, եւ եթէ ըրաւ, պէտք էր պահէր, որպէսզի չարիք չկրնայինք գործել:

Ասոր կը պատասխանենք, թէ այնպիսիները, որ այս բանին մէջ զԱստուած կը մեղադրեն, պէտք է ըսեն, թէ աւելի լաւ էր, որ մենք անբան ու անասուն ըլլայինք, քանի որ անասուններուն մէջ անձնիշխանութիւն չկայ, իսկ իւրաքանչիւր բանական պէտք է անձնիշխան ըլլայ, որովհետեւ բանականութեամբ անձնիշխանութիւն կը մտնէ:

Դարձեալ՝ քանի որ Աստուծոյ պատկերով էր, պէտք էր նախագաղափարին նմանիլ: Արդ՝ Աստուած մարդուն շարութիւններու ընդունակ չէ ըրած, այլ բարի բնութեամբ եւ Իր նման: Իսկ մենք կամաւորութեամբ Աստուծոյ նմանութիւնը կը ձգենք եւ սատանային նմանիլ կը կամինք: Եւ ասկէ յայտնի է, թէ իւրաքանչիւր մարդ շարութիւններ գործող չէ, այլ անոնք, որոնք յօժարեցան, անոնք գործեցին: Իսկ եթէ Աստուած դրած

¹⁶ Ծննդ. Ա.-Բ.:

¹⁷ Ծննդ. Գ. 17:

¹⁸ Ծննդ. Բ. 20:

¹⁹ Սաղմ. ԽԸ. 13, 21:

ըլլար, ապա բոլորն ալ շարեր կ'ըլլային, հետեւաբար յայտնի է, թէ Աստուած [մարդուն] բնութիւնը բարի արարած է:

Դարձեալ՝ այս, որ մենք փոփոխում ունինք, եւ ասիկա մեր սկիզբէն է, քանի որ փոփոխումէ եղանք եւ ոչ թէ էինք ու եղանք: Այդ պատճառով ալ պահանջը կը փոխէ մեզ՝ միշտ մէկ գործի մէջ շմնալու, իսկ զօրութիւնը յօժարութեան հետ միասին մեզ կրնայ մշտապէս բարիին մէջ պահել, բայց յօժարութեան պակսելուն՝ հակառակին կը փոխուի, քանի որ եղական է: Իսկ հրեշտակները, քանի որ եղականներ են, մէկ յեղում ունին, այսինքն՝ քանի որ չէին ու եղան, այդ պատճառով ալ մէկ յեղում ունին, քանի որ սկիզբէն անոնք, որոնք բարիի մէջ մնացին, այլեւս չեն կրնար շեղիլ, իսկ որոնք շարը [ընտրեցին], ատոր մէջ կը մնան: Իսկ մարդը երկու յեղում ունի. առաջինը՝ քանի որ եղած է [եղական է], երկրորդը՝ որովհետեւ նիւթական է: Այդ պատճառով շարէն բարիի կը փոխուի եւ փոխադարձաբար:

Դարձեալ՝ Աստուած բնութեամբ բարի է. բնութեամբ բարի եղողը պէտք է շարութիւններէ անխառն ըլլայ, քանի որ շուգեր շար ըլլալ եւ չի՛ կրնար շար ըլլալ, եւ Ան շարութիւն չի՛ գիտեր, եւ այս այն պատճառով, քանի որ աստուածային կամքը կատարեալ է եւ կամքի պակասութիւն չունի: Այդ պատճառով ալ չի՛ կրնար շար ըլլալ: Իսկ մարդուն բնութիւնը մեղանշելէն ետք անկատար է, այդ պատճառով անկատարութիւնը կը կամենայ մեղքերով լեցնել: Իր անկատարութիւնը մարդը ըրաւ, որովհետեւ Աստուծոյ պատուիրանը չպահեց եւ Անոր կամքը անկատար ձգեց: Այդ պատճառով իր կամքն ալ անկատար մնաց եւ կամքի պակասութենէն մեղքը ներս մտաւ: Հետեւաբար այս պատասխանէն յայտնի է, թէ Աստուծոյ գործերէն չէ, ինչպէս Աւետարանը կ'ըսէ. «Առանց Անոր ոչինչ եղաւ»²⁰, այսինքն՝ մեղքը:

Դարձեալ՝ որովհետեւ մարդուն անձնիշխան ըրաւ, չստիպեց մեղաւոր ըլլալ, այլ ինչպէս Աստուած, որ մեր նախագաղափարն է, անձնիշխան եւ արդար է: Իսկ թէ չենք ուզեր արդար ըլլալ մեր կամքով, այսինքն՝ մարմինի կամ սատանայի պատճառով, քանի որ առանց սատանայի չարիք չկայ, որովհետեւ ան նախաշարն է, այդ պատճառով անձնիշխանութիւնը պատճառը կը շեղէ եւ արդար չըլլար: Ասկէ յայտնի է, թէ անոնք, որոնք մարմինինը չեն հոգար ու սատանային պատրանքները ոչինչ կը համարեն, արդար ու սուրբ են: Այսքանը՝ այս մասին:

²⁰ Հմմտ. Յովհ. Ա. 3:

Ասոր հետ կը հարցնեն նաեւ, թէ եւ անձնիշխան ըրաւ, պէտք էր որ մեզ պահէր, որպէսզի չկարենայինք չարութիւն գործել:

Ասոր կը պատասխանենք, եթէ այդպէս ըլլար, բազմաթիւ պակասութիւններ կ'ըլլար:

Նախ՝ Աստուծոյ կողմէ, որ զԱստուած կը ցուցնէր որպէս տգէտ կամ անկարող, եւ նախապէս չգիտցաւ, թէ ինչ ստեղծեց, եւ յետոյ գիտնալով առաջին ստեղծումը՝ չկամեցաւ եւ կամ անկարող էր, քանի որ սկիզբը չէր կրնար այդպէս ընել, յետոյ ըրաւ:

Երկրորդ՝ մեր կողմէ, որովհետեւ երբ մեր վրայ պարտադրանք եւ բռնութիւն ըլլար՝ արդար ըլլալու, ապա արդարութեան վարձատրութիւն չէինք ունենար, քանի որ ակամայ եւ պարտադրաբար արդարութիւն գործեցինք:

Երրորդ՝ որովհետեւ ստութիւն կ'ըլլար աստուածային Գիրքին մէջ, քանի որ կ'ըսէ. «Աստուած մարդը Իր պատկերով ստեղծեց»²¹, ու տարբերուն նման կ'ըլլայինք, որովհետեւ ինչպէս կը պարտադրէ, այդպէս կ'ըլլայ:

Չորրորդ՝ քանի որ մարդուն պատուականութենէ չէր երեւնար՝ ինքնիրմով սրբութիւն ունենալ, որովհետեւ բոլոր ստեղծուածներուն մէջ միայն մարդն է, որ կրնայ ինքնիրմէ սրբութիւն ստանալ:

Հինգերորդ՝ քանի որ բոլոր ստեղծուածներուն կատարումը մարդն է, [ապա] յայտնի է, որ յետոյ եղաւ: Արդ, եթէ ասոր գործը պարտադրանքով էր, ինչպէս այլ կենդանիներու, հետեւաբար Աստուած կատարեալ չէր ստեղծած, քանի որ արարածները անկատար ըրաւ, իսկ ասիկա կը ստէ Մովսէսին ըսածը, որովհետեւ կ'ըսէ, թէ՝ «ամբողջացան երկինքն ու երկիրը եւ անոնց բոլոր զարդերը»²²:

Արդ, եթէ մէկը հարցնէ, թէ երբ մարդուն Աստուծոյ պատկերով ստեղծեց, ապա ասիկա [մարդը] պէտք էր այնպէս ըլլար, որ ոչ եղածները իմանար եւ ո՛չ ալ մեղքին մէջ իյնար՝ գիտնալով, եթէ ուտէ պտուղը, ապա այս պատիւէն պիտի իյնայ [զրկուի]:

Ասոր պատճառը գիտելի է, քանի որ ինչքան որ մարդու բնութիւնը կրնար տանիլ, Աստուած այդքան անոր շնորհք եւ փառք տուաւ, եւ Աստուած ոչինչ տուաւ անոր, որու մէջ թերութիւն ըլլար, այլ որովհետեւ

²¹ Ծննդ. Ա. 27:

²² Ծննդ. Բ. 1:

մարդու բնութիւնը յետագայի կատարուելիքները հնարաւորութիւն չունէր իմանալու, քանի որ իմաստասէրը կ'ըսէ. «Ուր ուր [մարդկային] բնութիւնը չի՝ հասնիր, այնտեղ չի՝ հասնիր նաեւ գիտութիւնը»²³, եւ յայտնի է անասուններէն:

Երկրորդ՝ որովհետեւ Աստուած բնութեամբ անեղ է, այդ պատճառով անեղը իրը կը ճանչնայ ու գիտէ, ինչպէս ներկայ՝ ըստ այնմ. «Աչքերդ անգործութիւնս տեսան եւ գիրքի մէջ գրուեցան»²⁴: Անեղները երկուքն են: Նախ այն, որ սկիզբ չունի եւ է՛, է՛ եւ անեղ կ'ըսուի, քանի որ սկիզբ չունի: Իսկ երկրորդ՝ անեղ կ'ըսուի, այն բանին որ տակաւին չէ եղած, բայց պիտի ըլլայ: Եւ քանի որ Աստուած անեղ է, երկուքն ալ գիտէ ներկայօրէն, իսկ մարդը եղական է: Այդ պատճառով եղած իրերը կրնայ ճանչնալ ու գիտնալ: Եւ թէեւ Աստուած մարգարէութեան շնորհք տուաւ Ադամին, սակայն ո՛չ այնպէս, որ բոլոր գալիքները [կատարուելիքները] գիտնար: Իսկ այն, որ մարգարէն եւ Աստուած գիտեն գալիքները, սակայն այդ [գիտնալուն մէջ] կը զանազանուին: Որովհետեւ մարգարէին տեսութիւնը մէկ կամ բազմաթիւ իրերու վրայ է, իսկ Աստուած ամէն ինչ գիտէ, եւ ոչինչ կայ Իրեն համար անիմանալի:

Երրորդ՝ քանի որ եղականին յատուկ է պակասագէտ եւ մոռացկոտ ըլլալ, որպէսզի Աստուծմէ յատկացուի, քանի որ Ան ամենագէտ է եւ ոչինչ կը մոռնայ, այդ պատճառով մոռցաւ Աստուծոյ պատուիրանը ու չկրցաւ իմանալ հանդերձեալ չարիքները, որ պիտի պատահէին իրեն:

Իսկ թէ ինչ է այն հաւասարութիւնը, որով Ադամ մարդը հաւասարեցաւ անասուններուն եւ միւսներուն: Այս մասին ուրիշ տեղ մը բազմաթիւ կերպով գրուած է Ղուկասի գլուխին մէջ²⁵:

Բայց այստեղ գիտելի է, թէ նոյն գործով, որով պատուիրանը կորսնցուց, այնտեղ բազմաթիւ կերպերով անասուններուն նմանեցաւ:

Նախ՝ որովհետեւ անասուններու սովորութիւնն է, թէ ինչ որ տեսնեն կամ իրենց ցոյց տրուի, առանց քննութեան կը ձգտին ատոնց, եթէ պէտք ունին առնելու կամ ոչ: Նոյնպէս ըրաւ Ադամ, քանի որ փութաց առանց քննութեան պտուղէն ուտել, որ օձը ցոյց տուաւ իրեն՝ գովելով զայն [պտուղը]:

²³ Հմմտ. Իմաստ. ԺԳ. 1:

²⁴ Սաղմ. ՃԼԸ. 16:

²⁵ Խօսքը մեր հեղինակին «Ղուկասու Աւետարանի մեկնութիւն»ի մասին է, Գ. գլուխ (ծանօթագրութիւնը խաղ քհնյ Ղազարեանինն է):

Երկրորդ՝ որովհետեւ անասուններուն յատուկ է, թէ երբ բան մը կ'արգիլեն իրմէ, այդ բանը կ'ուզէ, իսկ ինչ բանը, որ չեն արգիլեր, չուզեր, ինչպէս յայտնի է էշէն, քանի որ երբ առջեւ կը մղեն, չերթար, իսկ երբ յետեւ կը քաշեն, կ'ընթանայ, նոյնպէս մարդը ըրաւ, որովհետեւ ինչ որ Աստուած ըսաւ իրեն, որ այնտեղ [փափկութեան դրախտին մէջ] չուտէ, կերաւ:

Երրորդ՝ քանի որ անունը միայն երեւոյթին կը նայի եւ ոչ թէ իրին էութեան, այսինքն՝ կը խաբուի իրի տեսքէն, նոյնպէս ալ մարդը, տեսաւ ծառը, որ քաղցր էր ուտելու համար եւ հաճելի աչքերուն՝ նայելու համար, որով առաւ անոր պտուղէն եւ կերաւ:

Չորրորդ՝ որովհետեւ անասունները դիւրութեամբ որոգայթներու մէջ կ'իյնան, նոյնպէս Ադամ, դիւրութեամբ բռնուեցաւ բանասարկուն որոգայթէն:

Հինգերորդ՝ քանի որ անասունները, իգամուռներ ըլլալով, որձը էգին համար ոչինչ կը համարեն: Զգեստներն ու քարերը, այլ՝ կը վազէ եւ յետոյ ոչինչով կ'օգտուի, քանի որ կը վնասէ²⁶: Այդպէս ալ Ադամ մարդը Եւային համար ոչինչ համարեց իր կորուստը, սակայն յետոյ ոչինչով օգտուեցաւ: Այլ, թէեւ քիչ թէ շատ Ադամի համար ըսուեցաւ, բայց ատոր վրայ երկար ժամանակ անցած է. այլեւ Քրիստոս՝ մեր Աստուածը այս հաւասարութիւնը վերցուց անասուններէն եւ վերստին մեզի շնորհեց Ադամէն կորսուածը: Եւ այդ հիացում չէր, եթէ Ադամ չիմացաւ իր անձին կորուստը, քանի որ իրմէ առաջ ուրիշ մեղաւոր չունէր, որմէ սորված ըլլար:

Իսկ մենք Ադամէն կորուստը սորվեցանք, իսկ Քրիստոսով փրկուեցանք, սակայն դարձեալ անմտացանք անորմէ [Ադամէն] իսկ աւելի:

Նախ՝ որովհետեւ Ադամ իր ժամանակին Աստուծոյ որդի չանուանուեցաւ, իսկ մենք Աստուծոյ որդիներ եղանք եւ որդիութիւնը մեղքով կորսնցուցինք:

Երկրորդ՝ քանի որ բանասարկուն Ադամէն նախանձեցաւ եւ ո՛չ թէ Ադամ սատանային հետեւեցաւ, իսկ մենք մեր կամքով կը հետեւինք սատանային եւ անոր նախանձին [պատճառ] չենք ըլլար [մնար]:

Երրորդ՝ որովհետեւ Ադամ չէր գիտեր, թէ կը մեռնի, իսկ եթէ գիտնար, պտուղէն չէր ուտեր, քանի որ ոչ ոք մահացած տեսած էր: Իսկ մենք

²⁶ Տողը, կը կարծենք, որ վրիպումի մը արդիւնքն է, որովհետեւ այս հատուածի ընդհանուր մտածումին չի՝ համապատասխաներ: Յարգելով բնագիրը՝ ձգած ենք նոյնութեամբ:

գիտենք, որ պիտի կորսուինք մեղքերու պատճառով, սակայն անձանձ-րոյթ կերպով կը մեղանշենք:

Չորրորդ՝ որովհետեւ Տէրը Ադամին մէկ անգամ պատուիրեց եւ այն-պէս չէր, որ պարսաւանքով էր, թէ մոռցաւ, իսկ մեզի, մեր մանկութենէն ի վեր, Սուրբ Գիրքին միջոցով բազմաթիւ անգամներ պատուիրուեցաւ, սակայն երբեք չենք մտածեր այդ մասին:

Հինգերորդ՝ քանի որ ան մէկ անգամ մեռաւ մէկ մեղքով, իսկ մենք բազմաթիւ անգամներ կը մեղանշենք եւ տեսակ-տեսակ մեղքերով:

Դարձեալ՝ «անասուններուն հաւասարեցաւ»։ այս է, որովհետեւ մեղանշելէ ետք, պտուղը ուտելով, անասուններունը նախ իր վրայ բերաւ, նմանապէս մենք ամէն ինչ մեզ վրայ կը բերենք:

Բայց եթէ մէկը հարցնէ, թէ ինչպէ՞ս ցանկութիւնը, բարկութիւնը, որկրամոլութիւնը, բղջախոհութիւնը եւ այլն, անասուններուն մէջ բնական են (բնութիւն են), իսկ մեր պարագային մեղք կ'ըլլան: Եւ թէ ինչպէ՞ս անասուններուն պարագային մեղք չէ. որովհետեւ, եթէ անասունը ցանկութիւն չունենար, ինչպէ՞ս անոնց տեսակը կը յառաջանար, կամ եթէ նապաստակը երկշոտ չըլլար, ինչպէ՞ս կրնար շունէն ազատիլ, որ իրմէ (նապաստակէն) աւելի հզօր է: Կամ եթէ եզը, կամ գոմէշները եւ ուրիշ մեծ անասուններ ազահակեր չըլլային, ինչպէ՞ս այդքան զօրաւոր կրնային ըլլալ այդպիսի մեծ մարմիններու մէջ: Կամ եթէ առիւծը բարկացող չըլլար, ինչպէ՞ս կրնար ապրիլ, քանի որ չի՛ կրնար խոտ ուտել: Տակաւին, ասոնց մէջ նմանատիպ այլ բաներ ալ կան, որ մեղք չեն, որովհետեւ իրենց համար ապրեցողիչ են եւ կեանք:

Նիւսացին²⁷ կը պատասխանէ, թէ՝ «Երկու կերպով անոնց բնութիւնը (նկատի ունի վերը թուարկուած բնազդները) մեռ մէջ մեղք կ'ըլլան»:

Նախ՝ որովհետեւ անասուններուն մէջ այս ախտը փոքր է, իսկ մենք կ'առնենք ու կը բազմացնենք, եւ այդպիսով մեղք կ'ըլլայ: Քանի որ անոնք ցանկութիւն տարին մէկ անգամ կ'ունենան: Իսկ մենք, զայն առնելով, մէկ օրուան ընթացքին բազմաթիւ անգամներ գործելով՝ չենք յագեանար: Այսպէս ալ, երբ երկու եզներ կը պատերազմին, եղջիրներով իրարու զարնելով, սակայն երբ դադրին իրարու զարնելէ, այլեւս կռի-

²⁷ Ս. Գրիգոր Նիւսացի (շուրջ 335 Կեսարիա – շուրջ 394 Նիւսա): Յոյն գրող, աստուածաբան, փիլիսոփայ, եկեղեցւոյ հայրերէն: Շուրջ 371-էն՝ Նիւսայի եպիսկոպոս: Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքի մետրոպոլիտը եղած է (մէջբերումի աղբիւրը մեզի համար անյայտ է) – (Ժանօթագրութիւնը խաղ քհնյ. Դազարեանինն է):

ւը չեն յիշեր, իսկ մենք մեր եղբոր մէկ խօսքին համար ամբողջութեամբ ոխով ու նախանձով կը լեցուինք ու չենք հաշտուիր: Տակաւին, ձին ամբողջ օրը շատ չնչին բան կ'ուտէ, նմանապէս ուղտը, գիշեր ատեն քիչ կերածով կը դիմանայ մինչեւ յաջորդ օր նոյն ժամը: Իսկ մենք անյագաբար գիշեր եւ ցերեկ չենք դադարիր ուտելէ՝ զանազան խորտիկներ փնտռելով: Այդպէս ալ է տրտմութիւնը անասուններուն եւ մեր մէջ: Այդ պատճառով մեր մէջ մեղքի կը վերածուի:

Իսկ երկրորդ՝ քանի որ հակառակին կը փոխենք, որ մեզի համար օրէնք չէ, քանի որ եթէ մեր մէջ երկիւղ կայ, զայն պէտք է բարիին համար գործածել, չարիքներէ երկնչիլ եւ ո՛չ՝ բարիքներէն՝ ըստ այնմ. «Տիրոջ երկիւղով իւրաքանչիւր ոք չարիքէ կը խորշի»²⁸: Այդպէս ալ, եթէ միշտ բարկանանք, ո՛չ թէ արդարութեան համար, այլ՝ մեղքերուն վրայ [բարկանանք]: Իսկ եթէ մեր մէջ ցանկութիւն կայ, Արքայութիւնը ցանկանք եւ ո՛չ թէ մեղքերը: Իսկ եթէ մեր մէջ սրտամտութիւն կայ, տրտմինք, որովհետեւ սրբութիւն չգործեցինք, եւ ո՛չ թէ այն բանին համար, թէ մեղք չգործեցինք: Իսկ եթէ մեր մէջ հպարտութիւն կայ, պիղծ խորհուրդներուն դէմ հպարտանանք եւ թոյլ չտանք պոռնկութեան վատթար խոնարհութեան: Այսպէս ալ միւսներուն պարագային իմացիր: Եւ ասոնք, որ անասնական ախտեր են, ասոնք մարմինի միջոցով մարդուն մէջ մտան, քանի որ մարմինը անասուններու մարմիններու կերպարանքը ունի, իսկ հոգին՝ Աստուծոյ:

Սակայն, յաջորդ անգամ կրնայ ըլլալ ըսես, թէ դուն որ ասոնց անասնական կ'ըսես, ահաւասիկ ասոնք Աստուծոյ վրայ ալ կը տեսնուին, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Տէր սրտմտութեամբ Ահարոնի վրայ բարկացաւ»²⁹, եւ թէ՛ «արքնցիւր [...], եւ թէ՛ արքնցաւ բունէն»³⁰:

Կը պատասխանենք, թէ իւրաքանչիւր խօսքի ըսելու կերպերը չորս են, որ Աստուծոյ պարագային կ'ըսուին:

Նախ՝ է եւ կ'ըսուի, ինչպէս Աստուած է, Աստուած ալ կ'ըսուի, ստեղծող՝ եւ կ'ըսուի, մարդասէր՝ եւ կ'ըսուի:

Երկրորդ՝ է եւ չըսուիր, ինչպէս Աստուծոյ բնութիւնը անքննելի է եւ մարդկային լեզուով չըսուիր [կարելի չէ բացատրել], որովհետեւ անճառելի է:

²⁸ Առակ. ԺԵ. 27:

²⁹ Բ. Օր. Թ. 20:

³⁰ Հմմտ. Սաղմ. ԾՁ. 9, Ճէ. 3:

Երրորդ՝ չէ, բայց կ'ըսուի, որպէսզի մենք բան մը իմանանք Աստուծոյ մասին, ինչպէս կ'ըսենք Աստուծոյ բարկութիւն մեզ պատժելուն համար, եւ մարմինն ու միւս բաներն ալ ասոր պէս, որ Աստուծոյ մէջ չեն, սակայն կ'ըսենք, որպէսզի մեր մէջ երեւի Աստուծոյ եղող գործ մը:

Չորրորդ՝ չէ՛ եւ չըսուիր, ինչպէս Աստուած չար չէ՛ եւ չըսուիր, մեղք չէ՛ եւ չըսուիր, խաւար չէ՛ եւ չըսուիր, նոյնպէս միւսները իմացիր:

Մեր բնութեան համար ամէնէն շատ հասանելին այն է, թէ անհասանելին ըստ Անոր կերպարանքին կը պատմենք, կը խօսինք այդ մասին, որպէսզի մեզի քիչ մը իմացում տայ:

Իսկ թէ Աստուած մարդուն կազմուածքին ձեւ մը տուաւ, որով կրնար իմանալ, թէ ինչպիսի վարքով պէտք է ապրի ինք, եւ թէ ինչո՞ւ համար Աստուած մարդուն ձեւը ուղիղ ըրաւ, եւ ասիկա բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ նախատիպը պատկերը կը ցուցնէ, որովհետեւ «մեր Տէր Աստուածը ուղիղ է»³¹, կ'ըսէ Գիրքը: Իսկ անասունները Աստուծոյ պատկերով չեն, այդ պատճառով ալ ուղիղ չեն:

Երկրորդ՝ մարդուն ձեւը (կազմուածքը) դէպի վեր է, որ կը ցուցնէ թէ՛ բոլոր կենդանիներուն վրայ տէր եւ իշխան է, իսկ անասուններուն ձեւը գլուխն ի վար է, որ ծառայ ըլլալին կը ցուցնէ, որոնք մարդու հնազանդութեան տակն են:

Երրորդ՝ ըստ բնական քննութեան, որովհետեւ մարդու գլուխին հողը աւելի թեթեւ է, այդ պատճառով ալ դէպի վեր է, իսկ անասուններուն՝ հողին տարրը շատ է գլուխին մէջ, այդ պատճառով կոր է եւ հողին մօտիկ:

Չորրորդ՝ կը նշանակէ մարդուն ուղղութիւնը, իբրեւ թէ իր ցանկութիւնն ու կարօտութիւնը ո՛չ թէ ստորայիններէն առաւ, այլ՝ Աստուծոյ, Անորմէ՝ դէպի որուն իր գլուխը բարձրացուցած է: Իսկ անասուններուն կը ցուցնէ, թէ իր կարօտութիւնը երկրի վրայ է, որու մօտեցուցած է իր գլուխը:

Հինգերորդ՝ քանի որ մարդը կրկնակի գործ ունի կատարելու, մէկը՝ որովհետեւ ոտքերով կ'ընթանայ, իսկ միւսը՝ քանի որ իր ձեռքերով կ'աշխատի երկրի մէջ: Արդ, անասունները միտք չունին, որով կարենան գործ ընել, այդ պատճառով անոնց ձեռք պէտք չի՛ գար: Իսկ մարդը ունի իմաստութիւն, գիտութիւն, հնարամտութիւն եւ խօսք, որոնք ձեռքի կը կարօտին: Այդ պատճառով անհրաժեշտութեան համար երկու ոտքերու

³¹ Սաղմ. ՂԱ. 16:

վրայ կանգնեցաւ, իսկ երկուքն ալ գործի ուղղելով՝ խօսքին ու հնարամտութեան բնութիւն (մարմին-կերպարանք) շինեց:

Վեցերորդ՝ որովհետեւ մարդուն մարմինն ու զգայարանքները ամէն ինչով նման են անասուններուն, արդ, եթէ մարդը կորագլուխ ըլլար, ո՛չ մէկ բան կրնար զինք զանազանել անասուններէն: Այդ պատճառով մէկ բան է, որ կը զանազանէ մեզ անասուններէն. մեր ուղղաձեւութիւնը, որ յայտնի է մարդու հետեւութենէն:

Եօթներորդ՝ մարդուս ձեւը կը ցուցնէ, թէ երկրի մէջ պիտի չմնայ, այդ պատճառով պիտի բարձրացուի այստեղէն՝ երկրէն, կամ Երկինքի Արքայութիւն եւ կամ դժոխք: Իսկ անասուններուն [ձեւը] կը ցուցնէ, թէ երկրի մէջ պիտի կորսուին եւ այստեղէն ուրիշ աշխարհ պիտի չփոխուին:

Ութերորդ՝ մարդուս ձեւը կը ցուցնէ, թէ իր մարմինը յարութիւն պիտի առնէ, իսկ անասուններունը կը ցուցնէ, թէ յարութիւն չունի [անոնց մարմինը]:

Իններորդ՝ մարդուս կազմուածքը այսպէս մշտակայ է, քանի որ «մարդու հոգին Աստուծմէ կու գայ»³², ինչպէս Սողոմոնը կ'ըսէ, իսկ անասուններունը՝ երկրէն է: Այդ պատճառով պէտք է, որ մարդուն ձեւը իր արմատին նման ըլլայ, իսկ անասուններուն ձեւը՝ իրենց բնութեան: Եւ որովհետեւ մարդ երկրէն է եւ երկինքէն է, այդ պատճառով իր մէկ մասը երկինքին կը ձգտի, իսկ միւսը՝ երկրի վրայ է:

Տասներորդ՝ քանի որ Աստուած ասոր փրկութիւնը մարդկային բնութեամբ պիտի իրագործէր: Արդ, վայել չէր Աստուծոյ մարդ ըլլալ առանց ըստ այս ձեւին, որ մարդը ունի: Այդ պատճառով մարդուն իր դէմքով ուղիղ ըրաւ, այլեւ մարմինով ալ մարդը Աստուծոյ նման է եւ Անոր պատկերով է, որովհետեւ իր մարդեղութեան պատկերով ըրաւ մարդը: Իսկ անոնք որոնք զՔրիստոս ճշմարիտ Աստուած չեն հաւատար, չունին Աստուծոյ պատկերակցութիւնը իրենց մէջ: Այսքանը այս մասին:

Արդ, մարդը իր այս ձեւը ձգելով՝ անասուններու ձեւի մակարդակին իջաւ՝ մեղքեր գործելով, այդ պատճառով ալ նմանեցաւ անոնց, ինչպէս կ'ըսէ մարգարէն³³:

Իսկ ոմանք կը հակառակին Ադամին ու դրախտին համար՝ չիմա-

³² Հմմտ. Իմաստ. է. 7, Թ. 17:

³³ Տէս Սաղմ. ԽԸ. 13, 21:

նալով մարգարէին խօսքը՝ ըսելով, թէ Ադամն ու դրախտը ապականացու էին: Իրենց մոլոր կարծիքը երկու կերպով կը հաստատեն:

Նախ՝ եթէ դրախտը աշխարհի մէկ մասն է եւ Արեւելքի մէջ է, արդ՝ ամբողջ աշխարհը ապականացու է, հետեւաբար այն եւս ապականացու է, որ իր մէջ է, քանի որ կարելի չէ միեւնոյն բանին մէջ մաս մը ապականացու ըլլայ, եւ ուրիշ մաս մը՝ անապական:

Եւ երկրորդ՝ երկրորդ անգամ գալուստէն կը հաստատեն, թէ առաքեալը կ'ըսէ. «Երբ երկինքը հողեմուտով պիտի այրի»³⁴: Իսկ մարգարէն, թէ՛ «երկինքը ինչպէս մագաղաթ պիտի գալարի»³⁵: Արդ, երկիրը, որ անոր վրայ է, պիտի այրի, հետեւաբար, դրախտն ալ կ'այրի, եւ ինչ որ կ'այրի, ապականացու է:

Եւ արդ, նախ անոնց կարծածներուն պատասխանենք եւ ապա ուղիղը հաստատենք:

Արդ՝ առաջինին համար կ'ըսենք, թէ աշխարհի ապականութիւնը կրկնակի պատճառով կ'ըլլայ:

Նախ՝ եղանակներու փոփոխումէն, գարունէն եւ միւսներուն, որոնք կը ցրտանան ու կը տաքնան, եւ ծնունդ, եւ ապականութիւն, իսկ դրախտին մէջ այսպիսի բաներ չկան, որովհետեւ լուսնային գունդէն բարձր է դրախտին դիրքը:

Եւ երկրորդ՝ արեգակին շրջագայութենէն, քանի որ հեռանալով կ'ապականէ ծառերն ու բոյսերը, իսկ մօտենալով՝ կը բուսցնէ: Իսկ դրախտը արեգակի լոյսին կարօտ չէ, որովհետեւ ան միշտ լոյս է, նաեւ ո՛չ անորմէ հեռանալու կամ մօտենալու [խնդիր կայ], հետեւաբար՝ ան չապականիր:

Իսկ այն, որ ըսաւ, թէ բանի մը մէջ մէկ մասը չի կրնար ապականացու ըլլալ, եւ ուրիշ մաս մը՝ անապական, կ'ըսենք, թէ բազմաթիւ բաներ կան, որոնց մէկ մասը այդպէս է, իսկ միւս մասը՝ այնպէս: Օրինակ՝ մարդու հոգին անապական է, իսկ մարմինը՝ ապականացու, եւ ահաւասիկ միասին են ու մէկ են: Տակաւին, չորս տարրերը իրարու հակառակ են, բայց միասին առած անապական են: Տակաւին, ոսկին ու արծաթը միասին խառնուած են, կան եւ կը մնան: Ոսկին բնութեամբ անապական է, իսկ արծաթը՝ ապականացու, եւ պայման չէ, որ արծաթին համար ըսենք,

³⁴ Հմմտ. Բ. Պետ. Գ. 12:

³⁵ Եսայի ԼԳ. 4:

Թէ ոսկին ապականացու է, այդպէս ալ, պայման չէ, որ աշխարհին համար ըսենք, Թէ դրախտը ապականացու է:

Երկրորդին համար կ'ըսենք, Թէ առաքեալը եթերային երկինքին համար չըսէր, այլ՝ օդին համար, քանի որ ան եւս Գիրքին մէջ երկինք կ'ըսուի, ըստ այնմ. «Երկինքի թռչուններ, Տէրը օրհնեցէք»³⁶: Իսկ ան որ ասկէ աւելի բարձր է, անապական է, ինչպէս Արիստոտէլը³⁷ կ'ըսէ, եւ այս օդը դրախտին տակն է եւ մմենեւին չի' հասնիր անոր, հետեւաբար անապական է: Մարգարէին խօսքն ալ նոյնպէս այս օդին մասին է:

Իսկ եթէ հակառակը ըսէ, Թէ այդ ինչ է, որ մարգարէն կ'ըսէ. «Նոր երկինք եւ նոր երկիր պիտի ըլլայ»³⁸: Ահաւասիկ կը ցուցնէ՝ հանդերձեալին մէջ ապականութիւն եւ օդ պիտի չըլլան: Ասոր մասին կ'ըսենք, ո՛չ Թէ նախ երկինքը պիտի ապականի եւ ապա պիտի նորոգուի, այլ՝ մարդու հոգիին օրինակով, այսինքն՝ արդարի միեւնոյն հոգին է, արդարը արեգակէն աւելի պայծառ [է]՝ ըստ Տիրոջ. «Այն ատեն արդարները պիտի ծագին»³⁹, առանց ապականութեան պիտի նորոգուին, այսինքն՝ առաւել փառքով պիտի զարգարուին: Այդպէս ալ երկինքը եւ արեւը առաւելի պիտի զարգարուին ու լուսաւորուին՝ առանց ապականութեան:

Արդ՝ Աստուածաշունչի խօսքերէն բնական քննութեամբ հաստատենք, Թէ դրախտը, ուր որ էր մարդը, անապական է:

Նախ՝ Ադամի ստեղծումին կը նայինք, քանի որ Գիրքը կ'ըսէ, Թէ՝ «Տէր Աստուած երկրէն հող առաւ եւ ամոր երեսին փչեց»⁴⁰, «եւ դրախտին մէջ դրաւ»⁴¹: Արդ, եթէ մարդը ապականացու էր, արժանի էր, որ այս աշխարհին մէջ ձգէր, սակայն քանի որ ապականացու չէր, այս աշխարհին մէջ չդրաւ, այլ՝ դրախտին մէջ դրաւ, որ Ադամին նման էր [այսինքն՝ անապական էր]:

Երկրորդ՝ Աստուծոյ պատուիրանին կը նայինք, որ ըսաւ. «Մի՛ մօտենար, որպէսզի չմեռնիս»⁴²: Արդ, եթէ մարդն ու դրախտը ապակա-

³⁶ Դան. Գ. 78:

³⁷ Արիստոտէլ (ն. Ք. 384–322): Յոյն փիլիսոփայ եւ գիտնական: Պղատոնի աշակերտը եղած է եւ Աղեքսանդր Մակեդոնացիի դաստիարակը (մէջբերումին աղբիւրը անյայտ է) – (Ժանօթագրութիւնը Խաղ քհնյ. Ղազարեանինն է):

³⁸ Հմմտ. Եսայի ԿԶ. 22: Բ. Պետր. Գ. 13: Յայտն. ԻԱ. 1:

³⁹ Մատթ. ԺԳ. 13:

⁴⁰ Ծննդ. Բ. 7:

⁴¹ Ծննդ. Բ. 15:

⁴² Հմմտ. Ծննդ. Բ. 17:

նացու էին, ինչո՞ւ համար պատուիրանը պահելու մէջ մահը դրաւ եւ ո՛չ թէ պահելը. ուրկէ կ'երեւի, թէ ո՛չ տեղը (դրախտը) եւ ո՛չ ալ մարդը ապականացու էին:

Երրորդ՝ Ադամին դրախտէն հանելէն կը ճանչնանք, որ եթէ դրախտը ապականացու էր, հետեւաբար մարդն ալ ապականացու եղաւ, հետեւաբար ի՞նչ պատիժ էր Ադամին դրախտէն հանելը, թող դրախտին մէջ մնար, քանի որ երկուքն ալ ապականացու էին, սակայն որովհետեւ հանեց, կ'երեւի, թէ դրախտը վայել չէր անոր համար, քանի որ [դրախտը] անապական էր:

Չորրորդ՝ կը նայինք անմիջապէս հանելուն, որովհետեւ մեղանշելու պէս հանեց. «Թեւեաւ ձեռքը երկարէ եւ կեանքի ծառն առնէ ու յափտեան ապրի»⁴³, ուրկէ կ'երեւի, թէ դրախտը յափտենական է իր ծառերով եւ ապականացու չէ:

Հինգերորդ՝ կը նայինք Ադամին անիծելուն, որ կ'ըսէ. «Երեսիդ քաղն-նով ուտես հացդ. [երկիրը] փուշ եւ տատասկ թող բուսցնէ [ֆեզի]⁴⁴», ուրկէ յայտնի է, թէ դրախտին մէջ իրեն համար քրտինք եւ աշխատանք չկային, ինչպէս նաեւ կեղտոտութիւն, հետեւաբար՝ ուր որ աշխատանք չկայ, այնտեղ ապականութիւն ալ չկայ:

Վեցերորդ՝ Ադամի անամօթութենէն կը նայինք, որովհետեւ կ'ըսէ. «Ադամն ու իւր կինը մերկ էին եւ չէին ամչնար»⁴⁵, որովհետեւ անմեղ էին եւ անոնց մէջ մեղք չկար, ինչ բանին ապականութիւնը կը հետեւի, իսկ մեղանշելէն ետք, որով ապականացու եղաւ, ամչցան եւ տերեւներ կարեցին՝ իրենք զիրենք ծածկելու համար. հետեւաբար՝ այնտեղ ապականութիւն չկար:

Եօթներորդ՝ մարգարէին խօսքէն կը նայինք, որ կ'ըսէ. «Մարդը պատիւ ունէր, բայց չհասկցաւ»⁴⁶: Արդ, մարդը եթէ ապականացու էր, ի՞նչն էր իր պատիւը, որ չհասկցաւ, ուստի յայտնի է, թէ ինք (մարդը) անապական էր, եւ վայրն ալ (դրախտը) անապական էր: Այս պատճառով, այս բաները չիմանալով, անասուններուն հաւասարեցաւ:

Ութերորդ՝ ծնունդով, որովհետեւ դրախտին մէջ այսպիսի ծնունդ չըլլար:

⁴³ Ծննդ. Գ. 22:

⁴⁴ Ծննդ. Գ. 17–18:

⁴⁵ Ծննդ. Բ. 25:

⁴⁶ Սաղմ. ԽԸ. 13, 21:

Իններորդ՝ կերակուրով, քանի որ դրախտին մէջ ընդհանրապէս զգալի կերակուր չկայ:

Տասներորդ՝ մահուամբ, որովհետեւ դրախտին մէջ մահկանացու չէին: Իսկ «Իմացում»ը, որ իմաստութիւնն է, երեք է:

Նախ՝ բնական իմաստութիւն, որ ստեղծուած ժամանակ բոլորին հետ կ'ըլլայ:

Երկու՝ կրթական, որ աշխատանքով կ'առնենք:

Երեք՝ շնորհական, որ Հոգիէն կը պարգեւուի, ինչպէս առաքեալներուն եւ ուրիշներուն:

Իսկ Ադամն այս երեքն ալ ունէր: Բայց, բնական իմաստութեամբ տեսաւ խօսքէն, այդ պատճառով ալ կորսուեցաւ, քանի որ բնական իմաստութիւնը չի կրնար զանազանել սկզբնական բարին, նաեւ չարը, որովհետեւ երեւոյթէն վեր կը նայի:

Չարը բազմաթիւ յատկութիւններ ունի:

Նախ՝ որովհետեւ համանուն բարի կը կոչուի, սակայն բարիի յատկութիւն չունի:

Երկրորդ՝ քանի որ սկիզբը բարի է, իսկ կատարածին՝ չար:

Երրորդ՝ որովհետեւ բարիով զարդարուած է, սակայն չարը տակն է:

Չորրորդ՝ քանի որ մարմինին համար քաղցր է, իսկ հոգիին համար՝ դառն:

Հինգերորդ՝ որովհետեւ այս կեանքին համար բարի է, իսկ այն կեանքին համար՝ չար:

Վեցերորդ՝ ինչքան ատեն որ ողջ ենք, բարի կ'երեւի, իսկ մահէն ետք կ'երեւի ստոյգ չարը:

Այս բոլորը Ադամը ունէր:

Նախ՝ որովհետեւ ծառը «գեղեցիկ» է կ'ըսէ, որ եւ ծառին համանուն էր:

Երկրորդ՝ քանի որ սկիզբը՝ կերած ատեն բարի էր, իսկ երբ կերաւ, աւարտին չար եղաւ, որովհետեւ լոյսէն մերկացաւ:

Երրորդ՝ քանի որ չարը իր աչքերուն չերեւցաւ, որովհետեւ հաճելի էր աչքերուն նայելու համար, քանի որ բարիով զարդարուած էր:

Չորրորդ՝ որովհետեւ բերանին մէջ մարմինին համար քաղցր էր, սակայն հոգիին դառնութիւն հասաւ՝ սատանային կողմէ մատնուելով:

Հինգերորդ՝ քանի որ այն կեանքին եւ այն ժամուան համար պտուղը բարի էր, սակայն ուտելէն ետք՝ ոչ:

Վեցերորդ՝ որովհետեւ ինչքան ատեն որ ողջ էր, պտուղը ուտելուն պատիժը չառաւ, իսկ մահէն ետք դժոխք իջաւ: Իսկ կեանքի ծառը ասոր դիմակն է, քանի որ կատարեալ բարի էր, որ ունէր հանգամանքն ու անունը, եւ թէ սկիզբը եւ թէ կատարածին բարի էր, եւ որովհետեւ ներքնապէս եւ արտաքնապէս բարի էր, եւ քանի որ թէ՛ հոգիին եւ թէ՛ մարմինին համար բարի էր, եւ բոլոր կեանքերուն բարի էր, եւ ամէն ժամ բարի էր: Նմանապէս մեղքը մեր եւ բոլոր մարդոց մէջ կը ներգործէ, ինչպէս օրինակ՝ սատանան պտուղով Ադամին ըրաւ: Չարին յատկութիւնները մեղքին կը համեմատին, յայտնի է ուղիղ միտքերուն, իսկ բարի գործերուն անհամեմատութիւնները՝ չարին:

Եւ մարդասէր Քրիստոսին փառք, յաւիտեանս [յաւիտենից: Ամէն]:

Գրաբարէ արեւմտահայերէնի վերածեց
ՎԱՐԱՆԴ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆ



ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ

Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ
ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ԵՒ ՍՓՅՈՒՌԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԸ

Սկիզբը՝ թիվ Գ., Դ., Ե.:

ԱՄՆ Նյու Ջերսի նահանգի Հովնանյան դպրոցի սաների ընդունելության ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով սաներին, իր գնահատանքն է բերել Հովնանյան դպրոցի տնօրինությանն ու մանկավարժներին՝ աշակերտներին հայրենիք այցելելու հնարավորություն ընձեռելու, ազգային սրբություններին եւ արժեքներին հաղորդակցվելու համար: Վեհափառ Հայրապետը նշել է, որ նման այցերը կարեւոր խթան են՝ ավելի զորացնելու հայրենիքի նկատմամբ նվիրվածությունը, իսկ հայրենի հողը տեսնելու խանդավառությունը նպաստում է լավագույնս զգալու եւ գիտակցելու հայրենի երկրի սրբությունը: Երիտասարդ հայորդիներին նա հորդորել է այդ ոգով եւ գիտակցությամբ ապրել ողջ կյանքի ընթացքում, մեծանալ որպես բարի եւ արժանավոր զավակներ եւ ուժ դառնալ հայրենիքի համար¹:

Իսկ Հովնանյան դպրոցի ավարտական դասարանի սաների ընդունելության ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ արձանագրել է, որ նման հանդիպումներն արդեն ավանդույթ են դարձել, ինչը յուրահատուկ խթան է պատանիների համար: Այն ամենը, սաներին դիմելով շեշտել է Վեհափառը, ինչը գրքերից եք սովորել հայրենիքի ու նրա հարուստ պատմության մասին, հաղորդ եք դառնում այցի ընթացքում, ծանոթանում եք հայ ժողովրդի կյանքում Հայ Եկեղեցու ազգային-հոգեւոր առաքելությանը, հայրենի հողում գտնվող սրբազան ժառանգությանն ու սրբություններին: «Այս այցելությունը ձեր ինքնագիտակցության վրա իր զորեղ դրոշմը պիտի թողնի, եւ դուք առավել հպարտ պիտի լինեք, որ հայ ժողովրդի զավակներն եք»,— նշել է Ամե-

¹ Տե՛ս «Էջմիածին», 2013, Դ., էջ 147:

նայն Հայոց Կաթողիկոսը՝ հորդորելով ամուր պահել կապը Հայ Առաքելական Եկեղեցու հետ, հավատարիմ մնալ ազգային ինքնությունն ու հոգեւոր արժեքներին: Նա գոհունակությամբ արձանագրել է նաեւ սաների ծնողների հայրենասեր ոգին, դպրոցի հոգաբարձուների եւ մանկավարժների գովարժան հետեւողականությունը, որոնց շնորհիվ սաների մտքում եւ սրտում մշտարթուն է պահվում սերը հանդեպ մայր հայրենիքը, հայոց լեզուն ու մայր Եկեղեցին²: Մեկ այլ հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդգծել է, որ տեւական այցելությունները Հայաստան եւ Մայր Աթոռ պետք է աշակերտների գիտակցության մեջ նորանոր տեսիլքներ արթնացնեն, որոնցով տոգորված՝ աշակերտները պետք է առավել նախանձախնդրորեն սերտեն հայ ժողովրդի պատմության հին ու նոր էջերը, որպեսզի զորավորվեն հայրենի հարուստ ավանդներով³:

Հովնանյան դպրոցի սաների եւ պաշտոնեության ներկայացուցիչների մեկ այլ ընդունելության ժամանակ Նորին Սրբությունը, ողջունելով դպրոցի սաների այցը հայրենիք եւ Մայր Աթոռ, իր գոհունակությունն է հայտնել, որ ամենամյա այս հանդիպումները գեղեցիկ ավանդույթ են դարձել հատկապես հայ ժողովրդի համար նվիրական ապրիլ ամսին, երբ ազգովի ոգեկոչում ենք Հայոց ցեղասպանության նահատակների անմահ հիշատակն ու հայցում նրանց բարեխոսությունը Հայոց աշխարհի եւ մեր ազգի համար: Նորին Սրբությունն ընդգծել է, որ նահատակության եւ հայրենասիրության այդ ոգին վերջին օրերին դրսևորվել է նաեւ Արցախում, ուր հայոց բանակի քաջ մարտիկներից շատերն իրենց կյանքի գնով անառիկ են պահել մեր սահմաններն ու արիության բազում օրինակներ են ցույց տվել: Ապա Վեհափառը հույս է հայտնել, որ նրանց օրինակը պիտի խանդավառի դպրոցի սաներին՝ նրանց սիրտն ու հոգին լցնելով հայրենիքի եւ մայր Եկեղեցու հանդեպ անսահման սիրով ու նվիրվածությամբ: Հանդիպման վերջում Նորին Սրբությունն իր օրհնությունն ու բարձր գնահատանքն է հայտնել նաեւ Հովնանյան դպրոցի պաշտոնեությանը եւ մանկավարժներին՝ հորդորելով սաների մեջ վառ պահել հայի անկոտրում ոգին ու հայկական ինքնությունը⁴:

² Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2014, ապրիլ Բ., թիվ 8 (412), էջ 3:

³ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2015, ապրիլ Բ., թիվ 8 (436), էջ 1:

⁴ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2016, ապրիլ Բ., թիվ 8 (460), էջ 2: Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Հովնանյան դպրոցի սաների մեկ այլ ընդունելության մանրամասները տե՛ս

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ստանալու համար Մայր Աթոռ ժամանած Փարիզի Դպրոցասեր վարժարանի աշակերտների հետ հանդիպմանը Վեհափառն իր խոսքում նշել է, որ աշակերտների այցելությունը Հայաստան եւ Մայր Աթոռ Սբ. էջմիածին պիտի ոգեշնչի ու խանդավառի նրանց՝ նախանձախնդրորեն եւ ջանասիրաբար գիտելիքներ ամբարելու, զորանալու հավատարմության մեջ հանդեպ ազգային-հոգեւոր սրբություններն ու արժեքները: Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքն է հայտնել դպրոցի բարերարներին, տնօրենությանն ու մանկավարժներին, որոնց նվիրյալ ջանքերով հայրենիքից հեռու գտնվող հայորդիները հայեցի կրթություն են ստանում՝ ճանաչելով իրենց ազգային ինքնությունը⁵:

Իր գնահատանքն ու օրհնության խոսքը բերելով Փարիզի Համազգային եւ Մարսելի Դպրոցասեր վարժարանների սաներին՝ Նորին Սրբությունը կարեւորել է Ֆրանսիայի հայկական վարժարանների՝ շարունակական բնույթ կրող ամենամյա այցելությունները հայրենիք: Հայոց Հայրապետը գոհունակություն է հայտնել, որ Ֆրանսահայ վարժարանների սաները մասնակցել են Մայր Աթոռում Հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման արարողությանը: Սաներին նա մաղթել է, որ սուրբ նահատակների բարեխոսությամբ վերջիններիս գիտակցության մեջ էլ ավելի զորանա նախանձախնդրության ոգին՝ պայքարելու արդարության վերականգնման համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծել է՝ քանի դեռ մարդկությունը ոճրագործությունն արժանի ու արդար դատապարտման չի արժանացրել, նմանօրինակ ոճիրների կրկնության վտանգն անխուսափելի է: Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը խոսել է ազգային ինքնության պահպանության անհրաժեշտության մասին, պատանիներին պատգամել է լինել հայրենիքի եւ Հայ Եկեղեցու արժանավոր զավակներ, հոգիներում անխախտ պահել նախնիների ավանդած ժառանգությունն ու սերն ազգի, հայրենիքի եւ Եկեղեցու հանդեպ⁶:

Մարսելի Համազգային դպրոցի եւ Փարիզի Դպրոցասեր վարժարանի սաների հետ մեկ այլ հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն է հայտնել Ֆրանսիայում գործող հայկական այս

«Քրիստոնյա Հայաստան», 2017, ապրիլ Բ., թիվ 8 (484), էջ 2:

⁵ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2014, ապրիլ Բ., թիվ 8 (412), էջ 3:

⁶ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2015, ապրիլ Բ., թիվ 8 (436), էջ 1:

երկու դպրոցների աշակերտների հայրենիք եւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին կատարած այցի առիթով: Նա իր գնահատանքն է հայտնել նաեւ բոլոր նրանց, ովքեր «մաս եւ բաժին ունեն աշակերտների կրթության եւ դաստիարակության գործում» եւ նպաստում են նրանց ազգային, հայրենասիրական նկարագրի կերտմանը: Դիմելով սաներին՝ Նորին Սրբությունը նշել է. «Հայրենիքը երաշխիքն ու ապահովությունն է հայ ժողովրդի հավերժ գոյության: Անհայրենիք անձը նման է մեկին, ով ծնողներ չունի, իսկ հայրենիքի զավակը մշտապես պաշտպանված է, որովհետեւ հայրենիքը պատրաստ է հովանավորելու, իր գիրկը բանալու սեփական զավակների առջեւ: Ազգային պատկանելության առումով՝ հայրենիքն ազգի զավակի կենսագրությունն է»⁷:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մարսելի Համազգային դպրոցի եւ Փարիզի Դպրոցասեր միության սաների հետ մեկ այլ հանդիպման ընթացքում գոհունակությամբ է անդրադարձել այն իրողությանը, որ Հայոց ցեղասպանության հիշատակի օրերին Ֆրանսիայում գործող հայկական այս երկու վարժարանների շրջանավարտներն ամեն տարի այցելում են հայրենիք եւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, ինչն անջնջելի տպավորություն է թողնում նրանց վրա: Սաներին նա հորդորում է ջանասիրությամբ շարունակել ուսումնառությունը, իսկ ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները ծառայեցնել Ֆրանսահայ համայնքի, ինչպես նաեւ Հայրենիքի զորացմանը: Հայոց Հովվապետը սաներին պատգամում է նաեւ սերտացնել իրենց կապերը Եկեղեցու հետ եւ մշտապես հաղորդ լինել ազգային արժեքներին ու սրբազան ժառանգությանը, որպեսզի կարողանան անխաթար պահպանել իրենց ինքնությունը: Հանդիպման ընթացքում Վեհափառը շեշտել է նաեւ սփյուռքում հայոց լեզվի պահպանության հրատապությունը եւ հիմնավորել է այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերի անհրաժեշտությունը⁸:

Անդրադառնալով Մայր Աթոռ Ս. Էջմիածին Ֆրանսահայ երիտասարդների արդեն ավանդական դարձած ուխտագնացություններին՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը Մարսելի Համազգային դպրոցի եւ Փարիզի Դպրոցասեր միության վարժարանի սաների հետ հերթական հանդիպման ընթացքում գոհունակությամբ նշել է, որ արդեն ավանդույթ է դար-

⁷ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2016, հուլիս Ա., թիվ 13 (465), էջ 1:

⁸ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2017, ապրիլ Բ., թիվ 8 (484), էջ 1:

ձեւ նրանց մասնակցությունը ապրիլի 24-ի երթերին: Նա սաներին հորդորել է ջանասիրությամբ շարունակել ուսումնառությունը: Վեհափառը նաեւ հայեցի դաստիարակության գործում նախանձախնդրության եւ հետեւողականության, նվիրյալ ջանքերի եւ ազգօգուտ ծառայության համար իր օրհնությունն է փոխանցել սաների ծնողներին: Իսկ սաներին հորդորել է լինել նախնիների արժանավոր հետնորդները, իրենց գործերով պահպանել ու ամրապնդել հայ ժողովրդի բարի անունը⁹:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մարսելի Համազգային դպրոցի եւ Փարիզի Դպրոցասեր միության վարժարանի շուրջ 40 աշակերտի ընդունել է նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա.» կրթական կենտրոնում: Վեհափառ Հայրապետը գոհունակություն է հայտնել ձեւավորված գեղեցիկ ավանդույթի առիթով, որի շնորհիվ Հայոց ցեղասպանության հիշատակի օրերին Ֆրանսիայում գործող հայկական այս վարժարանների սաներն ամեն տարի այցելում են հայրենիք եւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին: Հայոց Կաթողիկոսն աշակերտների հետ զրուցել է միջազգային հանրության՝ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման կարեւորության մասին՝ հավելելով, որ դա ոչ միայն ազգային, այլեւ համամարդկային ընդգրկում ունի: Հետաքրքրվելով վարժարանների սաների ուսումնառությամբ՝ Գարեգին Բ. Հայրապետը հայորդիներին հորդորել է ջանասիրությամբ շարունակել ուսումը եւ դառնալ իրենց ժողովրդի արժանավոր զավակներ՝ բարձր պահելով նրա անունն ու պատիվը Ֆրանսիայում: Հայոց Հովվապետը սաներին պատգամել է զորացնել իրենց կապերը Եկեղեցու հետ եւ մշտապես հաղորդակից լինել ազգային արժեքներին ու սրբազան ժառանգությանը, որպեսզի կարողանան պահպանել իրենց ինքնությունը: Հանդիպմանը Նորին Սրբությունն իր գնահատանքն է հայտնել նաեւ վարժարանների տնօրեններին, ուսուցչական անձնակազմերին եւ հոգաբարձուներին՝ Հայաստան եւ Մայր Աթոռ այցելությունները կազմակերպելու համար: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով օրհնել է Ֆրանսահայ աշակերտներին եւ ի հիշատակ այցի՝ նրանց խաչեր է ընծայել¹⁰:

Արգենտինայի Մխիթարյան վարժարանի սաների հետ հերթական հանդիպման ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծանոթացել է յու-

⁹ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2018, ապրիլ Բ., թիվ 8 (508), էջ 2:

¹⁰ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2019, ապրիլ Բ., թիվ 8 (532), էջ 3:

րաքանչյուր սանի հետ, օրհնել նրանց եւ զրուցել ուսումնառության եւ ազգային-եկեղեցական կյանքին մասնակցելու մասին: Զրուցի ընթացքում անդրադարձ է կատարվել նաեւ Հայաստան Ֆրանցիսկոս պապի այցին, հայ-կաթոլիկ եկեղեցական հարաբերություններին: Վեհափառ պատասխանել է նաեւ սաների հարցերին¹¹: Մեկ այլ հանդիպման ընթացքում Գարեգին Բ. Կաթողիկոսը, իր սերն ու օրհնությունը բերելով Մխիթարյան սաներին, գնահատել է նրանց ուխտագնացությունը Մայր Աթոռ, որն անջնջելի տպավորություն է թողնում պատանիների հոգում եւ ներշնչման աղբյուր դառնում հետագա ողջ կյանքի համար: Հարցուպատասխանի ժամանակ Վեհափառն անհրաժեշտ բացատրություններ է տվել սաներին հետաքրքրող հարցերի նկատմամբ¹²:

Մեկ այլ հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն իր հայրական սերն ու օրհնությունն է բերել արգենտինահայ պատանիներին՝ ուրախություն հայտնելով համայն հայության նվիրական սրբավայր այցի առիթով: Արգենտինացի ուխտավորների հետ զրուցում Վեհափառ Հայրապետը բարձր է գնահատել Մխիթարյան վարժարանի ուսուցիչների նվիրյալ եւ նախանձախնդիր աշխատանքը եւ նկատել, որ հայրենիք այցն ավանդույթ է դառնում՝ նպաստելով, որ Հայաստանին միայն դասագրքերից ծանոթ աշակերտներն իրականում հաղորդակցվեն հայ ժողովրդի սովորույթներին ու սրբություններին: Վեհափառ Հայրապետը վստահություն է հայտնել, որ այցը հավասարապես խանդավառությամբ պիտի լցնի վարժարանի ոչ միայն հայ, այլեւ օտարազգի սաների հոգիները: Նորին Սրբությունը սաներին մաղթել է բարի կեցություն, ուրախ, ոգեշնչող եւ հոգեւոր ապրումներով հարուստ օրեր Հայաստանում¹³:

Ընդունելով ԱՄՆ-ի Ֆերահյան հայկական դպրոցի 11-րդ դասարանի աշակերտներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշել է, որ սփյուռքի ավարտական դասարանների սաների ուխտագնացությունը Մայր Աթոռ դարձել է գեղեցիկ ավանդույթ, ինչն անջնջելի հետք է թողնում նրանց հոգում եւ առիթ է դառնալու, որ նրանք ներշնչվեն ու զորանան հայրենիքով ու հայրենյաց սրբություններով: Հանդիպման ավարտին նա սաներին հայրաբար հորդորել է հետագայում եւս այցելել Հայաստան,

¹¹ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2016, սեպտեմբեր Բ., թիվ 18 (470), էջ 5:

¹² Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2017, սեպտեմբեր Բ., թիվ 18 (494), էջ 2:

¹³ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2018, սեպտեմբեր Բ., թիվ 19 (519), էջ 1:

ջանասիրությամբ շարունակել ուսումը եւ նորանոր արդյունքներ արձանագրել, եւ Բարձրյալն Աստծու հովանավորությունն ու առաջնորդությունն է մաղթել նրանց¹⁴:

Մայր Աթոռում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպել է նաեւ ԱՄՆ-ի Ֆրեզնոյի պետական համալսարանի հայագիտության ամբիոնի 1–4-րդ լսարանների մի խումբ ուսանողների հետ՝ ամբիոնի վարիչ դոկտոր Բարլոու սրկ. Տեր-Մկրտչյանի ուղեկցությամբ: Ողջունելով համալսարանականներին՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը ամենքին բերել է իր հայրական սերն ու օրհնությունը: Նորին Սրբությունն իր գնահատանքն է հատնել Բարլոու Տեր-Մկրտչյանին՝ հայ երիտասարդներին հայրենիքի հետ մշտապես կապելու, նրանց հայկական ոգի, շունչ ու կրթություն փոխանցելու համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը երիտասարդներին պատգամել է լինել ժրաջան եւ ուսումնաստենչ, որպեսզի ապագայում, ուր էլ որ բնակվեն, իրենց նվիրյալ ու արդյունավետ ծառայությունը բերեն հայ ժողովրդին ու Հայոց Եկեղեցուն: Վեհափառ Հայրապետն ուսանողներին բարի կեցություն է մաղթել հայրենիքում, հորդորել է շրջել Հայաստանի պատմամշակութային տարբեր վայրերում, հիանալ դարավոր սրբավայրերով եւ վայելել ժողովրդի ջերմությունն ու հյուրընկալ ոգին¹⁵:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպել է նաեւ Լիբանանի սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության «Սարգիս Տխրունի» ուսանողական երիտասարդական միության անդամներին, որոնք ուխտավորաբար եկել էին այցելելու Հայաստան եւ Արցախ: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն է բերել երիտասարդներին՝ ողջունելով միության անդամներին հայրենիք առաջնորդելու նախաձեռնությունը: Նա ընդգծել է նաեւ, որ նման այցելությունները հնարավորություն են ընձեռում ճանաչելու այն բոլոր արժեքներն ու սրբությունները, որոնք կերտել է մեր ազգը, որոնցով ներշնչվել է ժողովուրդը՝ հավելելով, որ դրանց պահպանման եւ հաջորդ սերունդներին փոխանցման պատասխանատվությունը դրված է յուրաքանչյուր հայորդու վրա: Այս առումով Նորին Սրբությունը մեկ անգամ եւս կարեւորել է աշխարհասփյուռ մեր ժողովրդի միասնականությունը եւ իր ուրախությունն է հայտնել նաեւ երիտասարդների հայրենասիրական ոգու համար՝ հորդորելով առավել

¹⁴ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2017, հունիս Ա., թիվ 11 (487), էջ 1:

¹⁵ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2019, հունիս Ա., թիվ 11 (531), էջ 2:

մեծ սիրով եւ ազգային կյանքին լիարժեք ներգրավումով շարունակել ազգային արժեքների անաղարտ պահպանման եւ փոխանցման՝ նախնիների գործը: Հայոց Նվիրապետը նաեւ հույս է հայտնել, որ այցը Հայաստան եւ համայն հայության հոգեւոր կենտրոն նոր լիցքեր կհաղորդի երիտասարդներին՝ վերափոխելով նաեւ հայրենական կյանքի վերաբերյալ նրանց ընկալումները: Նա նաեւ պատասխանել է տարբեր ոլորտներում Մայր Աթոռի գործունեությանը վերաբերող հարցերին¹⁶:

Նորին Սրբությունն ընդունել է նաեւ Թումոյի ամառային ճամբարին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած Եգիպտոսի հայոց թեմի հայկական ազգային վարժարանի սաներին: Ազգային ինքնության պահպանության գործում իր գնահատանքը հայտնելով թեմի առաջնորդին, թեմական խորհրդի անդամներին եւ վարժարանի տնօրինությունը՝ Հայոց Հովվապետն իր հայրական օրհնությունն է փոխանցել սաներին եւ ուրախությամբ հավաստել, որ Հայաստանի պատմամշակութային արժեքներով ու սրբություններով ներշնչվելով՝ նրանք Եգիպտոս կվերադառնան իրենց հետ տանելով հայրենիքի հոգեւոր լիցքերը: Նա հույս է հայտնել նաեւ, որ հուշերը սաներին կոգեշնչեն հետագա ուսման ընթացքում, հորդորել է գերազանց սովորել եւ նորանոր հաջողություններ արձանագրելով՝ էլ ավելի բարձրացնել հայ ժողովրդի պատիվը¹⁷:

Եկեղեցասեր նվիրյալ գործունեության համար Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքն ու մաղթանքներն է բերել նաեւ Կ. Պոլսի Սբ. Գեորգ հայկական եկեղեցու Սահակյան դպրաց դասի անդամների հետ հանդիպմանը: Նա կարեւորել է նաեւ երգչախմբի օգտաշատ ծառայությունը եւ հայրապետական իր օրհնությունն ու ջերմ ողջույնները հղելով պոլսահայ համայնքին՝ հորդորել է հայ հոգեւոր եւ ազգային երգերի կատարումներով պոլսահայության կյանքում շարունակել հայապահպան կարեւոր առաքելությունը¹⁸: Իսկ սիրիահայ մանուկներից կազմված երգչախմբի ընդունելության ժամանակ գնահատանք հայտնելով կրթության գործին իրենց մասնակցությունը բերած մարդկանց՝ իր հայրական խրատներով Վհափառը ոգեւորել է մանուկներին եւ պատգամել իրենց

¹⁶ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2019, օգոստոս Բ., թիվ 16 (540), էջ 2:

¹⁷ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2018, հուլիս Բ., թիվ 14 (514), էջ 1:

¹⁸ Տե՛ս «Էջմիածին», 2013, Ժ., էջ 138:

ազգի արժանավոր զավակները լինել եւ պայքարել, որ ողբերգությունները տեղ չգտնեն մարդկության կյանքում, այլ միայն ուրախությունն ու բերկրանքը լինեն կյանքի ուղեկիցները¹⁹:

Հանդիպելով Հայ Եկեղեցու երիտասարդաց միավորման 3-րդ պատգամավորական ժողովի մասնակիցների հետ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը երիտասարդներին՝ «Հայ Եկեղեցու առաքելությունը շարունակող նոր ժամանակների դեսպաններին», հավաստել է, որ նրանց ներկայությունն ազգային-եկեղեցական կյանքում մեծ ուժ եւ խանդավառություն է պարգեւում, վստահություն է ներշնչում նաեւ այն առումով, որ եկեղեցական կյանքը պետք է լինի առավել բարօր, իսկ ապագան՝ փայլուն: Նորին Սրբությունը հավելել է, որ Եկեղեցում լինելը մեծ օգտակարություն ունի հայ երիտասարդի համար, որովհետեւ Եկեղեցին ամբողջական իմաստով հայոց ազգի գանձարանն է, որտեղ բնակվում է Աստված, եւ որտեղ յուրաքանչյուր հայորդի հնարավորություն ունի հաղորդակցվելու մեր հայրերի ժառանգությանը, ազգի պատմությանն ու արժեքներին:

Հանդիպման ընթացքում Վեհափառը հորդորել է, որ յուրաքանչյուր հայորդի, ով մուտք է գործում Եկեղեցու սրբազան կամարներից ներս, ապրի զորացած եւ ներքուստ կերպարանափոխված: Այդ հոլովույթում նա մաղթել է նաեւ, որ երիտասարդները մշտապես լինեն աստվածասիրության շնորհի մեջ, որպեսզի լինեն իրենց սրբազան հայրերի թողած հարուստ ժառանգության կրողը՝ ի զորու լինելով արդարության, եղբայրասիրության, նախանձախնդրության ոգով իրականացնելու իրենց առաքելությունը: Նորին Սրբությունը պատասխանել է նաեւ երիտասարդների հարցերին, որոնք վերաբերում էին ՀԵՄՍ գործունեությանը, երիտասարդական շարժումների համակարգմանը, Հայ Եկեղեցու թեմական եւ ծխական կյանքին, Մայր Աթոռի իրականացրած քարոզչական աշխատանքներին, հայապահպանության խնդիրներին²⁰:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպել է նաեւ ՀԲԸՄ կազմակերպած «Երաժշտական Հայաստան» եւ «Երեւանի ամառային փորձառություն» ծրագրերի շրջանակներում տարբեր երկրներից Հայաստան ժամանած մի խումբ հայ երիտասարդների՝ ուղեկցությամբ ծրագրերի ղեկավարների:

¹⁹ Տե՛ս անդ, էջ 151:

²⁰ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2015, հուլիս Ա., թիվ 13 (441), էջ 3:

Զրույցի ընթացքում նորին Սրբությունը կարեւորել է դեպի հայրենիք նմանատիպ այցելությունների կազմակերպումը, քանի որ այդ այցերը տարբեր երկրներում հասակ առած հայորդիների համար ազգային ապրումների նորոգման լավագույն առիթ են: Վեհափառն ընդգծել է, որ մատաղ սերնդին ազգային եւ հոգեւոր արժեքներով կրթելու եւ դաստիարակելու շնորհիվ է, որ սփյուռքում ապրող հայորդիների մտքում ստեղծվում է հայրենիքի մի պատկեր, որն էլ խթան է հանդիսանում Հայաստան այցելելու համար: Հայոց Հովվապետն իր գնահատանքն է բերել նաեւ ՀԲԸ միությունը՝ այսպիսի ծրագրերի իրականացման համար, որոնց շրջանակներում սփյուռքի երիտասարդները հնարավորություն են ստանում ծանոթանալու Հայաստանին, հաղորդ դառնալու Հայոց Եկեղեցու պատմությանը եւ նրա սրբություններին, ինչպէս նաեւ ձեռք բերելու մասնագիտական փորձառություն զանազան հաստատություններում եւ կառույցներում²¹:

Սփյուռքահայ դպրոցի անհրաժեշտության, հայեցի դաստիարակության եւ սփյուռքահայ կյանքի հիմնախնդիրների հետ կապված հրատապ այլ հարցեր Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը բազմիցս քննարկել է նաեւ սփյուռքահայ տարբեր թեմերի ուխտավորների եւ երիտասարդների հետ ունեցած բազում հանդիպումների ընթացքում²²:

Ընդհանրացնելով այս ամենը՝ կարող ենք փաստել, որ գահակալության ընթացքում Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսը սփյուռքահայ դպրոցի նկատմամբ անփոփոխ կերպով հոգատար վերաբերմունք է որդեգրել, որը միանգամայն ակնհայտորեն դրսեւորվել է հովվապետական այցերի ընթացքում սփյուռքի ազգային դպրոցների սաների հետ հանդիպումների, Մայր Աթոռում սփյուռքահայ կրթության մշակների վերապատրաստման եւ դպրոցների ու վարժարանների սաների հետ ավանդական դարձած ընդունելությունների տեսքով:

Հայ Եկեղեցին եւ ազգային դպրոցը համարելով հոգեկերտ ակունքներ՝ Վեհափառը բազմամշակութային տարածքում գործող սփյուռքահայության կյանքում դրանց գործունեությունը անփոխարինելի է համարում նախ այն պատճառով, որ հրապարակ է իջել սփյուռքահայության

²¹ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2019, հուլիս Բ., թիվ 14 (538), էջ 1:

²² Այդ հանդիպումների ուսումնասիրությունը դուրս է հոգվածի շրջանակներից: Ընթերցողները դրանց հետ կարող են ծանոթանալ Մայր Աթոռի պաշտոնական «էջմիածին» ամսագրի եւ կրոնական, մշակութային եւ լրատվական «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթի 2012–2022 թթ. համարներում:

չորրորդ սերունդը, որը հրամայական է դարձրել համազգային ջանքերի նպատակադիր եւ ուղղորդված գործունեությունը նոր սերնդի հոգում սնուցելու եւ զորացնելու գիտելիքի, հավատքի ու սիրո կապը իր ինքնություն, իր ազգային եւ եկեղեցական կյանքի ու ավանդների հետ: Նորին Սրբությունը Սփյուռքում ազգային կրթության դերն առաջնային է համարում նաեւ այն պատճառով, որ այսօր սփյուռքահայության կյանքում «կարեւոր մտահոգություն է դառնում հատկապես միջավայրի ազդեցությունը կրող նոր սերնդի ազգային ինքնության պահպանումը»:

Սփյուռքում ազգային ու հոգեւոր արժեքների վրա խարսխված արդիական կրթության ապահովումը Վեհափառ շաղկապում է նաեւ «աշխարհասփյուռ հայ ժողովրդի միավորման հզոր գործոն, մեր ազգային ամբողջականության հոգեւոր մարմնացում եւ հոգեւոր մեր Հայրենիք» Հայ Եկեղեցու ազգապահպան գործունեության հետ: Այդ հիման վրա է կառուցված Վեհափառի այն պնդումը, որ սփյուռքահայ դպրոցներում մանկանը գիտելիք փոխանցելուն զուգընթաց նույնքան եւ առավել կարեւոր է նրան ոգի հաղորդելը, որպեսզի նա հաղորդակից դառնա իր պատմությանը, անցյալին, հոգեւոր արժեքներին եւ իր ժողովրդի կյանքի ու գոյության լուսավոր խորհրդին: Գարեգին Բ. Կաթողիկոսը սփյուռքահայ աճող սերնդի արդիական ազգային կրթության գործընթացները սերտորեն շաղկապում է նաեւ «հայոց ինքնության մշտարթուն զինվորների՝ աստվածատուր շնորհներից բխյալ ոսկեղենիկ մաշտոցյան գրի եւ հայոց հարատեւության հիմք, ազգային կյանքի եւ գիտամշակութային ձեռքբերումների ոգեշնչող ուժ եւ զորություն՝ թանկ ու նվիրական մայրենի լեզվի» պահպանության հետ: Նրա վերաբերմունքը նույնն է նաեւ «աստվածատուր բարի պտուղներից բխյալ քրիստոնեական մեր մշակույթի» նկատմամբ, որի փառավոր անդամատանում, պնդում է նա, «բազում գանձուց մեջ անգին գոհար են հայոց գիրն ու դպրությունը»: Ազգային ինքնության եւ ազգապահպանության գործում այդ գործոնների դերը Նորին Սրբությունը վերահաստատում է նաեւ սփյուռքի յուրաքանչյուր եկեղեցու կողքին անհրաժեշտաբար ազգային դպրոց ունենալու կոչի տեսքով:

Եւ քանի որ Հայոց Ընդհանրական Հայրապետը վստահ է, որ մեր ապագան սփյուռքի ազգային դպրոցներում ուսանող պատանիներն են, որոնք պետք է կերտեն ինչպես իրենց կյանքի, այնպես էլ՝ սփյուռքահայ մեր ժողովրդի հաղթանակները, նրանց հորդորում է ապագայում ծառայելու ձգտումով ու նվիրումով իրենց նպաստը բերել հայրենի մեր

պետության առաջընթացին ու աշխարհասփյուռ մեր ժողովրդի բարօր գալիքի կերտմանը: Արտերկրում հայ կրթական մշակույթի եւ կրոնամշակութային ավանդույթյունների պահպանության եւ վերարտադրության գործում Վեհափառը բարձր է գնահատում նաեւ սփյուռքահայ մանկավարժների երախտարժան առաքելությանը, որոնք «գիտելիքի եւ ազգային ավանդների նկատմամբ իրենց հոգու սերն ու նվիրումն են փոխանցում սաներին, ջանք չեն խնայում ծաղկուն պահել ազգային կրթօջախները եւ իրենց լուծան են ներդնում հայապահպանության եւ ազգապահպանության գործում»:

Սփյուռքահայ կրթական հաստատությունների նկատմամբ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հոգատար վերաբերմունքի մեկ այլ վկայությունն են ՀՀ ԿԳՆ հետ համատեղ Մայր Աթոռում կազմակերպվող սփյուռքահայ ուսուցիչների ամենամյա վերապատրաստման դասընթացները: Հայոց Հովվապետն այդ դասընթացներն արժեւորում է նաեւ այն հոլովույթում, որ Մայր Աթոռի սուրբ մթնոլորտում սփյուռքահայ ուսուցիչները, հաղորդակցվելով մեր պատմական անցյալի, մեր ներկայի եւ գալիքի խորհրդի հետ, առնչվելով ժողովրդի կյանքին եւ ձեռքբերումներին, էլ ավելի ամբողջական գիտելիքներով ու հավատով ձեռնամուխ կլինեն իրենց նվիրական եւ պատասխանատու կոչմանն ու առաքելությանը: Եւ սփյուռքահայության համար մեկ անգամ եւս հիմնավորելով դպրոց-եկեղեցի անխզելի կապի անհրաժեշտությունը՝ հավաստում է, որ միայն «այդ համադրությամբ պետք է կարողանանք արժանավոր, հավատավոր ու բարի զավակներ կրթել մեր ժողովրդի համար»: Նա պարզաբանում է, որ միայն համադրական նման կրթության արդյունքում է հնարավոր «ապահովել հավերժությունը, հարատեւ ընթացքը մեր ժողովրդի եւ բարօրությունը Հայրենիքի»:

Հայեցի դաստիարակության, թանկ ու նվիրական հայրենյաց ժառանգությունը պահպանելու, հայորդյաց հոգիների հետ հարազատորեն խոսող մայրենի լեզուն եւ մաշտոցյան գիրը պահպանելու, Հայոց պատմությանը հաղորդ լինելու եւ սփյուռքահայ կյանքի այլ հիմնախնդիրների հետ կապված հրատապ բազմաթիվ հարցեր Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը քննարկել է նաեւ Մայր Աթոռում սփյուռքահայ դպրոցների ու վարժարանների սաների, ինչպես նաեւ սփյուռքահայ տարբեր թեմերի ուխտավորների եւ երիտասարդների հետ ունեցած բազմաթիվ հանդիպումների ընթացքում:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Միջուկը, կրթություն, ազգապահպան գործունեություն, ազգային կրթություն, հոգաւոր վերաբերմունք, Միջուկը ազգային դպրոց:

РЕЗЮМЕ

В статье на основе анализа фактического материала обосновывается, что вопросы функционирования национальных школ армянской диаспоры, школьное образование и воспитание молодого поколения в национальном духе являются повседневной заботой Католикоса Всех Армян Гарегина II.

В статье показывается, что, будучи под сильным и постоянным культурным воздействием разных цивилизаций, для сохранения национальной идентичности в армянской диаспоре предстоятель Армянской Церкви считает императивным организацию полноценного национального образования. Эти вопросы отражены в посланиях благословения, директивах к епархиям и иных документах. Одновременно с целью продвигать национальное образование в армянской диаспоре, во время Первосвятительских визитов Католикосом перед главами епархии ставились действенные практические задачи. Во время Архипастырских визитов постоянно посещались национальные школы, проходили встречи с учениками, преподавателями и благодетелями. Во время бесед побуждал продвигать национальное образование, бережно хранить национальный язык и многовековую национальную культуру.

Одним из проявлений бережного отношения Католикоса Всех Армян к национальным школам и национальному воспитанию диаспоры является постоянное обсуждение этих вопросов во время многочисленных встреч со школьниками, молодежными организациями, преподавателями и паломниками из разных епархий в Первопрестольном Св. Эчмиадзине.


SUMMARY

Based on the analysis of factual material, the article substantiates that the issues of functioning of the national schools of the Armenian Diaspora, school education

and upbringing of the young generation in the national spirit have always been considered the primary task of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians.

The article shows that in order to preserve the national identity, the Head of the Armenian Church considers it imperative to organize a full-fledged national education in the Armenian Diaspora being under the strong and constant cultural influence of different civilizations. These issues are reflected in the messages of blessing, directives to dioceses and other documents. At the same time, with the aim of promoting national education in the Armenian Diaspora, the Catholicos set practical and effective tasks for the Primate of the Dioceses. During his Pontifical visits, the Catholicos constantly visited national schools, held meetings with students, teachers and benefactors. During the conversations, he encouraged to promote national education, to cherish the native language and the centuries-old national culture.

One of the manifestations of His Holiness' careful attitude towards national schools and national education in the Diaspora is the constant discussion of these issues during his numerous meetings with schoolchildren, youth organizations, teachers and pilgrims from different dioceses, who visited the Mother See of Holy Etchmiadzin.



ԱՍՏՈՒԱՍՏԱՆՉԻ ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԿԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՄԱՅԱՆՑԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ (ՀԱԿԻՐՃ ԱԿՆԱՐԿ)¹

1. ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Աստուածաշունչի ուսումնասիրութեան նշանակութիւնը շատ մեծ է, որովհետեւ ան կ'ընդգրկէ կրօնական, մշակութային եւ կրթական հարթութիւններ: Աշխարհի մը մէջ, ուր բազմազանութիւնը եւ հաղորդակցական միջոցներու առաջընթացքը կը տիրեն ամենուրեք, Աստուածաշունչի ուսումնասիրութիւնները հիմնաքար ըլլալ կը շարունակեն անհատներու, եկեղեցիներու եւ կրօնական տարբեր հաստատութիւններու համար: Հետեւեալ ներածութեամբ կը ջանանք փոխանցել անոր կարեւորութիւնը:

Աստուածաշունչի ուսումնասիրութիւնները միջոց են, որով անհատները կը ձգտին խորացնել իրենց հաւատքի ըմբռնումը՝ ուսուցումները եւ մարգարէութիւնները: Այս ուսումնասիրութիւններով անհատներ եւ հաստատութիւններ կը ներգրաւուին արտացոլող եւ փոխակերպող ճամփորդութեան մը մէջ, ուր անոնք կը գտնեն փրկութեան ճանապարհը, բարոյական որոշումներու համար հիմք եւ անձնական աճի եւ նպատակի համար առաջնորդութիւն:

Աստուածաշունչը դարեր շարունակ կարեւոր դեր խաղացած է նաեւ մշակութային եւ պատմական ժառանգութեան միասնաբար ըմբռնումը խթանելու գործին մէջ: Աստուածաշունչի ազդեցութիւնը, կրօնական հաստատութիւններէ՝ եկեղեցիներէ եւ համայնքներէ ու ծառայական խմբաւորումներէ տարածուելով, նաեւ գրականութեան, արուեստի, փիլիսոփայութեան եւ նոյնիսկ իրաւական համակարգերու վրայ գործած է խոր ազդեցութիւն անոնց ձեւաւորման ու փոխակերպութեան գործընթացին

¹* Ստացուել է՝ 18.08.2024, գրախօսուել է՝ 18.09.2024: Էլ. հասցէ՝ duzunyan@gmail.com:

մէջ: Աստուածաշունչի պատմութիւններն ու նիւթերը միահիւսուած են մարդկային քաղաքակրթութեան խճանկարին մէջ՝ դարձնելով Աստուածաշունչի ուսումնասիրութիւնը ակադեմիական եւ մտաւոր որոնումներու անբաժանելի բաղադրիչը: Նոյնը պէտք է ըլլայ ժամանակակից կրթական հարթակի վրայ, եւ Աստուածաշունչի ուսումնասիրութիւնները պէտք է գտնեն իրենց տեղն ու ազդեցութիւնը:

Ժամանակակից դարաշրջանին մէջ եւ յատկապէս բարոյականի եւ հաւատի տկարացման պայմաններու տակ Աստուածաշունչի ուսումնասիրութիւնները կը շարունակեն կեդրոնական եւ առանցքային դեր ունենալ աշխարհով մէկ, հասարակութիւններու հոգեւոր եւ բարոյական կառուցուածքի ձեւաւորման գործընթացին մէջ: Որպէս Աստուծային օրինաց եւ Յիսուս Քրիստոսի փրկագործական տնօրինութեանց գլխաւոր վկայ՝ Աստուածաշունչը անզուգական նշանակութիւն ունի անթիւ անհատներու համար՝ անցնելով աշխարհագրական եւ մշակութային բոլոր սահմանները: Այն ոչ միայն Աստուծային տնօրինութիւններու արձանագրութիւն եւ կրօնական ուսուցումներու ուղեցոյց է, այլ նաեւ կը ծառայէ որպէս յաւերժական իմաստութեան, բարոյական առաջնորդութեան եւ ընկերային սկզբունքներու հիմնական առաջնորդ եւ կողմնացոյց:

Մինչ անհատները կը կողմնորոշուին ժամանակակից աշխարհի բարդութիւններու մէջ, Աստուածաշունչի ուսումնասիրութիւնները միջոցով ձեռք բերուած պատկերացումները կը շարունակեն առաջնորդութիւն, միախառնութիւն եւ նպատակի զգացում տալ՝ դարձնելով այն ԻԱ. դարի մշակութային եւ կրօնական կեանքի եւ ապրելակերպի կենսական կողմը:

Միջոցներու, մասնաւորապէս համացանցի եւ արհեստական բանականութեան արագ առաջընթացը մեծ փոփոխութիւններ առաջացնել սկսած է տարբեր ոլորտներու մէջ: Արհեստական բանականութեան գործածութիւնը ներթափանցեց ամենուրեք եւ սկսաւ գործածուիլ կեանքի բոլոր ոլորտներու մէջ, ուր կրօնքը եւ կրօնական ուսումնասիրութիւնները բացառութիւն չեն կազմեր²: Դեռեւս աւելի քան կէս դար այս նիւթը

² Արդէն կազմուած է կայք, ուր մարդիկ ձեռք առած են արհեստական բանականութեան եւ հաւատքի միասին գործածութիւնը: Իրենց խօսքով՝ «Մեր առաքելութիւնը, հաւատացեալ մարդոց, ժամանակի փորձառութեմէ անցած, հաւատքի վրայ հիմնուած արժէքներն ու իմաստութիւնը իրենց արհեստական բանականութեան էթիկական գրոյցներուն միացնելու համար զինել եւ խրախուսել է: Our mission is to equip and encourage people of faith to bring time-tested, faith-based values and wisdom to the ethical AI conversation» <https://aiandfaith.org/>:

սկսած էր զբաղեցնել գիտական ոլորտը: Այսպէսով կրօնական գետնի վրայ AI-ի մասին սկսած էին եւ կը շարունակուին կարծիքներ յայտնուիլ եւ հրատարակուիլ՝ գիրքեր եւ յօդուածներ: Քանի մեր նիւթը չէ ուսումնասիրել պատմութիւնը կը բաւարարուին քանի մը կարեւոր հրատարակութիւններ նշել, անոնց համար, որոնք կ'ուզեն հետաքրքրուիլ այս նիւթով³:

Ժամանակակից դարաշրջանին մէջ եղանակներն ու համապատասխան միջոցները դարձած են ուսումնառութիւնը դիւրացնելու եւ կրթական փորձառութիւնները հարստացնելու անփոխարինելի գործիք: Արհեստական բանականութեան ի յայտ գալը մեծ յեղափոխութիւն պատճառած է կրթութեան ոլորտին մէջ՝ պարտաւորելով նոր լուծումներ գտնել եւ վերատեսութեան եւ փոփոխման ենթարկել դասաւանդման աւանդական մեթոդներու մէջ: Արհեստական բանականութեան միաձուլումը կրթական գործընթացին սկսած է բարձրացնել եւ զօրացնել արդիւնաւէտութիւնը, դիւրացուցած է անհատական ուսուցման փորձը եւ ընդլայնած է գիտելիքներու ձեռքբերման շրջանակը: Կրօնագիտութիւն ոլորտին մէջ արհեստական բանականութեան գործածութիւնը նոր ուղիներ բացած է Սուրբ Գրոց եւ վարդապետութիւններու ուսումնասիրութեան եւ ըմբռնման համար⁴:

Հիմնական ներդրումներէ մէկը կը գտնուի լեզուի մշակման ոլորտին մէջ, ուր արհեստական բանականութեան կիրառումը շատ կը դիւրացնէ բարդ լեզուական նրբերանգները վերլուծելու եւ մեկնաբանելու խնդիրները: Այս կարողութիւնը շատ կարեւոր է նաեւ կրօնական բնագրերու ուսումնասիրութեան պարագային: Մասնաւորապէս Աստուածաշունչի ուսումնասիրութիւններու համար մասնագիտացած միջոցներ սկսած են

³ Ասկէ երեսուն տարի առաջ հրատարակուած է կարեւոր աշխատութիւն մը, ուր AI-ի մասին մինչեւ 1990-ական թուականներ կատարուած աշխատութիւններու պատմականը կը տրուի: Crevier՝ Daniel, AI: the tumultuous history of the search for artificial intelligence, BasicBooks, New York, 1993: Գիրքի 278–280 էջերու մէջ կը խօսի նաեւ արհեստական բանականութեան եւ կրօնքի յարաբերութեան մասին:

Հետեւեալ գիրքը կ'ուսումնասիրէ արհեստական բանականութեան ապագան՝ ձեռք առնելով մերժողական եւ ջատագովական խումբերու տեսակէտները: Haugeland, John, Artificial Intelligence: The Very Idea, A Bradford Book, The MIT Press, Cambridge, Massachusetts, 1989:

Նաեւ լաւ յօդուած մըն է հետեւեալը՝ Herzfeld, Noreen. 2003. Creating in Our Own Image: Artificial Intelligence and the Image of God. Zygon ®: Journal of Religion and Science 37(2): 303–316:

⁴ Այս նիւթի մասին ուղեցոյց մը իսկ պատրաստուած եւ հրատարակուած է, թէ ինչպէս կարելի է արհեստական բանականութիւնը գործածել որպէս ուսումնասիրութեան գործիք: <https://www.lordslibrary.com/how-to-use-ai-as-a-bible-study-tool/>:

մշակուիլ եւ ապագային ի յայտ պիտի գան համակարգչային ծրագրեր բոլորովին մասնագիտացած այս ոլորտին մէջ: Այս զարգացումը կարելիութիւններ պիտի տայ աւելի ճշգրիտ թարգմանութիւններ կատարելու եւ բնագրերու իմաստները աւելի խոր կերպով հասկանալու համար⁵:

Աւելին, արհեստական բանականութեան տուեալները վերլուծելու կարելիութիւնները պատկերացումներ եւ օրինաչափութիւններ կը տրամադրեն կրօնական բնագրերու մէջ, որոնք կրնան դժուար ըլլալ աւանդական եղանակներ կիրառելիս: Տուեալներու վրայ հիմնուած այս մօտեցումը կրօնական ուսուցումները, պատմական միջավայրը եւ մշակութային հետեւանքները աւելի համակարգուած եւ համապարփակ ուսումնասիրելու կարելիութիւնը կու տայ, որ կը զօրացնէ գիտելիքի գիտական հետապնդումը աստուածաբանական ուսումնասիրութիւններու մէջ:

Բնականաբար կարելի է շատ աւելին ըսել, բայց կը մտածենք, թէ բաւարար է այսքանը՝ բացատրելու համար մեր միտքը: Քանի որ միջոցները կը շարունակեն զարգանալ, արհեստական բանականութեան եւ կրօնական կրթութեան միջեւ համագործակցութիւնը կը խոստանայ նոր զարգացումներ: Թուայնացման դարաշրջանին մէջ ան կը բերէ նոր կարելիութիւն՝ հնագոյն իմաստութիւնը եւ Աստուածային Գրոց ըմբռնումը աւելի մատչելի եւ ներկայ ժամանակներու մտածելակերպի համապատասխան դարձնելու գործընթացին մէջ:

2. ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՒԱՆԴԱԿԱՆ ԵՒ ԱՐԴԻ ՄԵԹՈԳԻՆԵՐ

Աստուածաշունչի ուսումնասիրութիւնները ժամանակի ընթացքին զարգացած են՝ ներառելով աւանդական մեթոդները, որոնք կիրառուած են դարեր շարունակ եւ յարմարած են ժամանակակից մօտեցումներուն: Կարճ ակնարկ մը նետենք Աստուածաշունչի ուսումնասիրութեան աւանդական եւ ժամանակակից եղանակներու վրայ:

Աւանդական եղանակներ

- Բացատրական ֆարզչութիւն/ուսուցում

⁵ Օրինակ մըն է հետեւեալ յօդուածը, ուր կը բացատրէ նոր աշխատանք մը եբրայական բնագիրը ուսումնասիրելու համար՝ <https://bibleinterp.arizona.edu/articles/new-technology-ancient-world-using-artificial-intelligence-study-ancient-hebrew-texts>:

Կրօնական շատ աւանդոյթներու մէջ բացայայտող քարոզչութիւնը ներառած է Աստուածաշունչի որոշ հատուածի կամ գրքի մանրամասն բացատրութիւն կամ մեկնաբանութիւն: Ուշադրութեան կենտրոնն է բնագրի իմաստը բացատրել եւ անոնց կիրառման ճամբաները ցոյց տալ ժողովուրդին:

- Աստուածաշունչի ուսումնասիրութիւններ փոքր խումբերու մէջ

Փոքր խումբերով քննարկումներ կը կատարուին կրօնական բազմաթիւ համայնքներու մէջ: Մասնակիցները կը հաւաքուին՝ կարդալու եւ քննարկելու որոշ հատուածներ: Անոնք կը կ'հաղորդեն իրենց պատկերացումները, հարցումներ կ'ուղղեն իրարու եւ կ'աջակցին բնագիրը հասկնալու խնդիրներուն մէջ:

- Lectio Divina

Հինքրիստոնէական կիրառումը՝ Lectio Divina-ն, ներառած է աստուածաշնչական հատուածի դանդաղ ու խորհրդածական ընթերցումը, որուն կը յաջորդէ մտորում, աղօթք եւ խորհրդածութիւն: Այն կ'ընդգծէ խոր եւ անձնական կապ մը բնագրի հետ:

- Վերառական (Thematic) ուսումնասիրութիւններ

Այս եղանակը ներառած է Աստուածաշունչի վերտառական ուսումնասիրութիւն ըստ պարունակած նիւթի: Խումբեր կամ անհատներ Աստուածաշունչի տարբեր հատուածներու մէջ կ'ուսումնասիրեն զանազան նիւթեր, ինչպիսին են սէրը, ներողամտութիւնը կամ յատուկ առաքինութիւնները եւլն: Նաեւ այս ուսումնասիրութիւնը կարելիութիւն կը ստեղծէ թէ՛ անհատներու եւ թէ՛ խումբերու՝ խորանալու զանազան նիւթերու շուրջ եւ իւրացնելու զանոնք:

- Անգիր սերտում

Աւանդաբար, հիմնական հատուածներ կամ ամբողջական հատուածներ անգիր սորվիլը սովորական կիրառում մը եղած է, որ կը խթանէր բնագրի հետ խոր կապ մը եւ կը դիւրացնէ անոր պահպանումը:

Արդի եղանակներ

- Աստուածաշունչի առցանց ուսումնասիրութեան հարթակներ

Համացանցի գալուստով եւ կայծակնային զարգացումով տարբեր հարթակներ Աստուածաշունչի առցանց ուսումնասիրութեան կարելիութիւններ առաջացուցին: Նաեւ ստեղծուած են կարելիական (virtual) ուսումնասիրութեան խումբեր, զուգախօս (interactive) դասընթացներ եւ զարգացած են հսկայ բազմահաղորդ (Multimedia) բովանդակութիւն:

Այս հարթակները անհատներու համար կարելիութիւն կը ստեղծեն համաշխարհային մասնակցութիւն բերելու տարբեր ուսումնասիրութեան ոլորտներու մէջ⁶:

- Բջջային յաւելումներ եւ թուային գրքեր

Բջջային յաւելումները եւ թուային գրքերը կ'ապահովեն դիւրին մուտք դէպի Աստուածաշունչ, մեկնաբանութիւններ, ուսումնասիրութեան ուղեցոյցներ եւ այլ աղբիւրներ: Օգտագործողները կրնան զբաղիլ նիւթի հետ, ըստ իրենց յարմարութեան՝ առանց կապուած մնալու ժամանակի կամ տեղի պայմաններու, որ կը բարձրացնէ ուսումնական ժամանակացոյցի ճկունութիւնը⁷:

- Թուային Աստուածաշունչի ծրագրեր

Աստուածաշունչի ուսումնասիրութեան առաջադէմ թուային ծրագրակազմը կարելիութիւն կու տայ ուսումնասիրել Աստուածաշունչը՝ օգտագործելով այնպիսի առանձնայատկութիւններ, որոնցմէ են առաջադէմ որոնումը, խաչաձեւ յղումը եւ լեզուական գործիքները: Այս գործիքները շատ կը դիւրացնեն բնագրի խոր վերլուծութիւնը եւ ուսումնասիրութիւնը⁸:

- Հեռաձայնային եւ առցանց ֆարոգներ

Կրօնական շատ կազմակերպութիւններ այժմ կը պատրաստեն հեռաձայնային, ձայնասփռումներ եւ առցանց քարոզներ՝ աստուածաշն-

⁶ bibleai.com, bible.ai եւ openbible.info կայքէջերը լաւ օրինակներ են, որոնց մասին հակիրճ կ'արտայայտուինք ստորեւ:

⁷ YouVersion բջիջային յաւելումը լաւ օրինակ մըն է: Կարելի է ներբեռնել բոլոր հարթակներէն:

⁸ Հետեւեալները լաւագոյն ծրագրերն են. Logos Software շատ լայն ուսումնասիրութեան կարելիութիւններ կը ստեղծէ: Ծրագրի մէջ Սուրբ Գրոց բազմաթիւ լեզուական տարբերակներու առընթեր նաեւ եկեղեցական հայերէտ մեկնութիւններու եւ զանազան աւանդութիւններէ մեկնիչներու գործերը ներառուած են: logos.com Paratext ծրագիրը մասնաւորապէս մշակուած է Սուրբ Գրոց թարգմանութեան համար: Նոյն պատուհանի մէջ կարելի է տեսնել Սուրբ Գրոց տարբեր լեզուներով բնագրերը, նոր թարգմանութիւն ստեղծել, առաջարկներ կատարել, առցանց խմբային աշխատանքներ տանիլ, բառարաններ կազմել եւլն: paratext.org: Bible Worksը լաւագոյն ծրագրերէն մէկը եղած էր, իրենց բառերով՝ «providing a suite of professional tools aimed at enabling students of the Word to “rightly divide the word of truth”»: Անոր մէջ կարելի էր գտնել Սուրբ Գրոց տարբեր լեզուներու տարբերակները, նաեւ եբրայեցերէն եւ յունարէն բնագրերու իւրաքանչիւր բառի վերլուծութիւնը, եբրայեցերէն եւ յունարէն սորվելու տարբեր ծրագրեր եւ շատ անելիք: Սակայն 2018 թուականէն սկսեալ այս ծրագրի վաճառքը դադարած է: Սակայն դեռ շատեր կը շարունակեն օգտագործել եւ նաեւ տարածել զայն, որոնցմէ է այս յօդուածին հեղինակը: Թէեւ պաշտօնապէս չենք հանդիպած գրութեան մը, որ հաստատէ մեր կարծիքը, բայց կը մտածենք թէ, վաճառքին դադարումը զայն վերածած է abandonware-ի, որ ըսել է թէ՛ տարածումը ձրի դարձած է:

չական ուսուցումները հասանելի դարձնելով աւելի լայն լսարաններու համար: Այս հարթակները յաճախ ներառած են բազմահաղորդ տարրեր՝ տեսանիւթ եւ տեսողական օժանդակ միջոցներ:

- Ընկերային հաղորդակցման հարթակ եւ առցանց համայնքներ

Յիշեալները կարելիութիւն կու տան մտքեր փոխանակելու, հատուածներ քննարկելու եւ աւելի լայն լսարանի հետ կապուելու համար, որ Աստուածաշունչի ուսումնասիրութեան աւելի աշխոյժ եւ զուգախօս մօտեցում ցուցաբերելու միջոցն էր կը ստեղծեն:

Աւանդական եւ ժամանակակից եղանակներու համադրութիւնը անհատներուն եւ համայնքներուն կ'արտօնէ Աստուածաշունչի ուսումնասիրութեան մօտենալ ըստ իրենց նախասիրութիւններուն, ուսուցման ոճերուն եւ մշակութային միջավայրին: Այլազան միջոցներու միաձուլումը ընդլայնած է Աստուածաշունչի ուսումնասիրութեան կարելիութիւնները՝ դարձնելով այն աւելի մատչելի եւ յարմար ժամանակակից լսարանի տարբեր կարիքներին:

3. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ Մէջ

Արհեստական բանականութիւնը կրնայ նշանակալից դեր խաղալ Աստուածաշունչի ուսումնասիրութեան բարելաւման գործունէութեան մէջ՝ օգտագործելով տարբեր եղանակներ՝ ներառեալ թարգմանութիւններու լեզուական մշակումը եւ տուեալներու վերլուծութիւնը՝ աւելի խոր պատկերացումներու համար: Ահա ականարկ մը, թէ ինչպէս արհեստական բանականութիւնը կրնայ նպաստել այս սպասումներուն.

- Թարգմանութիւններու լեզուական մշակում

Մեքսիկական թարգմանութեան ծառայութիւններ: Արհեստական բանականութեան վրայ աշխատող լեզուներու մշակման գործիքները, ինչպիսիք են մեքսիկական թարգմանութեան ալգորիթմները, կրնան օգնել Աստուածաշունչի բնագրերը բազմաթիւ լեզուներով թարգմանելու գործին մէջ: Այս համաշխարհային լսարանի համար կը դիւրացնէ հասանելիութիւնը եւ թոյլ կուտայ գիտնականներուն եւ ընթերցողներուն ներգրաւուելու Սուրբ Գրոց ուսումնասիրութեան մէջ, որոնք արհեստական բանականութեան միջոցով կրնան տիրապետել բնօրինակ լեզուներուն:

Շարակարգէն տեղեակ թարգմանութիւններ: Արհեստական բանականութեան առաջադէմ տարբերակները մօտ ապագային կրնան վերլուծել աստուածաշնչային հատուածներու համատեքստը՝ հաշուի առնելով լեզուական նրբութիւնները եւ պատմական յղումները: Այս կ'ապահովէ աւելի ճշգրիտ թարգմանութիւններ՝ պահպանելով բնագրի նախատեսուած իմաստը:

Համեմատական վերլուծութիւն: Արհեստական բանականութիւնը կրնայ օգնել գիտնականներուն տարբեր թարգմանութիւններու համեմատական վերլուծութիւններ իրականացնելու, ձեւակերպելու եւ մեկնաբանութիւններու տատանումները բացայայտելու խնդրին մէջ: Այս մեծապէս օգտակար կրնայ ըլլալ աստուածաշնչական հատուածներու թարգմանութեան տարբեր ձեւերու համապարփակ պատկերացում կազմելու մէջ:

- Շարակարգը հասկանալու համար զգացումներու վերլուծութիւն

Բնագրերու մէջ զգացումներու յայտնաբերում: Զգացումներու վերլուծութիւնը կրնայ կիրարկուիլ աստուածաշնչեան բնագրերու վրայ՝ զգացումներու նրբութիւնները բացայայտելու եւ հասկանալու համար: Այս կ'օգնէ հատուածներու մէջ զգացումներու խորքը ճանչնալու եւ գիտնականներուն կարելիութիւնը կու տայ, որ անոնք խորանան Սուրբ Գրոց մէջ արտայայտուած մարդկային փորձառութիւններու մէջ:

Զգացումներու վերլուծութիւնը կրնայ կիրառուիլ աստուածաշնչեան հատուածներու վերաբերեալ անձնական արտացոլումները վերլուծելու համար, օրինակ՝ քարոզները, մեկնաբանութիւնները եւ առցանց զրուցակցութեան մէջ կատարուած քննարկումները: Այս կրնայ օգնել հասկանալու, թէ մարդիկ ինչպէս կ'ընկալեն Աստուածաշունչի տարբեր մասերը եւ զգացական կապ ունին անոր հետ:

- Տուեալներու վերլուծութիւն աւելի խոր պատկերացումներու համար

Կադապարները հանչնալ: Արհեստական բանականութեան հայթայթած տուեալներու վերլուծութիւնը Աստուածաշունչի մէջ գտնուող օրինաչափութիւնները եւ կրկնուող թեմաները կրնայ բացայայտել: Հսկայական քանակութեամբ բնագրեր մշակելով՝ արհեստական բանականութիւնը գիտնականներուն եւ հետազօտողներուն կ'օգնէ, որ բացայայտեն պահուած կապերը, աստուածաբանական նիւթերը եւ պատմական կառույցները, որոնք աւանդական եղանակներու միջոցով կրնան ակնյայտ չըլլալ:

Իմաստային վերլուծութիւն: Արհեստական բանականութեան իմաստային վերլուծութեան կարելիութիւնները կրնան նպաստել աստուածաշնչեան

հատուածներու իմաստի աւելի խոր հետազօտումին, ուր ներառած է բառերու, մօտեցումներու եւ աստուածաբանական թեմաներու միջեւ փոխյարաբերութիւններու ըմբռնումը, որով բնագրի աւելի հարուստ պատկերացում կազմելու կարելիութիւն կ'ապահովուի:

Պատմական համապատկեր: Արհեստական բանականութեան վրայ հիմնուած տուեալներու վերլուծութիւնը կրնայ օգնել աստուածաշնչեան իրադարձութիւններու մթնոլորտի աւելի լաւ ըմբռնումին՝ վերլուծելով պատմական եւ մշակութային տուեալները: Սա կարելիութիւն կ'ընձեռէ հատուածներու առաւել տեղեկացուած մեկնաբանութեան, ուր հաշուի առնուած կ'ըլլայ իրենց գրուած հասարակական-քաղաքական եւ մշակութային միջավայրերը:

Ընդհանուր առմամբ արհեստական բանականութեան համագործակցութիւնը Աստուածաշունչի ուսումնասիրութեան մէջ կը բարելաւէ լեզուական ճշգրտութիւնը, զգացումներու ըմբռնումը եւ վերլուծական խորութիւնը՝ առաջարկելով գիտնականներուն եւ ընթերցողներուն նոր հեռանկարներ եւ պատկերացումներ Աստուածաշունչի բնագրին վերաբերեալ:

Առ այժմ լայնօրէն ճանաչում գտած կամ յատուկ արհեստական բանականութեան յաւելուածներ չկան, որոնք նախատեսուած ըլլան բացառապէս Աստուածաշունչի ուսումնասիրութիւններու համար: Այնուամենայնիւ կան արհեստական բանականութեան ընդհանուր գործիքներ եւ հարթակներ, որոնք կրնան կիրարկուիլ Աստուածաշունչի ուսումնասիրութեան տարբեր պահանջները բարելաւելու համար:

Ստորեւ կու տանք արհեստական բանականութեան քանի մը յաւելուածներ եւ համակարգչային ծրագրեր, որոնք կը գործածուին տարբեր հարթակներու վրայ, գաղափար կու տան Աստուածաշունչի ապագայ ուսումնասիրութիւններու համար, թէ ինչպէս ծրագրեր կրնան պատրաստուիլ զուտ Աստուածաշունչի ուսումնասիրութիւններու համար⁹, որոշ ծրագրեր կրնան մինչեւ իսկ այժմ ալ գործածուիլ այս նպատակով: Մենք ստորեւ բերած ենք մեր առաջարկները հետաքրքրուողներու համար:

⁹ Շատ նոր ինծի հասաւ համակարգչային արհեստական բանականութեան նոր թրքերէն ծրագրի մը լուրը, որ պիտի օգնէ Սուրբ Գրոց քարոզութեան եւ ուսումնասիրութեան համար՝ թուրք մթնոլորտի մէջ: Թերեւս պատրաստութեան եւ վերաքննութեան շրջանի մէջ է, բայց շուտով կը հրատարակուի առաջին կատարելագործուած տարբերակը: Այժմու գործընթացի փորձառական տարբերակին կարելի է հասնիլ՝ <https://avrasya-ai.vercel.app> կայքէջէն:

Ա. Մեքենայական թարգմանության գործիքներ

Ճիշտ է, թէ Աստուածաշունչի լեզուական նրբերանգներու թարգմանությունը շատ դժուար եւ մասնագիտական գործ է, բայց թարգմանական գործիքներ այնքան արագ կ'առաջանան, որ մօտ ապագային պիտի ունենանք կատարելի մօտ թարգմանություններ: Թէեւ երթալով աւելի կը բարելաւուին Google Translate-ը կամ Microsoft Translator-ը, որոնք կրնան օգնել աստուածաշնչեան բնագրերը թարգմանել տարբեր լեզուներով՝ խթանելով հասանելիությունը համաշխարհային լսարանի համար, բայց եւ այնպէս լաւագոյն տարբերակը կը նկատենք DeepL.com-ը, որ զանազան լեզուներու համար շատ որակաւոր թարգմանություններ կ'ապահովէ: Բնականաբար մենք չենք այս առաջին մտածողը Հարաւային Քալիֆորնիայի համալսարանի մէջ արդէն իսկ սկսած են այս նիւթով ուսումնասիրություններ, որոնց մասին հրատարակուած է յօդուած մը¹⁰:

Առ այսօր կատարուած թարգմանություններու թիւը այդքան բարձր է, որ լեզուներու համեմատություն կատարող արհեստական բանականությունեան գործիք մը շատ դիւրին պիտի կարողանայ լաւագոյն թարգմանությունները կատարել:

Բ. Զգացումներու վերլուծության գործիքներ¹¹

Զգացումներու վերլուծութեան գործիքները, որոնցմէ են IBM Watson Tone Analyzer-ը կամ Google Cloud Natural Language API-ն, կրնան կիրարկուիլ աստուածաշնչեան հատուածներու զգացական միջավայրն ընկալելու համար՝ բացայայտելով հերոսներու կամ հեղինակներու կողմէ արտայայտուած զգացումները: Այս առիթը կու տայ սուրբգրային յատուածներու մէջ արտայայտուած զգացումներու ըմբռնումը դիւրացնել՝ մանաւանդ սկսնակ մակարդակի ընթերցողներու համար:

¹⁰ Թէեւ կարճ, բայց շատ լուսաբանող յօդուած մըն է: Fiona André, USC Researchers Use AI to Help Translate Bible Into Very Rare Languages, <https://religionnews.com/2023/07/05/usc-researchers-use-ai-to-help-translate-bible-into-very-rare-languages/>: Յօդուածը վերահրատարակուեցաւ նաեւ <https://www.thebanner.org/news/2023/08/usc-researchers-use-ai-to-help-translate-bible-into-very-rare-languages>:

¹¹ Զգացումներու վերլուծութեան գործիքները այն համակարգչային ծառայություններն են, որոնք վերլուծելով գրաւոր բնագիրը՝ կ'որոշեն, թէ ինչ զգացողական երանքով գրուած է գրությունը կամ ինչ զգացումներ կը փոխանցէ իր ներսիդին: Այս տեսակի գործիքները սովորաբար կ'օգտագործեն բնական լեզուի մշակման (NLP) եւ մեքենայական ուսուցման արժեքիթմներ, որպէսզի յայտնաբերուի եւ դասակարգուի բնագրի մէջ արտայայտուած զգացումները: Այս ծառայությունները կրնան բնորոշել ուրախությունը, տխրությունը, բարկությունը, վախը եւ այլն: Անոնք ծառայութեան գործածողներուն կ'օգնեն հասկնալ գրություններու եւ ի մասնաւորի մեծածաւալ բնագրերու զգացական նրբությունները:

Գ. Բնագրային Mining-ի վերլուծական հարթակներ

RapidMiner-ի կամ KNIME-ի նման հարթակները, որոնք կ'առաջարկեն բնագրի գիտաքննում (text Mining) եւ վերլուծական կարելիություններ, կրնան գործածուիլ աստուածաշնչեան բնագրի մեծ ծավալի տուեալներու վերլուծութեան համար՝ բացայայտելով օրինաչափությունները, նիւթերը եւ Սուրբ Գրոց միջեւ փոխյարաբերությունները: Այս ծրագրերով տարիներու աշխատութեամբ ձեռք բերուած համաբարբառները կարելի է քանի մը վայրկեանի մէջ պատրաստել կամ որեւէ մէկ նիւթով վայրկեաններու մէջ բոլոր Աստուածաշունչը որոնել եւ պատրաստ ցանկ եւ վերլուծութիւն ի ձեռին ունենալ:

Դ. Որոնման եւ խաչաձեւ յղումներու գործիքներ

Elasticsearch-ի¹² կամ Algolia-ի¹³ նման, արհեստական բանականութեամբ ընդլայնուած որոնման համակարգերը, կրնան բարելաւել աստուածաշնչեան հատուածներու որոնման եւ խաչաձեւ յղումներու արդիւնաւէտութիւնը՝ կարելիութիւն տալով գործածողներուն արագ գտնել ճշգրիտ եւ դիպուկ հատուածներ կամ յարակից բովանդակութիւն: Այս նաեւ գործածողներու առիթը պիտի տայ, թէ անոնք աստուածաշնչային աւանդական եւ արդի մեկնություններու կայծակնային արագութեամբ հասնին եւ կարենան համեմատություններ կատարել:

Ե. Արհեստական բանականութեամբ անձնական Աստուածաշնչային ուսումնասիրութեան կայքէջեր

Openbible.info հարթակը կարելիութիւն կ'ընծայէ անձնական ուսումնասիրութիւն կատարել աստուածաշնչային որեւէ համարի մասին եւ նաեւ կ'առաջարկէ խորհրդածություններ եւ աղօթքներ տուեալ նիւթի մասին¹⁴: Համացանցի եւս երկու կայքէջ բացուեց՝ bibleai.com եւ bible.ai, որոնք մասնագիտացած են Աստուածաշունչի որոնման նիւթի մէջ: Բաւական բարձր մակարդակի պատասխաններ կարելի է քաղել այս հարթակներէն:

Զ. Համատեղ ուսուցման հարթակներ

Առցանց հարթակներն ու զրուցակցությունները, որոնք կը նպաստեն Աստուածաշունչի համատեղ ուսումնասիրութեան, կրնան միաձուլել արհեստական բանականութեան վրայ հիմնուած առանձնաշատկություն-

¹² Տե՛ս elastic.co/elasticsearch/:

¹³ Տե՛ս algolia.com/:

¹⁴ Այս նիւթի մասին բացատրական մը հրատարակուած է նաեւ նոյն հարթակի մէջ՝ <https://www.openbible.info/blog/2022/08/exploring-ai-assisted-bible-study/>:

ները՝ քննարկումներ կազմակերպելու, համապատասխան հատուածներ առաջարկելու կամ մասնակիցներու հետաքրքրութիւններու հիման վրայ լրացուցիչ աղբիւրներ տրամադրելու համար: Այս նիւթի մասին պիտի անդրադառնանք առանձին բաժնի մէջ:

Կարելոր է նշել, որ արհեստական բանականութեան միաձուլումն Աստուածաշունչի ուսումնասիրութիւններուն զարգացող ոլորտ է, եւ նոր գործիքներ կամ յաւելուածներ կրնան մշակուիլ եւ ըստ մեր կարծիքին՝ կը մշակուին այս յօդուածի պատրաստութեան ժամանակ իսկ: Բացի այդ՝ միջոցների բարեվարք օգտագործումը եւ կրօնական ետնախորքի մէջ տարաբնոյթ մեկնաբանութիւններու դիտարկումը կարելոր գործօններ են՝ Սրբազան բնագրերու ուսումնասիրութեան մէջ՝ արհեստական բանականութեան կիրառման ժամանակ: Հետազօտողները, մշակողները եւ կրօնական մանկավարժները պէտք է ուսումնասիրեն արհեստական բանականութեան յատուկ յաւելուածները կամ յարմարեցնեն առկա գործիքները՝ ապագային Աստուածաշունչի ուսումնասիրութիւններու եզակի կարիքներուն աւելի լաւ ծառայելու համար:

4. Համատեղ ուսուցման համար համացանցի օգտագործում

Քանի մը առցանց եւ զրուցակցական հարթակներ եւ համայնքներ ի յայտ եկած են՝ հեշտացնելու Աստուածաշունչի համատեղ ուսումնասիրութիւնները՝ թոյլ տալով տարբեր ծագում ունեցող անհատներուն հաւաքուելու եւ մասնակցելու աստուածաշնչեան բնագրերու վերաբերեալ քննարկումներին: Ահա մի քանի նշանաւոր հարթակներ:

1. YouVersion Աստուածաշունչի յաւելում

YouVersion-ն աստուածաշնչեան յայտնի յաւելում է, որ կ'ապահովէ տարբեր թարգմանութիւններու, ընթերցանութեան ծրագիրներու եւ ուսումնական աղբիւրներու հասանելիութիւնը: Ան կ'ընդգրկէ համայնքային գործառոյթ, ուր զանազան անձեր կրնան միանալ Աստուածաշունչի ուսումնասիրութեան խմբերուն, մասնակցիլ քննարկումներուն:

2. Bible.org համայնք

Bible.org-ն առցանց համայնք մըն է, ուր անձեր կրնան միանալ զրուցակցութեան, անդամակցիլ ուսումնական խմբերուն եւ օգտուիլ հարուստ ուսումնասիրութեան աղբիւրներուն: Հարթակը կը խրախուսէ համագործակցական ուսուցումը եւ գործածողներու համար տարածք կը տրամադրէ հարումներ ուղղելու եւ պատկերացումներ հաղորդելու համար:

3. Faithlife (Logos Bible Software)

Faithlife-ը, որը կապուած է Logos Bible Software-ի հետ, հարթակ է, որ կը տրամադրէ Աստուածաշունչի ուսումնասիրութեան գործիքներ՝ ներառեալ մեկնաբանութիւններ, ուսումնական ուղեցոյցներ եւ համայնքային քննարկումներ: Գործածողները կրնան միանալ խումբերուն, մասնակցիլ քննարկումներուն եւ աղբիւրներ յուշել այլոց:

4. Bible Gateway համայնք

Bible Gateway-ը լայնօրէն օգտագործուող առցանց աստուածաշնչեան հարթակ է, որը նաեւ ունի համայնքային բաժին: Օգտագործողները կրնան մասնակցիլ քննարկումներուն, հարցումներ տալ եւ դիտարկել Աստուածաշունչի տարբեր բաժիններ եւ նիւթեր առցանց այլ համայնքներու հետ:

5–7. StudyLight.org, Blue Letter Bible, Stack Exchange

StudyLight.org-ը, Blue Letter Bible Community-ն եւ Stack Exchange-ն Աստուածաշունչի ուսումնասիրութեան առցանց համայնքներ են, որոնք ունին զրուցակցութեան, մեկնաբանութեան եւ ուսումնասիրութեան գործիքներ: Օգտագործողներն Աստուածաշունչի հետ կապուած հարցումներ կրնան տալ եւ նաեւ պատասխանել՝ նպաստելով գիտելիքի փոխանակման եւ համագործակցութեան միջավայրի ստեղծման:

Մեր այս յօդուածով ակնարկ մը նետել փափաքեցանք՝ Աստուածաշնչի ուսումնասիրութիւններու համար արհեստական բանականութեան եւ համացանցի գործածութեան խնդրին: Թէեւ շատ նոր է այս նիւթը թուային աշխարհի մէջ, բայց եւ այնպէս ներկայ դարուն մէջ անցեալ տարին արդէն շատ հեռու թուական է: Զարգացումն այդքան արագ է, որ այլեւս նոր չկայ: Այսօրուայ նորը վաղն արդէն հին է: Աստուածաշունչի ուսումնասիրութիւններն ալ պէտք ունին յարմարիլ թուայնացման զարգացումներուն:

Նաեւ կ'ուզենք շեշտել հետեւեալը. մեր այս աշխատութեան մէջ արհեստական բանականութեան Աստուածաշունչի ուսումնասիրութիւններու գետնի մէջ դրական ազդեցութիւններու մասին արտայայտուեցանք եւ ուշադրութիւն չի դարձուցինք ժխտական¹⁵ եւ այլ ազդեցութիւններու

¹⁵ Վտանգներէ մէկն այն է, թէ եթէ անձ մը իր վստահութիւնը դրած է արհեստական բանականութեան տուեալներու վրայ, շատ դիւրին կրնայ իր Աստուծոյ նկատմամբ հաւատքը կորսնցնել ստացած պատասխանով: Նիւթը չխճողելու համար կը բաւարարուինք տալ պարզ օրինակ մը, զոր ստացանք մեր chatGPT-ի տուած մէկ հարցումով.

Հետեւեալն էր հարցումը. Does God exist? Աստուած կա՞յ:

վրայ: Կրօնական ընկերաբանություն¹⁶, կրօնքի եւ այլ գիտություններու փոխյարաբերություններու ուսումնասիրության մէջ արհեստական բանականությունեան ներդրումի¹⁷, արհեստական բանականությունեան կրօնական տեսանկիւնէն ապագային¹⁸ եւ տարբեր շարժումներու¹⁹ եւ նման նիւթերու մասին չենք արտայայտուած: Բաւարարուած ենք նշել քանի մը աշխատություններ: Այս պարագան շատ մեծ ուսումնասիրության գետին է:

Եւ հետեւեալն էր պատասխանը. «Բարձրագոյն ուժի կամ աստուածութեան գոյութեան հարցը խորապէս փրփստփայական է եւ դարեր շարունակ քննարկուած է աստուածաբաններու, փրփստփաներու, գիտնականներու եւ տարբեր հաւատալիքներու համակարգերու պատկանող անհատներու կողմէ: Աստուծոյ գոյութիւնը անձնական հաւատքի եւ մեկնաբանութեան խնդիր մըն է, որ յաճախ ազդուած կ'ըլլայ մշակութային, կրօնական եւ փրփստփայական տեսանկիւններէ:

Ձուտ տրամաբանական տեսանկիւնէ կարելի չէ Աստուծոյ գոյութիւնը էմպիրիկ ապացոյցներ կամ գիտական մեթոդներ օգտագործելով վերջնականապէս ապացուցել կամ հերքել: Աստուծոյ հանդէպ հաւատքը յաճախ կը հիմնուի հաւատքի, անձնական փորձառութիւններու, մշակութային դաստիարակութեան եւ կրօնական բնագրերու մեկնաբանութիւններու վրայ:

Աստուծոյ էութեան եւ գոյութեան մասին կրօնական տարբեր աւանդութիւններ տարբեր տեսակէտներ կ'առաջարկեն՝ սկսելով մէկ ամենակարող աստուածութեան վերաբերեալ միաստուածեան հաւատալիքներէ, մինչեւ բազմաթիւ աստուածներու կամ հոգեւոր ուժերու վերաբերեալ բազմաստուածեան հաւատալիքներ:

Ի վերջոյ, Աստուած գոյութիւն ունի թէ ոչ, հարց է, որ իւրաքանչիւր մարդ պէտք է ուսումնասիրէ եւ պատասխանէ իր համար՝ հիմնուելով իր սեպհական համոզումներու, փորձառութիւնների եւ աշխարհայեացքի վրայ»:

Բնականաբար մեքենայէ մը այս հարցումին յայտնութեան վրայ հիմնուած ճշգրիտ պատասխան մը սպասել սխալ է, բայց եւ այնպէս շատեր կը հարցնեն արդէն այս հարցումը եւ կը ստանան նման պատասխաններ եւ կը ձեւաւորեն իրենց հաւատքը:

¹⁶ Այս յօդուածը մասնաւորապէս կ'ուսումնասիրէ արհեստական բանականությունեան կրօնական ընկերաբանութեան ոլորտի ազդեցություններու հաւանականությունները: Kimura, T. (2017). Robotics and AI in the sociology of religion: A human in imago roboticae. Social Compass, 64(1), 6–22. <https://doi.org/10.1177/0037768616683326>:

¹⁷ Այս աշխատութեան մէջ հեղինակը կրօնը հասկնալու համար կ'առաջարկէ գործածել արհեստական բանականությունեան միջոցով կատարուած հետազոտությունները՝ կրօնքը միաձուլելով հոգեբանությունեան եւ մարդաբանությունեան հետ:

¹⁸ SÉA MERCER, CALVINB & TROTHEN, TRACY J., Religion and the Technological Future, An Introduction to Biohacking, Artificial Intelligence, and Transhumanism, Palgrave Macmillan, Cham, Switzerland, 2021:

¹⁹ Այս պարագաներէն մէկն է Apocalyptic AI-ն, որ նոր շարժում մըն է, որու հետեւորդները կը սպասեն այն զարգացումը, ուր մարդիկ, որոնք բոլորովին յուսալքուած ըլլալով իրենց սահմանափակ մարմիններէն, պիտի կարողանան իրենց բանականությունը ներբեռնել մեքենաներու մէջ եւ պիտի կարենան ապրիլ անշօշափ (ֆր. virtuel, միջազգ. virtual) աշխարհի մէջ: Հետեւեալը շատ հետաքրքիր յօդուած է: Իր աղբիւրներու ցանկին մէջ կը պարունակէ բաւական մեծ ծաւալի հրատարակություններ, որոնք կրնան լաւ գաղափար ստեղծել այս նիւթի մասին: GERACI, ROBERT M. Apocalyptic AI: Religion and the Promise of Artificial Intelligence, Oxford University Press, Journal of the American Academy of Religion, Vol. 76, No. 1 (Mar., 2008), էջ 138–166:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս յօդուածը կ'ուսումնասիրէ արհեստական բանականութեան եւ համացանցի ներառութեան կարելութիւններն Աստուածաշնչի ուսումնասիրութիւններու ոլորտին մէջ: Քանի որ միջոցներու զարգացումն անդադար է, կրօնական կրթութեան մէջ անոնց կիրառումը կարեւոր կը դառնայ: Յօդուածին մէջ կ'ուսումնասիրուի, թէ ինչպէս արհեստական բանականութիւնը կրնայ նպաստել Աստուածաշունչի աւելի խոր ըմբռնման:

Յօդուածը կ'ուսումնասիրէ համացանցի դերը միատեղ Աստուածաշունչի հեռակայ իրական ժամանակի քննարկումներու եւ հարուստ աղբիւրներու հասանելիութեան առաւելութիւնները եւ նաեւ արհեստական բանականութեան եւ համացանցի համագործակցութեան փոխազդեցութիւնը Աստուածաշնչի ուսումնասիրութիւնների ոլորտի մէջ:

Պէտք է նշել, թէ շատ նուազ յօդուած հրատարակուած է աշխարհով մէկ: Այս նիւթը բոլոր աշխարհի մէջ շատ քիչ ուսումնասիրուած նիւթ է եւ ուսումնասիրութեան մեծ դաշտ մը կը պարունակէ իր մէջ: Բայց յայտնի է, թէ շատ մեծ ապագայ մը գոյութիւն ունի:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Աստուածաշունչի ուսումնասիրութիւն, արհեստական բանականութիւն, համացանց, աւանդական եղանակներ, արդի եղանակներ

РЕЗЮМЕ


В этой статье рассматривается роль и применение Интернета и искусственного интеллекта в современной библейской науке, а также изучаются возможности эффективного использования новых технологий. Мы начали с краткого обзора традиционных методологий, используемых в библейской науке, а затем обратили внимание на ряд передовых интернет-приложений, которые получили значительное распространение за относительно короткий период времени. Затем мы обсудили многочисленные области искусственного интеллекта, которые в настоящее время используются или могут быть исполь-

зованы в библейских исследованиях. Необходимо признать растущее значение Интернета и искусственного интеллекта (ИИ) в современной библейской науке. В эпоху, когда технологии развиваются с экспоненциальной скоростью и ежедневно появляются новые приложения, крайне важно признать незаменимую роль этих двух областей в библейских исследованиях. Однако также важно рассмотреть потенциальные проблемы и этические соображения, связанные с их использованием. В заключительном разделе этой статьи мы представляем предварительный анализ потенциальных негативных последствий ИИ для верований. Мы полагаем, что эта тема заслуживает дальнейшего изучения и анализа в рамках отдельной статьи или исследовательского проекта.

SUMMARY

This article examines the role and application of the Internet and artificial intelligence in contemporary Bible Studies, and explores how new technologies can be effectively used. We began with a brief overview of traditional methodologies used in Bible Studies and then turned our attention to a number of cutting-edge Internet-based applications that have gained considerable traction in a relatively short period of time. We then discussed the many areas of artificial intelligence that are currently being used or could be used in Biblical Studies. The growing importance of the Internet and artificial intelligence (AI) in contemporary Bible Studies must be recognized. In an era where technology is advancing at an exponential rate and new applications are emerging daily, it is critical to recognize the indispensable role of these two fields in Biblical Studies. However, it is also important to consider the potential problems and ethical considerations associated with their use. In the final section of this article, we presented a preliminary analysis of the potential negative effects of AI on beliefs. We believe that this topic deserves further study and analysis in a separate article or research project





Doi: 10.56737/2953-7843-2024.06-61

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ

«ՅՐԵՇՏԱԿ» ԲԱՌՈՒՅԹԻ ԻՍԼԱՍԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆԱՅԵՐԵՆՈՒՄ՝

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Լեզվի մասին գիտության ընդհանուր համակարգում իմաստաբանության հիմնախնդիրը եղել է մնում է բառի իմաստային կողմի՝ կառուցվածքի զարգացման տարաժամանակյա ուսումնասիրությունը: Ուստի բառագիտության առաջնահերթություններից է պարզել բառի նշանակության պատկերը պատմական տարբեր շրջափուլերում, որակական փոփոխությունների վերլուծությունը նրա իմաստային կառուցվածքում: Նման մոտեցման դեպքում բառը լայն առումով դիտարկվում է որպես ձևաիմաստային միավորների (բառային իմաստի եւ բառափոխական ձևերի) ամբողջություն՝ բառույթ (лексема): Մեր ուսումնասիրության շրջանակում խիստ կարեւորվում է պատմական կամ իմաստաբանական բառարանների գոյությունը, որոնցում պատմական որոշակի ժամանակաշրջանի համար կարող էր ներկայացվել տվյալ լեզվի բոլոր բառերի պատմությունը՝ նշելով ոչ միայն նոր բառերի ու նշանակությունների առաջացումը, այլեւ՝ նրանց «չեզոքացումը» (հնաբանություններ, պատմաբառեր) կամ ձևափոխությունը, լեզվի բառային համակարգի հաջորդական փոփոխությունները: Ցավոք, հայերենը ցայսօր չունի նման բառարան, ավելին՝ վերջին լիակատար բացատրական բառարանները շուրջ կեսդարյա վաղեմություն ունեն², հանգամանք, որը խիստ դժվա-

^{1*} Ստացվել է՝ 14.06.2024, գրախոսվել է՝ 14.07.2024: Էլ. հասցե՝ artashesmartirosyan@yandex.ru:

² Այս առումով խիստ շահեկան վիճակում է մասնավորապես ունեւերենը (տե՛ս եւ հմմտ. Русский семантический словарь. Толковый словарь систематизированный по классам слов и значений, т. 1, под общей ред. Н. Шведовой, Москва, 2002, 826 էջ):

րացնում է դիտարկել բառի իմաստային կառուցվածքի զարգացման ընթացքը հինհայերենյան շրջանից մինչև այսօր:

Մենք քննության առարկա ենք դարձնելու հայերենի «Կրոնական, առասպելական, հեքիաթային, ֆանտաստիկ մարդանման էակներ» բառահիմաստային բազմության «Կրոն, կրոնական առասպելաբանություն» ենթաբազմության կազմում գործառող հրեշտակ բառույթի առասպելաբանական հենքը³, նրա իմաստային կառուցվածքի զարգացման բառարանագրական մշակումները ժամանակագրական կարգով՝ հինհայերենյան շրջանից մինչև մեր օրերը, ի հայտ ենք բերելու բառույթի՝ պատմական այդ հսկա ժամանակահատվածում կրած իմաստափոխությունների ճանաչողական-իմաստաբանական մեխանիզմները, նաեւ այլ բառահիմաստային խմբերի հետ հարաբերվելը:

ՄՈՒՏՔ

Հինհայերենյան շրջանում բառույթը⁴ հանդես է եկել իմաստային հարուստ կառուցվածքով՝ գոյականի արժեքով «պատգամավոր երկնային, դեսպան Աստծու» միջուկային [երկնաւորքն կոչին հրեշտակք. իսկ հրեշտակն զսպասաւորութեան գործն (յայտ առնէ)] եւ «պատգամաւոր երկրաւոր, սուրհանդակ, լրաբեր, թղթաբեր [Առաքեցան հրովարտակքն ի

³ Առասպելաբանություններում հանդես է եկել հրեշտակներ հոգնական ձևով: Հրեական, քրիստոնեական եւ մահմեդական առասպելաբանություններում ներկայացել են որպես անմարմին էակներ՝ ծառայելու մեկ աստծու՝ պաշարելով նրա թշնամիների դեմ, մեծարելով նրան, նրա կամքը բերելով տարերքերին ու մարդկանց: Նրանք կամ կատարել են այս առաքելությունը, կամ ի սկզբանե դավաճանության հողի վրա պառակտվելով Աստծուց՝ իրենք են ներկայացել իբրեւ Աստծու եւ մարդկանց թշնամիներ, ասել է թե՛ սատանաներ կամ չար ոգիներ (հմմտ. հոգեառ հրեշտակ, մահվան ≈): Սակայն պատմության հոլովույթում կրոնաառասպելաբանական տարբեր համակարգերում (բազմաստվածությունից մինչև միաստվածություն) այս պատկերացումները վերափոխվում են. աշխարհում գործող ոգիները չեն ապրում ինքնին եւ իրենց համար, այլ պատասխանատու են մեկ աստծու առաջ՝ որպես «սպասարկու ոգիներ», նրանից եւ նրա համար են ստանում իրենց կեցությունը, արժանապատվությունը, տեղը աշխարհում, զինվորական հավատարմությանը եւ կարգապահությանը պարտական են նրան (հմմտ. Աստծու պատգամաբեր) (տե՛ս եւ հմմտ. Мифы народов мира; Энциклопедия, «Советская Энциклопедия», под общей ред. С. Токаревой, Москва, 2008, էջ 62–65):

⁴ Հստ Հր. Աճառյանի՝ ծագում է պահլավերենի frēštak բառից (հմմտ. Հր. ԱճԱՌԵԱՆ, Հայերէն արմատական բառարան, Երեւան, 1926, էջ 135, նաեւ՝ Գ. ԶԱՆՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 471), նաեւ՝ հրշտակ, հրիշտակ բառակազմական տարրերակներով՝ «առաջալ. թեւաւոր» ստուգաբանական իմաստներով (հմմտ. Գ. ԱՌԵՏԻՔԵԱՆ, Խ. ՍԻՐՄԷԼԵԱՆ, Մ. ԱՌԵՐԵԱՆ, Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետ՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836–1837, էջ 140):

ձեռն հրեշտակաց], բարի դեւ/ոգի (ըստ հեթանոսների), մարգարէ, առաքեալ, կարապետ, նշանակ եւ ազդարարող [Որպէս ծուխ հրեշտակ է հրոյ, նոյնպէս եւ գործ ինչ չար՝ Հրեշտակ է բարկութեան]» ծայրամասային իմաստութիւններով (հմմտ. ՆՀԲ, ն. տ.): Ուշագրավ է, որ բառույթի իմաստային կառուցվածքում կատարվել են աստիճանակարգային տեղաշարժեր արդեն նույն շրջանի այլ վկայություններում (հմմտ. «գ. 1. հրեշտակ, 2. մարգարէ, 3. մարդկան սուրհանդակը, պատգամաւորը, դեսպանը, 4. հեթանոսաց դերը, մէկ բանին նշանը, ինչպէս ծուխը՝ կրակի»⁵ միջուկից ծայրամաս անցումներով կամ իմաստութիւն չեզոքացմամբ (հմմտ. «1. պատգամաւոր, լրաբեր, 2. դեսպան թագաւորաց՝ իշխանաց, 3. թղթաբեր, թղթատար, սուրհանդակ [Հրեշտակ Հայրապետին Հռովմայ], 4. հոգեղէն էակ՝ պատգամաւոր երկնից, 5. մարգարէ, առաքեալ»⁶:

Միջինհայերենյան շրջանից վկայվել է հրշտաֆ հնչյունակազմով [Հիւանդացաւ եւ եկն հրշտաքն ի յառնել զհոգին], նաեւ՝ ածականի արժեքով հրեշտական ձեւով՝ «հրեշտակին հատուկ, հրեշտակային» [Նստեալ ի յաթոռ վարդապետական, էակիցդ Հօր, Որդիդ հրեշտական]՝:

Վաղաշխարհաբարյան շրջանում վկայվել է հրամբուն՝ «հրեղէն, հրեշտակային» ածականական ձեւը⁸, ինչպէս նաեւ սրան իմաստով հարաբերակից հրաբուն պատմաբառը (հմմտ. «ած. 1. (կրօն.) Որ բնութեամբ հրեղէն է (հրեշտակների մասին), 2. (կրօն.) Աստուածային»⁹:

Արեւմտահայ եւ արեւելահայ աշխարհաբարի նախախորհրդային եւ խորհրդային շրջանների վկայություններում բառույթի իմաստային կառուցվածքը տարբեր աստիճանակարգային զարգացումներ է ունեցել՝ պահպանելով հոգեւոր-կրոնական միջուկային իմաստութիւնը, ծայրամասայիններում գրանցելով փոխաբերական կիրառությունը (հմմտ. արեւմտահայ՝ «գ. երկնային, զուարթուն, պատուիրակ»¹⁰, «գ. 1. մարդէն գե-

⁵ Հմմտ. Մ. ԱԻԳԵՐԱՆ Գ. ՃԷԼԱԼԵԱՆ, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 512:

⁶ Հմմտ. Մ. ԱԽԶԱՆԵԱՆ, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական (այսուհետ՝ ԲԲՀԻ), Վենետիկ, 1837, էջ 904:

⁷ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ, Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Միջին հայերենի բառարան, Երեւան, 2009, էջ 441:

⁸ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ, Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում, Երեւան, 2014, էջ 126:

⁹ ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ, Հայերէն բացատրական բառարան, (այսուհետ՝ ՀԲԲ), Երեւան, 1944, էջ 142:

¹⁰ ՅՈՎՀ. ԳԱՅԱՅԵԱՆ, Բառարան գանձարան հայերէն լեզուի, Գահիրէ, 1938, էջ 297:

րազանց մաքուր երկնային ոգի, 2. մարգարէ. Աստուծոյ պատգամը խօսող, 3. պատգամատուր, լուր բերող, թղթաբեր պատուիրակ, 4. հեթանոսաց դեր, 5. մէկ բանին նշանը, ինչպէս ծովիւր՝ կրակի ազդարար, դեսպան, գուշակ, 6. *փոխ*. հրեշտակի մը բոլոր բարեմասնութիւնները ունեցող անձ»¹¹, «գ. 1. գոյացութիւն գուտ հոգեկան իմացական, 2. մարդը գերազանցող բարի հոգի, 3. *փոխ*. շատ սիրելի անձ, հեզահամբոյր (*անմեղ ու գեղեցիկ*), 4. դեսպան, պատգամատուր թագաւորի, 5. Աստուծոյ կամբը կատարող եւ յայտնող անմարմին հոգեղէն էակ, պատգամատուր»¹²);

Խորհրդային շրջանի արեւելահայ վկայություններում բառույթի՝ հինհայերենյան շրջանից պատմական տեւական ժամանակահատվածում գործառուղ իմաստույթները դիտվել են մեռած (հմմտ. ՀԲԲ, էջ 151) կամ վերածվել պատմաբաների՝ իսկ բառույթի հինհայերենյան «հոգեղէն էակ՝ պատգամատուր երկնից» ծայրամասային իմաստույթը (հմմտ. ԲԲՀԻ, էջ 904) վերաձեւակերպվել է որպէս «երեւակայական անմարմին էակ» միջուկային իմաստույթ՝ ակներեւ կրելով խորհրդային շրջանի աթեիստական գաղափարախոսության կնիքը (հմմտ. «1. (կրոն.) երեւակայական անմարմին էակ, որ իբր [ընդգծումը մերն է.— Ա. Մ.] սպասավորում է աստծուն, զվարթուն» (հմմտ. ԺՀԼԲԲ, ն. տ., նաեւ՝ ՀԲԲ, ն. տ., ԱՀԲԲ, ն. տ.): Միաժամանակ որպէս ծայրամասային իմաստույթներ՝ ծավալվել եւ կայունացել են բառույթի փոխաբերական կիրառությունները (հմմտ. «6. բարի, հեզ, հեզահամբոյր մարդ, 7. շատ գեղեցիկ, չինաղ գեղեցկութեամբ (ասում են կանանց եւ երեխաների նկատմամբ), 8. ամենասիրելի անձ» (հմմտ. ՀԲԲ, ն.տ., նաեւ՝ ԺՀԼԲԲ, ն. տ., ԱՀԲԲ, ն. տ.):

Բառույթի հինհայերենյան եւ արդի շրջանների հոմանիշային շարքերի համեմատությունն ակնհայտորեն վեր է հանում նրա իմաստային կառուցվածքի զարգացումը. այս պարագայում պայմանավորված մարդու ճանաչողական գործունեության ընթացքով՝ ընդհանրացման եւ մասնավորեցման (ճշգրտման) մտածական գործընթացներով, լեզվի

¹¹ Հմմտ. Ս. ԳԱՐԱՄԱՅԵԱՆ, *Նոր բառագիրք հայերէն լեզուի*, Կ. Պօլիս, 1910, էջ 846:

¹² Հմմտ. Պ. ՃԻԶՄԷՃԵԱՆ, *Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան*, Հայէպ, 1954, էջ 887, նաեւ՝ Ա. ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, Հ. ԳԱՆԳՐՈՒՆԻ, Փ. Կ. ՏՕՆԻԿԵԱՆ, *Հայոց լեզուի նոր բառարան*, Պէյրուս, 1968, էջ 456, Գ. ՃԷՐԷՃԵԱՆ, Փ. Կ. ՏՕՆԻԿԵԱՆ, Ա. ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, *Հայոց լեզուի նոր բառարան*, Պէյրուս, 1992, էջ 1296:

¹³ Հմմտ. ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ, *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետ՝ ԺՀԼԲԲ)*, Երեւան, 1969, էջ 395, Է. ԱՂԱՅԱՆ, *Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետ՝ ԱՀԲԲ)*, Երեւան, 1976, էջ 907:

համակարգից դուրս են մղվել իմաստույթներ (բառույթներ) մի դեպքում հոմանիշային շարքի ընդլայնման (կամ նվազման) պատճառով, մյուս դեպքում՝ անցմամբ դեպի սակավ կիրառելի բառապաշար նոր բառույթի փոխարինմամբ (հնաբանություններ) կամ առանց նոր բառույթի փոխարինման (պատմաբանություններ) (հմմտ. գրաբար՝ 1. զուարթուն, 2. պատգամաւոր, սուրհանդակ, թղթաբեր, 3. մարգարէ, առաքեալ, կարապետ, 4. նշանակ (կանխայայտ նշան), 5. դեւ, ոգի¹⁴, արեւելահայ աշխարհաբար՝ գ., ա. 1. (կրոն.) (հնգ.) անգեղոս, հրանյութ, հրանյութագոյ, լուսաթուիչ (գերբնական արարած՝ Աստծու պատգամները կատարող թեւավոր մանկան կերպարանքով), 2. (կրոն.) մարգարե, առաքյալ (իբրեւ Աստծու պատգամավորը), 3. (պատմ.) պատգամավոր, պատվիրակ, դեսպան (արքայական), 4. (պատմ.) սուրհանդակ, բանբեր, լրաբեր, մունեստիկ (լուր բերող՝ տվող), 5. տէս սուրբ, 6. տէս անարատ, 7. տէս բարի¹⁵): Ընդհանրացման-ճշգրտման այս հակադիր հերթագայման գործընթացները պայմանավորում են աշխարհի նոր երեւույթների ու առարկաների նրբերանգային հասկացութեամբ բառույթների հոմանիշային շարքի ընդլայնումը հավելադրական նորամուծություններով (плеонастическая инновация)՝ տէս հղումով (հմմտ. սուրբ, անարատ, բարի), որոնք՝ որպես գլխաբաններ, հարաբերակից են այլ բառաիմաստային բազմությունների (ենթաբազմությունների, խմբերի) հետ:

Բառույթի վերոնշյալ փոխաբերական իմաստույթները, մասնավորապես, հարաբերակցվում են «Ըստ բնավորության գծերի եւ դրանցով պայմանավորված վարքագծի» բառաիմաստային բազմության «Բարություն, բարեհոգություն, անշահախնդրություն» ենթաբազմությունում գործառու բառույթների համարժեք փոխաբերական իմաստույթների հետ, որոնց օտար համարժեքներն առավելապես գործածական են արդի հայերենի բառապաշարի ռճական տարբեր շերտերում (հմմտ. ԲԱՐԻ՝ այլաւեր¹⁶, արխատկրատ (հմմտ. վեհանձն, բարեկիրթ), անշահախնդիր,

¹⁴ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ, Գրաբարի հոմանիշների բառարան, Անթիլիաս, 2006, էջ 442:

¹⁵ Ա. ՍՈՒՓԻԱՍՅԱՆ, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (այսուհետ՝ ՀԼՀԲԲ), Երեւան, 2009, էջ 668:

¹⁶ Տէս ալտրուիզմ (հմմտ. «ալտրուիզմ [$<$ альтруизм $<$ ֆր. altruisme $<$ լատ. alter ուրիշ], գ. ալլասիրություն՝ անշահախնդիր հոգատարություն ուրիշների բարեկեցության հանդեպ, սեփական շահերի զոհաբերություն ուրիշների հետաքրքրությունների իրականացման համար: Հակադրվում է «էգոիզմ» բառին» (հմմտ. Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Օտար բաների բառարան (այսուհետ՝ ՕԲԲ), Երեւան, 2011, էջ 29):

դենդի¹⁷, ջենթլմեն¹⁸, դիպլոմատ¹⁹ (հմմտ. *փխբ. քաղաքագետ*), բարեսիրտ (հմմտ. *փափկասիրտ, գթասիրտ, պարզասիրտ, միամիտ, բարեհոգի*), ինտելիգենտ²⁰ (հմմտ. *փխբ. բարեկիրթ*), հյուրամեծար²¹։ Կամ՝ ածականի արժեքով ՍՈՒՐԲ-ի հոմանիշային շարքում գործառող ՍՐԲԱԿՅԱՑ (արդարակյաց, սրբակենցաղ) բառույթի իմաստային հարաբերակցությունը վերոնշյալ բառահամաստային բազմության «Հերոսականություն, խիզախություն, տոկունություն, չափավորություն, անձնվիրություն, նվիրվածություն նշմարտությամբ, օրենքին, ազատությամբ» ենթաբազմության բառույթներին (հմմտ. ՍՐԲԱԿՅԱՑ՝ (գրք.) ազատասեր, հերոս, դոմֆիշոտ²², օրինապահ, տոկուն (հմմտ. (գրք.) ստոիկյան), կտրիճ²³ (անվեհեր), (փխբ.) կորյուն, (փխբ.) արծիվ, պատրիոտ²⁴ (հայրենասեր), (պատմ.) նշմարտաֆին, նշմարտասեր, նշմարտախոս²⁵, (փխբ.) ասպետ (անձնուրաց), (խսկց.) բացաշխ²⁶)։ Չափավորությամբ, անձնվիրությամբ իմաստ ար-

¹⁷ «[< денди < անգլ. dandy], ած. գ. (խսկց.) չափազանց գեղեցիկ, մոդայի վերջին ճիշով հագնված անձ» (հմմտ. ՕՔՔ, էջ 142)։

¹⁸ «[< джентльмен < անգլ. gentleman < gentle մեղմ + man մարդ], գ. 1. Անգլիայում՝ ազնվականական հասարակության կանոններն ու վարքի նորմերը պահպանող մարդ, 2. (խսկց.) բարեկիրթ, շարժուձեւերի գեղեցկությամբ ու հագնվածքի անթերիությամբ աչքի ընկնող մարդ» (հմմտ. ՕՔՔ, էջ 464)։

¹⁹ «[< дипломат < ֆր. diplomate < հուն. diplōma], գ. 1. դիվանագետ՝ կառավարության կողմից լիազորված պաշտոնական անձ՝ ուրիշ տերությունների հետ դիվանագիտական հարաբերություններ վարելու համար, 2. փխբ. վարպետ՝ խորամանկ ու ծայրահեղորեն զգուշավոր մարդ, քաղաքագետ» (հմմտ. ՕՔՔ, էջ 155), նաեւ՝ ՀՔՔ, էջ 521, ԱՀՔՔ, էջ 299)։

²⁰ «[< интеллигент < լատ. intelligens < ֆրանս. intelligent], հմմտ. նաեւ՝ «ինտելիգենտիկ (արհմրհ.) գ. խեղճ՝ ողորմելի եւ սահմանափակ գիտելիքների տեր մտավորական» (հմմտ. ԺՀՀՔՔ, էջ 317, նաեւ՝ ԱՀՔՔ, էջ 491)։

²¹ Հմմտ. նաեւ՝ «ա. 1. հյուրընկալ, հյուրամեծար, ասպնջական, պատվասեր, (հնց.)՝ հյուրատես, օտարընկալ. (ժող.)՝ աղոմացով, հացով. դուր (դոմեր) բաց (հյուր սիրող՝ ընդունող), 2. տե՛ս հյուրամեծար» (հմմտ. ՀՀՀՔՔ, էջ 639)։

²² Իսպանացի դասական գրող Սերվանտեսի համանուն վեպի հերոսը, որն անձնուրացորեն պայքարում է չարի դեմ։

²³ Հմմտ. նաեւ՝ (հնց.) փառանք, (ժող.)՝ իգիթ, աղամարդ, թաղան, կտրուկ (հմմտ. ՀՀՀՔՔ, էջ 552)։

²⁴ «[< патриот < հուն. patriōtēs հայրենակից], գ. ած. (խսկց.) 1. հայրենասեր, 2. որեւէ բանի նվիրված անձ (հմմտ. ՕՔՔ, էջ 416)։

²⁵ Հմմտ. նաեւ՝ նշմարտաբան, շիտակաբան, շիտակախոս, արդարաբան, արդարախոս, նշգրտաբան, նշգրտախոս, ուղղաբան, ուղղախոս, (հզվդպ.) անբծախոս, ստուգախոս, ստուգաբարբառ, հավաստաբան, (բրբ.) պոլտի (հմմտ. Ա. ՍՈՒՔԻԱՅԱՆ, Հայոց լեզվի հոմանիշների բառարան (այսուհետ՝ ՀՀՀՔ), Երեւան, 1967, էջ 428)։

²⁶ Հմմտ. նաեւ՝ (զվդպ.)՝ նարիկ, բսբո, պսպո, ջիֆ, սլիկ, սլիկ, սլուկ, սկլմոտ, սպլիկ, սպլոգ, սվլիկ, սվլուն, ետեկած, շան կոնի, շիֆ, սատանա, տիժ, աշիբ բաց, մոր ծիծ կտրող (հմմտ. ՀՀՀՔՔ, էջ 702)։

տահայտող բառույթները հանդես են գալիս առանձին բառաիմաստային ենթախմբով (հմմտ. ասկետ²⁷ (հմմտ. փխբ. թանահատ [«խիստ պահեցողության նպատակով թան ուտելուց հրաժարված»]), անձնագոհ²⁸, բարեպաշտ (հմմտ. փխբ. օրինավոր), խստակյաց (հմմտ. պուրիտան), (փխբ.) սպարտացի²⁹, (փխբ.) ստոյիկյան³⁰): Բառույթը հարաբերակից է նաեւ «Ըստ մասնագիտության, զբաղմունքի տեսակի, գործունեության բնույթի եւ նրա հետ առնչվող գործողությունների, գործառույթների, հարաբերությունների» բառաիմաստային բազմույթյան՝ «Կրոն, պաշտամունքների ոլորտ» ենթաբազմույթյան «Ուխտավորներ, երանելիներ, ինչպես նաեւ անձերի անվանումներ՝ ըստ կրոնական նորմերի հետ առնչության, պաշտամունքային ծեսերում նրանց դերակատարության» բառաիմաստային խմբի բառույթների հետ (հմմտ. (հնցծ.) Քրիստոսի ծնող (հմմտ. Աստծու գիծ), ուխտավոր³¹ (հմմտ. հավատավոր), աստվածամարգ, մեղավոր (հմմտ. մեղանշական), ապաշխարող (հմմտ. խոստովանող), սրբակյաց (հմմտ. ճգնակյաց), սրբապիղծ (հմմտ. կրոնապիղծ, պիղծ):

Բառույթը պատկանում է բառերի այն դասին, որոնք պայմանավորել են լեզվում նոր բառերի առաջացումը բառակազմական գործընթացների շնորհիվ: Ըստ արեւելահայ աշխարհաբարի նախախորհրդային եւ խորհրդային շրջանների վկայությունների՝ բառույթով կազմված հինհայերենյան բազում հարադրություններ աշխարհաբարյան շրջանում վերածվել են համադրական կառույցների³², ընդամին բառույթը բա-

²⁷ [*asketes* < հուն. *asketes* որեւէ բանում վարժվող, ճգնավոր], գ. 1. (կրոն.) նա, ով հրաժարվել է աշխարհից ու նրա վայելքներից եւ իր անձը ենթարկում է զրկանքների, մենակյաց, անապատական, 2. (կրոն.) նահատակ, մարտիրոս, 3. փխբ. ամբողջապես մտավոր աշխատանքին նվիրված եւ առօրյա կյանքից մեկուսացած անձ, 4. (կրոն.) ընդհանրապես աշխարհի չարիքների, սատանայի գայթակղությունների դեմ կռվող (հմմտ. ՕՐԲ, էջ 56):

²⁸ Հմմտ. նաեւ՝ անձնվեր, անձնուրաց, անձնադիր, ինքնագոհ, ինքնուրաց, ինքնանվեր, բոլորանվեր (հանուն որեւէ գործի՝ նպատակի իրեն զոհաբերող) (հմմտ. ՀՀԲԲ, էջ 56):

²⁹ [*спартанец* < հատուկ անունից], գ. 1. Հին Հունաստանի Սպարտա քաղաք-պետության քաղաքացի, 2. փխբ. շքեղություն եւ պերճանք մերժող, խիստ (ժուժկալ) կյանք վարող մարդ (հմմտ. ՕՐԲ, էջ 523):

³⁰ [*стоик* < հուն. *stōikos*], ամրական, անհողդողդ մարդ:

³¹ Հմմտ. նաեւ պիլիգրիմ [*пилигрим* < հին վերին գերմ. *piligrīm* < լատ. *peregrinus* օտարական], գ. 1. (կրոն.) ուխտավոր, թափառական կրոնավոր, 2. (խակց.) թափառական (հմմտ. ՕՐԲ, էջ 430), հմմտ. նաեւ՝ «5. փխբ. գաղափարին՝ սկզբունքներին նվիրված, սկզբունքները՝ գաղափարը սրբութեամբ պաշտպանող» (հմմտ. ԱՀԲԲ, էջ 1489):

³² Հինհայերենյան շրջանում բառույթը հանդես է եկել կրոնականեղեցական մի շարք ոչ փոխաբերական կայուն հարադրություններում (հմմտ. հրեշտակ բնակած < հրեշտակաբնակ, հրեշտակ դարձնել < հրեշտակացուցանել, հրեշտակ ըլլալ < հրեշտականալ, հրեշտակ տեսնող <

ղաղրական հիմք է հանդիսացել խոսքի մասային տարարժեք բազում նորակազմությունների համար՝ ոճական զանազան դրսևորումներով, ինչը մի հավելյալ ցուցիչ է բառույթի իմաստային կառուցվածքի ծավալների, պատմության հոլովույթում լեզվակիրների մտորտի (նոսոֆերայի) փոփոխությունների մասին³³, ինչպես՝ գրաբար (հմմտ. (մկբ., ած., պատմ.) հրեշտակաբար՝ «հրեշտակի նման, պատգամավորի նման», (ած.) հրեշտակաբարոյ՝ «հրեշտակի բարքով՝ բնավորությանմբ, հեզ, համեստ, բարի», (ած., կրոն., պատմ.) հրեշտակաբեր՝ «հրեշտակի բերած», (ած., պատմ.) հրեշտակաբնակ՝ «1. (կրոն.) որտեղ հրեշտակներ են բնակվում, 2. որտեղ տիրում է հրեշտակային՝ անմեղ, մաքուր կյանք», (ած., գոյ., պատմ.) հրեշտակագնաց՝ «իբրեւ հրեշտակ՝ պատգամավոր գնալը», (գ., պատմ.) հրեշտակագնացութիւն՝ «հրեշտակագնաց լինելը, իբրեւ պատգամավոր գնալը, պատվիրակություն», (ած., պատմ., կրոն.) հրեշտակագոչ՝ «հրեշտակի գոչած, հրեշտակի հնչեցրած», (ած., պատմ., կրոն.) հրեշտակագումար/հրեշտակագունդ՝ «որտեղ գումարված են հրեշտակները, հրեշտակների խումբ կազմող», (ած., գ., պատմ.) հրեշտակագոր՝ «1. (կրոն.) հրեշտակից զորացած, 2. որտեղ հրեշտակների զօրք կա, հրեշտակագունդ», (ած.) հրեշտակագեղ՝ «հրեշտակի գեղեցկութիւն ունեցող», (ած., պատմ., կրոն.) հրեշտակակրօն՝ «հրեշտակների բարք՝ կենցաղավարութիւն ունեցող, հրեշտակակարգ, բարեպաշտ» (հմմտ. ՀԲԲ, ն. տ.) եւ այլն, աշխարհաբարի խորհրդային շրջան³⁴, ինչպես՝ (գ.) հրեշտակաբույս/հրեշտակախոտ՝ «բոխնի, խմի», (ած.) հրեշտակադեմ՝ «հրեշտակի դեմքով», (ած., փխբ.) հրեշտակաթեւ՝

հրեշտակատես, հրեշտակէ բերուած < հրեշտակաբեր, հրեշտակի նման < հրեշտակահանգէտ եւ այլն (հմմտ. Ե. ՀԻՒՐՄԻԻԳԵԱՆ, Բառգիրք յաշխարհաբարէ ի գրաբար, Վենետիկ, 1869, էջ 324), որոնք աշխարհաբարի խորհրդային շրջանում վկայվել են համադրական ձեւով առավելապես իբրեւ պատմաբաներ (հմմտ. ՀԲԲ, էջ 151):

³³ Ի դեպ, քանի որ նշյալ որոշ բաղադրությունների ինչպես սոցիալական, այնպես էլ կանոնավորող նշումները խորհրդային շրջանի մեր կողմից հղված ակադեմիական բառարաններում, բնականաբար, ունեն նկատելի տարբերություններ, ուստի, ելնելով մեր քննության նպատակադրումից (արդի ընկալմամբ վեր հանել քննվող բառույթի իմաստային կառուցվածքի աստիճանակարգային զարգացման ընթացքը), կանոնավորող նշումների պարագայում միօրինակություն համար մեռած կամ հիմ եւ հնացած եզրույթները համաժամանակյա դիտարկմամբ մենք ընկալում ենք իբրեւ պատմաբաներ (անցում դեպի սակավ կիրառելի բառապաշար՝ առանց նոր բառույթի փոխարինման) կամ հնաբանություններ (անցում դեպի սակավ կիրառելի բառապաշար՝ նոր բառույթի փոխարինմամբ):

³⁴ Այս խմբում ներկայացվել են այն նորակազմությունները, որոնք բացակայում են Ստ. Մալխասյանցի հիշյալ բառարանում:

«հրեշտակի թեւերի նման թեւեր ունեցող, մաքուր ու ճերմակ թեւերով», (ած.) հրեշտակախելք/հրեշտակամիտ, (գ.) հրեշտակախումբ՝ «հրեշտակների խումբ՝ դաս», (գ., փղքշ.) հրեշտակիկ՝ «փոքրիկ հրեշտակ (երեխաների մասին)», (ած.) հրեշտակաշունչ՝ «հրեշտակի շնչի նման, մեղմ, նուրբ, քնքուշ», (ած.) հրեշտակասիրտ՝ «հրեշտակի սիրտ ունեցող, բարեսիրտ, ազնվասիրտ», (ած., բնատ.) հրեշտակուրաց՝ «հրեշտակներին ուրացող» (հմմտ. ԺՀԼԲԲ, էջ 395, ԱՀԲԲ, էջ 907), նաեւ՝ բարբառային, ինչպես՝ (ած.,) հրեշտակակոխ (≈բլնել)՝ «1. (կրօն.) հոգէառ հրեշտակի կոխած, հոգէառ հրեշտակի կամ գրողի զարգանդից մեռած [Ողորմածիկը հրեշտակակոխ եղաւ, մեռաւ], 2. հրեշտակակոխ մեռելից զարգանդած, զազահարած, որից կարող է նոյնիսկ մեռնել», (ած.) հրեշտակամակարդ/հրեշտակամէր (≈բլնել)՝ «հրեշտակից մէրված՝ մակարդված. մածնի նման լերդացած կաթ՝ առանց մակարդելու կամ մէրանի (ռուսների պրոստովվաշ) [Կաթը հրեշտակամէր է եղել]»³⁵, (ած., գ.) հրեշտակամորթ (≈ամնել)՝ «հրեշտակի մորթած, 1. մահամերձ հիւանդ անասունը մորթելը, դանակ քաշելը, որպէսզի միսը կարելի լինի ուտել [Ոչխարը հրեշտակամորթ արինք], 2. առանց հիւանդանալու յանկարծ մեռած» (հմմտ. ՀԲԲ, ն. տ., նաեւ՝ Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 407):

Բառույթը լայնորեն գործառնել է նաեւ փոխաբերական կայուն կապակցություններում կամ դարձվածքներում, որոնք ոճական տարբեր երանգավորումներով ցայսօր էլ գործածական են ինչպես կրօնական-դեցական, այնպես էլ հատկապես ժողովրդախոսակցական բառապաշարում: Ի դեպ, կապակցական նշյալ դաշտում նկատելի է բառույթի գործաբանական բաղադրիչի փոփոխություն, երբ փոխվում է գնահատողական իմաստույթի ուղղվածությունը՝ դրականից բացասական կամ հակառակը՝ նշանակյալի պահպանմամբ կամ փոփոխությամբ (հմմտ. բարի կամ լուսոյ հրեշտակներ՝ «Աստծուն հաւատարիմ մնացած», շար կամ խավարի ≈ «սատանաներ», խաղաղութեան ≈, պահապան ≈ «մարդկանց պաշտպանող հրեշտակներ», մահու կամ հոգէառ ≈ «որ մարդու հոգին առնում է, եւ մարդը մեռնում է», (բրբռ.) հրեշտակը գլխին պտոյտ գալ՝ «հոգեվարքի մէջ լինել» (հմմտ. ՀԲԲ, էջ 151), (հզդդպ.) ազատիչ ≈

³⁵ Ի դեպ, Մոկքի բարբառում բառույթն իրացրել է մակարդ միջուկային իմաստույթը (հմմտ. Հ. Բ. ԱՅԱՌԵԱՆ, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 676)՝ հիմքում, անշուշտ, բխելով մաքրության, անաղարտության փոխաբերական գերիմաստույթից:

«նեղ պահին փրկության հասած մարդ», (նաեւ հեզն.) աղվոր $\approx$ «չքնաղ գոյակ», (առավ. հեզն.) անթեւ $\approx$ (հմմտ. անմեղ $\approx$, երկնից իջած $\approx$, նաեւ՝ «չնաշխարհիկ գեղեցկուհի»)՝ «անմեղ», անկյալ $\approx$ ՝ «նախկին փայլը, փառքը կորցրած մարդ», Աստծո $\approx$ ՝ «մաքրակենցաղ մարդ», ավետաբեր $\approx$ ՝ «բարի լուր բերող», (բրբ.) էջի $\approx$ ՝ «տգեղ, անկիրթ, բլնգած մարդ» եւ այլն (հմմտ. Պ. Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երեւան, 2011, էջ 805):

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ հայերենի բառապաշարի «Կրոն, կրոնական առասպելաբանություն» բառաիմաստային ենթաբազմությունում գործառող հրեշտակ բառույթի իմաստային-տարածամանակյա վերլուծությունն ի հայտ բերեց իմաստափոխությունների ճանաչողական-իմաստաբանական զարգացման հետեւյալ միտումներն ու ուղղությունները.

1. Հասկացական աշխարհում բառույթի իմաստաբանական ակունքը բխում է հրեական, քրիստոնեական, մահմեդական առասպելաբանություններից՝ միայն հոգնական ձեւով (հմմտ. հրեշտակներ)՝ անշուշտ, հիմքում ենթադրելով Աստծու կողմից արարված մարդկային աշխարհի գոյատեւման վաղնշական խթանիչները՝ բարի-չար դիալեկտիկական հակադրամիասնության զույգը (հմմտ. երկինք-երկիր, կին-տղամարդ, միտք-սիրտ/հոգի, լույս-խավար եւն)՝ անմարմին էակներ, մի դեպքում՝ մեկ աստծու սպասարկու ոգիներ, մյուս դեպքում՝ աստծու կամ մարդկանց թշնամիներ՝ սատանաներ (հմմտ. բարի հրեշտակ-հոգեառ/մահվան հրեշտակ): Մարդկային միտքն իր զարգացման պատմական տարբեր շրջափուլերում աշխարհընկալման բարու եւ չարի հենքով, իր բառաշխարհով ձգտել է համապատասխանել հասկացական աշխարհին՝ հարստացնելով հրեշտակ բառույթի իմաստային կառուցվածքը նոր իմաստույթներով եւ բաղադրություններով:

2. Հետագա վկայություններում բառույթի իմաստային կառուցվածքի միջուկային (հմմտ. պատգամաւոր երկնային, դեսպան Աստծու) եւ ծայրամասային (հմմտ. պատգամաւոր երկրաւոր, սուրհանդակ, լրաբեր, թղթաբեր, մարգարէ, առաքեալ) իմաստույթների միջեւ կատարվել են աստիճանակարգային տեղաշարժեր. բառույթի աշխարհիկ իմաստույթը մղվել է միջուկ (հմմտ. պատգամաւոր, լրաբեր), հոգեւոր-կրոնականը՝ ծայրամաս (հմմտ. հոգեղեն էակ՝ պատգամաւոր երկնից, մարգարէ, առաքեալ):

3. Միջինհայերենյան շրջանում վկայվել է այլ հնչյունակազմերով (հմմտ. հրըշտաք, (ած.) հրեշտական):

4. Բառույթի հինհայերենյան հրեղենության իմաստույթը (հմմտ. նշանակ եւ ազդարարող) վաղաշխարհաբարյան շրջանում վկայվել է համապատասխան իմաստով հարաբերակից բառակազմական տարբերակներով (հմմտ. հրամբուն, հրաբուն):

5. Արեւմտահայ աշխարհաբարի նախախորհրդային շրջանի վկայություններում բառույթի իմաստային կառուցվածքում գերակայել են հոգեւոր-կրոնական միջուկային իմաստույթները (հմմտ. երկնային, մարդէն գերազանց երկնային ոգի, գոյացութիւն զուտ հոգեկան իմացական), ծայրամասայինում՝ փոխաբերականը (հմմտ. շատ սիրելի անձ, հեզահամբույր՝ անմեղ եւ գեղեցիկ):

6. Խորհրդային շրջանի արեւելահայ վկայություններում բառույթի՝ հինհայերենյան շրջանից գործառող բազում աշխարհիկ եւ կրոնական իմաստույթներ դիտվել են մեռած կամ վերածվել պատմաբաների՝ միջուկայինում պահպանելով առասպելաբանական գերիմաստույթը (հմմտ. երեւակայական անմարմին էակ), իսկ ծայրամասայիններում ծավալվել եւ կայունացել են փոխաբերական կիրառությունները (հմմտ. բարի, հեզ, հեզահամբույր, չինաղ, ամենասիրելի անձ):

7. Բառույթի հինհայերենյան եւ արդի շրջանների հոմանիշային շարքերի համեմատությամբ փաստվեց, որ լեզվի համակարգից դուրս են մղվել իմաստույթներ մի դեպքում հոմանիշային շարքի ընդլայնման (կամ նվազման) պատճառով, մյուս դեպքում՝ անցմամբ դեպի սակավ կիրառելի բառապաշար նոր բառույթի փոխարինմամբ (հնաբանություններ) կամ առանց նոր բառույթի փոխարինման (պատմաբաններ): Ընդհանրացման-ճշգրտման այս հակադիր հերթագայման գործընթացները պայմանավորում են աշխարհի նոր երեւույթների ու առարկաների նրբերանգային հասկացութավորումը՝ բառույթների հոմանիշային շարքի ընդլայնումը հավելադրական նորամուծություններով՝ տե՛ս հղումով (հմմտ. սուրբ, անառատ, բարի):

8. Վերոնշյալ նորամուծությունները՝ որպես գլխաբաներ, հարաբերակից են բառաիմաստային այլ բազմությունների (ենթաբազմությունների, խմբերի) հետ՝ մասնավորապես «Բարություն, բարեհոգություն, անշահախնդրություն» բառաիմաստային ենթաբազմությունում գործառող բառույթների համարժեք փոխաբերական իմաստույթների, որոնց օտար

համարժեքներն առավելապես գործածական են արդի հայերենի բառապաշարի զանազան ոճական շերտում (հմմտ. ԲԱՐԻ՝ այլասեր, արխատկրատ, անշահախնդիր, դենդի, ջենթլմեն, դիպլոմատ *եւն*) կամ՝ «Հերոսականություն, խիզախություն, տոկունություն, չափավորություն, անձնվիրություն, նվիրվածություն նշմարությանը, օրենքին, ազատությանը» ենթաբազմության բառույթների (հմմտ. ՍՐԲԱԿՅԱՅ՝ (գրք.) ազատասեր, հերոս, դոմֆիշոտ, (փխբ.) կոբյուն, (փխբ.) արծիվ, պատրիոտ *եւն*), ինչպես նաեւ՝ «ուխտավորներ, երանելիներ, անձերի անվանումներ՝ ըստ կրոնական նորմերի հետ առնչության, պաշտամունքային ծեսերում նրանց դերակատարության» բառահիմաստային խմբի (հմմտ. Քրիստոսի ծուռ, ուխտավոր, աստվածանարգ, մեղավոր, ապաշխարող *եւն*)։

9. Բառույթը պատկանում է բառերի այն դասին, որոնք պայմանավորել են լեզվում նոր բառերի առաջացումը բառակազմական գործընթացների (հմմտ. հրեշտակախոտ, հրեշտակադեմ, հրեշտակաթեւ, հրեշտակամիտ, հրեշտակախումբ, հրեշտակիկ, հրեշտակաշունչ, հրեշտակասիրտ *եւն*) եւ փոխաբերացման շնորհիվ՝ դարձվածքներում (հմմտ. բարի/լուստ հրեշտակներ, չար/խավարի $\approx$, խաղաղության $\approx$, պահապան $\approx$, մահու/հոգեւոր $\approx$, (բրբռ.) հրեշտակը գլխին պտույտ գալ, Աստծո $\approx$, ավետաբեր $\approx$, (բրբռ.) էշի $\approx$ *եւն*)։

10. Ճանաչողական-տարաժամանակյա դիտանկյունից համադրելով բառույթի իմաստային համակարգը նրա հետահայաց անցած ճանապարհի հետ՝ այն դասվում է այն բառույթների կարգին, որոնց իմաստային կառուցվածքը թեեւ բառի նույնականության տեսակետից կրել է էական փոփոխություններ հինհայերենյան շրջանից, այնուամենայնիվ պահպանել է իմաստային կառուցվածքի հինհայերենյան հոգեւոր-կրոնական գերիմաստույթը (архисема) (հմմտ. անմարմին հոգեղեն էակ)։ Մեր քննությունը վերստին փաստում է լեզվի զարգացման այն անշրջելի օրինաչափությունը, որ բառային աշխարհը միշտ ձգտում է համապատասխանել հասկացական աշխարհին՝ առավելապես հին բառերին նոր իմաստներ հաղորդելու ճանապարհով, ինչն ապացուցվում է սույն ուսումնասիրությունում։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հրեշտակ, բառույթ, իմաստային կառուցվածք, միջուկային իմաստույթ, ծայրամասային իմաստույթ, գերիմաստույթ, բառաիմաստային բազմություն, բառաշխարհ, հասկացական աշխարհ, իմաստային տեղաշարժ:


РЕЗЮМЕ

Одной из основных задач лексикологии является выяснение сущности значения слова в разные исторические периоды, анализ качественных изменений его семантической структуры. В случае древних языков, в частности армянского, для таких исследований очень важно существование исторических или семантических словарей, когда история всех слов языка дана за определенный исторический период, что указывает не только на появление новых слов и значений, но и на их «нейтрализацию» (архаизмы, историзмы) или трансформацию, последовательные изменения в словесной системе языка. В данном контексте мы сделали предметом исследования мифологическую основу лексемы ангел, входящего в лексико-семантическое подмножество «Религия, религиозная мифология» в составе множества «Религиозные, мифические, сказочные, фантастические человекоподобные существа» армянского языка, лексикографических проработок развития его семантической структуры в хронологическом порядке, от древнеармянского периода до наших дней, мы выявили когнитивно-семантические механизмы семантических изменений слова в тот огромный период, а также его связь с другими лексико-семантическими группами.

SUMMARY

One of the main tasks of lexicology is to find out the essence of a word's meaning in different historical periods, to analyze qualitative changes in its semantic structure. In the case of ancient languages, in particular Armenian, the existence of historical or semantic dictionaries is very important for such studies, when the history of all words of the language is given for a certain historical period, which indicates not only the appearance of new words and meanings, but also their “neutralization” (archaisms, historicisms) or transformation, suc-

cessive changes in the verbal system of the language. In this context, we made the subject of research the mythological basis of the lexeme angel, which is a part of the lexical-semantic subset “Religion, religious mythology” within the set “Religious, mythical, fairy-tale, fantastic humanoid beings” of the Armenian language, lexicographic studies of the development of its semantic structure in chronological order, from the ancient Armenian period to the present day, we have revealed the cognitive-semantic mechanisms of semantic changes of the word in that huge period, as well as its connection with other lexical-semantic groups.



ՍԻՐԱՆՈՒՇ ԲԵԳԼԱՐՅԱՆ
ՄՄ

ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՅՈՒ ՆԿԱՐԱԶԱՐԴԱԾ ԹԻՎ 206 ՁԵՌԱԳՐՈՒՄ

Սկիզբը՝ թիվ Ե.

4. ԱՆՄՈՐՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՅՈՒ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Տարոնացի ՄՄ 206 ձեռագրի նկարազարդման մեջ՝ Նոր Կտակարանի հատվածում, Քրիստոսին ներկայացնում է երկու պատկերագրություն՝ մորուսով եւ անմորուս:

Խոսելով Քրիստոսի՝ Տարոնացու կիրառած երկու պատկերագրությունների մասին՝ նշանակություն պետք է տրվի Նոր Կտակարանի հատվածում անմորուս Քրիստոսի պատկերների տեղադրությանը: Քրիստոսն անմորուս է ներկայացվում Մատթ. ԺԱ. 25–30-ի (թ. 449ա), Մարկ. Ժ. 13–16 (թ. 467բ), ԺԳ. 1–13-ի (թ. 469բ), Ղուկ. Բ. 41–52 (թ. 476ա), Ե. 33–38-ի (թ. 478 բ), Հովհ. Ա. 1 (թ. 496ա), ԺԸ. 28–40-ի (թ. 508բ) լուսանցքներում, Ունվլայի (Հովհ. ԺԳ. 1–20, թ. 505ա), Խոհրդավոր ընթրիքի (Ղուկ. ԻԲ. 14–23, թ. 491բ) տեսարաններում եւ Համբարձումից հետո՝ Հայտ. Ա. 9–20 (թ. 511բ), Գործք է. 35–39 (թ. 523բ), Ը. 26–40 (թ. 524ա), Ժ. 44–48-ի (թ. 525բ) լուսանցքներում, ինչպես նաեւ բժշկման տեսարաններում՝ Մատթ. Թ. 27–38 (թ. 448ա), ԺԲ. 22 (թ. 449բ), Մարկ. Ե. 21–43 (թ. 464ա), Ժ. 46–52 (թ. 468ա), Հովհ. Թ. 1–34 (թ. 501բ): Մինչդեռ մորուսով ներկայացվում է տերունական շարքից Մկրտության (Մատթ. Գ. 13–17, թ. 444ա), Երուսաղեմ մուտքի (Ղուկ. ԺԹ. 29–40, թ. 489բ), Համբարձման (Ղուկ. ԻԴ. 50–53, թ. 494բ), Ղազարոսի հարության (Հովհ. ԺԱ. 28–46, թ. 503բ) եւ Խաչելության (Հովհ. ԺԹ. 17–27, թ. 509ա) տեսարաններում¹:

Ձեռագրում առանձնակի նշանակություն ունեն լուսանցքներում արված Քրիստոսի պատկերները, որտեղ նա հիմնականում անմորուս է ներկայացված:

¹ Ձեռագրի տերունական շարքում բացակայում է Այլակերպության տեսարանը:

Այստեղ, բժշկության տեսարաններից զատ, կարեւորություն է տրվում նաեւ Նոր Կտակարանի որոշ գլուխների, որոնց հարակից լուսանցքում պատկերված Քրիստոսի մանրանկարներն իրենց տեղադրությամբ ծառայում են որպէս պատկերային մեկնաբանություն: Սրանցից կառանձնացնենք Նոր Կտակարանի Ղուկ. Ե. 33–39-ի կից լուսանցքում արված մանրանկարը (թ. 478բ): Այսպէս՝ Ղուկ. Ե. 33–39-ի հարակից լուսանցքում մանրանկարիչը ներկայացնում է Պանտոկրատորի պատկերագրությամբ² անմորուս Քրիստոսին՝ կանգնած Ադամի գիւն (նկ. 1): Այն, որ Քրիստոսի ոտքերի տակ պատկերված գլուխը խորհրդանշում է Ադամին, ոչ ուղղակի ձևով ընթեռնելի է Նոր Կտակարանի այն տողերում, որի հարակից լուսանցքում ներկայացված է այս պատկերը: Ավետարանի մեկնություններում՝ Ղուկ. Ե. 33–39-ում, հմմտ. Մատթ. Թ. 14–17, Մարկ. Բ. 18–22, Քրիստոսի խոսքերը³ մեկնաբանվում են որպէս Հնի նորոգում: Հովհաննես Երզնկացիին այս հատվածը մեկնում է՝ օգտագործելով հին եւ նոր Ադամ այլաբանությունը, որտեղ Քրիստոսը՝ իբրեւ երկրորդ եւ նոր Ադամ⁴, մարդկությանն ազատագրում է՝ սահմանելով նոր օրենք՝ «...զի ցուցցէ, թէ նոր Ադամ եղեւ փոխանակ հնոյն... նշանակէ, թէ նորոգելոց է զմարդն հին՝ զօրութեամբ խաչին, եւ լուծանելոց է զհնութիւն գրոյն՝ նորոգութեամբ հոգւոյն: ...զի որպէս զկաւ բրտի ձեւացուցեալ ի կարաս առանց հրոյ՝ ոչ ընդունի զջուր կամ ըզգինի, այսպէս եւ սոքա ծնունդք հողածինն Ադամայ՝ լինելով մարմին առանց վերստին հրոյն մաքրութեան, ոչ կարողասցին տանել զնորագոյն ուսմանս շնորհ»⁵: Մանրանկարն իր պատկերագրությամբ հղում է այլաբանական այս մեկնաբանությանը: Հին եւ նոր Ադամ այլաբանությունը մանրանկարում արտահայտված է նաեւ Քրիստոսի եւ

² Պանտոկրատոր/Ամենակալ պատկերագրության մեջ Քրիստոսը ներկայացվում է մի ձեռքով օրհնելիս, իսկ մյուս ձեռքին՝ գիրք կամ գալար:

³ «Ասաց եւ առակ մի առ նոսա, թէ՛ ոչ ոք արկանէ ի նոր հանդերձէ ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ եւ զնորն պատառէ, եւ ընդ հնոյն չմիաբանի կապերտն որ ի նորոյն: Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկա հինս. ապա թէ ոչ պայթուցանէ գինին նոր զտիկան հինս, ինքն հեղու եւ տիկքն կորնչին: Այլ գինի նոր ի տիկս նորս արկանելի է, եւ երկոքին պահին» (Ղուկ. Ե. 36–38, Մատթ. Թ. 16–17, Մարկ. Բ. 21–22): Նոր Կտակարանից հղումների համար տես Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Մեծ Բրիտանիա, 1997:

⁴ Պոդոս առաքյալի թղթերում Քրիստոսը ներկայացվում է որպէս երկրորդ եւ երկնավոր Ադամ (Ա. Կորնթ. ԺԵ. 45–50):

⁵ Արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալոյ մինչ ի համարն 17 հինգերորդ գլխոյն եւ անտի աւարտեալ յերանկելոյն Յօհաննու Երզնկացւոյ որ եւ կոչի Մործորեցի, Մեկնութիւն Սուրբ Ավետարանին որ ըստ Մատթէոսի, Կոստանդնուպոլիս, 1825, էջ 209–210:

Ադամի պատկերագրությունների նույնությամբ. երկուսն էլ ներկայացված են երիտասարդ եւ անմորուս⁶:

Ընդգծենք, որ Տարոնացու պատկերագրական համակարգում ինքնին մեկնողական նշանակություն ունեն Քրիստոսի անմորուս եւ մորուսով պատկերագրությունները: Տարոնացին, ինչպես նշվեց, բացի Քրիստոսի՝ լուսանցքներում արված պատկերներից, փոփոխություն է մտցնում նաեւ Ունվլայի եւ Խորհրդավոր ընթրիքի պատկերագրության մեջ՝ այս տեսարաններում եւս Քրիստոսին ներկայացնելով անմորուս, մինչդեռ տերունական շարքի մյուս պատկերներում Քրիստոսը ներկայացված է ընդունված պատկերագրությամբ՝ մորուսով:

5. ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՄՈՐՈՒՍ ՊԱՏԿԵՐԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Քրիստոսին անմորուս ներկայացնելու միտումը հասկանալու համար դիմենք մեկնողական գրականությանը: Այս առումով հարկ է նշել, որ մեկնություններում հատուկ նշանակություն է տրվում Քրիստոսի աստվածային էության տեսանելի եւ քողարկված դրսեւորումներին:

Քրիստոսի աստվածային էության քողարկված դրսեւորման տեսանկյունից կարեւորվում են Ավետարանի Տյառնընդառաջ (Ղուկ. Բ. 22–38) եւ Մանուկ Հիսուսը տաճարում (Ղուկ. Բ. 41–52) դրվագները: Իգնատիոս Սեւեռնցու Տյառնընդառաջի դրվագի մեկնության մեջ ընդգծվում է Քրիստոսի աստվածային էության՝ Մարիամից եւ Հովսեփից սքողված լինելը՝ «Իսկ զայն, եթէ անբովանդակելի աստուածութիւնն բովանդակեալ է ի նմա, անգիտանային նոքա (Հովսեփը եւ Մարիամը,– Ս. Բ.): Քանզի այս էր օրէն եւ պատշաճ ծածկել զինքն ի նոցանէ, զի կարօղ եւ բաւական լիցին բնակիլ ընդ նմա: Զի, թէ գիտէին նոքա, թէ աստուած է ամենակալ եւ արարիչ, զիմրդ հանդուրժէին կալ առաջի նորա եւ իբր ի մարդ հայիլ ի նա: Զի եւ սնուցանել եւ կաթամբ կերակրել եւ զամենայն խնամս տղայոց պարտ էր առնել նմա: Այսր աղագաւ ծածկել զինքն յարմար եւ պիտանացու էր: ...Արդ յայտնեցաւ նա միայն Սիմէօնի,

⁶ Այս այլաբանությունն արտահայտված է նաեւ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու՝ Ադամի գլխի պատկերաքանդակում, որը ներկայացված է Քրիստոսի պատկերագրությամբ: Այստեղ օգտագործված է առավել տարածված մորուսով պատկերագրական ձեւը: Այս պատկերաքանդակի նկարը տես Ս. ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ, Հայ արվեստը միջնադարում, Երեւան, 1975, նկ. 31, 34, 39:

Յովհաննու եւ հօր նորա (Հովհաննես Մկրտչի.— Ս. Բ.)»⁷: Մինչդեռ Սիմեոն ծերունու դեպքում ընդգծվում է սքողված աստվածային էությանը հոգով հաղորդ լինելը. այստեղ կարեւորվում է աստվածայինը հոգեւոր եւ ոչ մարմնական աչքերով տեսնելը. «...զի ոչ սոսկ ի մանուկ հայէր, այլ հոգւոյն աչօք երեւութացեալ զիմանալի հուր աստուածութեանն տեսանէր»⁸:

Մանուկ Հիսուսը տաճարում Ղուկ. Բ. 41–51 դրվագի մեկնության մեջ եւս կարեւորվում է քողարկված աստվածային էության գաղափարը: Քանի որ Ղուկասի Ավետարանի Բ. 49–50 համարներում խոսվում է Քրիստոսի խոսքերին Մարիամի եւ Հովսեփի անհաղորդ լինելու մասին⁹, ուստի մեկնություններում այս դրվագը բացատրվում է քողարկվածությունամբ: Մեկնիչը, հիշեցնելով ավետման ժամանակ հրեշտակի՝ Մարիամին ասած կանխասությունը, ընդգծում է Քրիստոսի աստվածային էության քողարկվածությունը նաեւ Մարիամից. «Զի թէպէտ եւ բուն ծայրագոյն բարձրութիւն նորա, որ Աստուծոյ է յատուկ, ծածկեցաւ ի նոցանէ, բայց այն, որ ի վեր էր ամենայնիւ, քան ըզբնութիւն մարդկան, յայտնի էր նոցա (Հովսեփին եւ Մարիամին.— Ս. Բ.) ...Զի ահա հրեշտակն նախքան ըզլղանալն ասաց, որ ծնանելոց է ի քէն, Սուրբ է եւ Որդի Աստուծոյ կոչեսցի: Արդ վասն զի պիտանացու էր, յայնժամ անգիտանալ նոցա...»¹⁰:

Մյուս կողմից՝ Ավետարանի մեկնություններում, ինչպես նշվեց, էական նշանակություն է տրվում նաեւ Քրիստոսի աստվածային էության տեսանելի դրսեւորմանը: Արթմնի վիճակում աստվածային էությանը հաղորդակցվելու՝ այն տեսնելու խորհուրդն էական դեր ունի մարդեղացած Բանի անսկիզբ էությունն ընդգծելու տեսանկյունից: Այս առումով որպէս Քրիստոսի աստվածային էության տեսանելի դրսեւորում՝ կարեւորվում են Ծնունդի, Մկրտության, Այլակերպության, Ղազարոսի հաւության, Մուտքը Երուսաղեմ, Խաչելության եւ Համբարձման դրվագները:

Պետք է նշել, որ մեկնություններում տեսանելիության խնդիրն էական է ինչպէս Քրիստոսի էության կարեւորման տեսանկյունից՝ Քրիստոսն

⁷ Արարեալ սբ. Վարդապետին Իգնատիոսի ի խնդրոյ Տեառն Գրիգորիսի Հայոց Կաթողիկոսի, Մեկնութիւն սրբոյ ավետարանին որ ըստ Ղուկասու, Կոստանդնուպօլիս, 1824, էջ 87–88:

⁸ Անդ. էջ 84:

⁹ «Զի խնդրէիք զիս, ոչ գիտէիք եթէ ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել: Եւ նոքա ոչ իմացան զբանն զոր խօսեցաւ ընդ նոսա» (Ղուկ. Բ. 49–50):

¹⁰ Արարեալ սբ. Վարդապետին Իգնատիոսի, նշ. աշխ., էջ 98–99:

իբրեւ Աստված եւ պատմական անձ, այնպես էլ՝ Քրիստոս-Բանի եւ Հայր Աստծու էության համագոյություն տեսանկյունից:

Այսպես՝ իբրեւ Քրիստոսի աստվածային էության տեսանկյունի դրսեւորում դիտարկվող Մկրտության տեսարանում Աստծու՝ աղավնու տեսքով երեւումը (Մատթ. Գ. 13–17, Մարկ. Ա. 9–11, Ղուկ. Գ. 21–22) ներսեւ Շնորհալին մեկնում է որպես Քրիստոսի աստվածային էությունը փաստող իրողություն. «Եւ զի՛նչ պէտք էին երեւելի տեսւեամբ իջանել հոգւոյն, այն որ ընդ նմա էր միշտ, եւ նմին իսկ էր հոգին՝ որպէս եւ Հօր: Քանզի հրէայքն մեծ իմն զՅովհաննէս կարծէին... Իսկ զՔրիստոս իբրեւ ի դոյզն յաղջկանէ միոջէ համարէին ծնեալ... Եւ զի մի լիցին կարծել զայնպիսիս, վասն այնորիկ ընդ մկրտելն Յիսուսի երկինք բանային, եւ հոգին իջանէր, եւ Հայր զնա յայտնէր հոգւովն, թէ դա է որդի իմ սիրելի...»¹¹:

Շնորհալին, դատապարտելով արիոսական ուսմունքը, Ավետարանի այս դրվագը մեկնում է նաեւ Քրիստոսի եւ Հայր Աստծու համագոյություն տեսանկյունից. «Դարձեալ որդիութեանն կոչմամբ զբնութեանն միաւորութիւն ցուցանէ, որ ըստինքեան, զի ծնունդ է Հօր եւ ոչ ստացական՝ ըստ Արիոսի: Իսկ սիրելին ասել՝ զհամակամութիւն նշանակէ...»¹²:

Ղազարոսին հարություն տալը (Հովհ. ԺԱ. 28–46)՝ իբրեւ աստվածային էության տեսանկյունի դրսեւորում, եւս մեկնվում է Հայր Աստծու եւ Որդու՝ Քրիստոսի համագոյություն կարեւորման տեսանկյունից: Ղազարոսի հարության հրաշքի մեկնությունը կապվում է Քրիստոսի աստվածային էության փառաբանությունը ներկայացնող «Մուտքը Երուսաղեմ» պատումի մեկնաբանությանը (Հովհ. ԺԲ. 12–19), քանի որ դրանք փոխկապակցված են նաեւ Հովհաննէսի Ավետարանում (Հովհ. ԺԲ. 17–18). «...Տեսցուք դարձեալ եւ զայն, եթէ զի փառաւոր լիցի Որդի Աստուծոյ այնուիկ, նախ ի Հայր զբանն ձգէ եւ ապա առննթեր դնէ, զոր աստուածական հրամանան կոչելոց էր իշխանաբար զշորեքաւրեայ զմեռեալն եւ այնպէս զՀաւր եւ զիւր փառակցութիւնն եւ զգործակցութիւնն ցուցանէ եւ յայտ առնէ: Դարձեալ եւ զփառաբանութիւնն, որ զկնի լինելոց էր

¹¹ Տէս ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, նշ. աշխ., էջ 66:

¹² Մեկնության մեջ Շնորհալին քննում է նաեւ Քրիստոսի ծնունդի իրական եւ ոչ երեւութական լինելու խնդիրը. «Եւ դարձեալ երեսնամեայ գալովն ի մկրտութիւն՝ յամօթ արար զմարկիոնացիսն, որք առ աշօք նմա ասեն առնուլ զմարմինն, զի թէ ոչ զգեցաւ մարմին ճշմարտապէս, ի մկրտութիւնն որով մերձենայր ...երեսնամեայ ասելով՝ զմանկութենէն յայտ առնէ եւ ոչ զմշտնջենաւորութենէն» (տէս ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, նշ. աշխ., էջ 64, 67:

ի ծերոց եւ ի տղայոցն, կանխաւ դնէ, զոր յորժամ տեսին զնա եկեալ յերուսաղէմ»¹³:

Կարեւորելով աստվածայինին արթմնի հաղորդակցվելը՝ մեկնություններում մինչեւ անգամ համեմատվում է Մկրտության եւ Ծնունդի ժամանակ ականատեսների քանակը, որտեղ նշվում է, որ Աստծու տեսանելիությունը Մկրտության ժամանակ, ի տարբերություն Ծնունդի, բազմության առջեւ է լինում¹⁴: Աստվածային էության անսքող՝ տեսանելի դրսևորման տեսանկյունից առանձնահատուկ մեկնաբանություն է տրվում Համբարձմանը: Ըստ մեկնության՝ Քրիստոսի աստվածային էության լիարժեք ճանաչումը տեղի է ունենում միայն Համբարձման ժամանակ. «Արդ վասն զի Որդի էր նա մշտնջենաւորին Աստուծոյ ...Այլ նոքա ոչ իմացան զբանն, թէպէտ եւ չէր կարի անյայտ: ...Արդ վասն զի պիտանացու էր, յայնժամ անգիտանալ նոցա, եւ կարի օգտակար չեա վերանալոյ նորա յայտնիլ այսոցիկ ամենեցունց, որք քարոզիչք են աստուածութեան նորա»¹⁵:

¹³ Տե՛ս Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց, Նանայի Ասորիոց վարդապետի Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին, առաջ.՝ Քերոբէ Ա. Զրաքեան, Վենետիկ, 1920, էջ 249:

¹⁴ «Յաղագս որոյ գայ խոնարհութեամբ կնիք առնուլ ի ծառայէն, բանայ զերկինս, վկայի ի հօրէ եւ յայտնեալ լինի ի հոգւոյն: Տեսող առնէ սքանչելեացն, որ քարոզեացն զնա բազմութիւնն, որ մերձ էին նմա, եւ ոչ զսակաւս ոմանս՝ որպէս ի ծննդեանն» (տե՛ս Արարեալ սբ. Վարդապետին Իգնատիոսի, նշ. աշխ., էջ 108):

¹⁵ Անդ, էջ 98, 99: Համբարձումը՝ իբրեւ Քրիստոսի աստվածային էության տեսանելի դրսևորում, մեկնություններում համեմատվում է Քրիստոսի հարության հետ: Մեկնողական տեսանկյունից նշանակություն է տրվում Ավետարանում Քրիստոսի հարության պահի անտեսանելի լինելուն. ընդգծվում է այն, որ աշակերտները չեն տեսնում Քրիստոսի հարության պահը, բայց տեսնում են հարությունից հետո եւ հակառակը՝ տեսնում են համբարձումը, բայց չեն տեսնում համբարձվելուց հետոն. «Իսկ ընդէր տեսանելով ոչ յարեալ ի գերեզմանէն եւ «տեսանելով վերացալ»: Քանզի յարութեան աւարտն տեսին, նշանաւքն եւ խաւսակցութեամբ առաքելոցն, այլ սկիզբնն՝ ոչ եւս: Իսկ զհամբարձմանն սկիզբնն տեսին, այլ զկատարածն՝ ոչ եւս» (տե՛ս ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԿ, Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, աշխատ.՝ Ե. եպս. Պետրոսյանի, էջմիածին, 2005, էջ 627): Պետք է նշել, որ Համբարձման տեսարանի պատկերագրական այն տարբերակը, որը կիրառվում է հայկական մանրանկարներում (մանդողալի մեջ պատկերված Քրիստոս Պանտոկրատորը, իսկ ներքեւում՝ աշակերտների խումբն ու Տիրամայրը), ներկայացնում է համբարձման տեսանելի պահը (քննարկվող ձեռագրում Համբարձման տեսարանը թ. 494բ) եւ ուղղակիորեն արտահայտում է այս տեսարանի մեկնողական նկարագրությունը. «Աստուած նստեալ յամպս» երազունս, եւ նոցա արթուն գոլով տեսանէին զեղեալսն (տե՛ս ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԿ, նշ. աշխ., էջ 628): Մինչդեռ արեւմտյան պատկերագրությունը ներկայացնում է այն պահը, երբ համբարձվող Քրիստոսը տեսողությանը դառնում է անմատչելի. աշակերտների եւ Տիրամոր վերելում պատկերվում են միայն համբարձվող Քրիստոսի ոտնաթաթերը: Արեւմտյան ձեռագրերերում այս պատկերագրությունը տե՛ս MS 66 (France, between 1225–1250, Morgan Library), fol. 558r, MS M 295 (Belgium, Liege 1260, Morgan Library), fol. 2r, Ms 107 (2011.23) (Italy, Bologna, about 1250–1262, J. Paul Getty Museum), fol. 450):

Ըստ էության՝ մեկնություններում աստվածային էության զորությունն ու փառքը սքողելու կամ տեսանելի դարձնելու հարցում կարեւորվում է Աստծու կամքի գործոնը:

Քննարկվող ձեռագրում Տարոնացին Քրիստոսին մորուսով է ներկայացնում միայն այն տեսարաններում, որոնք, ըստ մեկնությունների եւ ըստ ավետարանական բնագրի, կարեւորվում են որպես Քրիստոսի աստվածային էության տեսանելի դրսեւորում, սրանք են՝ Մկրտություն, Ղազարոսի հարության, Երուսաղեմ Մուտի, Խաչելության¹⁶ եւ Համբարձման տեսարանները¹⁷: Մինչդեռ լուսանցքներում եւ Ունվվայի ու Խորհրդավոր Ընթրիքի տեսարաններում Քրիստոսը պատկերված է անմորուս:

Անմորուս պատկերագրության մեջ ներկայացված լուսանցապատկերներից թերեւս քննենք Մանուկ Հիսուսը տաճարում՝ Ղուկ. Բ. 41–52 (ՄՄ 206, թ. 476ա) եւ Մարկ. ԺԳ. 1–13-ի (ՄՄ 206, թ. 469բ) հարակից լուսանցքներում պատկերվածները: Մանուկ Հիսուսը տաճարում Ղուկ. Բ. 41–52-ի կից լուսանցքում Քրիստոսը ներկայացված է անմորուս եւ Պանտոկրատորի պատկերագրության մեջ (նկ. 2): Հաշվի առնելով այն, որ, ըստ ավետարանական պատմության, այստեղ Քրիստոսը տասներկու տարեկան է ներկայացվում (Ղուկ. Բ. 42), թերեւս կարելի էր այս տեսարանում Քրիստոսի անմորուս պատկերագրությունը համարել պատմողական: Մինչդեռ այստեղ էական նշանակություն ունի նաեւ այն, որ Քրիստոսն ամենակալ Աստծու (Պանտոկրատոր) կեցվածքով է ներկայացված: Տարոնացին այս պատկերագրության մեջ՝ անմորուս եւ ամենակալ, Քրիստոսին ներկայացնում է նաեւ Մարկ. ԺԳ. 1–13-ի հարակից լուսանցքում, որտեղ Քրիստոսը խոսում է աշխարհի վախճանի մասին (նկ. 3):

Հաշվի առնելով այս պատկերների տեղադրությունը՝ ակներեւ է, որ կարեւորություն է տրվել Ավետարանի գլուխների այն հատվածներին, որտեղ Քրիստոսն այլասացության մեջ է վկայում Իր մասին. Քրիստոսի աստ-

¹⁶ Այստեղ որպես աստվածային էության տեսանելի դրսեւորում՝ կարեւորվում է խաչի վրա Հիսուսի մահվան պահը, երբ տաճարի վարագույրը պատռվում է, եւ երկիրը ցնցվում է (Մատթ. ԻԷ. 51–54, Մարկ. ԺԵ. 38–39, Ղուկ. ԻԳ. 44–49):

¹⁷ Այստեղ չենք նշել Քրիստոսի Այլակերպությունը, քանի որ Տարոնացին այս ձեռագրում ինչ-ինչ պատճառներով այս տեսարանը չի պատկերել, սակայն ըստ ավետարանական բնագրի եւ մեկնությունների՝ այլակերպությունը եւս կարեւորվում է որպես Աստծու էության տեսանելի դրսեւորում: Այլակերպության մեկնությունը՝ իբրեւ Աստծու էության տեսանելիություն, տես ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԿ, նշ. աշխ., էջ 226, 232:

վածային բնույթը սքողված է այլաբանական խոսքով, այսինքն՝ առկա է աստվածային էության քողարկված դրսևորում:

Եթե քննարկվող մանրանկարներում Քրիստոսին որպես ամենակալ Աստծու պատկերազրույթյամբ (Պանտոկրատոր) ներկայացնելն անմիջականորեն հղում է աստվածային անժամանակյա էությանը, ապա անմոռու պատկերազրույթյունը՝ այդ էության սքողված դրսևորմանը¹⁸:

Այս ուղերձն ունեն ինչպես այս երկու մանրանկարները (նկ. 2, 3), այնպես էլ վերելում քննարկված մանրանկարը, որտեղ եւս Քրիստոսը ներկայացված է անմոռու եւ Ամենակալ պատկերազրույթյամբ (նկ. 1)¹⁹:

Ըստ էության՝ Խորհրդավոր ընթրիքի (Մատթ. ԻԶ. 20–30, Մարկ. ԺԴ. 17–25, Ղուկ. ԻԲ. 14–23) եւ Ունվվայի դրվագներում (Հովհ. ԺԳ. 1–20) եւս չկա աստվածային էության տեսանելի դրսևորում. Քրիստոսն այլաբանորեն է խոսում փրկագործության տնօրինության՝ մահվան եւ հարության՝ նոր կարգի հաստատման մասին: Հետեւաբար այս տեսարաններում եւս Քրիստոսն անմոռու է ներկայացված²⁰ (ՄՄ 206, Ղուկ. ԻԲ. 14–23, Թ. 491բ, Յովհ. ԺԳ. 1–20, Թ. 505ա) (նկ. 4 եւ նկ. 5):

Հարկ է նշել, որ ձեռագրում Քրիստոսի անմոռու պատկերազրույթյունը երկու ուղերձ ունի՝ Նոր Կտակարանի հատվածում մինչեւ Համբարձումը ներկայացված Քրիստոսի անմոռու պատկերազրույթյունն արտահայ-

¹⁸ Ընդգծենք, որ հայկական այն ձեռագրերում, որտեղ առկա է Մանուկ Հիսուսը տաճարում տեսարանը ներկայացնող մանրանկար, Քրիստոսը միշտ ներկայացված է անմոռու եւ Պանտոկրատորի պատկերազրույթյամբ՝ գահին բազմած: Սակայն պետք է նշել, որ Տարոնացու պարագայում Մանուկ Հիսուսը տաճարում՝ Ղուկ. Բ. 41–52-ի լուսանցքում Քրիստոսի անմոռու պատկերազրույթյունն ընթեռնելի է այս տեսարանի վերոնշյալ մեկնողական ընկալման տեսանկյունից եւ ոչ կանոնական պատկերազրույթյան եւ կապվում է ձեռագրում Քրիստոսին անմոռու ներկայացնելու ընդհանուր միտումի հետ: Մանուկ Հիսուսը տաճարում տեսարանում Քրիստոսի պատկերազրույթյունը հայկական այլ ձեռագրերում տեսնվեցի Մխիթարյան գրադարանում պահվող Վեն. 888/159 Ավետարանում (Թ. 143), Ուղթերսում պահվող Թորոս Ռոսլինի նկարազարդած Ավետարանում (1262 թ., MS. W. 539, fol. 213v), Երուսաղեմում պահվող իշխան Վասակի Ավետարանում (ԺԳ. դար, եղմ. 2568, Թ. 161բ):

¹⁹ Այս ուղերձն ունի նաեւ Մատթ. ԺԱ. 25–30-ի հարակից լուսանցքում Ամենակալ պատկերազրույթյամբ անմոռու Քրիստոսի պատկերը (ՄՄ 206, Թ. 449ա), որը դարձյալ ներկայացված է Նոր Կտակարանի այն հատվածում, որտեղ Քրիստոսը քողարկված՝ այլասացությամբ է վկայում իր աստվածային էության մասին:

²⁰ Հատկանշական է, որ Տարոնացի Խորհրդավոր ընթրիքի եւ Ունվվայի տեսարաններում Քրիստոսի կզակին փոքր մագաժածկույթ է պատկերում՝ սրանով թերեւս ակնարկելով Քրիստոսի աստվածային էության լիարժեք ճանաչման պահի մոտենալը, որն ըստ մեկնությունների՝ տեղի է ունենում Քրիստոսի համբարձման ժամանակ (տես Արարեալ սբ. Վարդապետին Իգնատիոսի, նշ. աշխ., էջ 98, 99):

տում է Քրիստոսի աստվածային էության քողարկված գրսեւորումը, մինչդեռ Համբարձման տեսարանից հետո անմորուս պատկերագրությունը խորհրդանշում է ուղղակիորեն աստվածային անժամանակյա էությունը²¹ եւ Հոր եւ Որդու համագոյությունը²²:

Քրիստոսի աստվածային անժամանակյա էության, ինչպես նաեւ Հոր եւ Որդու համագոյությանը հղումն ունի նաեւ Հովհաննեսի Ավետարանի անվանաթերթին ներկայացված անմորուս Քրիստոսի պատկերը²³, քանի որ ըստ մեկնությունների՝ Հովհաննեսի Ավետարանը, ի տարբերություն համատեսական Ավետարանների, շեշտադրում է Քրիստոսի աստվածային էությունը²⁴: Ուստի Հովհաննեսի Ավետարանի անվանաթերթին²⁵ եւ ձեռա-

²¹ Համբարձումից առաջ ասելով՝ նկատի է առնվում չորս Ավետարաններում ներկայացվող Քրիստոսի երկրային գործունեությունը՝ մինչեւ համբարձումը, իսկ համբարձումից հետո ասելով՝ նկատի է առնվում չորս Ավետարաններից հետո եկող գրքերում ասվածը (Գործք առաքելոց, Պողոս առաքյալի թղթեր, Ընդհանրական թղթեր եւ Հայտնություն), որտեղ նկարագրվող դեպքերն ու գործողությունները տեղի են ունենում Քրիստոսի երկրային կյանքից հետո, եւ որտեղ Քրիստոսի երկրային կյանքի եւ տնօրինության մասին խոսվում է հետգրությամբ: Քննարկվող ձեռագրում, չորս Ավետարաններից բացի, կան նաեւ Նոր Կտակարանի Հայտնության գիրքը (ՄՄ 206, թ. 511բ-517բ), Գործք առաքելոց-ը (ՄՄ 206, թ. 520բ-534ա), Ընդհանրական թղթերը (ՄՄ 206, թ. 534բ-542բ), Պողոս առաքյալի թղթերը (ՄՄ 206, թ. 551ա-587բ):

²² Հատկանշական է, որ Համբարձումից հետո Տարոնացիին Քրիստոսին մորուսով է ներկայացնում նաեւ Գործք ԻԳ. 11 գլխի կից լուսանցքում (թ. 531բ) եւ «Պողոսի թուղթը հռոմեացիներին» գլխի հանդիպակաց էջին (թ. 550 բ): Այստեղ Գործք ԻԳ. 11 հատվածը կարեւորվել է որպես Աստծու տեսանելիության՝ երեւալու պահ. «Եւ ի վաղուեան գիշերին եկաց առ նմա Տէր եւ ասէ՝ քաջալերեաց, Պաւլէ, զի որպէս վկայեցեր վասն իմ յերուսաղէմ, սոյնպէս պարտ է քեզ եւ ի Հռոմ վկայել», իսկ «Պողոսի թուղթը հռոմեացիներին» գլխի հանդիպակաց էջում Քրիստոսին ներկայացնելով մորուսով՝ մանրանկարիչը կապ է ստեղծել Գործք ԻԳ. 11 հատվածի հետ, որտեղ Պողոսին հայտնված Քրիստոսը հանձնարարում է իր մասին վկայել Հռոմում:

²³ Այստեղ Հովհաննեսի Ավետարանի (Հովհ. Ա. 1) «Ի սկզբանէ էր Բանն...»-ի «Ի» գլխատառը ներկայացված է ավետարանիչների խորհրդանշաններով, որտեղ Մատթեոսի Ավետարանը խորհրդանշող հրեշտակը ձեռքերով պահում է գահը, որի վրա Ամենակալի պատկերագրությամբ ներկայացված է անմորուս Քրիստոսը (ՄՄ 206, էջ 496ա): Տարոնացու նկարազարդած Վեն. 1917 եւ ՄՄ 6289 Ավետարանների՝ Հովհաննեսի անվանաթերթերը եւս արված են այս պատկերագրությամբ:

²⁴ Այս մասին Սարգիս Կունդը գրում է. «...քանզի Մատթէոս եւ Մարկոս եւ Դուկաս ի խոնարհագոյն ծնընդեն են Տէրն մերոյ սկիզբն արարին իւրեանց աւետարանին ...որ ըստ մարդեղութեան ի մեզ տալաւորեցաւ խորհուրդն: Իսկ Յովհաննէս ի հայրական ծնընդենն սկիզբն արարեալ աստուածաբանապէս ճառէ եւ այն աներբ եւ անժամանակ է, քանզի ասէ ի սկզբանէ էր Բանն եւ ինքն Բանն Աստուած էր» (տե՛ս ՄՄ 5448 (թ. 7բ) (Հովհ. Ա. 1-18):

²⁵ Նշենք, որ Հովհ. Ա. 1-18 գլխում «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն...» դրվագը մանրանկարով արտահայտելու օրինակները հայկական ձեռագրերում շատ չեն: Պահպանված ձեռագրերից Հովհաննեսի Ա. 1-18-ի ուղերձն ունի Վենետիկի Մխիթարյանների գրադարանում պահվող Վեն. 888/159 Ավետարանի (1200 թ. Ուրֆա, Կիլիկիա)՝ Հովհաննեսի անվանաթերթի պատկերագրությունը, որտեղ էջի մի կողմում ներկա-

գրի՝ Նոր Կտակարանի հատվածում Համբարձումից հետո ներկայացված երիտասարդ, անմորուս պատկերագրությունը նույն ուղերձն ունի, ինչ ձեռագրի՝ Հին Կտակարանի հատվածում, որտեղ Աստված ներկայացված է բացառապես անմորուս եւ երիտասարդ: Այս դեպքում թերեւս հղում է արվում Հոր համագոյությունը Բանն Աստծու հետ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Թորոս Տարոնացու նկարազարդած ՄՄ 206 Աստվածաշնչի մանրանկարչության ուսումնասիրությունը եւ արեւմտյան ձեռագրերի պատկերագրության հետ համեմատությունը ցույց են տալիս, որ Տարոնացին որոշ առումով փոխառել է արեւմտյան ձեռագիր Աստվածաշունչ մատյանների պատկերագրական համակարգը²⁶՝ դրանում կատարելով որոշակի փոփոխություններ, որոնցից թերեւս ամենից էականն անմորուս Քրիստոսի պատկերագրության կիրառությունն է: Տարոնացու դեպքում առկա է այս պատկերագրության կիրառության այլ տրամաբանություն. բացի այն, որ անմորուս պատկերագրությունը հղում է Բանի անստեղծ հավերժական էությանը, այն ունի նաեւ մարդեղացած Բանի անժամանակյա աստվածային էության քողարկված դրսեւորման ուղերձ: Մեկնողական այս հղումը չի հանդիպում արեւմտյան ձեռագրերի նկարազարդումների մեջ, այն չկա նաեւ հայկական այն ձեռագրերում, որտեղ առկա է այս պատկերագրությունը:

յացված է Հինավուրցի պատկերը (fol. 213v), հակառակ կողմում՝ այս պատկերին զուգահեռ՝ անմորուս Քրիստոսի (fol. 214): Տարոնացու պարագայում անմորուս պատկերագրությունն է արտահայտում Հովհաննեսի Ավետարանի Հովհ. Ա. 1–18 դրվագում ասվածը: Նշված Վենետիկի Մխիթարյանների գրադարանում պահվող Վեն. 888/159 Ավետարանի պատկերները տե՛ս S. DER NERSESSIAN, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, figs. 79, 80:

²⁶ Արեւմտյան Աստվածաշունչ մատյանների նկարազարդմանը Տարոնացին, ըստ երեւույթին, ծանոթացել է Ֆրանցիսկյան եւ Դոմինիկյան միաբանների բերած ձեռագրերի միջոցով, որոնք այդ ժամանակ Հայաստանում աշխույժ քարոզչական գործունեություն էին ծավալում: Փոխառության տեսակետից հատկանշական են Մենդոց գրքում «Ի» սկզբնատառի ներսում՝ տառի ուղղահայաց հատվածում՝ մեղալիոնների մեջ, ներկայացված արարման վեց օրն ու յոթերորդ հանգստի օրը, Սուրբ Երրորդությունը ներկայացնող պատկերի տեղադրությունը՝ Սաղմոս ձԹ. 1–7-ի կից լուսանցքում, ինչպես նաեւ Սբ. Երրորդությունը ներկայացնող երկու անձերի պատկերագրությունը, Հին Կտակարանում Հինավուրցի պատկերագրության բացակայությունը, Հին եւ Նոր Կտակարաններում Քրիստոս-Հոգոս պատկերագրության կիրառությունը եւ այլն:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Անմորուս Զրիստոս, մարդեղացած Բան, Եսայի Նչեցի, Գլաձոր, պատկերագրություն, մեկնություն, աստվածային էություն, ձեռագիր, Դոմինիկյան միաբանություն, Փրանցիսկյան միաբանություն, Թոմաս Փ. Մեթյուս, Հերբերտ Լ. Կեպեր:

РЕЗЮМЕ

В статье впервые рассматривается иконография Христа (без бороды) в рукописной Библии, иллюстрированной Торосом Таронаци, известным армянским художником-миниатюристом XIV века. Иконография Христа (без бороды) рассматривалась в контексте как армянского средневекового искусства, так и христианского в целом. В статье в основном затрагивается проблема изображения Христа в двух образах (с бородой и без бороды) в одной и той же рукописи. Здесь рассматривается иконография Христа-Логоса (воплощенного Логоса и Логоса вне воплощения), которая изучалась как в армянских, так и в западных рукописях с упором на экзегетический смысл.

Таким образом, иконография Христа (бородатого и безбородого) в рукописной Библии, иллюстрированной Торосом Таронаци, рассматривалась также в контексте богословских толкований. В статью включены выдержки из экзегезы Нерсеса Шнорали (XII век), Игнатиоса Севлернци (вторая половина XI века, первая половина XII века), Ованнеса Ерзнкаци (вторая половина XIII века, первая половина XIV века), Саркиса Кунда (XII век) и Наны Асори (IX век).

SUMMARY

The current paper examines for the first time the iconography of Christ (without a beard) in the manuscript Bible illustrated by T'oros Taronac'i, a renowned 14th century Armenian miniaturist. The iconography of Christ (without a beard) was considered in the context of both Armenian medieval art and Christian art in general. The article mainly deals with the problem of depicting Christ in two ways (with and without a beard) in one and the same manuscript. The iconography of Christ

the Logos (the Incarnate Logos and the Logos beyond Incarnation), which has been studied in both Armenian and Western manuscripts with an emphasis on exegetical meaning, is considered here.

Thus it examines the iconography of Christ (bearded and beardless) in the manuscript Bible illustrated by T'oros Taronac'i within the frames of the Armenian theological exegesis. The paper capitalizes on the excerpts from the exegetical works of Nerses Shnorhali (12th century), Ignatios Sevrēnc'i (the second half of the 11th and the first half of the 12th centuries), Hovhannes Erznkac'i (the second half of the 13th and the first half of the 14th centuries), Sargis Kund (12th century), and Nana Asori (9th century).



ՍՎԵՏԼԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

ՍՎԵՂԻԱՅԱՅ-ՍՈՒՍԱԼԵՈՅԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵԻՈՐՈՒՄՆԵՐ ԵՒ ԿԵՆՍԱԴԱՅՈՎԱԼՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՌԱՋՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՆԱԽԱԲԱՆ

Հոդվածի նպատակն է դիտարկել տեղային ինքնության փոխակերպումները որոշակի պատմական անցքերի շարակարգում, մշակույթը կրողների եւ միջավայրի ընկալումները եւ պատկերացումները դրանց վերաբերյալ: Աշխատանքի խնդիրներն են դիտարկել եւ բնութագրել կենսապահովման մշակույթի տարրերը՝ որպես տեղական մշակույթի առավել ավանդույթային բաղադրատարրեր, որպես ինքնության յուրօրինակ դրսեւորումներ, պարզել տարազի, բնակարանի եւ ուտեստի առանձնահատկությունները՝ հատկապես նոր պայմաններին հարմարվելու, մշակութային ցնցումը հաղթահարելու առկա հնարավորությունների օգտագործման դիտանկյունից, ցույց տալ կենսապահովման առավել գործուն բաղադրատարրերի շարժընթացը՝ Մուսա լեռան դեպքերից մինչեւ մեր օրերը՝ դիտարկելով դրանք թե՛ ժամանակագրական եւ թե՛ տարածքային, աշխարհագրական տարբեր կողմերից:

Մուսալեռցիները մինչեւ 1915 թվականը հայտնի էին սվեղիահայեր, սվեղիացիներ անուններով: Մուսա լեռան գյուղերը գտնվել են Սվեղիո գյուղախմբում (նահիե), ուստի բնակիչները կոչվել են Սվեղիո հայեր, սվեղիահայեր²: Ուշագրավ է, որ ինքնապաշտպանության օրերին եւ հաջորդող առաջին տարիներին այդ մարտերը կոչում էին Սվեղիո ապստամբություն: Ս. Շերպեթճյանն իր «Պատմութիւն Սուլթանահայերու» գրքում դարձյալ կիրառում է «Սուլթիոյ ապստամբութիւն» արտահայտությունը: Դեռեւս 1916-ին գրում էին՝ «Սուլթացիները Փոր Սալիտի

^{1*} Ստացվել է՝ 3.05.2023, գրախոսվել է՝ 15.06.2023:

էլ. հասցե՝ sv_ethnomuseum@yahoo.com:

² Տե՛ս Մ. ՍԱԼԻԻ, Ալեակներ եւ խլեակներ, Աղեքսանդրիա, 1920: Տ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ, Ձէյթունի տարագրությունը եւ Սուլթիոյ ապստամբությունը, Հալեպ, 1935:

մէջ»³: 1922-ին ֆրանսիացիներն առանձնացնում են «Ճեբել Մուսա նահիե մյուդյուրեթը»:

Շրջանառության մեջ էր նաեւ սվետիացիներ անվանումը: Հայտնի է նաեւ «Մուսադադի, Մուսա լեռան ժողովուրդ» արտահայտությունը⁴: Հետագա տարիներին ձեւավորվում է բնակիչների մուսալեռցի ինքննկալումը, եւ «սվեդիահայ» եզրն սկսում են գործածել առավելապես անցյալի մասին խոսելիս: Մուսալեռցիների տարահանումը կազմակերպած ֆրանսիացի ծովայինների փաստաթղթերում (զեկուցագրեր, հուշեր եւ այլն) առկա են Մուսա լեռան հայեր, ապստամբներ, փախստականներ արտահայտություններ⁵: Շարլ Տիրան Թեքեյանի՝ 1919 թ. հրատարակված հիշողության էջերում ասվում է՝ «Մուսա լեռան հայերը»: Դեռ 1915 թ. սեպտեմբերի 10-ի նրա զեկուցում՝ «Մուսա լեռան հայկական ապստամբություն»⁶: Ֆրանսիացի ծովակալ Լուի Դարթիժ դյու Ֆուրնեն եւս հիշում է նման ձեռով՝ «Մուսա լեռան հայերի ազատագրումը»⁷: Պորտ Սաիդում գտնվելու ընթացքում անգլիկներն կազմված զեկուցներում նրանց անվանում են հայ փախստականներ: Պորտ Սաիդ տեղափոխվելուց հետո էլ նրանց կոչել են հայ փախստականներ: Իրենք՝ հայերը, իրենց մասին, բացի սվեդիացիներ արտահայտությունից, օգտագործել են նաեւ Մուսադադի, Մուսա լեռան ժողովուրդ, մուսադադցիներ բնորոշումները: 1919 թ. Մուսա լեռ վերադառնալուց հետո աստիճանաբար կիրառության մեջ է մտնում եւ տարածվում մուսադադցի կամ մուսալեռցի ինքնանվանումը:

Հայաստանաբնակ մուսալեռցի, Հաջի Հաբիբլի գյուղից Պողոս Հովհաննեսի Սուպկուկյանն իր անտիպ հուշերում արդեն գրում է. «Մուսալեռցիներու ապստամբությունը 17 հուլիսի 1915 թ.»⁸: «Մուսալեռցիներն իրենց ծննդավայրում» խորագիրը կրող բաժնում ուշագրավ է, որ նկարել է մուրճ⁹, իսկ Պորտ Սաիդը ներկայացնող «Ազատագրված մուսալեռցիներ»

³ Ս. ՇԵՐՊԵՔՅԱՆ, Պատմություն Սուէտահայերու, Պէյրուս, 2010, էջ 129:

⁴ Մ. ՍՆԱՊՅԱՆ, Նշխարներ կորուսեալ մանկութենէն, Թեհրան, 2012, էջ 62:

⁵ Ժ. ԳԵՈՐԳԵԱՆ, Ֆրանսական ռազմածովային նավատորմի օգնությունը հայերուն 1909–1915 թթ., Երեւան, 2015, էջ 78–89, 106, էջ 108–110:

⁶ Անդ, էջ 87:

⁷ ՖՈՒՐՆԵ ԼՈՒԻ ԴԱՐԹԻՋ, Մուսա լեռան հայերի ազատագրումը (ծովակալի պատերազմական յուշեր. 1914–1916 թթ.), Փարիզ, 1919:

⁸ Պ. ՍՈՒՊԿՈՒԿՅԱՆ, Մուսալեռ, Երեւան, 1980, էջ 68–69 (անտիպ, պահվում է Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվում):

⁹ Անդ, էջ 114:

րը լազարեթ քամբի մեջ» հատվածում պատկերել է վրան եւ աչք-արեւ¹⁰ որպես տվյալ տարածքների խորհրդանշական ընկալում-պատկերներ:

ՄՈՎՍԵՍ ԱՆՎԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Սվեղիո հայ գյուղերի՝ 1911 թվականին կազմված նյութերի (Սիւետիոյ հայ գիւղերու ընդհանուր ցուցակը, 1911) դիտարկումը ցույց է տալիս, որ մինչեւ 1911 թ. Մուսա արական անվանումը կիրառվել է Վազըֆ գյուղում, Խըղըրբեկ գյուղում դրան զուգահեռ օգտագործվել է Մովսես տարբերակը, սակայն ավելի սակավադեպ: Քաբուսիեում կիրառվել է միայն Մովսես անունը, Հաջի Հաբիբլիում՝ գերազանցապես Մովսես, միայն երեք դեպքում է հանդիպում Մուսա ձեւը: Մուսա անունով էր հայտնի փրկարար լեռը, որն այդպես է կոչվել Մուսաների եւ ոչ թե աստվածաշնչան հայտնի կերպարի պատվին: Պահպանվել է նաեւ լեռան անվանակոչման հետ կապված ժողովրդական ավանդապատում¹¹:

Մուսա լեռան պաշտամունքի վերաբերյալ ազգագրական նյութեր չեն պահպանվել, սակայն ինքնապաշտպանական մարտերից հետո այն ստանում է փրկարար լեռան կարգավիճակ՝ դառնալով ազատության խորհրդանիշ եւ ներծագումնաբանական խմբի ինքնության դրսևորում¹²:

ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մուսալեռցիների կենսապահովման մշակույթի տարրերի՝ տարազի, ուտեստի եւ ժողովրդական տան համալիրներում տեղ են գտել ազգա-

¹⁰ Անդ, էջ 103:

¹¹ Անդ, էջ 68–69:

¹² Դու պարծանքն ու փառքը մեր: / Թալլաթը, երբ երգվեց հաստատ, / Ջնջել ե՛ւ հայ, ե՛ւ Հայաստան / Մենք Մուսա լեռը բարձրացանք, / Քառասուն օր անմահացանք: Կրկներգ. Կովում ենք մենք հոգով անպարտ / Քառասուն օր, քառասուն դար, / Սվեղիո խրոխտ ու մանիշակ լեռներ, Մարդը լեռան լեռն Աստծու հավասար, Մուսա լեռան ոգիները հայոց հետ են եւ զիրենք կպաշտպանեն: Հայոց լեռները վրեժխնդիր ոգի ունին. իրենց հարազատները կպաշտպանեն / Մուսա տաղե մինչեւ Արարա, / Քո որդին եմ ես, / Դու սյունը իմ տան, / Թշնամյաց դեմ միշտ գոց, / Անառիկ բերդ-ամրոց, Իմ Մուսա լեռ:

Հայոց հպարտ լեռնապարում / Հզոր արծիվ Մուսա լեռ: Թուրքը հրաման տվեց՝ մեր լեռը կրակի տալ. ամմա լեռը չվառվեց, քիչ տեղ մը վառավ: Հրաշք էր: Հետո թուրքերը մեզ կըսեին, որ կռիվը կսկսեմ՝ ճերմակ ամպ մը կուզար մեր լեռը կփակեր, անոնք մեզի չէին տեսնար, ամմա մենք իրենց կտեսնայինք վերեւեն, ծառերուն մեջեն: Մուսա լեռը փոքր էր, Մասիսի պես (տես Պ. ՍՈՒՊԿՈՒԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 28):

գրական, ներծագումնաբանական խմբին հատուկ ինքնություն գրասեռ-
րումներ եւ մշակութային առանձնահատկություններ՝ առօրյա, տոնածի-
սական, սեռատարիքային, սոցիալական բաժանումներով: Ոչ նյութական
մշակութային ժառանգության տեսանկյունից կարելու խնդիր է սվեդիա-
ցի-մուսալեռացիների նոր պայմաններին հարմարվողականության, մշա-
կութային ցնցումի (շոկ) հաղթահարման եւ մշակութային հարմարվողա-
կանության խնդիրների դիտարկումը բնականության տարբեր վայրերում՝
Սվեդիա, Պորտ Սաիդ, Մուսալեռ, Այնճար, Մայր Հայաստան:

Սվեդիահայերի ավանդական արհեստներից էր ջուհակությունը: Զար-
գացած էին մետաքսագործությունը, ասեղնագործությունը եւ ժանեկա-
գործությունը: Մուսալեռում զարգացած է եղել նաեւ սանրագործությունը:
Անվանի սանրագործներ էին յողունօլուքիները եւ խըղըրբեկցիները:
Սանրերը պատրաստել են տոսախ, հացենի եւ այլ ծառատեսակներից,
ոսկրից եւ եղջյուրից: Մետաքսագործության զարգացումը կապված էր
շերամապահության հետ: Ծանաչված կենտրոն էր Հաջի Հաբիբլին, որտեղ
տների մեծ մասում աշխատում էին կտորեղեն գործելու գետնահոր հաս-
տոցները: Բնական նյութերով ներկված գործվածքը մեծ պահանջարկ էր
վայելում ինչպես տեղում, այնպես էլ հարեւան գավառներում: Դրանից
կարում էին ավանդական տարազի մասեր, թաշկինակներ, ծածկոցներ
եւ այլն: Անտիոք քաղաքից ներմուծված պատրաստի բամբակաթելերով
գործվում էր նաեւ բամբակյա կտոր: Ստացված կտորեղենի մի մասը
վաճառքի էր հանվում Լեւշիե, Անտիոք եւ այլ քաղաքների շուկաներում:
Տեղում գործվող բամբակյա եւ մետաքսյա կտորներից մուսալեռացիներն
իրենց կարիքների եւ վաճառքի համար կարել են զգեստներ եւ պատրաս-
տել կենցաղային իրեր, որոնք հարգարվել են ասեղնագործ բանվածք-
ներով: Մուսալեռացիների կենցաղում կիրառվել եւ արժեւորվել են ժանե-
կագործ առարկաները՝ ծածկոցներ, գլխաշորի եւ թաշկինակի երիզներ,
գրպանի ժամացույցի պատյաններ եւ այլն: Մուսալեռան գյուղերում
կանայք տիրապետել են գեղարվեստական կարի՝ ասեղնագործության
եւ ժանյակի տարբեր եղանակներին: Ասեղնագործությամբ եւ ժանյակով
հարդարել են ավանդական հագուստը եւ կենցաղային առարկաները:
Վերջիններս կահ-կարասու հետ կազմել են բնակարանի ներքնատեսքի
մասերը: Պորտ Սաիդի գաղթակյան-վրանաքաղաքում նույնպես կանանց
ու աղջիկներին սովորեցնում էին ձեռագործ արվեստ: Մարաշի, Այնթափի
ձեռագործ արվեստը հասանելի է դառնում նաեւ մուսալեռացիներին:

Սվեդիայի հայերի տարազը ԺԹ. դ. վերջին եւ Ի. դ. սկզբին ուներ տոհմիկ, ավանդական ոճ¹³: Անտիոք քաղաքի ազդեցությամբ եւրոպական հագուստներն աստիճանաբար տարածվում են Սվեդիո հայ վեց գյուղերի բնակիչների ունեւոր եւ հատկապես երիտասարդ խավերի շրջանում: Տարեց տղամարդիկ եւ կանայք Պորտ Սաիդում էլ հագել են ավանդական զգեստներ, մինչդեռ շատ շուտով երիտասարդների հանդերձանքում նկատելի են դարձել նորամուծությունները: Հետագա տարիներին ավանդական տարազաձեւերը, կենցաղի փոփոխությանը զուգահեռ, դուրս են եկել կիրառությունից:

Մուսա լեռան տարազը եւ զարդերը հանդես են եկել երկու համալիրով՝ տեղական եւ քաղաքային՝ սեռատարիքային, առօրյա, տոնածիսական եւ նշանային առանձնահատկություններով հանդերձ: Մուսալեռան տարագում ԺԹ. դ. վերջին եւ Ի. դ. սկզբին տարբերակվել է տարազի երկու համալիր՝ ավանդական եւ քաղաքային:

Տարեց կանայք հագել են ավանդական «անթարի»՝ երկար զգեստ, գծավոր կտորից: Գոտին եղել է քիրմանի բրդյա շալ: Ներքնազգեստը կազմված էր շապկից եւ շապկընկերից: Շապկիկը սպիտակ գույնի կտավից էր, վարտիքը՝ կարմիր: Անտիոք քաղաքի ազդեցությամբ եւրոպական հագուստը մուտք էր գործել Մուսալեռան գյուղեր՝ Հաջի Հաբիբլի, Քաբուսիե, Յոդուն օլուք, Վազըֆ, Խըդըրբեկ: Կանայք կրել են մետաքսե գլխաշորեր՝ եզրերն ասեղնագործ ժանյակով հարդարված: Դրանք քառանկյունաձեւ մետաքսե, երբեմն էլ բամբակե նուրբ կտորներ էին՝ դաջած ծաղկանախշերով հարդարված: Գյուղերում՝ հատկապես Հաջի Հաբիբլիում, որը մասնագիտացած էր մետաքսագործության մեջ, արտադրել են մետաքսե շերտավոր, միագույն նուրբ կտորներ: Տեղական կտորատեսակներն օգտագործվել են ինչպես Մուսալեռում, այնպես էլ Կիլիկիայի տարբեր քաղաքներում: «Անթարին» կողքերից ճեղքվածքներ է ունեցել եւ աշխատելիս փեշերը խրել են գոտու մեջ՝ չխանգարելու համար: «Անթարիի» տակից կրվող ներքնաշապկիկը տեղական կտավից կարել են կանայք: Ծեր կանանց զգեստը երկարփեշ էր, հասնում էր մինչեւ ոտքերի կոճերը: Զահել կանանց կամ աղջիկների զգեստները ձգվել են ծնկներից ցած: Դա են պահանջել գեղագիտության եւ վարքի կանոնները: Զգեստի վրայից հագել են բաճկոնակ՝ բազմագույն մետաքսաթելերով նախշակարված: Մեջքին

¹³ Գ. ԳՅՈՋԱԼՅԱՆ, Մուսալեռան ազգագրությունը, Երեւան, 2001, էջ 124–128:

կապել են հաջիհաբիբլեցիների գործած գույնզգույն, նուրբ բանվածքով գոտի, փնջերով կամ արծաթե գոտի: Մետաքսե գոտին կապել են մեջքին՝ ալ կարմիր ծայրերը կախելով հանգույցից 15–20 սմ ցած:

Տարեց կանայք գլխին կրել են ոսկե դրամների շարանով զարդարված կարմիր գդակ, որը ծածկվել է բարակ գլխաշորով: Մի գլխաշորով էլ ծածկել են գլուխը՝ գլխարկի վրայից տանելով ծայրերը, մազափնջերի տակից անցկացնելով՝ կապել են գլխի վրա: Մի ուրիշ թաշկինակով եւս ծածկել են եւ ծայրերը գդակի տակից դարձրել եւ մտցրել այտերի եւ գլխաշորի միջեւ՝ ծածկելով քիթն ու բերանը:

Երիտասարդ կանայք Մուսալեռում գլխին կրել են կարմիր ֆես, որի վրայից կախվել է փնջիկ, ապա գցել են դաջազարդ գլխաշոր՝ քորոցներով ամրացնելով ֆեսի վրա: Դրա վրայից գցել են մետաքսե երկար, քառանկյունաձեւ սպիտակ գլխաշոր, որի ծայրերը կախվել են մինչեւ սրունքները: Նորահարսի դեմքը ծածկել են նուրբ մետաքսյա քողով: Աղջիկները կրել են ֆես՝ եռաշարք դրամներով զարդարված: Ֆեսի վրայից կապել են գլխաշոր: Փոքր աղջիկները մազերին կապել են ժապավեն: Երիտասարդներն սպիտակ կտավե շապկի եւ շապկընկերի վրայից հագել են բամբակյա, նորահարսները մետաքսյա շրջազգեստ՝ «ֆիսթան»:¹ Նման զգեստի վրայից հագել են մուգ գույնի բամբակյա կամ բրդյա կտորից վերնազգեստ՝ «փալթե-պալտո»:

Տղամարդիկ հագել են սպիտակ բամբակե ամուր գործվածքից շապիկ եւ շապկընկեր: Վրայից հագել են տաբատ՝ բամբակյա կամ բրդե կտորից: Կապել են գծավոր կտորից կարված գոտի՝ դրանից կախելով քսակը, որի մեջ պահել են ծխախոտ եւ այլն: Հագել են ելակ, որի առաջամասը զարդարվել է երկայնակի դասավորված կոճակաշարով: Այն կոճկվել է մետաքսե հյուսածո օղերով: Ելակի վրայից հագել են աբա՝ այծի մազից: Այն եղել է երկար, մինչեւ ծնկները, իսկ թեւքերը՝ մինչեւ արմունկները: Աբան գործվել է բրդից կամ բամբակախառն թելից՝ շրջկենտրոնում կամ Անտիոքում: Այն հարմար էր կրել էր եւ ցրտին, եւ անձրեւին: Տոներին տղամարդիկ կապել են տեղական մետաքսյա գոտի:

Տղամարդիկ կրել են ֆես, դեպի աջ՝ մի փոքր թեք կատարից կախելով փունջը: Ծերերը գլխարկի վրա թաշկինակ կամ ապարոշ են փաթաթել: Գլխարկը թաղիքից էր՝ քուլախ անվամբ, որի վրա փաթաթել են գլխաշոր: Այն շեղակի ծալել, ոլորել են եւ փաթաթել գլխարկի շուրջը: Մեկ փնջիկը կախել են ականջի վրա, մյուսը՝ թողել փաթաթանին: «Քաֆիան» մետաք-

սե կտոր էր՝ քառակուսածեւ շորս անկյուններում մեկական, կենտրոնում՝ երկու մաքորածեւ նախշ։ Այն եղել է նաեւ շերտերով, որոնց միջեւ արվել են ծաղկանախշեր։ Դրա երկու անկյունում արվել է մեկական փնջիկ։

Ագանելիքը կազմված էր գուլպայից եւ ոտնամանից։ Ոտնամանը՝ «յամանին», կաշվե կոշիկն էր եւ ճաշակոշիկը։ Կաշվե ոտնաման հագել են ինչպես մեծերը, այնպես էլ փոքրերը։ Տղամարդկանց ոտնամանը սրածայր էր, տակի կաշին եռանկյունաձեւ եւ ծալվում էր մատների վրա։ Կանանց ոտնամանը մուգ գույնի էր եւ նույնպես սրածայր։ Հագել են բրդյա սպիտակ, մոխրագույն եւ նախշազարդ գուլպաներ։ Գործածվել է նաեւ կարմիր կամ դեղին գույնի երկարաճիտք կոշիկը՝ «չաքման»։ Աշխատանքային օրերին տղամարդիկ հագել են երկարաճիտք կոշիկ՝ հատկապես օձերից պաշտպանվելու համար։

Զարդերը հիմնականում գնել են քաղաքից։ Աղջիկները, շորս-հինգ տարեկանից սկսած, կրել են ապակյա ապարանջաններ, մեծանալիս դրանք փոխարինվել են արծաթե եւ ոսկե օրինակներով։ Ընդունված էր ականջների բլթակները ծակելը՝ որպես նվիրագործման ծեսի հեռավոր արձագանք։ Այդ գործն արել է տարեց կին՝ տվյալ մշակութային ավանդույթները, գիտելիքները եւ հմտություններն ամբարած եւ հետագա սերունդներին փոխանցող մեկը։ Ականջներից սկզբնապես ուլունքներ են կախել, մեծանալուն ու հասունանալուն զուգընթաց դրանք դարձել են արծաթե կամ ոսկյա օղեր։ Ոսկե մանյակը եւ ոսկիների շարանը նվիրել է փեսացուն նշանադրության օրը։ Երիտասարդ հարսները, աղջիկները մազերը հարդարել են արծաթե ծամկալներով, կրել են ոսկե օղեր, շղթա, խաչ, մանյակ, մատներին՝ արծաթյա եւ ոսկե մատանիներ, թեւերին՝ նույնպիսի ապարանջաններ, մեջքին՝ արծաթե գոտի։ Մեծ կիրառություն ունեին կեռազարդերը՝ «չանգյալները»։ Նման զարդատեսակ գտնում ենք նաեւ սյունիքարցախյան զարդահամալիրում։ Մոր ոսկյա զարդերը ժառանգել են աղջիկները։ Որոշ աղջիկներ գեղեցկանալու նպատակով աչքերին ծարիր՝ «սուրմա» են քսել։

Մուսալեռում կանայք մազերը հարդարելիս բաժանել են երկու մասի եւ հյուսել՝ գցելով թիկունքին։ Գլխին կապել են գլխաշոր՝ ծայրերը հանգուցելով գլխին՝ աչ կողմ թեքած։ Տղամարդիկ մազերը կտրել են տվել ամիսը մեկ անգամ։ Ոմանք գազաթին թողել են կլոր բացատ։ Ճակատին մազափունջ՝ «քաքուլ» է թողնվել՝ աչ թեքած։ Բեղերը ոլորել եւ ուղղել են վեր՝ դեպի ականջները։ Հետագայում նորաձեւ էր համարվում սրած եւ դեպի վեր ուղղած բեղը։

Մուսալեռան ուտեստներում գրսեւորվել են տեղական առանձնահատկութիւններ՝ տոհմիկ կերակուրների առանձնացմամբ¹⁴: Սիրված էին տոնական հացերը՝ կաթնահաց եւ բեկեղ (պանրահաց): Կերակուրները տարբերվում էին զանազան համեմունքների առատ կիրառմամբ (տաքդեղ, պղպեղ, սեւ պղպեղ, քիմիոն եւ այլն):

Բնակարանը եւս ինքնատիպ էր: Սկզբում տները եղել են միահարկ՝ մի բաժանմունքով, ուր իրենց տեղն ունեին նաեւ ընտանի կենդանիները: Տները կառուցվել են սպիտակ քարից: Քառանկյուն տաշած քարը միայն ի. դարասկզբին է մուտք գործել, իսկ մինչ այդ սրբատաշ քարով տուն չկար¹⁵: ԺԹ. դարավերջին կառուցվեցին երկհարկ բազմասենյակ տներ՝ սաքուով եւ պատշգամբով, առանց միջանցքի, մի շարքով տեղակայված: Առանձին մասն կամ թոնրատուն չկար, թոնիրը տան առջեւ էր կամ կողքին: Դռնից մտնելիս անմիջապէս աջ կողմում գտնվել է պատի մեջ եռամաս բացվածք՝ կժերի, թասերի եւ առօրյա ամանեղենի համար նախատեսված: Նույն պատի վրա ցցից կամ մեխից ամրացվել է գդալամանը՝ եղեգնյա կողովը, որի մեջ պահել են գդալները եւ շերեփները: Առաջին հարկում պատրաստվել են երեք-չորս պատուհան-դարակներ՝ տարբեր մանր առարկաներ պահելու նպատակով: Դռնից անմիջապէս ձախ արվել է մի փոքրիկ անցք՝ ամառ թե ձմեռ կատվի ազատ ելումուտն ապահովելու համար: Քիչ ավելի ձախ՝ համարյա պատի մեջտեղում, օջախն է տեղադրվել: Օջախի 10–12 սմ լայնքով վերնամասում դրվել են ձեթի ճրագը, նավթի լամպը, լուցկին կամ նման այլ իրեր: Մյուս՝ հյուսիսային պատի ձախ անկյունում պատի մեջ բացվել է մի պահարան: Առաջին հարկը լինում էր փակ, մյուս հարկերը տրամադրվել են գրքերի կամ այլ իրերի համար: Հետեւի պատի երկայնքով դրվել են կարասներ, սափորներ՝ «ժափիկ» պանրով, ձիթապտղով, ձեթով կամ թթուներով: Կարասների առջեւում՝ հետեւի պատին զուգահեռ, տեղադրել են մեծ ու փոքր ամբարները: Մեծ ամբարը երեք բաժանմունքով էր՝ ձավար, ցորեն, կորեկ, սիսեռ կամ եգիպտացորեն պահելու համար նախատեսված: Երկրորդ հարկում երկու-երեք պահարան էր լինում: Հանդերձանք ու զարդեր պահելու նպատակով օգտագործել են զգեստարկղ եւ զրդատուփ: Ամանեղենը բազմազան էր, ճաշի համար՝ փայտե գդալներ, պնակներ՝ պղնձից, մետաղից, ճենապակուց, կավից,

¹⁴ Անդ, էջ 65–68, 128–141:

¹⁵ Անդ, էջ 108–109, 112:

ջնարակված եւ այլն: Սեղան ծառայող հարմարանքը հյուսված էր լինում ցորենի ցողունից՝ ծեղից: Շատ քիչ տներում կար փայտյա սեղան՝ մոտ 15 սմ բարձրությամբ կլոր կամ քառակուսի: Նստել են ծալապատիկ: Ճաշն սկսվել է տան մեծի «Հայր մերով» եւ ավարտվել «Փառք քեզ, Աստված» եւ «Օրհնյալ է Աստված» փառաբանություններով: Առանց պատճառի՝ մեծից առաջ սեղանից չէր կարելի հեռանալ: Ուտելու ընթացքում չէր կարելի բարձր խոսել կամ շատախոսել:

Տան ներքնատեսքի կարեւոր տարրերից է եղել խսիրը: Դրա վրա փռել են մեծ ու փոքր մինդարներ, բազմոցներ ու բարձեր՝ պատի երկայնքով կամ օջախի շուրջը: Քնելիս դրանք հավաքել են եւ փռել անկողինները¹⁶:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼԵՌԱՆ ՎՐԱ

Սվեղիահայ-մուսալեոցիները Մուսա լեռան վրա մարտնչելիս հանդես են եկել որպես լեռան զավակներ, լեռան երկնային արքայի՝ արծվի պես: Հերոսամարտին նվիրված հուշարձանը Մուսալեռ գյուղում ունի արծվի ուրվագիծ: Իսկ խաղաղ պայմաններում՝ թե՛ իրենց բնօրրանում եւ թե՛ օտար անապատային ավերում, ծիծեռնակի պես ամեն անգամ նորոգել են իրենց տունը՝ լինի քարե միահարկ կամ երկհարկ տուն, օտարածին վրան թե «Ֆրանսիական» մեկ սենյականոց կացարան:

Մուսալեոցիներին ապստամբ համարող թուրք հարյուրապետը հետագայում գրել է, որ եթե լեռնականի առողջ բնազդին եւ որսորդի վարժ ռազմավարության հետ նրանք ունենային բավարար չափով զենք ու զինամթերք, իրենցից ոչ ոք չէր կարող ազատվել այդ կիրճերից, նաեւ ավելացրել է, որ մուսալեոցիները մասացու ոչխարների նման սպանդանոց չգնացին, այլ կռվեցին առյուծների պես¹⁷:

Շատ բնութագրական է Մարգո Ղուկասյանը նկարագրել հուշարձանը: «Կարմրաքար արծիվ հուշարձան. մի ամբողջական հզոր արծիվ, որ ամուր կանգնած է բլրի վրա, ինչպես մուսալեոցիներն էին Կիլիկիայի ծովահայաց այն գագաթում: Թռչնի թեւերը կեռված են դեպի վերեւ, իսկ ոտքերով մխրճվել է հողի մեջ՝ հայրենի հողից ուժ ստանալով: Հուշարձանում արտացոլված են մուսալեոցուն հատուկ գծեր՝ ուժ, համառություն,

¹⁶ Անդ, էջ 119–120:

¹⁷ «Հայրենիք» օրաթերթ, 14 սեպտեմբեր 1972:

դիմագրություն: Նման արժվենի հայացքը բնորոշ է հայկական ժողովրդական էպոսից սերած հերոսին»¹⁸:

Մուսալեռացիները նոր պայմաններին արագ հարմարվելու բացառիկ կարողություններ են ցուցաբերել: Լեռ բարձրանալիս իրենց հետ տարել են անհրաժեշտ իրերը, ունեցած այծերը, մյուս կենդանիները: Որոշել էին նույնիսկ հավի ճուտ չթողնել գյուղում:

Ըստ Մուսալեռան հերոսամարտի ականատես Հովհաննես Իփրեջյանի՝ «Բիթիասի, Խրդըր-Բեկի կողմեն անասունները տարինք՝ շուն, կով, էշ, տավար, սարը բարձրացուցինք: Լեռը տարինք մեր ամեն ինչը՝ թենջիրե, թավա, ուտելիք, զենք, երկանք անգամ տարած էինք. ցորենը կաղաջինք, ալյուրը հաց կշինեինք, սաջի վրա կշարեինք, կեփեինք, կուտեինք: Աղը որ պակասեր, կերթայինք ծովի ջուր կբերեինք. կեռացնեինք, աղը կնստեր տակը, աղը մեզ պետք էր. անասուն շատ ունեինք: Փայտերը կտրեցինք, թեք կտուրներով տունիկներ շինեցինք, մեջը մտանք: Միայն մենք յոթը կողինք ունեինք»¹⁹:

Լեռան վրա ապաստանելիս «...յուրաքանչյուր ընտանիք փայտից խրճիթներ շինեց, քանի որ կղմինդր, քար չկար: Երիտասարդ տղաները պատնեշներ շինեցին»²⁰: «Տուն չէր բնական տեղերնին, այլ ծառերու երկար ճյուղերով շինված մի շուք, միայն արեւից պատսպարվելու համար»²¹: Փրկության նավերում «շատերը տրտնջում էին, եւ պահանջում էին, որ մի քիչ դանդաղ թող քշե նավապետը, ինչ պիտի ըլլա մեր վիճակը.... Ով է լսե Մուսա-Լեռցիներու անհասկանալի խոսքերը:Ժողովուրդը ուզում էր դանդաղ երթան զրահավորները, որպես հանգիստ մնա իրենց ստամոքսը եւ գլխու պտույտը»²²:

ՊՈՐՏ ՍԱԽԴՈՒՄ

Մուսալեռացիները Պորտ Սախդում ապրել են չորս տարի՝ մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը: Լազարեթ կոչվող վայրն ավազոտ տարածք էր՝ զուրկ որեւէ բուսականությունից,

¹⁸ Մ. ՂՈՒԿԱՍՅԱՆ, Ոսկեձեռիկ ճարտարապետը, «Գարուն», 1983, թիվ 11, էջ 20:

¹⁹ Վ. ՍՎԱԶԼՅԱՆ, Մուսալեռան հերոսամարտը ականատես վերապրողների վկայություններ, Երեւան, 2015, էջ 47:

²⁰ Վ. ՍՎԱԶԼՅԱՆ, նշ. աշխ., ականատես՝ Ս.Աղամյան:

²¹ Պ. ՍՈՒՊԿՈՒԿՅԱՆ, Մուսալեռան ժողովրդին անցյալը, էջ 90:

²² Անդ, էջ 100:

ուր ամառներն անտանելի շոգ էին, եւ մարդիկ մեծ ցնցում են ապրել իրենց բնակավայրին բոլորովին հակառակ պատկեր եւ բնակլիմայական պայմաններ ունեցող վայրում²³: Շատ տիպական է ականատեսի հետեւյալ արտահայտությունը. «Ուտելու, խմելու չափը նկատի չի առնող Մուսալեոցիները՝ մի քանի ամիս գրամով կերան ու խմեցին»: Կարուձեւի եւ «ալաճա» (բամբակյա կտոր) պատրաստելու արհեստանոցներ են բացվել: Հացը, ջուրը, ուտել-խմելը, հագնվելն անվճար էին, աշխատանքը՝ օրավարձով:

Վրանաքաղաքը կազմված էր 19 թաղամասից, իսկ վրանների ընդհանուր թիվը 475 էր՝ նախատեսված 4900 հոգու համար: Հաշվի առնելով մուսալեոցիների վիճակը՝ շտապ կառուցվել են փուռ եւ խոհանոց, նաեւ ընդարձակ ճաշարան՝ երեխա ունեցող մայրերի համար, որպեսզի «բացառիկ կերակրվին իրենց երեխաներով», եւ հավելյալ ուտելիք են բաժանել թույլ ու տկար երեխաներին եւ հիվանդներին: Եգիպտահայ կարմիր խաչը հիմնել է հիվանդանոց, որտեղ առաջին հերթին օգնություն են ստացել մարտերի ժամանակ վիրավորվածները: Վրանաքաղաքում հիմնվում է նաեւ Սիսվան վարժարանը եւ համանուն որբանոցը:

Կյանքը վրանաքաղաքում աստիճանաբար կարգավորվել է, եւ մուսալեոցիներն այստեղ շարունակել են զբաղվել իրենց ավանդական արհեստներով՝ ոստայնագործությամբ, գդալագործությամբ, սանրագործությամբ, ասեղնագործությամբ եւ այլն: Մինչեւ 1919 թ. Մեծ եղեռնից փրկված հազարավոր հայերի քարավաններ են եկել Պորտ Սաիդ եւ տեղավորվել մուսալեոցիների կողքին: Շուտով այստեղի գաղութաբնակ հայերի թիվը հասնում է 10 հազարի:

²³ Պորտ Սաիդի ականատեսների պատումներից. Ֆրանսացիները եկան, պզտիկ նավակներ բերին, մեզի նավ բարձրացուցին, տարին Եգիպտոս: Անտեղ մեզի կկերակրեին, կպահեին: Իջանք Եգիպտոսի հողին վրա: Անապատի դեղին ավազը ոտքերնիս կրակի պես կվառեր: Տեսանք շարքերով բրեզենտե չադրերներ (վրաններ) լարել են մեզի համար, մեջը պառկելու անկողին, ամեն ինչ... (Վ. ՍՎԱԶԼՅԱՆ, 2015, 42. Մ. Փանոսյան):

Պորտ Սալիդում, ավազներուն վրա, վրաններու տակ կապրեինք: Ամեն մի քսանհինգ վրանը մի թաղ էր, մի վերակացու-չավուշ ուներ: Անտեղ որ գացինք, ոչ մի բան չկար, հացը անգամ դուրսեն կուգար: Ամեն ինչ շինեցինք, արհեստավորները սկսան աշխատիլ: Պորտ Սալիդը Սուեզի ջրանցքին քովն է: Մեզ հոն տարին. չադրներին տակը ամեն ինչ պատրաստել էին մեզի համար՝ եւ ուտելիք, եւ հագնելիք: Մեր վեց գյուղերը առանձին-առանձին թաղեր տեղավորեցին: Դպրոց բացին, հիվանդանոց բացին, հեշ նեղություն չբաշխեցինք: Չորս տարի հոն մնացինք: Նավերը մեզի կերակուր կհասցնեին: Դաշնակից ուժերու պարենավորման բաժինը եւ Եգիպտոսի կառավարությունը պահեցին մեզի (Վ. ՍՎԱԶԼՅԱՆ, 2015, 42. Մ. Փանոսյան):

ՎԵՐԱԴԱՐՁ ՄՈՒՍԱԼԵՌ

Պատերազմում Թուրքիայի կրած պարտությունից հետո մուսալեու-ցիներին հնարավորություն է ընձեռվել վերադառնալ իրենց գյուղերը: 1919 թ. հուլիսի 31-ին Անտիոքի ծովածոց հասավ հայերի առաջին, իսկ օգոստոսի 27-ին՝ երկրորդ քարավանը: Կարճ ժամանակահատվածում աշխատասեր մուսալեուցիները խաղաղ կյանքի ակնկալիքով վերականգ-նեցին տարագրության ժամանակ Թուրքերի ավերած հայկական գյու-ղերն ու եկեղեցիները: Կյանքն աստիճանաբար սկսել է ընթանալ նախ-կին հունով, թեեւ 1915 թվականի ողբերգական օրերը չէին մոռացվել: Ի հիշատակ Զեյթունի հերոսական ինքնապաշտպանության՝ Մուսա լեռում հիմնվեց մեկ հայկական գյուղ եւս՝ Նոր Զեյթունը, որի բնակիչները Մեծ եղեռնից մազապուրծ եղած զեյթունցիներն էին: Մուսա լեռան հերոսա-մարտում զոհված մարտիկների հիշատակը հավերժացնելու նպատա-կով մուսալեուցիները գրեթե ամեն տարի ուխտի էին գնում Տամլաճըզ (Կաթկթող ջուր)՝ հավուր պատշաճի հոգեհանգստյան կարգ մատուցելու իրենց 18 նահատակների հիշատակին: Շատերը, սովորության համա-ձայն, եկել են շաբաթ օրվանից՝ ուտելիքներով, մատաղացու կենդա-նիներով եւ նախօրոք պատրաստած իրենց փայտյա խցիկներով: Իսկ տարիներ անց մուսալեուցիները ցանկություն ունեցան Տամլաճըզում մի հուշարձան կառուցել՝ ի հիշատակ Մուսա լեռան հերոսական ինք-նապաշտպանության: Այդ հուշարձան-կոթողի ճարտարապետն էր պրն. Գալենտերը, որն ավելի քան մեկ ամիս անցկացրել է լեռան վրա:

ՄՈՒՍԱԼԵՌՈՒՄ

Երբ 1919 թվականին մուսալեուցիներն իրավունք են ստանում վե-րադառնալ Մուսալեռ, իրենց տները գտնում են թալանված, այրված եւ քանդված: Քսան տարվա ընթացքում կրկին այգի են տնկում, ծա-ռեր աճեցնում եւ հանգիստ ապրում մինչեւ 1939 թվականը²⁴: 1937 թ.

²⁴ «Վերջն ալ նորեն Մուսա լեռ գացինք: Տեսանք՝ ամեն ինչ քանդ ու խարաբ: Սկսանք նորեն շինել, մշակել հողը, աճեցնել բերքը: Վերջն ալ Մուսա լեռան վրա հուշարձան շինեցինք՝ մեզ ազատող նավին ձեռով, խաչն ալ վրան... Սակայն 1939-ին, երբ Ֆրանսացին ու անգլիացին մոռցան հայերուն տված մեծ-մեծ խոստումները, Թուրքին նվեր տվին Ալեքսանդրետի սանջակը, Մուսա լեռն ալ՝ հետը: Է, մենք ի՞նչ պիտի ընեինք, Թուրքին հետ ապրիլ կրնայինք: Ամեն ինչ հավաքեցինք, ճամփա ելանք դեպի Սուրիայի ծովեզերքը՝ Պասիտի դաշտը (Վ. ՍՎԱԶԼԵԱՆ, 2015, 42. Մ. Փանոսյան):

Ալեքսանդրետի շրջանը, շարունակելով մնալ Սիրիայի կազմում, անցավ Ֆրանսիայի ու Թուրքիայի հսկողության տակ: Մեկ տարի անց, Ֆրանսիայի համաձայնությամբ, Թուրքիան զորք մտցրեց Ալեքսանդրետ եւ ստեղծեց Հաթայ ինքնավար պետությունը: 1939 թ. հունվարին, հակառակ ազգաբնակչության կամքին ու Սիրիայի դիմադրությանը, այն վերջնականապես միացվեց Թուրքիային:

Թուրքական հալածանքներից խուսափելու համար Կիլիկիայի հայությունը, որոնց հետ նաեւ Մուսա լեռան յոթ գյուղերի ազգաբնակչությունը (բացառությամբ Վազրֆ գյուղի մի քանի տասնյակ ընտանիքների), ստիպված եղավ նորից բռնելու գաղթի ճամփան: Հեռանալով հայրենի վայրերից՝ մուսալեռցիներն իրենց հետ վերցրին եղբայրական գերեզմանի սրբազան հողից՝ իբրեւ մասունք: 1939 թ. հուլիսի 17-ին սկսվեց ժողովրդի տեղահանությունը: Գաղթականությունը դարձյալ թակել էր հայի դուռը, սակայն մի տարբերությամբ, որ այս անգամ բնաջնջման վտանգ չկար: Չափազանց դժվար էր բաժանումը՝ հատկապես չափահաս մարդկանց համար: Մուսալեռցիները միառժամանակ պետք է մնային Պասիթում՝ Քեսապից շուրջ 25 կմ հարավ-արեւմուտք ընկած ծովեզրյա մի շրջանում: Պետք է մնային այնքան ժամանակ, մինչեւ որ հետագա բնակավայրի վերաբերյալ վերջնական որոշում լիներ²⁵:

Մուսալեռցիները Պասիթում մնացին 40 օր՝ ապրելով սավաններով ծածկված խցիկների տակ: Այդ անհյուրընկալ ծովեզրյա հարթավայրը շատ տխուր հիշողություններ է առաջացրել ժողովրդի հոգում:

Իրենց շեն ակութներից հեռանալով, բնության տարերքին ենթարկված, անօթեւան, սննդի պակասից տառապող, հայրենիքի կարոտը սրտում եւ ապագայի նկատմամբ անհանգստությամբ եւ անվստահությամբ լի՝ Մուսալեռան ժողովուրդը թիրախ է դառնում ծանր փորձու-

²⁵ Նավերը ոնց մեզի տարեր էին, անանկ ալ ետ բերին Մուսա լեռ: Ադ 1919 թվին էր: Քսան տարի խաղաղ ապրեցանք Մուսա լեռում՝ ֆրանսացիին տիրապետության տակ, ամեն ինչ նորեն սկսանք դասավորել, ցանել, հնձել: Վերջն ալ 1939 թվին Այնճար տեղափոխվանք: 1947-ին ալ Հայաստան եկանք» (Վ. ՍՎԱԶԼՅԱՆ, 2011, 488):

Նտքը մեզի տարին Այնճար, հոն ալ բաց դաշտ էր, սկսանք նոր տուներ շինել, նոր ալգիներ ցանել, ջուր բերինք. քանի մը տարիեն դրախտ դարձուցինք Այնճարը: Ալ նարինջ, լիմոն, ինչ միտքեդ կանցնի՝ կբուսներ... Այնճարն ալ ամալի՝ առանց ջուր, բաց դաշտ էր: Աճեցուցինք, բուսցուցինք, շինեցինք, սարքեցինք: 1946 թվին ալ թողեցինք ամեն ինչը՝ եկանք Հայաստան, ըմը դահա ջեբելմուսացիք մնուց Այնճար: 1939-ին քուրբերը նորեն եկան: Այս անգամ մենք Այնճար գացինք (Վ. ՍՎԱԶԼՅԱՆ, 2011, 482):

թյան ու հիվանդության: Սակայն Պասիթը միայն դրանով չէր «սեւ հետք» թողել: Այդ զրկանքով լի օրերից մեկն անմոռանալի է մնացել սերունդների հիշողության մեջ՝ որպես մի դառը հիշողություն: Եղանակն էլ ի՞ր հերթին բարեհաճ չի գտնվել մոսալեռցիների հանդեպ: Շուրջ 5000 մարդ բաց դաշտի մեջ՝ հորդառատ անձրեւի տակ, ապրում է դժվարին ժամեր: Անձրեւին ու փոթորիկին թիրախ դարձած ժողովուրդը, մինչեւ ոսկորները թրջված եւ սառած, մարմինները տաքացնելու համար թմբուկ-զուռնայի հարվածների տակ մեծից փոքր սկսում է պարել մինչեւ լուսաբաց: Այն դժվարին իրավիճակը դարձյալ չի ընկճել մոսալեռցիներին: Այն փաստը, որ ազատվել են թուրքական ատելի իշխանություններից, ամեն զրկանք ու դժվարություն դարձրել է հաղթահարելի:

Ժողովուրդը տաժանելի օրեր է անցկացրել Պասիթում, մինչեւ ֆրանսիական իշխանությունները վերջնականապես կարգավորել են նոր բնակության վայրի հարցը: Դա Սիրիայի եւ Լիբանանի մոտ գտնվող Այնճար բնակավայրն էր, որը ֆրանսիական կառավարությունը գնել էր Ռուշտի անունով թուրք բեկից եւ հատկացրել մոսալեռցիներին՝ իբրեւ փոխհատուցում:

Ժողովուրդը բեռնատար նավերով փոխադրվել է նախ Թրիփոլի, այնտեղից բեռնատար շոգեկառքով՝ Ռայաք, որից հետո էլ՝ Այնճար: Ժողովուրդը նախ տեղավորվել է Խալքիս կոչված ավերված բերդի ավերակներում: Հայ բարգործական ընդհանուր միության աջակցությամբ մեծաքանակ վրաններ են պատրաստվել, եւ մոսալեռցիները հնարավորություն են ստացել տեղավորվելու այդտեղ:

Այնճար հասնելուց 10 օր անց սկսվել է բնակարանաշինությունը: Շինարարական աշխատանքների ընդհանուր պատասխանատու էին ճարտարապետ Քեշիշյանը եւ նրա օգնական Աբրահամ Տ. Գազանճյանը: Ամեն ընտանիք պարտավորված էր իր մասնակցությունը բերելու այդ համայնական աշխատանքին:

Խստաշունչ ձմեռն էր մոտենում, անձրեւն ու ձյունը թրջում էին վրանները, ուր ժողովուրդը պատսպարվել էր մինչ բնակարանների կառուցումը: Այդ ծանր դրության պայմաններում որոշում է կայացվել կանանց, ծեբերին եւ երեխաներին բաժանել շրջակա գյուղերում՝ մինչեւ սաստիկ ցրտերի ավարտը: Նրանք ուղարկվել են Մուրաթաթ, Գապլեազ, Պալլեազ, Ըժտիթա, Թալապիա եւ Զահլե, ուր գյուղացիները նրանց արժանացրել են հյուրասիրության եւ հոգատար վերաբերմունքի: Ամբողջ

ձմեռ շարունակվել են շինարարական աշխատանքները: Աշխատողները բնակվել են վրանների տակ՝ դիմագրավելով բնության տարերքին: Ո՛չ անտանելի պայմանները, ո՛չ ծանր աշխատանքը, ո՛չ ցուրտն ու սննդի պակասը չեն ընկճել աշխատավորներին, քանի որ յուրաքանչյուրը գիտակցել է, որ իր աշխատանքից են կախված բնակարանների արագ կառուցումը եւ բնականոն կյանքի վերադարձը: Բնակարանաշինությունը շուրջ մեկ տարի է տեւել եւ ավարտին է հասել 1940 թվականի աշնանը: Այդ ընթացքում կառուցվել է 1068 քարաշեն տուն: Յուրաքանչյուր տուն բաղկացած էր մեկ սենյակից եւ արտաքնոցից: Երկրորդ աշխարհամարտը պատճառ դարձավ, որ երկու սենյակ եւ մեկ հյուրասենյակ բնակարանների կառուցման նախնական ծրագիրը խափանվեւ: Մեկ սենյականոց յուրաքանչյուր տան մեջ ապրել է մեկ ընտանիք: Կառուցվեցին նաեւ եկեղեցիներ, դպրոցներ, ինչպես նաեւ կարճ ժամանակահատվածում հիմնվեց նորակառույց վեց թաղամաս, որոնք ստացան Մուսալեռան վեց գյուղերի անունները: Բաշխվեցին ոռոգելի եւ անջրդի հողատարածքներ՝ յուրաքանչյուր ընտանիքի թվին համապատասխան: Կյանքն աստիճանաբար հունի մեջ է մտավ: Կարճ ժամանակահատվածում Այնճարը վերածվեց ծաղկուն մի բնակավայրի: Նոր բնակավայրում էլ մուսալեռցիները զբաղվեցին դաշտավարությամբ, այգեգործությամբ ու արհեստներով: Այսօր Այնճարը համարվում է Լիբանանի գեղեցիկ անկյուններից մեկը, ուր գործում են մի քանի ազգային, կրոնական, բարեգործական, մշակութային եւ մարզական կազմակերպություններ, երեք դպրոց, որոնց գործունեությունը նպաստում է գաղթօջախում ապրող հայերի ազգային ինքնագիտակցության պահպանմանը: Եւ երբ Մուսալեռ վերադառնալու բոլոր հույսերն աստիճանաբար մարվում են, ժողովրդի հոգում վառվում է հայրենադարձության եւ ներգաղթի լույսը:

Մեծ թվով մուսալեռցիներ արձագանքում են հայրենիքի կոչին, եւ 1946–1947 թթ. շուրջ 5 հազար մուսալեռցիներ (650 ընտանիք Այնճարից, 50 ընտանիք՝ Սիրիայի եւ Լիբանանի տարբեր քաղաքներից) հանգրվանում են Խորհրդային Հայաստանում եւ մասնակից դառնում Մայր հայրենիքի վերաշինությանը:

Ամեն տարի՝ սեպտեմբերի երկրորդ կեսին (մինչեւ 1975 թվականը՝ սեպտեմբերի երկրորդ կիրակին, իսկ 1975 թվականից սկսած՝ երրորդ կիրակին), Մուսալեռան սերունդները, մուսալեռցիների զավակները հավաքվում եւ ավանդական հարիսայով, զուռնա-թմբուկով, մարտական

շուրջպարով ու ներծագումնաբանական խմբին հատուկ արժանապատվության զգացումով նշում են հերոսամարտի տարեդարձը եւ ոգեկոչում քաջաբար նահատակված հերոսների հիշատակը: Ուշագրավ է, որ որոշ արցախցիներ, որոշակի նմանություններ են տեսնում իրենց եւ մոսալեոցիների միջեւ՝ նշելով, որ «մոսալեոցիք մեզ նման են, մեր պես համառ են եւ հաղթող»²⁶: Նույն բանասացը կարծում է, որ տեսակով իրենց նման են նաեւ շիրակցիները եւ ջավախեցիները: Ի թիվս այլ տեսակետների՝ կա նաեւ վարկած, որ մոսալեոցիները մի ժամանակ եկել են Հայաստանից. «Անոնք Հայաստանէն գաղթած, եկած են»²⁷: Վերջին շրջանում բավականին լայնորեն շրջանառվում է մոսալեոցիների եւ արցախցիների մշակութային՝ հատկապես բնավորության եւ ուտեստի համակարգում դրսևորվող նմանությունների վերաբերյալ տեսակետը: Թեեւ մոսալեոցիների սերունդները հիշում են, որ իրենց տանը, շրջապատում հաճախ են խոսել իրենց՝ Արցախից դարեր առաջ եկած լինելու մասին, սակայն դա չի դիտվել որպես պատմական փաստ, այլ ընկալվել է որպես իրենց ծագման մասին պատում: Նույն բանասացի կարծիքով՝ թեեւ ինքը բազմիցս եղել է Արցախում, սակայն հատուկ մշակութային նմանություններ չի տեսել, բայց երբ լսել է բարբառը՝ մի տեսակ հարազատություն է զգացել եւ հեշտությամբ հասկացել զրուցակիցներին²⁸:

Մոսա լեռան հերոսամարտի ականատես վերապրողների վկայություններին²⁹, առկա գրավոր ու բանավոր ազգագրական նյութերի եւ պատմական անցքերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ մոսալեոցիներն իրենց հատուկ համառության, նվիրվածության արդյունքում կարողացել են հաղթահարել մշակութային ցնցումը բնակության նոր վայրերում եւ հարմարվել նոր ու դժվարին պայմաններին:

ՄՈՒՍԱԼԵՌԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԲ

Հայաստան վերադարձած մոսալեոցիների համառ ջանքերի արդյունքում Հայաստանի նախկին Գինեվեո գյուղը վերանվանվում է Մոսալեո,

²⁶ Ս. ՊՈԴՈՍՅԱՆ, Հարցազրույցներ, Ստեփանակերտ, Երեւան, 2022, բանասաց՝ Ալլոնա Գրիգորյան:

²⁷ «Յուշամատենան Մոսա լեռան», Պէյրութ, 1970, էջ 741:

²⁸ Ս. ՊՈԴՈՍՅԱՆ, Հարցազրույց մոսալեոցի Թոմ Այնթապյանի հետ, Երեւան, 2022:

²⁹ Վ. ՍՎԱԶԼՅԱՆ, նշ. աշխ., էջ 29–100:

եւ 1976-ին բլրի վրա կառուցում է մուսալեոցիների ինքնապաշտպանական մարտերին նվիրված հուշարձան³⁰։ Մուսալեռան թանգարան-մասնաճյուղը բացվել է 1983 թվականին։ Մուսալեոցիները դիմում են ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրությանը՝ խնդրելով օժանդակություն։ Կուլտուրայի մինիստրությունը, ընդառաջելով կենտրոնական հանձնաժողովի դիմումին, հանձնարարում է Հայաստանի ազգագրության պետական թանգարանի տնօրեն Լավրենտի Բարսեղյանին՝ կազմակերպել Մուսալեռան հուշարձանի թանգարանը եւ որոշում հուշակառուցը՝ որպես մասնաճյուղ, հանձնել Հայաստանի ազգագրության պետական թանգարանին։ 1982 թվականի օգոստոսի 5–18-ը Հայաստանի ազգագրության պետական թանգարանի գիտաշխատողները կազմակերպված ազգագրական գիտարշավի ընթացքում ձեռք են բերում մուսալեոցիների ինքնապաշտպանությանը եւ մշակույթին վերաբերող նյութեր, մշակութային արժեքներ՝ հիմնականում մուսալեոցիների նվիրատվություններ։ Թանգարանի տնօրենի 25.05.1983 թ. թիվ 194 հրամանով՝ ի կատարումն ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության 1983 թ. մայիսի 18-ի «Ցուցասրահ կազմակերպելու մասին» թիվ 241 հրամանի՝ էջմիածնի շրջանի Մուսալեռ ավանում կազմակերպվել է Մուսալեռան հերոսամարտին եւ ազգագրությանը նվիրված մշտական գործող ցուցասրահ։ Ցուցադրական տարածքը ինքնապաշտպանության հատվածում կազմում է 40 քառ. մ, իսկ ազգագրության հատվածում՝ 60 քառ. մ.։ ՀՀ կառավարության 2010 թ. հունվարի 14-ի № 13 որոշման համաձայն՝ տեղի է ունենում անվանափոխություն, եւ ստեղծվում է «Սարգարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության «Մուսալեռան հերոսամարտի պատմության եւ մուսալեոցիների ազգագրության թանգարան-մասնաճյուղ»։ Թանգարան-մասնաճյուղը բաղկացած է երկու ցուցասրահից, որոնցից մեկում՝ հուշարձանի մեջ (ճարտարապետ՝ Ռ. Իսրայելյան, քանդակագործ՝ Ա. Հարությունյան) ներկայացված է Մուսալեռան հերոսական ինքնապաշտպանությունը, իսկ մյուս սրահում (ճարտարապետ՝ Լեոն Խալուկյան)՝ մուսալեոցիների նյութական, հոգեւոր եւ սոցիալական մշակույթը։ 1983 թ. բացված ցուցադրությունը, որը բովանդակալից եւ իր ժամանակի համար

³⁰ Մ. ՂԱԶԱՐՅԱՆ, Հայրենաբնակ մուսալեոցիների ներկայացուցչական կենտրոնական հանձնաժողովի գործունեությունը, Երեւան, 2002, էջ 201։

առաջնակարգ գիտական հիմնավորումներով կազմակերպված ցուցադրություն էր, միայն մասնակի փոփոխությունների է ենթարկվել մինչև 2015 թվականը՝ Մուսալեռան հերոսամարտի 100-ամյակը: 2015 թվականին արդիական միջոցներով իրականացվել է Մուսալեռան հերոսամարտի պատմության ցուցադրություն՝ խորհրդանշական նավի ներքնատեսքում: Մուսալեռան հուշահամալիրի տարածքում մուսալեռցիների նախաձեռնությամբ տեղադրվել են տեղական օրինակներով պատրաստված թոնիր եւ ձիթհան՝ ապահովելով կենդանի միջավայր, որտեղ այցելուն կարող է իրեն զգալ ոչ միայն ծեսի, արարողության եւ աշխատանքային գործընթացի դիտող, այլեւ ցանկության դեպքում դառնալ նաեւ անմիջական մասնակից: Ուշագրավ է, որ մուսալեռցիներն ինչպես խորհրդային շրջանում, այնպես էլ այսօր առանձնանում են որպես առանձնահատուկ ներծագումնաբանական, ազգագրական խումբ, որը հարազատորեն պահպանում է տոհմիկ ավանդույթներն ու սովորույթները: Մուսալեռան հուշահամալիրը հերոսամարտի հանգրվան է՝ մուսալեռցիների հաղթանակի պատմական հիշողության եւ մշակութային ժառանգության, ավանդույթների եւ սովորույթների պահպանման յուրատեսակ մշակութային տարածք: Ավանդական է դարձել Մուսալեռան հերոսամարտին նվիրված տոնակատարությունը, երբ մասնակից մուսալեռցիները, մեկտեղված տարբեր տեղերից եւ երկրներից, միմյանց եւ հյուրերին շնորհավորում են տոնի առթիվ եւ ջանում ընտանիքներով մասնակից լինել արարողությանը³¹: Տոնակատարության ժամանակ փոքրերը հաղորդակից են դառնում իրենց պապենական սովորույթներին՝ ձեռք բերելով հմտություններ եւ գիտելիքներ՝ հարիսայի համար անհրաժեշտ մթերքն ընտրելուց մինչև ծիսական կերակրի պատրաստումը, խարույկ վառելուց մինչև հնավանդ երգերն ու պարերը: Տոնախմբության անբաժան մասն է կազմում այդ ավանդական ուտեստը՝ ցորենից եւ գառան մսից, տարին մեկ անգամ կարելի է տեսնել բազմաթիվ կաթսաներ՝ հարիսայով լի, որը ողջ գիշեր պատրաստվում է հատուկ արարողակարգով՝ ժողովրդական երգուպարի հնչյունների եւ չափերի ներքո: Ազգային ծիսական կերակրի պատրաստության ժամանակ բոլոր մուսալեռցիները հավաքվում են խարույկի շուրջ, Մուսալեռան տեղական ժողովրդական երգեր երգում ու պարում: Ավանդական ռազմական մեծ թմբուկի զարկերը, Մուսալեռան շուրջպա-

³¹ Ս. ՊՈՂՈՍՅԱՆ, Դաշտային ազգագրական դիտարկումներ, 1983–2019:

րերն ու երգերը, ավանդական մատաղ հարիսան, խոհարարների շերեփով պարերը դարձել են մուսալեուցիների ինքնության արտահայտություններ արդի հայաստանյան հասարակությունում: «Ամեն տարի սեպտեմբերին մեր հարիսայի օրվան անհամբեր կսպասեմ, որ մեր ամեն կողմի մուսալեուցիներու հետ երթանք մեր նոր հուշարձանի քովը, գիշերով հարիսան եփենք ու մատաղի պես բոլորին բաժանենք, որ ուտողը իմանա, որ մուսալեուցիները, հարիսայի հատիկներու պես իրար միացած, կովեցան իրենց ազատության համար»³²: Անցյալի ընկալումները մշակույթը կրողի սեփական սոցիալական փորձառության արտացոլումներն են: Ներկայի նման անցյալը եւս սոցիալական իրականության բաղադրամաս է: Հիշողությունը եւ մասնավորապես պատմամշակութային հիշողությունը ծագումնաբանական ընդհանրություն, ազգ, ազգային ինքնություն եզրերը բնորոշող կարեւորագույն բնութագրերից է: Ի թիվս ծեսերի, ավանդույթների, առասպելների՝ հանրության կամ ազգի առանձին ազգագրական խմբերի անդամների միջեւ փոխանցվող հիշողությունը հանդես է գալիս որպես այդ խմբերի անդամներին կապող, նրանց հարաբերություններն ու գործողությունները կառուցող միջոց³³: Ամեն տարի՝ հերոսամարտի տարեդարձին, մուսալեուցիների հազարավոր հետնորդներ, սփյուռքահայեր, պետական-հասարակական, քաղաքական եւ մշակութային գործիչներ հարգանքի տուրք են մատուցում սուրբ նահատակների հիշատակին եւ սեպտեմբերի երրորդ շաբաթ-կիրակի օրերը մեծ շուքով, իրական տոնին հատուկ արարողակարգով նշում իրենց հաղթանակը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ինքնընկալում, մշակութային հարմարվողականություն, մշակութային ցնցում, բնակարան, ուտեստ, հագուստ, նոր պայմաններ:

РЕЗЮМЕ

Мусалерцы до 1915 года, проживая в маленькой провинции Сuedия, были известны как суетские армяне. В дни самообороны и в последующие за ними

³² Վ. ՍՎԱԶԼՅԱՆ, նշ. աշխ., էջ 43, *ականատես վերապրող՝ Մովսես Փանոսյան*:

³³ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ, Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, *Երեւան, 2006, տեսական հարցադրումներ, Նորավանք գիտակրթական հիմնադրամ, էջ 7–9*:

первые годы битвы были известны под названием Суедского восстания. Впоследствии жители начинают воспринимать себя мусалерцами и термин «суедский армянин» употребляется преимущественно, когда говорят о прошлом. Кроме выражения суедцы употребляли также: народ Мусадага, Муса лера, мусадагцы. После возвращения в Мусалер постепенно начинают употреблять название мусадагец/ мусалерец, которое дошло до наших дней.

Почти не сохранилось материалов, относящихся к культу Муса лера, хотя после самооборонительных боёв она получает статус священной горы, став символом спасения, проявления самости внутриэтнической группы.

Элементы культуры жизнеобеспечения мусалерцев в национальном костюме, пище и комплексе народного жилища нашли своё отражение в свойственной данной этнической группе проявлениях и особенностях культуры: в будничных, празднично-обрядовых, поло-возрастных, социальных разделениях. Важной задачей является также наблюдение за тем, как мусалерцы приспосабливались к новым условиям в разных местах проживания.

SUMMARY

Before 1915, the inhabitants of Musaler were known as Suedian Armenians, living in the small province of Suedia. In times of self-defense and in the following years, the fighting was called the Suedian uprising. Thereafter, the population perceived themselves as the Musaler people and used the term “Suedian Armenians” mostly when talking about the past. Along with the expression “the people of Suedia”, they also used definitions such as the people of Musadag, Musaler. After returning to Musaler, the expression “the people of Musadag/Musaler” came into practice and is still used today.

Almost no materials relating to the cult of Mount Musa have survived, although after self-defense battles it gained the status of a sacred mountain, becoming a symbol of salvation and manifestation of inner-ethnic group identity.

The elements of the Musaler people’s subsistence culture, i.e. national costume, food and public dwelling complexes are reflected in the manifestations of identity typical of this group and cultural peculiarities such as daily, festive-ritual, gender-age and social ones. It is also important to observe the ability of Musaler people to adapt to new conditions in different places of residence.

ԱՐՑԱՆԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄԸ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ¹

2020 թ. 44-օրյա պատերազմի ընթացքում եւ դրանից հետո Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հակահայ գործողությունների թիրախում հայտնվեցին հայկական պատմական եկեղեցիներ, հուշարձաններ, գերեզմանոցներ ու խաչքարեր: Վերջին շորս տարում անգամ ռազմական ոչ թեժ գործողությունների պայմաններում թիրախավորված բազմաթիվ արժեքների շարքում հատկապես մեծ է խաչքարերի թիվը: Ադրբեջանի անհանդուրժողական վերաբերմունքն ահագնացող ծավալների է հասել մանավանդ Արցախի ամբողջական հայաթափումից հետո՝ չդադարելով մինչ օրս: Ցեղասպան քաղաքականության գործադրումը հանգեցրել է թե՛ պատմական եւ թե՛ անկախության շրջանի Արցախի եզակի նշանակության խաչքարերի կորստին:

Հոգվածում ուսումնասիրվում է Ադրբեջանի հակահայ գործողությունների լայնածավալ ազդեցությունն Արցախի խաչքարային մշակույթի վրա՝ փաստագրելով 2020 թ. պատերազմից հետո՝ մինչ 2024 թ. ընկած շրջանում, Ադրբեջանի կողմից ոչնչացված խաչքարերը եւ վերլուծելով խնդիրը համաշխարհային ժառանգության աղքատացման եւ մշակութային բազմազանության խաթարման համապատկերում: Հոգվածում տրվում է նաեւ խաչքարային մշակույթի բնութագիրը՝ ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական ժառանգության ներկայացուցչական ցանկի չափանիշների, եւ բերվում են նաեւ դրանց պաշտպանության միջազգային կառուցվածքներն ու գործիքները: ՅՈՒՆԵՍԿՕ-ի համապատասխան փաստաթղթերի, միջազգային կանոնակարգերի եւ փորձագիտական որոշումների վերլուծության միջոցով կատարված հետազոտությունը բացահայտում է, որ թիրախավորելով, ոչնչացնելով ու մարդկության պատմությունից ջնջելով Արցախի խաչքարերը՝ Ադրբեջանը հարվածում է ոչ միայն հայկական մշա-

¹ Ստացվել է՝ 7.08.2024, գրախոսվել է՝ 7.09.2024: Էլ. հասցե՝ armine.tigranyan@ysu.am:

կուլթային ժառանգությանը, այլեւ համամարդկային արժեքներին, քանզի խաչքարային մշակույթը 2010 թվականից ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակուլթային ժառանգության» ցանկում՝ որպես վերազգային եւ համամշխարհային կարեւորության բացառիկ համընդգրկուն արժեք: Քննությունը հաստատում է, որ Արցախի խաչքարերի ոչնչացումը, նյութական կորստից զատ, ստեղծել է համակարգային խնդիրներ, որոնք կապված են նաեւ բռնի տեղահանված արցախահայերի մշակույթի իրավունքի ոտնահարման, ինքնության, հիշողության խաթարման եւ խաչքարերի տարածքներում նշվող տոների, փառատոների, ծեսերի կորստի եւ դրանց արդյունքում արցախահայ համայնքի ցնցումների հետ:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ՝
ՈՐՊԵՍ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՃԱՆԱԶԱԾ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

Ինչպես գրում է խաչքարագիտության ոլորտի հայտնի մասնագետը, «խաչքարը, որպես կանոն, բացօթյա միջավայրում ուղղաձիգ կանգնած, աշխարհի չորս կողմերի հանդեպ հստակ կողմնորոշում ունեցող քարասալ է, որի արեւմտահայաց տափակ երեսն զբաղեցնում է կենտրոնում տեղադրված խաչից եւ նրան ուղեկցող բուսա-երկրաչափական զարդերից, երբեմն էլ թռչունների, կենդանիների եւ մարդկային կերպարներից բաղկացած քանդակային հորինվածքը»²:

Խաչքարերը հայ ինքնության ամենաբնութագրական եւ յուրօրինակ խորհրդանիշներից են՝ դրա ինքնատիպ զարգացման ցուցիչները³, որոնք Ադրբեջանի հայատյաց քաղաքականության օրակարգի առաջնային թիրախներից են: Իր զարմանահրաշ քանդակներով, խաչի փրկագործական խորհրդաբանությամբ եւ քարի հավերժություն ներշնչող մշտականությամբ խաչքարը եղել եւ մնում են հայ ժողովրդի ամենաակնածելի, իսկ բազմաքանակությամբ, բացօթյա տեղադրությամբ՝ նաեւ ամենամատչելի սրբություններից մեկը⁴: Հարկ է նշել, որ ավելի քան հազարամյա պատմական ճանապարհ անցնելով՝ խաչքարերը նաեւ արդի մշակուլթային

² Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, *Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերազրույթունը, իմաստաբանությունը, Երեւան, 2008, էջ 9*, https://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/2001–2011/petrosyan_khachkar_2008.pdf:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում: Տե՛ս նաեւ՝ Khachkar.am. 2016. Cross stones. <https://www.khachkar.am/arm/>:

դրսեւորումներ են⁵: Վերջին երեսուն տարում հարյուրավոր նոր խաչքար է կանգնեցվել Արցախում:

Ու թեեւ խաչքարերն ինքնին նյութական մշակութային արժեքներ են, միեւնոյն ժամանակ նաեւ ոչ նյութական ժառանգության՝ ավանդույթների, հմտությունների, համայնքային, քրիստոնեական ծիսապաշտամունքային յուրահատուկ համակարգի արդյունք են: Դրանց դերն ու նշանակությունը գնահատվում է ոչ միայն խաչքարագործության՝ որպէս ինքնատիպ արվեստի⁶, կամ դրանց նյութականացված դրսեւորմամբ՝ խաչքարերով, այլեւ խաչքարերի կրած գաղափարական, փիլիսոփայական խոր նշանակությամբ, հմտություններով, հավատալիքներով ու ավանդական գիտելիքով: Այս ամենին զուգահեռ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտոնական կայքը հաստատում է, որ հայկական ավելի քան 50 000 խաչքարից յուրաքանչյուրն ինքնատիպ է: Ուստի դրանց մշակութային կարեւորությունը ոչ միայն առանձին խաչքարերի նշանակությունն է, այլեւ խաչքարերին ծնունդ տվող արհեստը՝ խաչքարագործությունը, ինչպէս նաեւ խաչքարի կրած խորհուրդը, քրիստոնեությունը, վերջինիս փրկագործական գաղափարը եւ ոչ նյութական այլ արժեքներ: Սա է պատճառը, որ ՄԱԿ-ից մշակութային ժառանգության պահպանության առաջնային մանդատ ունեցող վերազգային կառույցը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն, իր ոչ նյութական ժառանգության միջկառավարական կոմիտեի նիստին հայկական խաչքարային մշակույթը գնահատել է որպէս ոչ նյութական՝ ապրող, ինքնատիպ եւ դեռ արարվող ժառանգություն:

2010 թ. նոյեմբերի 15-ից 19-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության միջկառավարական կոմիտեի հինգերորդ նիստին, որն անցկացվել է Նայրոբիում, քննարկվել է «խաչքարի խորհուրդը, արվեստն ու խաչքարագործությունը» հայտը ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում»⁷ ներառելու հարցը: Կոմիտեի անդամ 25 երկրի քվեարկությամբ եւ նախագահ Ի. Բոկո-

⁵ Նույն տեղում, էջ 9:

⁶ Խաչքարը որպէս հայ ինքնության դրսեւորում, քրիստոնեության, փիլիսոփայության, ազգագրության, բանահյուսության, պատմագրության, վիմագրության, ճարտարապետության եւ քանդակագործության յուրահատուկ միաձուլում է: Ավելին, այն կրում է տարբեր արհեստների բնորոշ տարրեր՝ փորագրություն, ցանցային զարդեր, հանգուցներին եւ միահյուսման նախշեր, որոնք օգտագործվում են ասեղնագործության, գորգագործության եւ կիրառական այլ արվեստներում:

⁷ Նույն տեղում:

վայի հաստատմամբ հայտն ընդգրկվել է ցանկում՝ ընդգծելով վերջինիս մշակութային համընդհանուր արժեքի կարգավիճակը: Ի լրումն նշենք, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում ներառումը հաստատում է, որ խաչքարային մշակույթը համաշխարհային բացառիկ արժեք է, ունի ազգային սահմաններից դուրս եկող կարեւորություն եւ ենթադրում է, որ խաչքարագործությունն ու հետեւաբար վերջինիս նյութականացված դրսևորումները՝ խաչքարերը, ունեն ընդհանուր նշանակություն մարդկության ներկայի եւ ապագայի համար: Ներկայացուցչական ցանկն ունենալով ընգրկված տարրի ավելի մեծ տեսանելիության ապահովման, տարրի նշանակության գիտակցման եւ դրա մասին տեղեկացվածության բարձրացման նպատակ՝ վերջին տարիներին ընդլայնել է խաչքարերի մասին միջազգային տեղեկացվածությունը եւ նպաստել հանրահռչակմանը: Բայց, ինչպես մենք կտեսնենք ստորեւ, Ադրբեջանը ոչնչացնում է Արցախի խաչքարերը՝ մարդկության պատմությունից ջնջելով համամարդկային արժեքը, հարվածելով նաեւ բազմամշակութայնության եւ հանդուրժողականության գաղափարներին:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկի պաշտոնական կայքը, իր բնութագրումների մեջ հիմնվելով նաեւ Հ. Պետրոսյանի վերոհիշյալ աշխատություն վրա, նշում է, որ խաչքարերը՝ մինչեւ 1,5 մետր բարձրությամբ քարից քանդակված բացօթյա կոթողներ եւ ծիսական նշանակության քարեր են, որոնք ապահովում են աշխարհիկ եւ աստվածայինի հաղորդակցությունը եւ սրբացնում, օծում մշակութային բնատեսարանը (լանդշաֆտ)⁹: Խաչն իր մեջ ներառում է եւ հաղթանակի, եւ փրկագործական գաղափարաբանությունը եւ տիեզերքի կենտրոնում ներկայացված է որպես դրախտի լեռան վրա գտնվող կյանքի ծառ՝ ցույց տալով ապագան եւ հավերժությունը¹¹:

⁹ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին պայմանագրություն, Փարիզ, 2003, հոդված 16:

⁹ Խաչքարի հորինվածքն ունի եռամաս կառուցվածք, միջին հատվածում խաչածառն է, ներքեի հատվածը խորհրդանշում է երկիրը, վերեւինը՝ երկինքը: Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Intergovernmental Committee for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Fifth session, Nairobi, Kenya, November 2010, Nomination File № 00434, for inscription on the Representative List of the Intangible Cultural Heritage in 2010. <https://ich.unesco.org/doc/src/07493-EN.pdf>:

¹⁰ ՏԷՍ UNESCO, Armenian cross-stones art. Symbolism and craftsmanship of Khachkars, <https://ich.unesco.org/en/RL/armenian-cross-stones-art-symbolism-and-craftsmanship-of-khachkars-00434>:

¹¹ ՏԷՍ Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Intergovernmental Committee for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Fifth session, Nairobi, Kenya, November 2010, Nomination File № 00434, for inscription on the Representative List of the Intangible Cultural Heritage in 2010:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն նաեւ հավելում է, որ օժվելուց հետո¹² խաչքարը ձեռք է բերում սրբազան զորութիւն եւ համայնքի համար կարող է լինել պաշտպանութեան, հաղթանակի, կյանքի եւ հիշատակի խորհրդանիշ¹³: Խաչքարերի շատ մանրամասներ խորհրդանշում են Քրիստոսի հարութիւնը եւ միջնորդութիւն են ներկա կենսընթացի մարդկանց եւ հանգուցյալների հոգու փրկութեան համար¹⁴: Այս պատկերացումներն ընդգծում են խաչքարերի նշանակութիւնը ոչ միայն որպէս ճարտարապետական գլուխգործոցներ, դրանք անփոխարինելի դերակատարում եւ սրբազան նշանակութիւն ունեն նաեւ մարդկանց եւ համայնքի կյանքում:

Խաչքարերի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցչական ցանկում ներառումը հաստատում է, որ խաչքարային արվեստն ու հենց խաչքարերը համայնքի համար կարեւոր «գործունեության, ներկայացումների, արտահայտութիւնների, գիտելիքների, հմտութիւնների, ինչպէս նաեւ դրանց հետ կապված գործիքների, առարկաների, գտածոների եւ մշակութային տարածքների» շարքում են¹⁵: Ընդ որում՝ այստեղ ուշադրով է հատկապէս այն, որ համայնք ասելով՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն նկատի ունի բոլոր այն խմբերը, որոնք գնահատում են այդ արժեքը՝ չսահմանափակելով վերջինիս շրջանակը: Բացի այդ՝ ցանկում ներառումը նշանակում է, «որ համայնքները, խմբերը եւ, որոշ դեպքերում, անհատները ճանաչում են խաչքարային արվեստը որպէս իրենց մշակութային ժառանգության մաս¹⁶»: Այստեղ շատ կարեւոր է ավելացնել, որ եթէ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1972 թ. «Համաշխարհային նյութական մշակութային ժառանգության ցանկում» որեւէ տարրի ընդգրկումը պահանջում է ազգային պետութեան կողմից ներկայացում եւ որոշումների կայացում, ապա ոչ նյութական ժառանգության՝ դիցուք

¹² Գոյութիւն է ունեցել խաչքարը կանգնեցնելու եկեղեցական հատուկ ծես: Հատկապէս ուշադրով է գինով օծումը. խաչքարի դեպքում, որի հորինվածքի գրեթէ պարտադիր տարրերից էին խաղողի ողկուղները կամ նուրը, գինով օծումն ընկալվում էր որպէս աստվածային արշունով օծում: Խաչքարային բազմաթիւ արձանագրութիւններ խաչքարը ներկայացնում են հենց որպէս աստվածային արշամբ օծված: ՀՀ ԿԳՄՄՆ, ՀՀ Ոչ նյութական մշակութային ժառանգութիւն, խաչքարագործութիւն, <https://int-heritage.am/xhachkar-making/>:

¹³ Տե՛ս UNESCO, Armenian cross-stones art. Symbolism and craftsmanship of Khachkars, <https://ich.unesco.org/en/RL/armenian-cross-stones-art-symbolism-and-craftsmanship-of-khachkars-00434>:

¹⁴ Տե՛ս Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Intergovernmental Committee for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Fifth session, Nairobi, Kenya, November 2010:

¹⁵ Տե՛ս Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Intergovernmental Committee for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Fifth session, Nairobi, Kenya, November 2010. Safeguarding Measures (Cf. Criterion R.3), 3.a:

¹⁶ Նույն տեղում՝ Safeguarding Measures (Cf. Criterion R.3), 3.b:

խաչքարագործության դեպքում, տարրի ներկայացման, բնութագրման հիմքում համայնքն է¹⁷ (եւ ոչ թե պետությունը): Ու թեեւ հայտը ներկայացնում է պետությունը, բայց հայտի գաղափարական, ներկայացման հիմքում համայնքն է, ուստի հենց համայնք է սահմանում այն¹⁸:

Կարելի է արձանագրել, որ համայնքը կարող է լինել թե՛ ազգային պետության՝ ՀՀ սահմանների ներսում եւ թե՛ ազգային պետության սահմաններից դուրս՝ ներառելով թե՛ Սփյուռքը եւ թե՛ Արցախը: Փաստորեն համայնքները՝ ներառյալ ՀՀ-ի, Արցախի, Սփյուռքի արհեստագործական խմբերը, դպրոցները, կրթական կենտրոնները, անհատները (խաչքարագործ վարպետները) եւ խաչքարի գաղափարը սերունդներին փոխանցող մարդիկ, ըստ համաձայնագրի եւ ներկայացուցչական ցանկի չափանիշների, դառնում են ոչ նյութական մշակութային ժառանգության սեփականատերեր, քանզի հենց նրանք են սահմանում այն, փոխանցում սերունդներին եւ ապահովում գործունեության պահպանումը¹⁹: Այս տեսանկյունից խնդրի դիտարկումը թույլ է տալիս մեզ պնդել, որ Արցախի խաչքարերը, թեեւ գտնվում են ՀՀ-ի՝ ՄԱԿ-ի ճանաչած սահմաններից դուրս, բայց լիարժեքորեն համարվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցչական ցանկի արժեքներ, քանի որ ճանաչվել են որպես համամարդկային ժառանգություն՝ ըստ համայնքի համար ունեցած նշանակության եւ ոչ ըստ պետական սահմանների ներսում գտնվելու փաստի, եւ ունեն միջազգային պաշտպանության համարժեք իրավունք, ինչը որ կունենար ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում ընդգրկված ցանկացած այլ տարր՝ աշխարհի ցանկացած կետում:

Ավելորդ չենք համարում նշել, որ ոչ նյութական ժառանգության ներկայացուցչական ցանկի յուրաքանչյուր արժեք՝ դիցուք խաչքարագործությունը կամ դրա նյութականացված դրսևորումները՝ խաչքարերը, պետք է

¹⁷ Ըստ Ֆարոյի համաձայնագրի՝ «Ժառանգությունը կրող համայնքը բաղկացած է նրանցից, ովքեր արժեւորում են մշակութային ժառանգության՝ իրենց նախընտրած առանձնահատուկ կողմերը՝ հանրային գործունեության շրջանակներում պահպանելու եւ ապագա սերունդներին փոխանցելու նպատակով» (Council of Europe Framework Convention on the Value of Cultural Heritage for Society, art. 2b):

¹⁸ Տե՛ս A. VRDOLJAK, Cultural Heritage in Human Rights and Humanitarian Law, “International human rights and humanitarian law”, Oxford University Press, 2011, էջ 281:

¹⁹ Տե՛ս K. HALLUCINOGEN, The Protection of Intangible Cultural Heritage in Armed Conflict: Dissolving the Boundaries Between the Existing Legal Regimes? “Santander Art and Culture Law Review”, 2017, № 2, էջ 109–134:

«փոխանցվեն սերնդից սերունդ եւ մշտապես վերստեղծվեն համայնքների եւ խմբերի կողմից՝ իրենց միջավայրի, բնության, պատմության հետ փոխազդեցությամբ»²⁰: Քանզի հաստատված է, որ ցանկում ընդգրկված արժեքները՝ խաչքարերը, համայնքներին եւ խմբերին ապահովում են «ինքնության եւ շարունակականության զգացումով»²¹: Այս առումով ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախագահը 2010 թ. Քենիայում տեղի ունեցած միջկառավարական կոմիտեի նիստին հաստատել է, որ ցանկում ընդգրկված արժեքներին՝ ներառյալ խաչքարերի համար ՅՈՒՆԵՍԿՕ-ն ստանձնում է պաշտպանության երկարաժամկետ առաքելություն եւ հաստատում հանձնառություն՝ երաշխավորելու տարրի հանդեպ համերաշխություն, հարգանք եւ փոխըմբռնում²²: Տարրի պաշտպանության եւ հարգանքի այս սկզբունքը հաստատվում է նաեւ ներկայացուցչական ցանկի երկրորդ չափանիշով՝ ամրագրելով, որ խաչքարերը նպաստում են նաեւ տարբեր ազգերի միջեւ երկխոսությանը՝ այդպիսով արտացոլելով մշակութային բազմազանության հանդեպ հարգանքը ողջ աշխարհում²³: ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավար Օդրի Ագուլեն ցանկում ներառված արժեքների վերաբերյալ նշել է. «Կարեւոր է, որ ցանկում ներառված արժեքները, հմտություններն ու հասարակական գործունեությունը շարունակեն գոյություն ունենալ ապագայում»²⁴: Այս իմաստով Ադրբեջանի կողմից Արցախի ցանկացած խաչքարի ոչնչացումն ուղղակիորեն խաթարում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում ներառած տարրերի միջազգային պաշտպանության հանձնառությունը եւ հակասում վերջինիս նպատակներին, առաքելությանն ու սկզբունքներին: Խաչքարերի ոչնչացումը խաթարում է նաեւ ապագա սերունդներին դրանք նյութական եւ ոչ նյութական՝ գիտելիքի կերպով փոխանցման հնարավորությունը, ինքնության ամբողջականությունն ու շարունակականությունը:

²⁰ *Տե՛ս* Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Intergovernmental Committee for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Fifth session, Nairobi, Kenya, November 2010. Safeguarding Measures (Cf. Criterion R.3), 3.c, <https://ich.unesco.org/doc/src/07493-EN.pdf>:

²¹ *Նույն տեղում՝* Safeguarding Measures (Cf. Criterion R.3), 3.d:

²² *Տե՛ս* Address by Ms. Irina Bokova, Director-General of UNESCO, on the occasion of the fifth session of the Intergovernmental Committee for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Nairobi, 15 November 2010. <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000189974>:

²³ *Տե՛ս* UNESCO, Inscription on the Representative List, Criteria. <https://ich.unesco.org/en/procedure-of-inscription-00809>:

²⁴ *Տե՛ս* World Economic forum, What is UNESCO's list of intangible cultural heritage? And what's on it?:

**ԽԱԶՔԱՐԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄՆ ԱՐՑԱԽՈՒՄ
ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020–2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

2020 թ. սեպտեմբերին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի նպատակը ոչ միայն տարածքային նվաճումներն էին, այլև արցախահայ համայնքի հասարակական կառուցվածքի խարխուլումը, նրա ինքնության խաթարումը եւ արցախահայերի՝ իրենց պատմական բնօրրանում ապրելու հիմնարար իրավունքի ժխտումը: Այս պատերազմն ուղղակիորեն միտված էր Արցախի անցյալի եւ ներկայի իրեղեն ապացույցները ջնջելուն: Նման ավերածություններից հատկանշական էր Հադրութի շրջանի Առաքել գյուղի խաչքարի (նկ. 1ա) ոչնչացումը²⁵: Տարածված տեսանյութից պարզ է դառնում, որ զինված ադրբեջանցիները, կանխամտածված կերպով, հատուկ մեքենայի միջոցով գետնին են տապալում խաչքարը՝ ցուցաբերելով բացառիկ անհանդուրժողականություն եւ խտրական վերաբերմունք (նկ. 1բ): Այս առնչությամբ հարկ է մեջբերել միջազգային քրեական դատարանի դատախազ Ֆաթուռ Բենսուդ-դայի խոսքերը. «Հարձակումը դավանանքի եւ հոգեւոր հուշարձանների վրա ոչնչացնում է ժողովրդի արմատները եւ անդառնալիորեն ազդում նրա սոցիալական պրակտիկայի ու կառուցվածքի վրա»²⁶:

Մեկ այլ ակնառու օրինակ է Հադրութ քաղաքի ազատամարտիկների հուշահամալիրի խաչքարի²⁷ ոչնչացումը (նկ. 2բ), որին նախորդել էին նույն խաչքարի եւ Արցախյան պատերազմում Հադրութի շրջանում զոհված ազատամարտիկներին նվիրված հուշարձանի պղծումը եւ ադրբեջաներեն գրություններով անարգումը (նկ. 2ա):

Արցախի պատմական գերեզմանոցների տարածքներում տեղադրված խաչքարերը նույնպես վայրենաբարո բնազդի թիրախ են դարձել: Այդպիսի օրինակներից է Լաչինի պատմական գերեզմանոցի ԺԴ. դարի եզակի խաչքարի (նկ. 4), ինչպես նաեւ ԺԵ.–ԺԶ. դարերով թվագրվող մի շարք խաչքարերի²⁸ ոչնչացումը: Այս գործողությունները կատարվում են

²⁵ ՏԷՍ RA MFA Spokesperson Anna Naghdalyan. Press release on Twitter. Posted on January 12, 2021, https://twitter.com/naghdalyan/status/1348922661318103040?ref_src=twsrc%5Etfw%7Ctwcamp%5Etweetembed%7Ctwterm%5E1348922661318103040%7Ctwgr%5E%7Ctwcon%5Es1_&ref_url=%3A%2F%2Fyerkimedia.am%2Fhy%2Farticle%2F2021%2F01%2F12%2F31680:

²⁶ ՏԷՍ International Criminal Court, Statement of the Prosecutor of the International Criminal Court, Fatou Bensouda, at the Opening of Trial in the Case Against Mr Ahmad Al-Faqi Al Mahdi, 22 August 2016, <https://www.icc-cpi.int/legalAidConsultations?name=otp-stat-al-mahdi-160822>:

²⁷ ՏԷՍ Monument Watch. 2021. “Destruction of the Memorial to the Soldiers in Hadrut.” <https://monumentwatch.org/en/alerts/destruction-of-the-memorial-to-the-soldiers-in-hadrut/>:

²⁸ ՏԷՍ Monument Watch. 2023. Destruction of the Cemetery and Khachkars in Lachin. <https://monumentwatch.org/en/alerts/destruction-of-the-cemetery-and-khachkars-in-lachin/>:



Նկ. 1ա. Արցախի Հանրության շրջանի Առաքել գյուղի Վերածննդի խաչքարը մինչ 2020 թվականի 44-օրյա պատերազմը: Լուսանկարը՝ Սասուն Դանիելյանի



Նկ. 1բ. Արցախի Հանրության շրջանի Առաքել գյուղի խաչքարը ոչնչացվում է ադրբեջանցիների կողմից



Նկ. 2ա. Արցախի Հանրության ֆաղափ ազատամարտիկների հուշահամալիրը եւ խաչքար



Նկ. 2բ. Արցախի Հանրության ֆաղափ ազատամարտիկների հուշահամալիրի խաչքարը քիրախավորվել է ադրբեջանցի զինվորականի կողմից



Նկ. 3ա. Արցախի Կավաֆավանֆ եկեղեցիում կից խաչքարը՝ մինչ 2020 թվականի 44-օրյա պատերազմը: Լուսանկարը՝ www.monumentwatch.org կայքից



Նկ. 3բ. Արցախի Կավաֆավանֆ եկեղեցու կից խաչքարը, 2015 թ., լուս. Գ. Բուդաղյանի: Ներբեռնված է՝ www.monumentwatch.org կայքից



Նկ. 3գ. Արցախի Կավաֆավանֆ եկեղեցու կից խաչքարը անհետացել է: Լուսանկարը՝ 2023 թ. հունիսի 14-ին ադրբեջանական կալիում տեղադրված տեսանյութից է առանձնացված:



Photo credit: Zohrab Yrkoya

Նկ. 4. Լաչինի պատմական գերեզմանոցի 14-րդ դարի եզակի խաչքարը կանգուն է և աննետացած



Նկ. 5ա. Արցախի Քաշաթաղի Աղանուս գյուղի աղբյուր-հուշարձանին կից՝ երկու խաչքարերը մինչ 2020 թվականի 44-օրյա պատերազմը:
Լուսնանկարը՝ www.monumentwatch.org կայքից



Նկ. 5բ. Արցախի Քաշաթաղի Աղանուս գյուղի աղբյուր-հուշարձանին կից՝ երկու խաչքարերը ոչնչացված:
Լուսնանկարը՝ www.monumentwatch.org կայքից



Նկ. 6ա. Արցախի
Մարտակերտ ֆաղափի
Սիմոնի աղբյուր խաչքարը՝
մինչ 44-օրյա պետարգմբ,
որը կանգնեցված էր
Դանիել Վարուժանի
փողոցում 2021 թվականին



Նկ. 6բ. Արցախի
Մարտակերտ ֆաղափի
Սիմոնի աղբյուր խաչքարը
ոչնչացված: Ավերված
խաչքարը երևում է
տեսանկյունի 3:41 րոպեից
[https://www.youtube.com/
watch?v=j_adHIqyHUA](https://www.youtube.com/watch?v=j_adHIqyHUA)



Նկ. 7ա. Արցախի
Հադրուքի շրջանի
Ուխտաձորի
խաչքարը՝ մինչ
44-օրյա պատերազմը:
Լուսանկարը՝
www.monumentwatch.org
կայքից:



Նկ. 7բ. Արցախի
Հադրուքի շրջանի
Ուխտաձորի
խաչքարը՝ մինչ
44-օրյա պատերազմը:
Լուսանկարը՝ ararathau
տեղեգրամյան ակիբից

ճանապարհաշինարարական աշխատանքների քողի տակ: Այսպես անհետ ոչնչանում են նոր կառուցվող ճանապարհների մոտ գտնվող պատմական տարածքները: Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող Մատաղիսում 2022 թ. ավերվել են «Արցախյան պատերազմի վետերանների միության» մատուռն ու շրջակայքի խաչքարերը²⁹, իսկ Շուշիի հայ-հունական հին գերեզմանոցի տարածքում ոչնչացվել ԺԲ.–ԺԳ. դարերի եզակի խաչքարերը: Ադրբեջանական ցեղասպան քաղաքականությամբ ոչնչացվել են նաև Արցախի Հադրութի շրջանի Ուխտաձորի (նկ. 7ա, 7բ) եւ Ուրտան քաղաքի³⁰ Արցախյան ազատամարտին նվիրված խաչքարերը:

Խաչքարերի ոչնչացման գործողությունները Հադրութում ընդգծվել են նաև Կավաքավանք եկեղեցու տարածքում, որը գտնվում է Տողից Վարանդա (Ֆիզուլի) տանող ճանապարհից ձախ՝ հարթավայրից առանձնացող մի բլրի վրա (նկ. 3ա, 3բ): Հարկ է նշել, որ 2020 թ. հոկտեմբերի 12–14-ը Կավաքավանքի շրջակայքում մարտեր են ընթացել, տարածքը ենթարկվել է հրետակոծության: Բացի այդ՝ ադրբեջանցի զինվորականները եկեղեցին օգտագործել են որպես ռազմական հենակետ, ինչի հետեւանքով կառույցի զարդաքանդակներն ու հայերեն արձանագրությունները զգալիորեն տուժել եւ ոչնչացվել են: Վանքի վնասման հետ մեկտեղ վնասվել է նաև պատմական բնատեսարանը եւ ոչնչացվել է դեռեւս 1995 թ. տեղադրված խաչքարը³¹ (նկ. 3գ):

Պետք է նշել, որ 2023 թ.՝ Արցախի ամբողջական հայաթափումից հետո, խաչքարերի ոչնչացումը ոչ միայն չի դադարել, այլևս նոր թափ է ստացել: Արդեն 2024 թ. Մարտակերտում ոչնչացվել է Սիմոնի աղբյուրի 2021 թ. հոկտեմբերին կանգնեցված հուշարձան-խաչքարը (նկ. 6ա, 6բ): Ավերվել են նաև Քաշաթաղի Աղանուս գյուղի աղբյուր-հուշարձանին կից կանգնեցված երկու խաչքարերը³² (նկ. 5ա, 5բ):

Շարունակությունը՝ հաջորդիվ

²⁹ Saku Monument Watch. 2022. Destruction of Khachkars Caused by Azerbaijan in the Occupied Territories of Artsakh. <https://monumentwatch.org/en/alerts/destruction-of-khachkars-caused-by-azerbaijan-in-the-occupied-territories-of-artsakh/>:

³⁰ Saku Medium. Church and Memorial Desecration in Post-ceasefire Nagorno Karabakh. <https://medium.com/dfrlab/church-and-memorial-desecration-in-post-ceasefire-nagorno-karabakh-87ece968af3f>:

³¹ Saku Monument Watch. 2023. The Kavakavank Church is Losing its Original Appearance. <https://monumentwatch.org/en/alerts/alert-the-kavakavank-church-is-losing-its-original-appearance/>:

³² Saku Monument Watch. 2023. Azerbaijan's Destruction of the Spring-Monument in Aghanus Village, Kashatagh Region. <https://monumentwatch.org/en/alerts/azerbaijans-destruction-of-the-spring-monument-in-aghanus-village-kashatagh-region/>:



ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ «ԿՆԻՔ ՀԱՒԱՏՈՅ» ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ՝

Յետգասական շրջանի հայերէնի զարգացումն ընթանում է լեզուի կառուցուածքային տարրերի զանազան փոփոխութիւններով, որոնք լեզուն հեռացնում են իր դասական վիճակից: Կառուցուածքային այդ փոփոխութիւններն ընթանում են երկու ուղիով՝ ներքին՝ քանակական եւ որակական փոփոխութիւնների, եւ արտաքին՝ լեզուի վրայ հասարակական-քաղաքական կեանքի ունեցած ազդեցութեան: Արսէն Այտընեանը գրում է, որ այսուհանդերձ՝ «ամեն երեւոյթ կմիաբանի հաստատելու, որ այս ժամանակներուս (Ը.-ԺԳ. դարուց) սկիզբները մեր գրաբարն իրենց ալ իրօք գրաբարն էր. այսինքն՝ գրոց եւ գրագիտաց սեպհական մնացած լեզու»², որով ստեղծագործել են հայ դպրութեան անուանի ներկայացուցիչներ Անանիա Շիրակացին, Դաւթակ Քերթոզը, Կոմիտաս կաթողիկոսը, Յովհ. Դրասխանակերտցին եւ այլք՝ իրենց հեղինակային ոճի կնիքը թողնելով լեզուի զարգացման, մասնաւորապէս հայերէնի բառային կազմի հարստացման գործում:

«Կնիք հաւատոյ» դաւանաբանական ժողովածուն գիտութեանը յայտնի է դարձել ԺԳ.-ԺԵ. դդ. մէկ ընդօրինակումով, որը 1911 թ. Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայ վանքում յայտնաբերել եւ 1914 թ. ընդարձակ ներածականով կազմել եւ հրատարակել է Կարապետ եպս. Տեր-Մկրտչեանը³: Բնագիրը, որտեղ երկխօսութեան ձեւով տրուած է Հայ եւ Յոյն եկեղեցիների դաւանական, ծիսական, աստուածաբանական ըմբռ-

¹* Ստացուել է՝ 2.02.2024, գրախօսուել է՝ 4.04.2024: էլ. հասցէ՝ susannagrigoryan@ysu.am:

² Ա. ԱՅՏԸՆԵԱՆ, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Երեւան, 1987, էջ 133:

³ «Կնիք հաւատոյ Հնդհանուր Սուրբ Եկեղեցւոյ», Ս. Էջմիածին, 1914:

նումների ամփոփ նկարագիրը, յանձնարարուել է ընթերցել եկեղեցական կարեւորագոյն տօների՝ Ծննդեան, Տեառնդառաջի եւ Զատիկ օրերին: Այն նպատակ էր հետապնդում ամրապնդելու Հայ եկեղեցու դիրքերը Զ. դարի վերջում եւ է. դարի սկզբում սրուած դաւանական պայքարում, մերժում էր հերձուածները Հայ եկեղեցու մեծ հեղինակների, սուրբ հայրերի ու վարդապետների վկայակոչումներով: Բացի դրանից՝ այն կարեւոր դեր է կատարել հայ ժողովրդի ինքնուրոյնութեան համար մղուած պայքարում եւ բացառիկ նշանակութիւն ունի նաեւ հայ թարգմանական մատենագրութեան համար:

«Կնիք հաւատոյ» դաւանաբանական ժողովածուն կազմուել է Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի⁴ յանձնարարութեամբ եւ ներկայացուել է իբրեւ նրա ժառանգութեան կարեւոր մի դրուագ: Այն յօդուել է յոյն աստուածաբան Տիմոթէոս Կուզի «Հակաճառութիւն...» երկի օրինակով, ունի հակաքաղկեդոնական, հականեստորական ուղղուածութիւն: Ժողովածուի իւրաքանչիւր գլուխ նուիրուած է դաւանական մի խնդրի:

Սոյն հետազօտութիւնը կատարելիս մենք օգտուել ենք «Մատենագիրք Հայոց» ժողովածուի էջերում ներկայացուած բնագրից⁵, որը հրատարակուել է Մաշտոցեան Մատենադարանի թիւ 5349 եւ 83 ձեռագրերի հիման վրայ: Անդրադարձել ենք մասնաւորապէս հատորում տեղ գտած նորակազմութիւնների բառակազմական կաղապարների գործառական հնարաւորութիւններին, դրանց կազմութեան եղանակներին: Առանձնայատուկ են այստեղ գործածուած նորաբառերն իրենց բազմազան դրսեւորումներով եւ խորիմաստ բաղադրութիւններով, որոնք պայմանաւորում են խօսքի մէջ ճիշտ բառընտրութիւնն ու բառագործածութիւնը: Դիպուկ ընտրուած նորակազմութիւններն օգնում են սեղմ կառույցների

⁴ Կոմիտաս կաթողիկոսի կեանքի եւ գործունէութեան մասին որոշակի տեղեկութիւններ է տալիս Սեբէոս պատմիչը: Կոմիտաս կաթողիկոսը ծնուել է Արագածոտն գաւառի Աղցք գիւղում, ուսումն ստացել Դուինում Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսի օրօք: Ծաւալել է եկեղեցաշէն գործունէութիւն. նրա անուան հետ են կապուել Ս. Հռիփսիմէ տաճարի կառուցումը, ինչպէս նաեւ Ս. Էջմիածնի տաճարի նորոգումը: Սեբէոսը պատմում է, որ 618 թ. Կոմիտաս կաթողիկոսը վերանորոգելու նպատակով քանդուել է Ս. Հռիփսիմէի՝ Վաղարշապատում կառուցուած հին մատուռը, «գի կարի ցած եւ մթին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի Հայոց կաթողիկոսի...» (Սեբէոս եպիսկոպոս, «Պատմութիւն», Թիֆլիս, 1913, էջ 141): Կոմիտաս Աղցեցին նաեւ հայ շարականագրութեան նշանաւոր ներկայացուցիչներից է: Յայտնի եւ տարածուած է նրա Ս. Հռիփսիմեանց «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» շարականը, որ հայ բանաստեղծութեան, առաջին բանակապաւոր նմուշն է:

⁵ Հտ. Դ., է. դար, Անթիլիաս–Լիբանան, 2005, էջ 49–311:

ձեւաւորմանը, խօսքաշարի թարմութեանը: Այդ բառերի՝ առաջին անգամուայ համար անսովոր հնչումը կամ գրութիւնը, միախառնուելով խօսքի կառուցման միջոցներին, հոգեբանական ուժեղ եւ ներգործող ազդակ են դառնում՝ ընթերցողի ուշադրութիւնը գրաւելիս: Ըստ մեր հաշուումների՝ ժողովածուում տեղ են գտել հարիւրից աւելի նոր բառեր՝ ի համեմատութիւն գրաբարի յայտնի բառարանների⁶: Մեր ուսումնասիրութիւնից պարզ դարձաւ, որ նորակազմութիւնների առիւծի բաժինը այն բառերն ու բառաձեւերն են, որոնք վերոնշեալ բառարաններից որեւէ մէկում արձանագրուած չեն: Քսան նորակազմ բառ գտել ենք Լ. Յովհաննիսեանի բառարանում՝ արժանակաւ (201), աստուածուսումն (171), արժանասման (193), բացաշայայտ (226), դարմանասէր (60), դոմատես (293), դիւրամոլար (162), եռադէմ (73), երեւայարմար (162), լուսածութիւն (171), հոգովացուցանել (58), նախապատճառութիւն (58), ներմակել (132), ներմեմել (132), նմանագիր (67), ուղղաբայել (203), վայրաբկանել (190), պարենաբուծել (295), փոքրավայելութիւն (191), քառաւատել (85): Բերենք օրինակներ.

Բացաշայայտ՝ ակներեւ, ակնյայտ. «Որպէս զի իւր երեւեալ մարդկութիւնն բացաշայայտ պարկեշտութիւն երեւեսցի» (226):

Դիւրամոլար՝ հեշտութեամբ մոլորուող, խաբուող. «Որպէս եւ ի սկզբանն, եւ զդիւրամոլար միտս մարդոյն» (162):

Նախապատճառութիւն՝ սկզբնապատճառ, Աստուած. «Ըստ նախապատճառութեան ապաքէն իրաւ արդար զհայր անուն նախաձայնել» (58):

Փոքրավայելութիւն՝ նուաստութիւն. «...եղեւ մարդ ի նուաստութեան եւ ի փոքրավայելութեան» (191):

Առձեռն բառարանում արձանագրուած հինգ բառերին՝ անեղբայր (56), աներկբանալի (58), առաջապատում (156), անթարգմանապէս (300), առստանալ (103), մենք վերապահութեամբ ենք վերաբերվում, քանի որ դրանք չունեն բնագրային վկայութիւններ՝ հաստատելու համար բառի սկզբնաղբիւրը, սակայն յօդուածում դրանք ներառել ենք՝ այլ բառարաններում վկայուած չլինելու հանգամանքով պայմանաւորուած:

⁶ Տէն Գ. ԱՌԵՏԻՔԵԱՆ, Խ. ՍԻՐՄԷԼԵԱՆ, Մ. ԱՌԳԵՐԵԱՆ, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. 1–2, 1979 (այսուհետ՝ ՆՀԲ): Մ. ԱՌԳԵՐԵԱՆ, ԳՐ. ՃԷԼԱԼԵԱՆ, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865 (այսուհետ՝ ԱԲ): Ռ. ՂԱԶԱՐԵԱՆ, Գրաբարի բառարան, Եր., 2000 (այսուհետ՝ ԳԲ): Լ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Նոր հայկազեան բառարանում չվկայուած բառեր, Եր., 2010: Ռ. ՂԱԶԱՐԵԱՆ, Հ. ԱՌԵՏԻՍԵԱՆ, Նորայայտ բառեր գրաբարում, Եր., 2007: Լ. ԽԱԶԱՐԵԱՆ, Գրաբարի բացատրական բառարան, Եր., 2003:

Քննուող երկում շրջանառության մէջ են դրուած հայերէնի բառաբարդման եւ ածանցման անսպառ հնարաւորութիւնները՝ կազմելու համար այնպիսի նորաբառեր, որոնց մեծ մասը կարող է հաստատել իր իրաւունքը՝ որպէս մեր լեզուին ոչ օտար, օրինաչափ եւ նպատակային: Դրանք ստեղծուել են ներլեզուական օրինաչափութիւնների պահպանումով, ունեն յստակ նշանակութիւն, բարեհունչ են, չեն հակասում հայերէնի բառակազմութեան օրինաչափութիւններին, եւ հնարաւոր է՝ ձեռք բերեն գործածութեան աւելի լայն շրջանակ: Սակայն երբեմն նորաստեղծ կազմութիւնները դժուարըմբռնելի են, անսպասելի, նոյնիսկ ինչ-որ չափով արհեստական: Սրանց մտալիցացումը, սակայն, բացատրուում եւ արդարացուում է ժողովածուի բովանդակային որոշակի իւրայատկութիւններով, հոգեւոր բնոյթով, հեղինակային միտումներով: Անհերքելի է, որ գործաբանական առումով նշուած բառերը երբեք չեն համալրելու հայերէնի կենսունակ եւ գործուն բառապաշարի կազմը: Նոյնիսկ հակառակը, ինչ արագութեամբ ստեղծուել են, գրեթէ նոյն արագութեամբ էլ մոռացուելու են: Այսուհանդերձ, ինչպէս նշուում է ընդհանրապէս նորակազմութիւնների առիթով, «նոր բառի ստեղծման ժամանակ գրողի նպատակը ոչ թէ գրական լեզուն հարստացնելն է, այլ զգացմունքը, միտքը անհրաժեշտ նրբերանգներով, ոճական պատշաճ որակով արտայայտելը»⁷:

Նորակազմ բառերի մէջ, ըստ խօսքիմասային պատկանելութեան, գերակշռում են ածականները՝ անհայրական (300), մարդատեսիկ (158), վրիպախոն (149) եւ այլն: Քանակով զիջում են գոյականները եւ բայերը, ընդ որում ժողովածուում յատկանշական են -առ նախդրով ստեղծուած բայական կազմութիւնները՝ ըստ երեւոյթին աւելի սաստկացնելու համար գործողութեան գաղափարը՝ առբաշխել (136), առբողոմել (124), առնթերակցել (198), առհարստանալ (175), առմածուցանել (303) եւ այլն: Բաղադրեալ բառերը ներկայացրել ենք երկու տիպով՝ յօդակապով եւ անյօդակապ բարդութիւններ, որոնցից յաճախուած է առաջինը, իսկ անյօդակապ բարդութիւնները փոքրաթիւ են: Կրկնութիւնից խուսափելու համար դրանք առանձնացրել ենք ըստ բարդութիւնների բաղադրիչների խօսքիմասային արտայայտութեան: Նորակազմ բարդութիւնների կառուցուածքային կաղապարները մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում իրենց բազմազանութեամբ՝ ա) գոյական+գոյական՝ աստուածուսումն (171), վրիպախոն

⁷ Ս. ՄԵԼԻՍԵԱՆ, Ակնարկներ հայոց լեզուի ոճաբանութեան, Եր., 1984, էջ 174:

(149), բ) գոյական+բայ՝ դռնատես (293), պարենաբուծել (295), գ) գոյական+ածական՝ աստուածհասու (171), մարդատեսիկ (158), շինակից (118), դ) ածական+բայ՝ առաջագուշակ (158), առաջապատում (156), դիւրամուլար (162), հասարակագործ (200), նմանագիր (67), վատապատահ (194), ուղղափառ (203), ե) ածական+գոյական՝ առաջընծայ (155), խոնարհաձեռ (152), ուղղապաշտումն (124), զ) մակբայ+բայ՝ տգիտաբարադիր⁸ (96), է) թուական+գոյական՝ եռադէմ (73), ը) թուական+ածական՝ երեքայարմար (76), թ) թուական+բայ՝ երկհամարել (63), ժ) դերանուն+գոյական՝ իւրեանցանձ (67):

Ինչպէս գիտենք, գրաբարի բառակազմութեան երկրորդ եղանակն ածանցումն է, որի հիմնական կաղապարը մէկ հիմնական եւ մէկ երկրորդական ձեւոյթի, այսինքն՝ ածանցի բաղադրութիւնն է: Մենք ածանցմամբ ստեղծուած նորակազմ բառերն առանձնացրել ենք՝ ա) ըստ հիմնական ձեւոյթի նկատմամբ ածանցի գրաւած դիրքի՝ նախածանցաւոր եւ վերջածանցաւոր կաղապարներ, բ) ըստ սերող հիմքի կազմութեան, գ) ըստ ածանցների՝ նորակազմ բառեր կերտելու յաճախականութեան: Նախածանցաւոր նորակազմութիւնները ներկայացնում են հետեւեալ կաղապարները. 1) միարմատ մէկ նախածանցով կազմութիւններ՝ ան-՝ անգաղ (210), անեղբայր (56), չ-՝ չգաղ (61), գեր-՝ գեր/ա/միտ (117), համ-՝ համակոյս (174), վեր-՝ վերաբուն (118), վեր/ա/կատար (117), վերակնիք (67): 2) վերջածանցով ձեւաւորուած երկրորդային հիմքերով նախածանցաւոր կազմութիւններ՝ ան....ական՝ անհայրական (300), անպատճառական (83), ան..../ա/ պէս՝ անխոտանապէս (196), անթարգմանապէս (300), ան....ի՝ անխնդրելի⁹ (76), ան....ութիւն՝ անծառայութիւն (161), անպատմութիւն (202), ան....աբար՝ անչարակմաբար (126), անօրին[ակ]աբար¹⁰ (221), ան....ակի՝ անլուծակի (65), ան....ութիւն՝ անմտացածնութիւն (150), ան....ք՝ անտարեւր (86), ապ....իւն՝ ապացութիւն (175), առ....ութիւն՝ առաջնգութիւն (63), առաջտու-

⁸ Հետաքրքիր է լեզուական կառոյցի առումով, քանի որ սակաւագէտ է բարդ բառի կազմում ածանցաւոր մակբայի առկայութիւնը:

⁹ Այս ածանցով կազմուած է բաղադրութիւնների բաց խումբ՝ ապառնի դերբայի նշանակութեամբ. կան նաեւ գոյականացած եւ ածականացած ձեւեր, որոնք բոլորն էլ սերում են քերականական ձեւաւորում ունեցող հիմքից՝ անորոշ դերբայի ձեւից՝ իր բոլոր տարատեսակներով՝ պարզ, սոսկածանցաւոր, պատճառական կառուցուածքի եւ տարբեր լծորդութիւնների (տես Լ. Յովսէփեան, Գրաբարի բառակազմութիւնը, Եր., 1987, էջ 200):

¹⁰ Այն դէպքերում, երբ բառի որեւէ բաղադրիչ այսօր չի գիտակցւում, այդ բաղադրիչն անշատում ենք[] փակագծով:

ուրին (58), գեր/ա....ութին՝ գերաբանություն (230), գերահաշտություն (85), ընդ....ութին՝ ընդբնություն (133), համ....եալ՝ համեկեալ (149), նախ....ա/գոյն՝ նախայայտագոյն (190), նախ....ութին՝ նախապատճառություն (58), ներ....աբար՝ ներգրաբար (193), ներխոհաբար (183), վեր/ա....եան՝ վերայախտեան (117), վեր....աբար՝ վերաբնաբար (118), վեր/ա....ութին՝ վերակենց[աղ]ություն (187): 3) Երկու վերջածանց ունեցող երկրորդային բաղադրեալ հիմքերով նախածանցաւոր կազմութիւններ՝ ան....ական....ութին՝ անշրջականություն (209), ան....իւն....աւոր՝ անարդիւնաւոր (140), ան....ող....ութին՝ անորոշողություն (84), ապ/ա....անակ....եայ՝ ապաժամանակեայ (283): Հանդիպում են նաեւ յօդակապաւոր եւ անյօդակապ բարդ հիմքերով նախածանցաւոր նորակազմութիւններ՝ անհարկապարտ (172), անբաժանարար¹¹ (70), վերալիակատար (117):

Աւելի մեծ բազմազանութեամբ եւ իրացման հնարաւորութիւններով աչքի են ընկնում վերջածանցաւոր կաղապարները, որոնք ներկայացուած են հետեւեալ օրինակներով՝ 1) միարմատ մէկ վերջածանցով բառեր՝ -աբար՝ ամպարշտաբար¹² (190), անփոփոխաբար¹³ (98), -ա/պէս՝ չափապէս (117), -ի՝ դաւանելի (139), խոստովանելի (165), -ութին՝ նախություն (177), ներկություն (135), պատճառություն (58): 2) Երկվերջածանց կազմութիւններ՝ ականութիւն՝ պարզականություն (200), -ան/ի/ական՝ արժանական (201), -աւորելի՝ սպասաւորելի (73), -աւորա/պէս՝ շնորհաւորապէս (97), -որդա/պէս՝ աւելորդապէս (196), -ոյց....իչ՝ երկեցուցիչ (226): Հետաքրքիր են այն կաղապարները, որտեղ առկայ է նաեւ բայական ածանց՝ բարձրանագոյն (200), աներկբայանալի (58), ստեղծանելի (87): Բարդածանցաւոր նորակազմութիւններն ունեն բազմազան ենթակաղապարներ, որոնք նոյնպէս առանձնացրել ենք ըստ եզրային ածանցի՝ -ական՝ գոյաստեղծական (149), մեծագործական (175), նոյնագոյական (177), -ային՝ երկրակոխային (118), -ութին՝ աստուածաբնություն (166), արեւաբնություն (49), բանադատություն (152), երրորդանունություն (67), եկամտություն (84), զուգաբնակցություն (222), իմնեւեություն (200), հիմնակալություն (149), հոգեմտություն (149), շարայարություն (133), շարշարակցություն (125), -եալ՝ դիւաժետեալ (176), հոգեծնեալ (149), վայրատուեալ (183), վայրերթեալ (190), -եան՝ երեւայ-

¹¹ -արար՝ քերականօրէն ձեւաւորուած հիմք:

¹² Ամպարիշտ՝ կազմուած է -ան ժխտական մասնիկով եւ պարսկերէնից փոխառեալ պարիշտ՝ պաշտել արմատով (տե՛ս 2. Աճառեան, ՀԱԲ, հտ. 1, էջ 149):

¹³ Փոփոխ՝ փոխ արմատի կրճատ կրկնաւորն է (տե՛ս Հր. Աճառեան, ՀԱԲ, հտ. 4, էջ 511):

րեան (139): Առանձին խումբ են կազմում բայական ածանցներ ունեցող նորակազմութիւնները¹⁴ աղեղնակերպել (86), անձնականամալ (202), առայցել (171), առբաշխել (136), առքողոքել (124), առընթերակցել (198), առհարստամալ (175), առմածուցանել (303), առստամալ (103), բացաբաշել (300), ենթակայակցել (134), ընդհարցանել (58), հոգովացուցանել (58), յոլովաբանել¹⁵ (300), նախասել (167), ներբնակել (132), ներենմել (132), նշդեհանամալ (305), ոչխոստովանել (145), չարառնով (129), պարիմամալ (189), վայրերթալ (190), վերահաստել (177), տարագծել¹⁶ (166), ունայնալ (162), փորձանաւորել¹⁷ (187): Բերենք օրինակներ.

Ներբնակել՝ բնակուել. «Աստուած ուրեմն մեր Քրիստոսն ներբնակեալն եւ յերկրի երեւեալն» (132):

Վայրարկանել՝ ցած նետել. «Բբր արդեւք ի կերպի եւ ի յանգիտութեանն Աստուծոյ վայրարկեաց զինքն ի նուաստութիւնն» (190):

Ուղղաբայել՝ ուղիղ քայլել. «Եթէ ոչ ուղղաբայլեն վասն սորա, այլ կաղան ըստ այնմ» (203):

Քարտաւատել՝ որոշել սահմանել. «Նաեւ զգիմացն իսկ որոշմունս ընդէր քարտաւատեն եւ բաժանեն» (85):

Այսպիսով՝ «Կնիք հաւատոյ» ժողովածուն ունի հարուստ բառապաշար, գեղեցիկ ու շքեղ լեզու: Ժողովածուում գործածուած նոր բառերն ու բառաձեւերը համապատասխանում են լեզուի կառուցուածքին, հասկացութեան բովանդակութեան յստակ արտայայտմանը: Նորակազմ բառերը բարեհունչ են եւ հիմնականում ճիշտ ընտրուած. դրանցից շատերը, որոնք դեռեւս «կենսագրութիւն» չունեն, եւ դրանց իմաստները հանրօրէն չեն ճանաչում ու չեն գիտակցում, կարող են դառնալ կենսունակ եւ գործածելի: Սակայն սրանց մէջ կան նաեւ այնպիսիք, որոնք հետագայում մոռացուելով՝ հազիւ թէ ազդեցութիւն ունենան լեզուի որակական զարգացման վրայ:

¹⁴ Բայերի կերտումը այլ խօսքի մասերից կարող է տեղի ունենալ կամ պարզապէս բայական վերջաւորութեան յաւելումով, կամ -անալ բայակերտ բաղադրեալ ածանցով: Պատճառական ածանցները որպէս զուտ ձեւակազմական ածանցներ, չեն առանձնացւում (տե՛ս Լ. Յովսէփեան, Գրաբարի բառակազմութիւնը, Եր., 1987, էջ 300–304):

¹⁵ Նշձ-ում կալ «յոլովաբան»՝ շատախօս (տե՛ս Նշձ, հտ. 2, էջ 367):

¹⁶ ԱՐ-ում արձանագրուած է «տարագծեալ դանեկան» կապակցութիւնը, որ նշանակում է «խարդախ ստակ»՝ օտարադրոշմ, կեղծ դրամ (տե՛ս ԱՐ, էջ 775):

¹⁷ Գրաբարի բառարաններում արձանագրուած է «փորձանաւոր» ածականը՝ փորձութեան ենթարկուած (տե՛ս Նշձ, հտ. 2, էջ 956: ԱՐ, էջ 815: ԳԲ, հտ. 2, էջ 607):

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Նորակազմություն, բառապաշար, հեղինակություն, չարձանագրուած, բառակազմական, առանձնայատկություն, աստուածաբանական, քննություն, վարպետօրէն, դաւանական

РЕЗЮМЕ

В этой статье были рассмотрены неологизмы сборника «Печать веры». В рассматриваемом произведении в форме диалога даётся обобщённое описание конфессиональных, ритуальных и богословских представлений Армянской и Греческой церквей.

Сборник «Печать веры» имеет антихалкидонскую и антинесторианскую направленность, направлен на защиту религиозных принципов Армянской церкви, опровержение сектантских доктрин и укрепление её позиций в условиях религиозной борьбы, обострившейся в конце VI — начале VII веков. Название сборника обусловлено требованием отвергнуть расколы и подтвердить вероучение Армянской церкви ссылками на величайших авторитетов православия, чтобы скрепить его печатью.

В сборнике мастерски был использован богатый словарный запас армянского языка, а также все его словообразовательные возможности, создавая сложные и производные неологизмы, тем самым обогащая не только язык духовного произведения, но и словарный запас армянского литературного языка.

Известно, что создание и распространение новых слов в армянском языке — процесс бесконечный. Каждое произведение содержит новые, ранее не зафиксированные слова и словоформы, которые определяют лексические особенности как конкретного произведения, так и армянского языка данного периода. Тем не менее сколько бы ни создавалось новых словарей и исследований, всё равно исчерпать бесконечный словарный запас армянской письменной культуры невозможно, особенно учитывая тот факт, что многие произведения ещё не получили должной лингвистической и лексической оценки. Следовательно, изучение и исследование новых слов и словоформ всегда актуально для арменоведения.

SUMMARY


In the present article, we have referred to the neologisms present in the collection “Seal of Faith”. A summary of the denominational, ritual, theological concepts of the Armenian and Greek Churches is given in the form of a dialogue in the work under examination. The collection “Seal of Faith” had an Anti-Chalcedonian, Anti-Nestorian orientation and aimed to defend the religious principles of the Armenian Church, refute sectarian doctrines, and strengthen the positions of the Armenian Church in the intensified religious struggle which was rather tense in the late 6th and early 7th century.

The title of the collection is due to the dictation of rejecting factions, confirming and sealing the creed of the Armenian Church with references to the greatest authorities of Orthodoxy. The collection masterfully uses the rich vocabulary of our language, as well as the lexical opportunities of the Armenian language to create compound and derived neologisms, in this way, enriching not only the language of spiritual creativity, but also the vocabulary of the Armenian literary language.

It is known that the creation and dissemination of new words in the Armenian language is an endless process: each of them brings with it new, previously unrecorded words and phrases, which determine the lexical features of both the given language and the region.

Nevertheless, no matter how many new dictionaries and studies are created, it is still impossible to exhaust the endless vocabulary of the Armenian written culture, especially considering the fact that many words have not yet received proper linguistic and lexical evaluation. Consequently, the analysis and examination of neologisms is always topical for the Armenian studies.





Doi: 10.56737/2953-7843-2024.06-125

ՄԻ ԳՐՔՈՅԿԻ՝ ԱՌԻԹՈՎ²

«Խլի՛ր ժողովրդից իր պատմութիւնը, եւ ընդամենը
հարիւրամեակ անց ամբոխի կվերածուի, իսկ
աւելի ուշ կղաղմայ նախիր»:

Մեր անցեալը խելեկամ գոնէ եղծել ցանկացել են անյիշելի ժամանակներից: Մեր նախնիներին, նահապետներին փորձել են մեզնից պոկել, հեռացնել ու իրենց մօտեցնել, իրենցը դարձնել, ստիպել մոռանալ, որ մեր հայրենիքը կոչուել է Աստուածների երկիր³, Տապանակիր լեռան աշխարհ, «Տուն Թորգոմայ», իսկ ազգն՝ Ասքանազեան: Մեր պատմութիւնը փորձել են բեկոր-բեկոր անել, մասնատել եւ համոզել, թէ մի շրջանը միւսի հետ կապ չունի՝ Արատտան ուրիշ է, Ուրարտուն ուրիշ, Միտանին ուրիշ, Հայասան ուրիշ... տարբեր ժողովուրդների կազմաւորումներ են... Եւ եղծարարներն իրենց նպատակի սիրոյն չեն խնայել ո՛չ ջանք, ո՛չ եռանդ, բայց ո՛չ յաջողել են եւ ո՛չ իսկ կյաջողեն: Սակայն խոչընդոտը մեր յամառ պայքարը չէ, կամ անզիջում դիրքը: Պարզապէս մեր պատմութիւնն արձանագրուած է այնքան վաղուց, այնքան շատ ու այնքան հաւաստի աղբիւրներում, որ զեղծարարութեան յամառ ճիգերը միեւնոյնն է ձախողման եւ դատապարտուած: Ուստի ստիպուած եղան այլընտրանքային ուղիներ ու եղանակներ մշակել:

¹ «Արոնցեան մտածումներ», կազմեց Մանաւազդ սարկաւազ Մկրտչեանը, սուրբ Էջմիածին, 2024:

^{2*} Ստացուել է 2.10.2024, գրախօսուել է 9.10.2024:

էլ. հասցէ՝ targmanich1@mail.ru, arshakm48@gmail.com:

³ Եւսեփոսի Պամփիլեայ Կեսարացւոյ Ժամանակականք, մասն Ա., Ժամանակագրութիւն պատմական, Վենետիկ, 1818, էջ 35, հմմտ. «Յետջրհեղեղեան օրերն Արարատեան երկրում (Հստ հին աղբիւրների)», Երեւան, 2016, էջ 42:

Հերթական ճիգը ձեռնարկուեց նորերս, որոշուեց խառնաշփոթ ստեղծել Հայոց եւ Հայաստանի պատմութիւն եզրերը փոխարինելով⁴: «Յանկարծ պարզուեց», որ հազարամեակներ փորձուած, բիւր-բիւրաւոր տպաքանակների շապիկներին դրոշմուած «Հայոց պատմութիւնը» չէր արտայայտում «ենթադրելի կամ ցանկալի» իմաստը: Թէ Հայոց-Հայաստանի-Հայերի-Հայ ժողովրդի պատմութիւն բառափոխութիւններով ինչ նպատակներ են հետապնդել, կամ առարկայի ուսումնասիրութեան ծիրից ինչ դրուագներ են ցանկացել դուրս մղել, պատմագիտութեան բնագաւառից է, սակայն զուտ բանասիրական տեսանկիւնից պէտք է նկատել, որ բնիկ ազգային, դասական հայերէնով կազմուած, մեր պատմութեան արշալոյսից ի վեր կիրառուած, խորիմաստ եւ սեղմ (երկվանկ) ձեւը ուզում են փոխարինել երկար՝ (քառավանկ), ընդամենը 1600-ամեայ պատմութիւն ունեցող ու նիւթը մակերեսային ներկայացնող տարբերակով, որ նաեւ օտար (կամ աշղպիսին թուացող) ածանց է ստացել:

Բանասիրական ասպարէզի մէկ այլ հանգամանք է հետեւեալը. «Հայոց պատմութիւն» կապակցութեան մէջ «Հայոցը» կարող է ընկալուել եւ որպէս երկիր՝ «Հայաստան աշխարհ», եւ որպէս ժողովուրդ՝ «ազգ Արամեան, որ ի Հայկայ Թորգոմեան Յաբէթեանց»⁵: Այստեղ արհեստականօրէն ծագեցւում է մի խնդիր. «Իմաստային հանգամանքն» ի նկատի ունենալով՝ նոյն բառն ստիպում են գրել մերթ մեծատառ, մերթ փոքրատառ: Սա կանոն է, որ մէկը կամ մի խումբ լեզուաբաններ երկնել են, թէ երկիր մատնանշելիս Հայոցը պէտք է գրուի մեծատառ, միւս դէպքում՝ փոքրատառ⁶: Իրականում լեզուաբանութիւնը, յատկապէս դրա՝ մեծատառ-փոքրատառերի «գիտական ուսումնասիրութեամբ» զբաղուող մասը, համատիեզերական նորութիւնների եւ յայտնագործութիւնների ասպարէզ չէ. գրերի ստեղծումից ի վեր դրանց կիրառութեան բոլոր նրբութիւնները բազմիցս ուսումնասիրուել են, եւ լեզուաբանական՝ թէ՛ ժամանակային, թէ՛

⁴ Տե՛ս <https://www.azatutyun.am/a/hayots-patmouytan-pokharen-dprotsneroum-kdasavandvi-hayastani-patmutyun-karavorutyunn-yndunets-oroshumy/33030701.html>:

⁵ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Հայ բառաչօղուածը:

⁶ Ըստ այսմ. (տե՛ս օր.՝ «Մեծատառ, թէ՛ փոքրատառ», Երեւան, 2003) «Ամենայն հայոց կաթողիկոս բաղադրյալ անվանման միայն առաջին բաղադրիչը պիտի գրել մեծատառով (էջ 20)... Հայոց-ը գրուում է փոքրատառով, երբ նշանակում է «հայկական», «հայերի», «հայերին բնորոշ», ինչպէս՝ հայոց հող, հայոց բնաշխարհ, հայոց թագաւոր, հայոց երկիր եւ այլն» (էջ 24): Թէ ինչո՞ւ Հայոց թագաւոր կամ կաթողիկոս կապակցութիւններում երկիրը չի կարելի հասկանալ եւ մեծատառ գրել, մշուշոտ է:

գաղափարական առումով յետին միջամտությունը միայն փչացրել է դարերով կիրառուած մեծատառա-փոքրատառա-գրությունը՝ շարադրման պարզ գործընթացը դարձնելով խնդիր, վարժություն ու հարց՝ քննաթերթերի եւ բաղձալի միաւորների համար: Մինչդեռ «Հայոց պատմութեան» լեզուաբանական լուծումը բացառիկ պարզ է ներկայանում. «Հայոց» բառը, իր արտայայտած իմաստից անկախ, սեռական հոլովածէն է «Հայք» բառի, որ ցանկացած դէպքում պիտի գրուի մեծատառ՝ անկախ «մեծատառագէտ լեզուաբանների» տենչերից, իղձերից ու ցաւալի կամ անցաւ երկունքներից:

Միանշանակ է, որ դասական հայերէնում «Հայոց» բառն իր մէջ ամփոփում, հետեւաբար նաեւ արտայայտում է բոլոր այն իմաստներն ու տարբերակները, որ վերելում շարեցինք իրար կողքի: Հայերէնից՝ առաւելաբար գրաբարից փոխանցուելիս է, որ պէտք է տարբերակուի, թէ Հայոցը որ իմաստով է կիրառուած: Իսկ դա հնարաւոր է կատարել միայն անմիջական դէպքերի, շարակարգի քննութեամբ: «Հայոց պատմութիւն» կապակցութեան թարգմանությունը դիտարկելու համար իբրեւ լաւագոյն օրինակ պէտք է յիշենք Պատմահօր գիրքը: Եւ այսպէս՝ թարգմանութեան, այն է՝ ընկալման ինչ տարբերակներ են առկայ Մովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոցի» համար: Աշխարհաբար թարգմանությունների պարագային ընդհանրապէս դիտարկման առարկայ չկայ, որովհետեւ Հայոց բառը նոյնութեամբ փոխանցւում է⁷: Ռուսերէն, օրինակ՝ էմինեան թարգմանություններում Խորենացու գրքի վերնագիրը «Հայաստանի պատմութիւն»⁸ է: Նոյնն է նաեւ Գագիկ Սարգսեանի հրատարակութեան ձեւակերպումը⁹, այսինքն՝ հայագիկ հեղինակները, որ ստանձնել են ռուսերէն թարգմանելու գործը, «Հայոց» բառը հասկացել ու փոխադրել են «Հայաստանի» ձեւով, ոչ երբեք հայերի: Ի տարբերութիւն ռուսերէնի, գիրքն անգլերէն թարգ-

⁷ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Հայոց պատմութիւն, աշխարհաբար թարգմանեց եւ լուսաբանեց Խորէն Եպիսկոպոս Ստեփանէ, Ս. Պետերբուրգ, 1898, հմմտ. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, թարգմանութիւնը, Ներածութիւնը ծանօթագրութիւններն ակադ. Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1968:

⁸ *Скн* История Армении Моисея Хоренского, перевелъ съ Армянскаго и объяснилъ н. Эминъ, Москва, 1858, հմմտ. История Армении Моисея Хоренского, Новый Переводъ Н. Эмина, Съ примѣчаніями и приложениями, М., 1893: Նոյնն է նաեւ Խալաթեանցի կիրառած տարբերակը՝ «Армянскій эпосъ въ Исторіи Армении Моисея Хоренскаго», Մոսկուա, 1896:

⁹ *Скн* МОИСЕЙ ХОРЕНАЦИ, Перевод с Древнеармянского языка, Введение и примечания Г. Саркисяна, Ереван, 1990:

մանուկեամբ դարձել է «History of the Armenians»¹⁰, այսինքն՝ թարգմանչի պատկերացմամբ «Հայոցը» մատնանշել է ժողովրդին: Հարկ է նկատել, որ «Հայոց պատմություն»-«Պատմություն Հայոց» կապակցությունը վաղուց անգլերէնով թարգմանուած եղել է, եւ Թօմասօնի արածն ամենեւին առաջին, դողդոջուն ու խարխափող փորձը չէր, որ ճանապարհ պիտի բացեր, եւ որի դէպքում ներելի կլինէին թերությունները: Ասել կուզի «Պատմություն Հայոցը» անգլերէն թարգմանելիս կարելի էր, եթէ չասենք՝ պէտք էր վերցնել հայր Միքայէլ Չամչեանի գիրքը՝ Յովհաննէս Աւդալեանցի թարգմանուկեամբ¹¹, եւ տեսնել, որ «Հայոց պատմությունը» անգլերէն լինում է History of Armenia, ոչ թէ Armenians: Աւելին՝ կարելի էր բացել Աւդալեանցի ներածականի առաջին էջը եւ կարդալ, թէ հայի թարգմանուկեամբ Մովսէս Խորենացու «Հայոց պատմությունն» ինչ կերպ կստանայ անգլերէնում՝ «History of Armenia by Moses of Khoren»: Կարող ենք ասել, որ իրեն նախորդած շրջանի փորձը չկիրառելու պատճառով անգլերէնի թարգմանիչ Թօմասօնը յայտնուել է «Հայոց» բառի «ծուղակում»՝ չտարբերելով խօսքը ժողովրդի, թէ երկրի մասին է: Ահա գրքի վերնագրում «Պատմություն Հայոց»-ը փոխադրում է՝ «History of the Armenians» (Հայերի պատմություն), սակայն ցանկը թարգմանելիս մոռանում է, որ խօսքը ժողովրդի մասին էր, եւ Առաջին գրքի վերնագիրը դարձնում է՝ «Genealogy of Greater Armenia»: Զնայած որեւէ երկրի Genealogy (ծննդաբանություն, ազգաբանություն) ասելն ու ընկալելը դժուար է: Ուրիշ բան, եթէ որեւէ մարդու կամ ազգի genealogy լինի: Ուստի աշխարհաբար թարգմանուկեան «Հայոց մեծերի ծննդաբանությունը» այսինքն՝ Հայոց «մեծ նախնիների ծագումնաբանությունը» ընդունելի է. իսկ անգլ. «Մեծ Հայքի ծննդաբանություն» ասուածն անիմաստ: Վառ օրինակ «Հայոց» բառի նպատակային կամ պատահական թիւրընկալման: Մինչդեռ «Հայոց»-ի դիմաց «Greater Armenia»-ի կամ «Armenians»-ի ճիշտ կամ սխալ տարբերակները տուեալ շարակարգում հասկանալու համար նոյնիսկ գրաբարի խոր իմացություն հարկաւոր չէր. բաւարար էր ուշադիր հայեացք ձգել ցանկին եւ գիտակցել, որ «Հայոց

¹⁰ MOSES KHORENATS'I, Translation and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson, Caravan Books, 2006, հմտ. նոյնի 1978 թ. հրատարակութիւնը (հետագայ մէջքերումները՝ շարադրանքում՝ փակագծով):

¹¹ FATHER MICHAEL CHAMICH, History of Armenia, Translated from the Original Armenian by Johannes Avdall, Calcutta, 1827, 2 հատորով: Կասկածն առ այն, որ Թօմասօնը ծանօթ չէ այս գրքին, ծագում է նախ գրականութեան ցանկից:

մեծերի (ոչ թէ Մեծ Հայքի) ծննդաբանութիւն» գրքի տրամաբանական շարունակութիւնը «Մեր նախնիների միջին պատմութիւն»-ն է, ոչ թէ անգլերէնի պէս, ուր «Genealogy of Greater Armenia»-ին յաջորդում է «The Intermediate Period in the History of our Ancestors»-ը, Armenia երկրից թուշելով՝ մարդկանց-Ancestor-նախնիների կողմն է անցնում, կամ «Մեծ Հայքի ծննդաբանութիւնից» սաւառնելով՝ Հայոց նախնիների կողմը: Իսկ Երրորդ գրքում, նախնիներին թողնելով, նորից երկրին է անդրադառնում՝ «The Conclusion [of the History] of Our Fatherland»: Մինչդեռ գրաբարն այնքան պարզ է ներկայանում՝ Ա. «Ծննդաբանութիւն Հայոց մեծաց», Բ. «Բան միջակ պատմութեան մերոցն նախնեաց», Գ. «Աւարտաբանութիւն մերոց հայրենեաց»: Անշուշտ Երրորդ գրքի վերտառութեան «հայրենեաց» բառը կարող է գայթակղութեան առիթ հանդիսանալ, որ երկիրը՝ հայրենիքը գիտակցուի: Սակայն, ինչպէս բառարանն է պարտադրում, գրաբարում «հայրենեաց» ասածը նշանակում է «սեպհական հօր եւ հարց եւ նախնեաց»¹², այսինքն՝ Երրորդ գրքի վերնագիրն ընկալելի է «Աւարտաբանութիւն [պատմութեան] մերոցն նախնեաց» ձեւով եւ երեք վերնագրերում մարդիկ են յիշատակուած, ոչ թէ՝ մերթ երկիրը, մերթ մարդիկ:

Կրկին գալով Թօմասին՝ պէտք է նկատենք՝ թարգմանութեան կապակցութեամբ յիշատակելի միւս հանգամանքն այն է, որ, ինչպէս տեսանք գիրքը յղելիս, նա գրադարձութիւն (transcription) էր կիրառում: Սա արտաքուստ գիտականութեան տպաւորութիւն է ստեղծում, սակայն որեւէ շօշափելի օգուտ չտալով, խանգարում է, ընթերցանութեան ժամանակ բուն իմաստից շեղելով, տանում է արտասանութեան կողմը: Բացի այս՝ գրադարձներից ամեն մէկն իր ուրոյն ձեւով է տառադարձում¹³, ինչի արդիւնքում միեւնոյն բառը տարբեր գրութիւններ է ստանում: Եւ եթէ այսօր զորօրինակ հէնց խորենացուն որոնենք անգլերէն համացանցում, որոնողական համակարգերը, բնականաբար, չեն գտնի մէկը միւսին չհամընկնող տարբերակները: Այսինքն՝ մի քանի տարբերակներով ենք ստիպուած որոնելու միեւնոյն բառը: Եւ վերջապէս, այս հարցն աւարտելով

¹² Տէս ՆՃԲ:

¹³ Տէս Movsēs of Xoren (Dowsett), Moses of Khoren եւ Moses of Chorene (Conybeare) եւն Գրքեր և հեղինակներ որոնելիս տառադարձումը աւելորդ խոչընդոտ է, ուստի գրադարանային գործի երկու բանիբուն մշակների՝ Աննա Մարիա Մատթարի և Վերոնիկա Թրօթէրի հետ ընդհանուր յայտարարի եկանք, որ այդ գործը պէտք է վստահուի translate.google կամ նմանատիպ մի համակարգի, որ աշխարհի ցանկացած ծագում ցանկացած մուտքագրողի գրութեան միեւնոյն կերպը կտրամադրի:

ասենք, որ գրադարձողներն իրենց երկասիրութիւններում բարեխղճօրէն զետեղում են հնչիւնի փոխանցման կերպերը, որ ընթերցողը կիրառի, սակայն յաճախ իրենք եւս շփոթում են, թէ որ հնչիւնն ինչով են փոխարինել: Նոյն Թօմասօնը, քանի որ գրադարձութիւն կիրառում է ոչ միայն յատուկ անունների, այլեւ, իր կարծիքով, բարդ, անյայտ կամ չթարգմանուած բառերի պարագային, հատորում տառադարձման բազում զարմանական օրինակներ է «ընծայում»¹⁴: Սակայն Թօմասօնեան գրադարձման «պսակ» պիտի համարուի հետեւեալը.

«Queen Sat'inik had great desire for the vegetable artakhur and the shoot tits' from the table of Argavan» (118): Եւ դժուար թէ գտնուի անգլիախօս ընթերցող, որ գուշակի, թէ «tits'»-ը, ոչ թէ երգեցիկ թռչուն (songbird) է, այլ խոտաբոյս, եւ, առաւել եւս, մարմնական որեւէ բարեմասնութիւն չի շօշափուում շարագրանքի մէջ: Ամեն դէպքում օտար ընթերցողի աչքին հատուածը, նուազագոյնը, կարող է խորթ ներկայանալ: Զարմանալի կարող է թուալ նաեւ հետեւեալ պարբերութիւնը.

Vardges as a child left the province of Tuhq by the River Qasakh and came to dwell by the hill of Shresh by the city of Artimed¹⁵ on the River Qasakh, to hammer and batter at the gate of Eruand the king (207):

¹⁴ Տէս օր.՝ չ-ն-ն՝ Ch'amch'eants', Ch't'ch'ean, Yachakhapatum Chark, Christensen, Chukaszyan. Քրիսթենսէնը դարձել է Ճրիսթենսէն Զուգասգեանը-Ճուգասգեան 368. Եւ տեսանելի է, որ եթէ բուն հնչողութիւնը չիմանանք, գրադարձութեամբ սխալ ենք կարդալու:

¹⁵ Արտիմէդի վերաբերեալ ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդում Ինճիճեանը. «Արքայանիստ քաղաք... Զառաշինն կոչէր սա Արտիմէդ քաղաք՝ գուցէ ի յունական անունէ Արտեմեայ դից, որ ի Հայս կոչի Անահիտ...»: Բնական հարց է առաջանում, որ եթէ «ի Հայս կոչի Անահիտ», ինչո՞ւ հէնց այդ անունը չէին տալիս քաղաքին: Արտիմէդի վերաբերեալ Ինճիճեանի խօսքը հետեւեալ շարունակութիւնն ունի. «...այլ երրորդ անուն քաղաքիս, որ է Քաղաքուդաշտ, որպէս է տեսանել ի պատմութեան Ժողովոց... Յայս անուն կոչեցաւ ի դրից իւրոց սակս կառուցեալ գոլոյ ի դաշտավայրի. այլ առաւել շրջակայ ոլորտ քաղաքին, կամ վիճակն կոչեցաւ այսպէս. կամ թէ քաղաքն, որպէս թէ ասել Քաղաքին դաշտ եւ ոչ թէ Քաղաք ի դաշտի, զի ուրեք ի կարգաւորութիւնս օրհնութիւնաբեր ցուցակի գտանեմք զայս անուն ի կիր արկեալ վասն սահմանին, որ արտաքոյ Վաղարշապատու: Նոյնպէս եւ զԱշխարհաթաղն (սրբոյն Սահակայ է գործեալ) ի վկայարանս սրբոց Հռիփսիմեանցն». տէն Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 472: Արտիմէդ եւ Արտէմիս նմանութեան պատճառով օտար ազդեցութիւնը կարող է անվիճելի թուալ. միակ հարցը վերելում հնչածն է հետեւեալ պարզեցմամբ՝ Օտար եւ այդքան հեռաւոր պաշտամունքն ինչքան պիտի տարածուած լինէր Հայքում, որ դիցուհու պատուին քաղաք լինէր: Ալիշանն Անահիտի համար գրում է. «...առ յոյնս է Արտեմիս, առ լատինս Դիանա». Հին հաւատք, Վենետիկ, 1910, էջ 279: Ինչպէս ժամանակին նշուել է՝ Անահիտն ու Դիանան (դ=տ) նոյնական են հակառակ ընթերցման ժամանակ: Եւ պարտադիր չէ, որ այս համընկնումը պատահականութեան արդիւնք լինի, այլ գրելու-կարդալու ուղղութիւնը փոխելու: Այս առումով պէտք է նկատել, որ Արտիմէտը հակա-

Ինչ մտածի այստեղ ընթերցողը (ոչ միայն օտար). Վարդգէսը տակաւին երեխայ էր, բայց միայնակ դուրս եկաւ Տուհաց գաւառից եւ երկար գնալով, հասաւ Շրէշ ու նստեց Երուանդ արքայի դուռը կռել-կոփելու: Սա դեռ ոչինչ, Թօմասօնը ծանօթագրում եւ բացատրում է «դուռը կռել կոփելու» իմաստը՝ «Hammer at the gate: «To ask in marriage»: Եւ որովհետեւ Թօմասօնը չի նշում, թէ ամուսնութեան առաջարկն ում էր ուղղուած, դրանով վերջնականապէս ցնցում է գիտակցութիւնը: Այդ հարուածից յետոյ դեռ պէտք է եւս մի քանի տող կարդանք, որ տեղ հասնենք ու իմանանք, թէ մանուկ Վարդգէսը ոչ թէ Երուանդ արքային է ամուսնութեան առաջարկութիւն արել, այլ Երուանդի քրոջ ձեռքն էր խնդրում՝ ընդամենը: Այսպէս ճիշտ տեղում ստուգապէս չասուած բառը կարող է խաթարել պարզ շարադրանքը եւ վերածել մղձաւանջի: Սակայն վերադառնանք նախնական մտքին եւ շարադրանքին, որ առաջացել է Թօմասօնի թարգմանութիւնից. տակաւին երեխայ Վարդգէսը մէն-մենակ գնաց Տուհացուց աշխարհից եւ Երուանդ արքայից խնդրեց վերջինիս քրոջ ձեռքը: Անգլերէն թարգմանութիւնը «բառերի բաղադրութեամբ» հայերէնից շատ հեռու է. բնագրի՝ առասպելի «Վարդգէս Մանուկը» դարձել է «Vardges as a child»: Այսինքն՝ միայն as-ն է աւելացել¹⁶, որ ամենեւին չի կարող մեղսադրուել իբրեւ յանցանք: Բուն թերութիւնը հետեւեալն է՝ հաշուի չի առնուել այն հանգամանքը, որ գրաբարեան մանուկ-ը բաղմիմաստ է եւ երեխայից բացի կարող է նշանակել պատանի, երիտասարդ... Եւ գլխաւորը՝ «զինուոր, զօրական, քաջ»¹⁷, որն ի տարբերութիւն երեխայի իրական բնորոշումն է Վարդգէսի: Այսինքն՝ «քաջ զօրական Վարդգէսն է» գործող անձը. նրան չմերժեց արքան եւ իր քրոջը կնութեան տուեց՝ «քաջ զօրական Վարդ-

ուկ ընթերցմամբ համընկնում է հոդագործութեան աստուածուհի Դէմէտրային, եւ Դէմէտր (Դմիտրի) ձեւին: Այս արական անունն առաւելաբար ստուգաբանում են իբրեւ Դէմէտրային ընծայուած՝ սրանով իսկ կապելով յունական մշակոյթին: Սակայն մեր իրականութեան մէջ առաջինը յիշատակուած Դէմէտրը իր եղբայր Գիսանէի հետ Հնդկաստանից վճռուելով էր եկել Հայք («Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1832, էջ 27, 36): Եւ դարձեալ դժուարութեամբ կարելի է պատկերացնել, որ Հնդկաց երկրում լոյս աշխարհ եկած տղային կնքէին հեռու-հեռու-անծանօթ երկրի աստուածութեան անուամբ: Փոխարէնը Դմիտրի անունն համար Դեօմիթրա-Դեմիթրի-Դե-Միթրա աստուծուն-Միհրին ընծայուած ստուգաբանութիւնն առաւել հաւանական է թւում Հնդկաց, նաեւ մեր աշխարհի համար: Միւս կողմից՝ քաղաքի երկու հնագոյն անունները՝ (Արտիմէդ եւ Քաղաքուղաշտ) նմանական են թւում դաշտ եւ արտ բաղադրիչներով, որ կարող էին տրուել «ի դրից իւրոց սակս կառուցեալ գոլոյ ի դաշտավայրի», եւ Արտիմէդը, գուցէ, ընկալելի է Արտին միտուած կամ դաշտադէմ ձեւով:

¹⁶ Վարդգէսը մանկան պէս, կամ որպէս մի մանուկ:

¹⁷ Տէս ՆՃԲ, հմմտ. Առձեռն բառարան:

գէսին», այլ ոչ թէ մանուկ կամ երեխայ Վարդգէսին»: Բայց մինչ առաջ անցնելը՝ պատասխանենք մի հարցի. համոզուած ենք, որ տուեալ շարակարգում «մանուկը» չի կարելի թարգմանել իբրեւ երեխայ. չէ որ Խորէն սրբազանի եւ Մալխասեանի թարգմանութիւններում նոյնպէս «Վարդգէս մանուկ...»¹⁸ է. նրանք եւս սխալուել են: Կամ ինչո՞ւ Աբեղեանն ու Աճառեանը, միւսները ոչինչ չեն ասել մանուկ բառի կապակցութեամբ... գուցէ Վարդգէսն իրապէս երեխայ է, ոչ թէ զինուոր: Կարո՞ղ ենք պատասխանել այս խօսքերին, հնարաւոր է փաստարկել, որ աշխարհաբարում «Վարդգէս մանուկ» գրելով Ստեփանէն եւ Մալխասեանցը կարող էին «Վարդգէս մարտիկ» հասկանալ: Այո՛: Սրբազանի հարցը թողնելով ապագային՝ Մալխասեանի կապակցութեամբ արձանագրենք, որ իր բառարանն¹⁹ է լաւագոյն ցուցիչը, թէ ինչ իմաստներով կարող էր հասկանալ «մանուկ» բառը: Նոյնը նաեւ Աճառեանի դէպքում՝ կարող ենք պարզել թէ՛ Արմատական, թէ՛ Անձնանունների բառարաններով²⁰: Իսկ Աբեղեանի պարագային (բացի վստահութիւնից, որ իր անուան ստուգաբանութիւնը կիմանար) վառ ապացոյց է իր «Ազգային վէպ»-աշխատութիւնը²¹, ուր նա գրում է, թէ՛ «[Սասունցի] Դաւիթը կոտորեց մանուկներին» եւ անմիջապէս «մանուկներ»-ի կողքին փակագծով աւելացնում է՝ «(զինուորներին)», այլապէս հնարաւոր է հետագայ որեւէ «լուրջ» հետազօտող, մանուկ բառի զինուոր իմաստը չիմանալով, շփոթուեր, թէ Հայոց էպոսի հերոսը երեխաների էր կոտորում: Ասուածից պէտք է եզրակացնենք, որ նախորդ դարի սկզբին դեռեւս կարիք չէր զգացւում մանուկն առանձին ստուգաբանելու, ծանօթագրելու: Մանուկը բացատրում է Ասատուր Մնացականեանը, բայց ոչ թէ բառի իմաստափոխութեան պատճառով, այլ որովհետեւ տուեալ Գողթան երգը քննում է համակողմանիօրէն եւ տարբեր հանգամանքներ նշելուց յետոյ աւելացնում. «Վարդգէսը նաեւ մա-

¹⁸ Ի սէր ծաւալի միւս թարգմանութիւններին չենք անդրադառնում:

¹⁹ «Հայերէն բացատրական բառարան»:

²⁰ Անձնանունների բառարանում հեղինակը գրում է, որ Մանուկ անունը «Պօլսում համարում են Մանուէլ անուան փաղաքշականը, բայց ճիշտ չէ, որովհետեւ ունինք նաեւ մանկիկ կամ մանկուկ: Ուրիշներ համարում են Սեբաստիայի քառասուն մանուկների յիշատակին կոչուած այսպէս»: Թրեւս աւելորդ տեղը շեշտենք, որ «մանուկների» յիշատակինը յատկաբար զօրական իմաստով է:

²¹ Ազգային վէպ. «Սասունցի Դաւիթ» կամ «Մհերի դուռ» (Կ. Պոլիս, 1874) եւ «Դաւիթ եւ Մհեր» (Շուշի, 1889) ժողովրդական պատումներն իբրեւ կէս-պատմական եւ կէս-գիւցազնական հին վէպ. տես «Երկերի կիսկատար ժողովածու», հտ. Ը., էջ 35:

նուկ է, այսինքն՝ կտրիճ, հերոս, քաջ երիտասարդ»²²: Այս մտքից յետոյ միայն պէտք է աւելացնել, որ եթէ անգլերէն թարգմանութեան առաջին հրատարակութիւնն իրականացնելիս կարելի էր չհանդիպել Մնացականեանի յօդուածը, ապա երկրորդ հրատարակութեան ժամանակ Թօմսօնը պարտաւոր էր, մանաւանդ որ գրքի ճակատին գրուելու էր՝ «revised edition»²³: Եւ եթէ նոյնիսկ Մնացականեանի յօդուածը չհանդիպեր, Թօմսօնը գոնէ պէտք է օգտուեր հ. Մատթեա Պետրոսեանի «Հայ-անգլիարէն բառարան»-ից²⁴, որի տուած «warrior» տարբերակը պիտի գործածուեր մանուկ բառի դիմաց: Այստեղ պէտք է նշենք նաեւ, որ մի քանի հատուածներում Թօմսօնը շարադրանքից գլխի է ընկել, որ գրաբարեան մանուկը չի կարելի միշտ անգլերէն թարգմանել child: Ահա Ա. գրքի Ժե. գլխում «մանկանցն Շամիրամայ» թարգմանում է «Semiramis' troops» (94), կամ Գիրք Բ. ե. գլխի մանկունք-ը՝ «ընտիրս եւ քաջս ի մանկանցն Վաղարշակայ» կապակցութիւնը թարգմանում է «Valarshak's young men» (132): Նույն կերպ նաեւ «մի՛ եւս մանկունք Ալանաց ասպատակաւ հինից ելցեն յաշխարհս Հայոց»-ը դարձել է «the young men of the Alans would come no more on raids for plunder into Armenia» (188):

Վարդգէսի եւ Սաթէնիկի՝ հատուածների թարգմանական օրինակները, կարելի է մանր վրիպումներ համարել, որոնք, սակայն, մեծ աղճատումներ են առաջացնում՝ վիպական գեղեցիկ երգերը հակադրելով տրամաբանութեանը, բանականութեանն ու գեղագիտութեանը:

Բայց Թօմսօնի եւ իր գործի հանդէպ ազնիւ հայագէտների բացասական վերաբերմունքն ամենեւին թարգմանական թերութիւններով չի պայ-

²² «Դիտողութիւններ «Վարդգէս մանկան» վիպական հատուածի վերաբերեալ». «Պատմա-բանասիրական հանդէս», 1975, հ. 2, էջ 229:

²³ Աղուանագէտ Մարկո Բայիսի հետ զրոյցի ընթացքին վերջինս առանձնակի շեշտում էր «վերանայուած» հրատարակութեան հանգամանքը: Դարաշրջանի շնորհիւ անմիջականօրէն համեմատելու կարիք չունեցալ. համապատասխան ծրագիրը ըստական գուգագրում է հին եւ նոր հրատարակութիւնները եւ ներկայացնում տարբերութիւնները, որ, մեր կարծիքով, չնչին են՝ ոճական-խմբագրական. օր.

Հին	Նոր
But his attitude to his sources and his methods of historical writing are such that his uncorroborated word can never be fully trusted (էջ 58).	But his attitude to his sources and his methods of historical writing are such that his uncorroborated word is always open to question (էջ 57).

²⁴ New Dictionary [Classical] Armenian—English, Վենետիկ, 1875—79, էջ 432:

մանաւորուած: Բուն խնդիրը Մովսէս խորենացու դարաշրջանի վերաբերեալ «բանավէճն» է, որի համապատկերում Թօմասնի ներածութիւնը դիտուում է որպէս «խորենացու հանդէպ բացասական քննադատութեան գազաթնակէտ»²⁵: Մինչդեռ իրականում Թօմասնը գիտական «բեկում» չի մտցրել հակախորենացիագիտութեան մէջ: Նա անգամ որեւէ ինքնուրոյն, սեփական միտք չի արտայայտել խորենացու՝ Ե. դարի պատմիչ լինելու փաստը մերժելիս: Եւ այս հանգամանքը ինքն անձամբ է խոստովանում. «There are various historical clues scattered in his History that enable us to reject a fifth-century date. These have been noted by various scholars, and conveniently rehearsed by Toumanoff, so a brief recapitulation is all that is necessary here» (57)²⁶: Այսինքն՝ խորենացու գրքի՝ «կնճռոտ» («պատմագիտութեան» «ընդունուած» կաղապարներում շտեղաւորուող) հատուածները մատնանշել են բազում գիտնականներ, եւ այդ բոլորի ասածը միաւորելով կրկնել է Թումանովը, իսկ Թօմասնն ընդամենը երկրորդել է նախորդի կրկնածը: Այսինքն՝ ո՛չ առաջինը, ո՛չ երկրորդը ինքնուրոյն, սեփական միտք-գաղափար չեն ունեցել խորենացու կապակցութեամբ, բայց այնքան են վստահել ուրիշների «գիտական քանքարին», որ վճիռ են տուել. «...when Pseudo-Moses could not have been writing, that is, in the fifth century»: Եւ որն է «գիտական փաստերի» այն ամբողջութիւնը, որ ստիպում է ասել, թէ՛ միակ ժամանակաշրջանը «երբ Կեղծ Մովսէս խորենացին չէր կարող ստեղծագործել հինգերորդ դարն է»²⁷: Երկու հարիւր հոգով երկու հարիւր տարի անդադրում քննադատել են խորենացուն, «բացայայտել» «սխալներն» ու «անհամապատասխանութիւնները», եւ այդ ամբողջ «ջախջախիչ» քննադատութիւնը կազմել է ութ կէտանոց մի համահաւաք, որ նախ կրկնել է Թումանովը, իսկ յետոյ Թօմասնը երկրորդել է մինչդեռ կասկածից վեր է, որ եթէ քիչ թէ շատ խելքի մօտ բան լիներ, գիշերը չէր քնի, կգրեր: Ընդ որում՝ ութ կէտերը թուելուց առաջ Թումանովը գրում է, թէ՛ «The best among the arguments against the traditional dating of Pseudo-Moses appear to me to

²⁵ Տէս The Historical Arguments for the Date (5th century) of Writing “The History of Armenia” by Movses Khorenatsi, «Fundamental Armenology», № 1, 2015, էջ [4]:

²⁶ խորենացու երկում պատմական տարբեր յուշումներ են սպրդել, որոնք մեզ հնարաւորութիւն են ընձեռում մերժելու Ե. դարի թուագրումը: Դրանք մատնանշել են ալլազան գիտնականներ, իսկ Թումանովը պարզապէս կրկնել է այդ ամենը: Ուստի այստեղ զուտ վերաքաղը բաւարար է:

²⁷ «Հանդէս Ամսօրեայ», 1961, էջ 468:

be the following»²⁸, որ յանկարծ չթուայ, թէ եղած-չեղածն այդ է: Անշուշտ երկհարիւրամեայ «անդուլ որոնումների» արդիւնք ութ կէտերը հերքուել են²⁹, բայց քննադատաբար տրամադրուածները շարունակել ու շարունակում են յամառել, թէ Մովսէս Խորենացին Ե. դարի հեղինակ չէ: Օրինակ՝ Ե. դարը բացառող՝ թումանովեան 2-րդ կէտը, վերահրատարակութեան ժամանակ կրկնելիս (էջ 269, ծան. 113) Թօմասօնը յղում է այդ կէտը չէզոքացնող՝ մուշեղեանական հերքումը, բայց չի հաճում որեւէ տեսակէտ յայտնել, թէ, ասենք, պարսկական զօրքի Բիւթանիայում բանակելու վերաբերեալ Խորենացուն ուղղուած մեղադրանքն ամբողջովին հերքուած է: Կամ, եթէ Մուշեղեանի հերքումն իր համար համոզիչ չէր, թող գրեր. «Այսինչ հերքումն անհիմն է». պարզապէս գրեր, այլեւս չենք խօսում հիմնաւորելու մասին, որ գուցէ հնացած, գուցէ նաեւ արգահատելի երեւոյթ է նման «տրամաշափի գիտնականների համար»: Այս արտայայտութիւնը թոյլ ենք տալիս հետեւեալ հարցերի պատճառով. ուրիշների ասածները կրկնելը գիտութիւնն է: Իսկ կրկնածի կրկնութիւնն ի՞նչ է³⁰, գիտութիւնն է: Յաճախ լսում եմ՝ «Թօմասօնը մեծ գործ է արել... թարգմանել է պատմիչներին», ասես տիեզերքում ուրիշ մէկը չկար, որ թարգմաններ հայ պատմիչներին: Կամ թէկուզ թարգմանել է. թարգմանելը գիտութիւնն է: Իսկ այսպէս թարգմանելը. «And while they hoped for our return and to be honoured by my most erudite wisdom and perfect aptitude, while we swiftly making for Byzantium hoped to dance at marriages...» (էջ 346 ընդգծումը մերն է.— Մ.): Ինչպէս գիտենք, բնագիրը հետեւեալն է. «Եւ մինչ նոքա զմերն յուսային զդարձ, եւ պատուասիրել իմով ամենիմաստ արուեստիւս եւ կատարելագոյն յարմարութեամբս, համայն եւ մեք փութապէս դիմեալք ի Բիւզանդիոյ, յուսայաք հարսանեաց պարել». այսինքն՝ ոչ թէ for Byzantium,

²⁸ «Կեղծ Մովսէսի աւանդական թուագրման դէմ լաւագոյն փաստարկները հետեւեալ 8-ն են՝ ըստ իս». «Հանդէս Ամսօրեայ», անդ:

²⁹ Տէս յատկապէս Ա. ՄՈՒՇԵԼՅԱՆ, Մովսէս Խորենացու դարը, Երեւան, 2007, 412 էջ եւ G. SOULTANIAN, The History of the Armenians and Moses Khorenats'i, Bennett & Bloom, 2012, 280 էջ:

³⁰ Թումանովի դիրքորոշման վրայ, թերեւս, ազդել է ռուսալրացի լինելու հանգամանքը, իսկ Թօմասին կեցուածքը հակուած ենք հիմնաւորելու Կոստանդնուպօլսում սովորելու շրջանով, ինչպէս եւ Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամի վարձատրութեամբ, որովհետեւ «տաքացնողի» վերաբերեալ ժողովրդական ասացուածքը չի վրիպում: Կարելոյ է, որ իր մահախօսականում Կոստանդնուպօլիսը իստանբուլ է (հաւանօրէն ինքնակենսագրականից քաղուած. տես «Հոմը», նոյեմբեր, 2018, էջ 22): Կան տեղանուններ, որոնց որեւէ տարբերակի ընտրութեամբ բացայայտում է կիրառողի պատկանելութիւնը. այդպիսի անուններ են՝ Արցախ, Ստեփանակերտ, Տիգրանաշէն, Կոստանդնուպօլիս, Կիպրոս...

այլ from Byzantium: Սակայն սա եւս մեղադրելի չենք համարում: Հատուածի խնդիրը «հարսանեաց պարել» արտայայտութիւնն է, որ եթէ չի ծանօթագրուում, ընթերցողը վստահաբար բուն հարսանեկան հանդէսն է հասկանալու: Թօմսօնը եւս, ըստ ամենայնի, ուղղակի իմաստով է ընկալել, այլապէս ինչ բացատրութիւն ունի հետեւեալ գրառումը, որ յայտնուել է իր Ներածականում. «Although he [Movses] was looking forward to a merry time in the capital as a bold young man fond of dancing (III 68)» (էջ 2): Այստեղ չի լինի պնդել, թէ որերորդ իմաստով է «bold»-ը³¹, բայց միանշանակ է, որ «fond of dancing» (պարելու սիրահար)-ի հետ մէկտեղ խորենացուն չի առնչուում ամենեւին: «Հարսանեաց պարել» գրելիս խորենացին խորհել է վեհ, համամարդկային գաղափարների, այն «խրախճանքի» մասին, որ Յովհաննէս Մկրտչի շարականում ստացել է «Այսօր ցնծայ Եկեղեցի ի հոգեւոր հարսանիս, զոր պատրաստեաց Ձայն բարբառոյ հարսն մաքուր Փեսային» արտայայտութիւնը: Այս հոգեւոր հարսանիքի իմաստը հասկանալի է իւրաքանչիւր հայի համար, որ տարին գոնէ մէկ անգամ պատարագի է լինում, իսկ Թօմսօնը խորենացու փափագած հոգեւոր հարսանեաց նուիրական ձգտումը վեր է ածել առ վայելք ծարաւի... Ամեն թարգմանչի առաջնային, նուազագոյն պարտքն ստեղծագործութեան ոգին, աւիւնը փոխանցելն է: Սրան հակառակ Թօմսօնը պարզապէս սպանել է ոգին. խորենացու բիւրեղեայ, վեհ, բարձր, գեղեցկահիւս, սրտառուչ պատկերները վերածելով մանր ու ճղճիմ տողերի, ուր տուող եւ ընդունող լեզուներում եղած բառերի քանակը, հոլովը, դէմքը, թիւը... իրար բռնում են, բայց շունչ չկայ, զարկերակը լռած է, եւ թոյլ տուէք ասել, որ հէնց դա է եղել իր գերակայ նպատակը: Եթէ հետազօտողն սկզբունքային է, ուսումնասիրել է խորենացուն վերաբերող ողջ նիւթը եւ որեւէ ինֆնուտոյն համոզման է եկել, որը բարձրաձայնում է անկողմնակալութեամբ՝ խօսք չկայ, իր համոզմունքն է ու իրաւունքը: Ի՞նչ մեղադրես՝ Մալխասեանցի, Աճառեանի, Աբեղեանի... գրածները «չեն հանդիպել» կամ ուշադիր չի կարդացել-չի հասկացել, միայն քննադատողների կարծիքներին է ծանօթացել եւ չի ընդունում խորենացուն որպէս Ե. դարի հեղինակ: Մի՞թէ կարելի է այնքան քինախնդիր լինել, որ զարկերակը լռեցնելու կասկած հնչեցուի: Խոստովանենք. ո՛չ կասկածելու, ո՛չ իսկ այդ կասկածը հնչեցնելու կարիք կայ: Իր բուն նպատակը Թօմսօնն անձամբ հռչակել է հերթական գրքի

³¹ Յանդուգն, համարձակ, ժպիրհ, լիրբ, ազատախօս...

վերտառութեամբ՝ «Rewriting Caucasian History»: Դժուար չէ նկատել, որ *Խորենացուն* Ե. դարից դուրս մղելը ծրագրի միայն լոկ առաջին քայլն է. Կովկասի պատմությունը վերաշարադրելու համար միայն *Խորենացուն* իր դարից հանելով հարց չի լուծում՝ համալիր մօտեցում է հարկաւոր, ուր կընդգրկուեն հնարաւորինս շատ պատմիչներ: Այս իսկ պատճառով Թօմասօնը գրում է. «Մովսէս Խորենացին պնդում էր, որ եղել է Մաշտոցի աշակերտը, հետեւաբար ժամանակակիցը Կորիւնի եւ Եզնիկի, որ գնացել էին Ալեքսանդրիա ուսանելու եւ վերադառնալով՝ իրենց ուսուցչին մահացած գտել: Բայց [Խորենացու] շարադրանքում երեւում է ազդեցութիւնը հայերէնով շատ անելի ուշ հասանելի դարձած բազմաթիւ աղբիւրների, որոնք յարմարեցուել են յօգուտ Բագրատունիների ազնուական տոհմի, որն առաջաւոր դիրք չի գրաւել մինչեւ Ը. դարը: Եղիշէն պնդում էր, թէ Ե. դարի կէսերի ապստամբութեան ականատեսն է: Սակայն բացի նրանից, որ Եղիշէն այլ կերպ յայտնի չէ, նաեւ իր պատմութիւնը, կարծես, Ղազար Փարպեցու գրքում եղած նոյն իրադարձութիւնների անելի համառօտ մշակումն է: Ամմիջականօրէն Ղազարի աշխատանքը կարող է բաւականին վստահ կերպով թուագրուել 500 թուականից քիչ ուշ: Վաւերականութեան սոյն խնդիրները ներկայ դէպքում կարող են շրջանցուել այն պարզ պատճառով, որ դրանք գոյություն չունեն վաղ եւ միջնադարեան հայ հեղինակների համար: Այս պատմագիրների պնդումներն ընդունուել են անվերապահօրէն: Ազաթանգեղոսին առաջինը յղում է Ղազար [Փարպեցին]՝ Զ. դարի հէնց սկզբին: Մովսէս Խորենացին չի յիշատակում մինչեւ Ժ. դար՝ մինչեւ Բագրատունեաց մրցակից՝ հարաւային Հայքի իշխանների պատմիչ Թովմա Արծրունին: Ոչ իսկ Եղիշէն է անուանապէս յիշատակում Թովմա Արծրունուց առաջ: Ճիշտ է՝ Եօթներորդ դարի Սեբէոսը որոշ աղերսներ ունի ապստամբութեան Եղիշէեան տարբերակի հետ: Այսուամենայնիւ, հետագայի բոլոր հայ գրողներն Ազաթանգեղոսի, Մովսէսի եւ Եղիշէի երկասիրութիւնները ներմուծեցին Հայոց անցեալի իրենց պատումներում: ԺԳ. դարում, երբ ստեղծուեց «Վրաց տարեգրութեան» հայերէն տարբերակը, այդ գործերի վաւերականութեան վերաբերեալ կասկածներ չկային, եւ մշակուել էին ճարտար վարժեր, որոնք հետաքրքրասէր ընթերցողներին էին հրամցնում հեղինակների անցած ուղու մանրամասները»³²:

³² Տէս «Rewriting Caucasian History: The Medieval Armenian Adaptation of the Georgian Chronicles». The Original Georgian Texts and The Armenian Adaptation Translated with Introduction and Commentary by Robert W. Thomson. Published with the Support of the Calouste Gulbenkian Foundation, 1996, էջ XXX.:

Անշուշտ դժուար չէ նկատել համալիր մօտեցման հեռահար ծրագիրը, որի իրականացման ճանապարհին Թումանովն ու Թօմսօնը հերթական «ատամնանհրեն» են՝ ո՛չ առաջին, ո՛չ վերջին: Ուղղակի զարմանում ես, ի՞նչու են ընկել մէկիկ-մէկիկ տեղաշարժում Ե. դարի հեղինակներին. «Փարպեցին Զ. դար է, Եղիշէն ու Մովսէսը Ե. դար չեն, Ագաթանգեղոսը Զ. դարում նոր միայն յիշատակում է առաջին անգամ...» Միտքն ու նպատակը գուշակելի են, ուղղակի կատարումն է շատ երկար: Միթէ չէին կարող միանգամից եզրափակել. «Մաշտոց չի եղել, իսկ Կորիւնը կեղծարար է, որ գիրք է յերկրել տասներկուերորդ դարում...»: Առաջին հայեացքից անհաւանական «անհեթեթութիւն», որին, սակայն, կանդրադառնանք դեռ: Իսկ այստեղ արձանագրենք միայն, որ Հայոց սրբադասեալ պատմիչների դարափոխութեամբ չբաւականացած Թօմսօնը փորձում է լուծել նաեւ համայն հայութեան գլխաւորագոյն սրբութիւններից մէկի՝ սուրբ Էջմիածնի դարաշրջանի «առեղծուածը». «Թէեւ Ագաթանգեղոսն ամենից շատ մտահոգ է Գրիգոր Լուսաւորչին էջմիածնի հետ աղերսակցելու գաղափարով, սակայն այդ վայրը Հայ Եկեղեցու նախասկիզբ կենտրոնը չէ: Նրա [Ագաթանգեղոսի] Պատմութիւնն արտացոլում է աւելի ուշ շրջանի իրավիճակը, երբ Հայոց հայրապետները հաստատուեցին հիւսիս-արեւելեան Հայաստանում: Միւս կողմից, Հայաստանի ամենավաղ քրիստոնէական ժամանակներից էջմիածինը ակնյայտօրէն եղել է պաշտելի սրբավայր: Գլխաւոր տաճարի եւ մօտակայքում գտնուող՝ Հռիփսիմէ եւ Գայանէ նահատակ սուրբերին նուիրուած եկեղեցիների իրական գտնուելու վայրը մեծ նշանակութիւն ունի Ագաթանգեղոսի համար: Ինքը դրանք ներկայացնում է իբրեւ վայրեր, որտեղ ամփոփուած էին սուրբերի մարմինները: Սրանց (իրականում միայն Մայր տաճարի.— Մ.) տեղադրութիւնը Գրիգորին յայտնուեց աստուածային տեսիլքով, որում յայտնուած գերմարդկային էակը հետագայում նոյնացուեց Քրիստոսի հետ: Բայց փաղափ աճունը էջմիածին («Միածինն իջաւ») իրականում գործածութեան մէջ չի եղել մինչեւ ԺԴ դարը»³³:

Ինչեւէ. «Քննադատները» գալու ու գնալու են, իսկ մեր հեղինակները, ոչ միայն Ե. դարի, կմնան անսասան ու անհաս: Ո՛չ պէտք է զայրանալ «Քննադատների» գրուածքներից, ո՛չ իսկ նեղուել. միայն կարելի է ցաւով

³³ Տե՛ս R. W. THOMSON, Agathangelos, «Studies in Classical Armenian Literature», Ed. by J. A. C. Greppin, New York, 1994, էջ 19:

խղճալ նրանց, որ մեղանշում են արդարութեան դէմ՝ իրենց ծանր պատիժների դատապարտելով անկախ իրենց դաւանած կրօնական ուսմունքից: Այս կապակցութեամբ Խորենացու «Քննադատների» ցուցակում առանձնակի ցաւալի է ծագումով հայերի առկայութիւնը, որոնց առաջնութեան «դափնին» անվիճելիօրէն Ադոնցինն է. Թումանովի՝ հինգերորդ դարամերժութկէտանոց կրկնութեան 1-ին, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ պարբերութիւնների համար հէնց Ադոնցի աշխատութիւններն են յղում, հիմք հանդիսանում: Անշուշտ, եթէ «Քննադատութեան» մղող ուժը, ասուածի պէս, գիտական սկզբունքայնութիւնն է, մեղադրել չի լինի եւ չի կարելի որեւէ մէկին: Սակայն, մեր խորին համոզմամբ, խնդիրը ամենեւին գիտականութիւնը չէ: Ինչպէս նշել ենք, Ե. դարը մերժող բոլոր «հիմքերը» հերքուել են. ի թիւս այլոց նաեւ Ադոնցեանները: Եւ չնայած յատկապէս դրանցում է պարզ երեւում Ադոնցի վերաբերմունքն առ Պատմահայրը, յիշեալներն այստեղ չենք բերի ընդհանրապէս, որովհետեւ յատուկ անդրադարձ ունենք թումանաթօմասոեան կրկնութիւններին եւ դրանց «հիմքերին»: Կբերենք Խորենացու դարաշրջանին չդիպող օրինակներ, որոնցից, գուցէ ոչ այնքան ակնառու, սակայն երեւում է, թէ Ադոնցն ինչ վերաբերմունք ունի Խորենացու հանդէպ: Եւ այսպէս. «Յաճախ պատմագիրն իր եզրակացութիւնները հիմնում է աշխարհագրական եւ նախարարական անունների ստուգաբանական մեկնաբանութիւնների վրայ: Այս եղանակը Խորենացին լայնօրէն կիրառում է նախարարների ծագումնաբանութիւնը որոշելիս: Անկախ նրանից, թէ որքանով են ընդունելի նրա ստուգաբանական փորձերը, շատ դէպքերում դրանք անընդունելի»³⁴ են, եւ նրա կառուցած շատ տրամաբանական շարքեր իրենց սնանկութեան համար պարտական են թուացեալ ստուգաբանութեանը. եղանակ, որ իբրեւ այդպիսին, անկասկած, գիտական է»³⁵: Սա անշուշտ կարելի էր քննադատութիւն համարել, եթէ ասուածը որեւէ կերպ հիմնաւորուէր, իսկ առանց դրա, ինչպէս Ադոնցի գրքում է, խօսքն ընդամենը քամի է, բացականչութիւն, որ կարօտ է ապացոյցի: Մինչդեռ միտքը հեղինակին այնքան է դուր եկել, որ պարբերաբար կրկնում է. «Խորենացու ստուգաբանական զեղումները մեծ մասամբ անընդունելի են, բայց այդուամենայնիւ դրանք հետաքրքիր են, քանի որ որոշակիօրէն արտացոլում են նախարարական տների յարաբե-

³⁴ Ընդգծումները մերն են, բառի կրկնութիւնը՝ Ադոնցինը.՝ Մ.:

³⁵ Տէս Армения въ эпоху Юстиниана, С.-Петербургъ, 1908, էջ 489:

րակցութիւնը ոստանին կամ թագաւորական իշխանութեանը»³⁶: «Քննադատութեան» այլ օրինակ է հետեւեալը. «Խորենացու մեկնաբանութիւնը մեր պարագային պարտաւորեցնող չէ, բայց շատ հետաքրքիր է: Հայ պատմիչն ամենուր խոր իմաստ է փնտրում եւ յաճախ այլաբանութիւն է գտնում այնտեղ, ուր այն ընդհանրապէս չկայ»³⁷: Խօսքը ոսկէօղ-շիկափօկ պարանի բացատրութեան մասին է, որ Խորենացին տուել է Սաթէնիկի առեւանգման հատուածի կապակցութեամբ, ուր, Ադոնցի կարծիքով, այլաբանութիւն կամ փոխաբերութիւն «ընդհանրապէս չկայ», այսինքն՝ պարանն իրականում ոսկէօղ ու շիկափօկ է եղել, ոչ թէ խորհրդանշել է «փրկագինը»: Սրան հակառակ ունենք Աբեղեանի կարծիքը, որ ամբողջովին հիմնուած է Խորենացու տուած մեկնութեան վրայ. «Արտաշէսն աղշկանը փախցնելուց յետոյ՝ նրա հօրը տալիս է մեծ վարձանք, «մորթ կարմիր լայքա շատ եւ ոսկի բազում»: Այս եւս մի սովորական կենցաղական գիծ է, որ մինչեւ վերջերս յարատեւում էր հայերի մէջ»³⁸: Թէ Խորենացու գործն ինչ վերաբերմունքի է արժանացնում Ադոնցը, թերեւս կարողացանք ընդհանուր գծերով ներկայացնել, սակայն պատկերն առաւել տեսանելի դարձնելու համար հակադրենք իր ինքնագնահատականի տողերը. «Նախարարութիւնների մեր լուսաբանմամբ Արշակունեաց նախորդող շրջանի հայ անցեալը պարուրող կիսախաւարում մի ճառագայթ է յայտնուում, եւ հիմք է դրւում հայ պատմական կեանքի յաջորդ ծաւալուն փուլի գիտական ըմբռնման համար»³⁹: Եթէ անգամ մոռացութեան մատնենք Միքայէլ վարդապետ Զամչեանի եռահատորը, միեւնոյնն է հարց կառաջանայ. արդե՞ծ մարդկային էութեան զարդ հանդիսացող համեստութիւնն այստեղ չի վրիպել: Պատկերը նոյնն է նաեւ այն բոլոր հատուածներում, ուր Ադոնցը գրում է՝ «Մենք նրա [Խորենացու] հետ չենք տարբերում ծագումնաբանութեանը վերաբերող հարցերում»... կամ «Մեր որոնումների արդիւնքները որոշակի իմաստով նոյնական են...»⁴⁰՝ նկատի ունենալով իրեն ու Խորենացուն եւ ուշադրութիւն չդարձնելով, որ 1500 տարի առաջ ապրած հեղինակի, համազգական պաշտելի սուրբի հետ չափուելը, համեմատուելն ու առաւել եւս զուգադրուելը անընդունելի են:

³⁶ Տէս Արմենիա..., էջ 305:

³⁷ Տէս Արմենիա..., էջ 188:

³⁸ Մ. ԱՔԵՂԵԱՆ, Հայոց հին գրականութեան պատմութիւն, Ա., Պէյրութ, 1968, էջ 57:

³⁹ Տէս Արմենիա..., էջ 493 ընդգծումը մերն է.— Մ.:

⁴⁰ Անդ., էջ 489, 491:

Այժմ վերադառնանք վերելի «անհաւանականին», որ հնարաւոր է այսօր Ադոնցին որպէս բաբան գործածելով առաջ տանէին, եթէ ժամանակին «անհաւանականի հաւանականութիւնը» վերացրած չլինէր Հրաշեայ Աճառեանը: Այս կապակցութեամբ մի քանի անհրաժեշտ քաղուածներ կան ենք «էջմիածին» ամսագրի 1962 թուականի Դ. համարից: Պարբերականի Պատմա-բանասիրական խորագիրը բացող «Մեսրոպ Մաշտոց» յօդուածում Աճառեանը գրում է. «...անցնենք Ադոնցին, որ «Հանդէս Ամսօրեայ», 1925, մայիս—նոյեմբեր, մի ընդարձակ ուսումնասիրութիւն ունի Մեսրոպի այս շրջանի գործունէութեան մասին... Իր ուսումնասիրութեան մէջ (յատկապէս տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», էջ 435—436), Ադոնց, որ տեղեակ չէ ո՛չ Գ. Տէր-Մկրտչեանի յօդուածին եւ ո՛չ էլ Թորոսեանի, ոչ միայն մէջ է քաշում Ռաբուլին (412—435), այլեւ Ակակին, որ Ամիդի եպիսկոպոս էր 419—420 (sic!) թուականից սկսած: Նա եզրակացնում է, որ Մեսրոպի հանդիպումը նրանց հետ չէր կարող լինել ո՛չ աւելի առաջ 420-ից եւ ո՛չ աւելի ուշ 435-ից: Ուրեմն այս միջոցին պիտի ընկնէր գրերի գիտը, հետեւաբար Կորիւնի տուած թուականը սխալ է: Երեւոյթը Ադոնց որակում է «ժամանակական անհեթեթութիւն» անունով: Աւելի յետոյ, ուսումնասիրութեան վերջին մասում (էջ 535), Ադոնց, ընդունելով հանդերձ, որ 406 թուականից առաջ արդէն տառերը գտնուած էին, երկրորդ անգամ ճամփորդել է տալիս Մեսրոպին Միջագետք՝ 420—425 թուականներին, այս անգամ զուտ կրօնական նպատակներով՝ Նեստորական դաւանանքի գործով: Զարմանալին այն է, որ Ադոնցը խաբեբայ է համարում Կորիւնին կամ ծածկամիտ եւ Մեսրոպի այս ճամփորդութիւնը, որին, ըստ Ադոնցի, Կորիւնն էլ մասնակից ու գործակից էր, թաքցրած է համարում...»: Սրանից յետոյ Ադոնցի մտքերը թուելով՝ Աճառեանը հասնում է Ադոնցի՝ մեր կարծիքով նպատակային դրոյթներից մէկին. Ադոնցը պնդում է՝ «Եթէ Թէոդորի աշակերտը իբրեւ սոսկ գրիչ մասնակցում է գրերի գիտին, հարկաւ, նրա ուսուցիչն աւելի շօշափելի նպաստ պիտի բերած լինէր նոյն խնդրին...»: Թէ «աւելի շօշափելի նպաստ» ասելով՝ Ադոնցն ինչ դեր էր Մաշտոցից խլելով նուիրաբերում ուրիշին, այլեւս կարելոր չէ, որովհետեւ Ադոնցի տրամաբանական գիծը փշրելով՝ Աճառեանը ժամանակին փակել է հարցը. «Կարելի՞ է միթէ սրանից հետեւցնել, թէ ուրեմն Մեսրոպ գրերը հնարել է Թէոդորոսի օգնութեամբ եւ հենց նրա քահանայութեան 383—392 թուականներին... Այսպիսի եզրակացութիւն հակառակ է բանական դատողութեան: Ուրախ ենք, որ Ակինեան եւս («Հանդէս Ամսօրեայ», 1935, էջ 515) տեսել է Ադոնցի

այս անտեղի վարմունքը եւ պահանջում է, որ «շափաւոր լինի իր ամենեթեք եզրակացութեանց մէջ»,— Ակինեանի բառերով ամփոփում է Աճառեանը:

Տարբեր առիթներով յիշատակեցինք Մալխասեանցին, Աճառեանին եւ Աբեղեանին, հիմնուեցինք նրանց ժառանգութեան վրայ: Այժմ ճիշտ տեղն է խոստովանելու, որ այս հայագէտների ընտրութիւնն արուել է հետեւեալ սկզբունքներով՝ նախ, որ նոյն ժամանակաշրջանից են, ինչ Ադոնցը: Երկրորդ՝ իրենք եւս արտասահմանում են սովորել ու թեզեր պաշտպանել, ուստի կարող էին եւրոպաներում մնալ ու հրճուել բրօֆէսոր յորջորջմամբ... իրենք նոյնպէս կարող էին մեղանչել ազգային հանդէպ եւ արժանաւ օտարների խրախուսմանն ու գովեստներին. թէ՛ անցեալում, թէ՛ այսօր առաջխաղացման շատ եղանակներ նոյնն են, իսկ կամքի ազատութիւնն ընկալում է առանց բարոյական սահմանափակումների: Մեր կատարած ընտրութեան գլխաւոր չափանիշը Մալխասեանի, Աճառեանի եւ Աբեղեանի վերաբերմունքն է խորենացու դարաշրջանին... գայթակղութեանը կուլ չգնալը:

Ամենասկզբում ասել էինք, որ մեր պատմութիւնը խլել ցանկացող չարակամների ձախողման պատճառը մեր յամառ պայքարը կամ անզիջում կեցուածքը չեն: Նշել էինք նաեւ, որ Հայոց պատմութեան դէմ ոտնձգութիւնները, հակահայ «քննադատների» գրուածքները ո՛չ զայրացնում են, ո՛չ իսկ նեղում: Երբեմն մենք անգամ արժանի վերաբերմունք չենք դրսեւորում Մաշտոցի, Խորենացու, Կորիւնի... «քննադատների» հանդէպ... նոյնիսկ հակառակը: Համացանցային գրացուցակը եթէ նայենք, կտեսնենք, որ վերջին տարիներին Ադոնց աւելի շատ է տպուել, քան Մալխասեան, Աճառեան եւ Աբեղեան միասնական հաշուարկով: Մինչդեռ հրատարակչական գործում ճիշտ ընտրութիւնը ցանկալի է:

ԳԷՈՐԳ ՄԵԼԻՔ-ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ԳԷՈՐԳ ՄԱԴՈՅԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ


Մովսէս Խորենացի, 5-րդ դար, Ե. հարիւրամեակ, Մալխասեան, Աճառեան, Արեղեան, Թումանով, Թօմսօն, Ադոնց:

РЕЗЮМЕ

В книжном обзоре рассматриваются некоторые аспекты касательно «Истории Армении» Мовсеса Хоренаци. Подчёркивается, что Р. Томсон и К. Тумановф личных, самостоятельных наблюдений по поводу датировки данного произведения не имели, а всего лишь слепо повторяли критику предыдущих авторов, аргументации которых к моменту выхода в свет томсонско-тумановфских замечаний уже были опровергнуты.

SUMMARY

The book review discusses some aspects concerning the “History of Armenia” by Movses of Khoren. It is emphasized that R. Thomson and K. Tumanoff did not have personal, independent observations on the dating of this work, but only blindly repeated the criticism of previous authors, whose arguments had already been refuted by the time Thomson-Tumanoff’s remarks were published.



СОДЕРЖАНИЕ

ПРОПОВЕДИ

- Проповедь **ИЕРОМОНАХ ИУСИКА СМБАТЯНА**,
произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне 5
- Проповедь **ИЕРЕЯ КОМИТАСА ГЕВОНДЯНА**,
произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне 9

РЕЛИГИОВЕДЕНИЕ

- АРХИМАНДРИТ МАТЕОС ДЖУГАЕЦИ** — Проповедь о словах
«Но человек в чести не пребудет; он уподобится животным,
которые погибают» 14
- АВЕТИС КАЛАШЯН** — Его Святейшество Гарегин II, Верховный Патриарх
и Католикос Всех Армян и школы армянской диаспоры 31
- ПРОТОИЕРЕЙ ТРДАТ УЗУНЯН** — Использование искусственного
интеллекта и Интернета в современном изучении Библии (*краткий обзор*) . . . 45

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

- АРТАШЕС МАРТИРОСЯН** — Развитие семантической структуры лексемы
«ангел» в армянском языке 61
- СИРАНУШ БЕГЛАРЯН** — Иконография Христа в рукописи №206
иллюстрированная Торосом Таронаци 75
- СВЕТЛАНА ПОГОСЯН** — Особенности культуры жизнеобеспечения
и проявления самостности суетских армян — мусалерцев 87

АРМИНЕ ТИГРАНЯН — Целенаправленное уничтожение хачкаров в Арцахе
и международные механизмы защиты. 107

СООБЩЕНИЯ

СУСАННА ГРИГОРЯН — Неологизмы в сборнике «Печать веры». 116

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

ГЕВОРГ МЕЛИК-БАГДАСАРЯН, ГЕВОРГ МАДОЯН,
АРШАК МАДОЯН — По поводу одной книжки 125



CONTENTS

SERMONS

- Sermon delivered by **REV. FR. HUSIK SMBATYAN** during the Divine Liturgy
celebrated at St. Gayane Monastery 5
- Sermon delivered by **FR. KOMITAS GHEVONDYAN** during the Divine Liturgy
celebrated at St. Gayane Monastery 9

RELIGIOUS STUDIES

- ARCHIMANDRITE MATTHEOS OF JULFA** — Sermon on the verse
“Man that is in honour, and understandeth not, is like the beasts that perish”.14
- AVETIS KALASHYAN** — His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos
of All Armenians, and the Diaspora Armenian School.31
- ARCHPRIEST TRDAT UZUNYAN** — The use of artificial intelligence
and the internet in modern Bible Studies (*short review*)45

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES


- ARTASHES MARTIROSYAN** — Development of the semantic structure
of the lexeme “angel” in the Armenian language 61
- SIRANUSH BEGLARYAN** — The Iconography of Christ in Manuscript N206
illustrated by Toros of Taron75
- SVETLANA POGHOSYAN** — Identity manifestation of Suedian-Armenians
of Musaler and peculiarities of the subsistence culture 87
- ARMINE TIGRANYAN** — Targeting of cross-stones in Artsakh and international
protection mechanisms 107

ESSAYS

SUSANNA GRIGORYAN — Neologisms in the collection of “Seal of Faith” 116

LITERARY REVIEW

GEVORG MELIK-BAGHDASARYAN, GEVORG MADOYAN,
ARSHAK MADOYAN — On a brochure 125



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

- Տ. ՅՈՒՄԻԿ ԱԲՂՅ. ՍՄԲԱՏԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում
մատուցուած Ս. Պատարագին. 5
- Տ. ԿՈՄԻՏԱՍ ՔՀՆՅ. ՂԵՒՈՆԴԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում
մատուցուած Ս. Պատարագին. 9

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

- ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԶՈՒՂԱՅԵՅԻ** — Քարոզ՝ «Մարդը պատիւ ունէր
եւ չհասկցաւ, անբան անասուններուն հաւասարեցաւ ու անոնց նմանեցաւ»
խօսքին մասին. 14
- ԱԲԵՏԻՍ ՔԱԼԱՇԵԱՆ** — Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք
եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ սփիւռքահայ դպրոցը 31
- Տ. ՏՐԴԱՏ ԱԲ. ՔՀՆՅ. ՈՒԶՈՒՆԵԱՆ** — Աստուածաշնչի արդի
ուսումնասիրութիւններու համար արհեստական բանականութեան եւ
համացանցի գործածութիւն (*հսկիրն ակնարկ*) 45

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- ԱՐՏԱՇԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ** — «Հրեշտակ» բառոյթի իմաստային
կառուցուածքի զարգացումը հայերէնում 61
- ՍԻՐԱՆՈՒՇ ԲԵԳԼԱՐԵԱՆ** — Քրիստոսի պատկերագրութիւնը
Թորոս Տարօնացու նկարագարողած թիւ 206 ձեռագրում 75

ՍՎԷՏԼԱՆԱ ՊՕՂՈՍԵԱՆ — Սվեդիա հայ-մուսալեռցի ինքնության դրսեւորումներ եւ կենսապահովման մշակոյթի առանձնայատկութիւններ	87
--	----


ԱՐՄԻՆԷ ՏԻԳՐԱՆԵԱՆ — Արցախի խաչքարերի թիրախաւորումը եւ պաշտպանութեան միջազգային եղանակները	107
--	-----

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ — Նորակազմութիւնները «Կնիք հաւատոյ» ժողովածուում	116
---	-----

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԳԷՈՐԳ ՄԵԼԻՔ-ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ, ԳԷՈՐԳ ՄԱԴՈՅԵԱՆ, ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ — Մի գրքոյկի առիթով	125
--	-----



- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ալգերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՅՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՀ** - Գեորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Ադանեանց), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոտանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲՆ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մալխասյանց), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Ս. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բաբսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՅՀԶ** - Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Անտիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վէժ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՅԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- АГВ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, ИАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- CAH** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829-4243
eISSN 2953-7843

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատույթեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
«ԷԶՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Հեռ. (+374 10) 517 276

Ստորագրուած է տպագրութեան՝ 18.11.2024 թ.



ՄԵՐ ԼԹՈՒ ՄՈՒԲ
ԷԶՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ